

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

КАРО КАФАДАРЯН

ГОРОД ДВИН И ЕГО РАСКОПКИ

II

РЕЗУЛЬТАТЫ РАБОТ АРХЕОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕДИЦИИ
АКАДЕМИИ НАУК АРМССР
1951—1972 ГОДОВ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԵՎԱՆՄԲԻ 1951—1972 թթ.
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ





Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

Դվինի կանոնավոր պեղումները, ինչպես այդ մասին գրել ենք հերկա աշխատության առաջին հատորում, սկսվել են 1937 թ. պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ և 1939 թվականից հետո ժամանակավորապես դադարել են: Վերսկսվել են համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտից հետո՝ 1946 թ. և կանոնավոր կերպով կատարվել մինչև 1972 թ. ու չարունակվել նաև հետագա տարիներին:

Անի ֆաղափր մեր պետական սահմաններից դուրս մնալուց հետո, Դվինը դարձել է Հայաստանի միջնադարյան մշակույթի ուսումնասիրության միակ խոշոր կենտրոնը: Ճիշտ է, Դվինին զուգահեռ այժմ ուսումնասիրվում են նաև միջնադարյան Ամբերդը, Լոռե ֆաղափր և այլ հնավայրեր, բայց բոլոր դեպքերում, մանր ու խոշոր իշխանական ամրոցները, գյուղերն ու ավանները, վանքերն ու բերդերը կառուցվել են միայն լրացուցիչ և օժանդակ նյութ տալ միջնադարի մասին, հիմնականը միշտ վերադարձվելու է երկրի երկարատև մայրաֆաղափին՝ վարչական, արհեստավորական և առևտրական կենտրոն Դվինին, որ միաժամանակ Հայաստանի մշակույթի կենտրոնն էր:

Առաջին հատորում, որ լույս է տեսել տարիներ առաջ, հրատարակել ենք 1937—1950 թթ. պեղումների արդյունքների համառոտ հաշվետվությունը: Ներկա հատորում ներկայացնում ենք 1951—1972 թթ. աշխատանքի արդյունքների ամփոփագիրը:

Վերջին 22 տարիների ընթացքում (1951—1972 թթ.) Դվինի պեղումների կենտրոնը եղել է միջնաբերդը, որ զետեղված է բլրի գագաթին: Այդտեղ, բացի ֆաղափի միջնադարյան շերտերից, պեղվել են նաև ավելի խոր շերտեր, որից պարզվել է, որ ֆաղափի հիմնադրումից առաջ տեղում գոյություն է ունեցել բնակավայր:

Ընդարձակ պեղումներ են կատարվել ստորին բերդի աջ կողմում, բայց դեռևս միայն միջնադարյան շերտի սահմաններում, իսկ թե ինչ է թափնված այդ շերտի տակ, դեռևս մեզ հայտնի չէ, որովհետև ֆաղափի կործանումից հետո, միջնաբերդի գագաթի հողը, մակերեսի լվացման հետևանքով, հետզհետե իջել է դեպի ստորին բերդն ու այնտեղ երկու և ավելի մետր հաստությամբ նստել բուն միջնադարյան շերտի վրա:

Այստեղ բացվել են հայ հարտաբալետության համար մեծ արժեք ունեցող բնակելի տներ և զինագործական արհեստանոց:

Ավելի ընդարձակ է պեղվել ֆաղափի կենտրոնական թաղը Կաթողիկե եկեղեցու շրջապատում, գլխավորապես նրա հր և ամ կողմերում:

Քաղափի հր թաղերից մեկի պեղումներից ի հայտ եկան բրուտի մի մեծ արհեստանոցի հետքեր՝ բազմաթիվ խոտանված առարկաներով և հնոցի մեջ

օգտագործվող հարմարանքներով (եռոտանիներ և կավե գլաններ): Նույն քաղի մի այլ վայրում բացվեց Դվինի ծածկած մեծ շուկան, մի այլ կետում՝ տարբեր տրամաչափի ջրատար խողովակների հանգուցակետերից մեկը և այլն:

Կարևոր հայտնագործություններ են եղել փաղափի տարբեր մասերում կատարված հողային աշխատանքների և հետախուզական պեղումների ժամանակ, որոնց վրա համառոտակի կանգ կառնենք իր տեղում:

Դվինի պեղումների արդյունքներին նվիրված առաջին գրքի հրատարակությունից անցել է շուրջ երկու տասնյակ տարի, երբ տպագրության են հանձնում երկրորդ գիրքը¹:

Ներկա հատորի այդքան ուշ հրատարակության հանձնելու գլխավոր պատճառներից մեկը այն է, որ պեղումները կատարվում էին միայն ձեռքի բահ

¹ Ներկա աշխատության առաջին հատորում նշված հոդվածներից և առանձին գրքերից բացի Դվինի վերաբերյալ հետազոտում լույս են տեսել բազմաթիվ նյութեր, որոնցից կարևորները ներկայացնում ենք ստորև (պահպանելով ժամանակագրական կարգը).

1. Կարո Ղաֆադարյան, Դվինի Կաթողիկե եկեղեցին, «Տեղեկագիր» ԳԱ հաս. գիտ., 1951, № 9, էջ 71—83:

2. Б. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина. «Աշխատություններ Պետական պատմական թանգարանի», հ. 4, Երևան, 1952, էջ 3—104, հայերեն ամփոփումով:

3. К. Г. Кафадарян, Город Двин и его раскопки, автореферат диссертационной работы, представленной на соискание ученой степени доктора исторических наук, 1953, Ереван, стр. 26.

4. Р. М. Жанполадян, Стекланный сосуд из Двина, КСНИМК, вып. 60, 1955, стр. 120—124.

5. Р. М. Жанполадян, Сфероконические сосуды из Двина и Ани. СА, 1958, № 1, стр. 201—208.

6. К. Г. Кафадарян, Раскопки города Двина, XXV конгресс востоковедов в Москве, 1960, стр. 8.

7. К. Г. Kafadarian, Les fouilles de la ville Dvin, XXV congrès international des orientalistes, Moscou, 1960, p. 7.

8. Х. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

9. Ա. Պատրիկ, Խճանկարային արվեստը հայերի մոտ և Դվինում հայտնաբերված խճանկար հատակը, ՊՐՀ, 1964, № 2, էջ 313—317:

10. Հո. Զանփոլադյան, Ապակի անոթներ Դվինի պեղումներից, ՊՐՀ, 1964, № 4, էջ 186—194:

11. Р. М. Жанполадян, Лабораторная посуда армянского алхимика, СА. 1965, № 2, стр. 210—216.

12. Ա. Քալանթարյան, Զենքերը V—VIII դդ. ըստ Դվինի հնագիտական պեղումների, ՊՐՀ, 1965, № 4, էջ 241—248:

13. Ա. Քալանթարյան, Պաշտամունքային անոթ Դվինից, «Տեղեկագիր» ԳԱ հաս. գիտ., 1965, № 2, էջ 95—97:

14. Ա. Քալանթարյան, Պաշտպանական սպառազինությունը վաղ միջնադարյան Հայաստանում, «Տեղեկագիր» ԳԱ հաս. գիտ., 1965, № 10, էջ 63—74:

15. Հո. Զանփոլադյան, Դվինի ապակե իրերի ժողովածուն, ՊՐՀ, 1966, № 1, էջ 261—264:

16. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի մեհյանի մասին, ՊՐՀ, 1966, № 2, էջ 41—58:

17. А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв., автореферат диссертационной работы, представленной на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1966, стр. 22.

18. А. А. Калантарян, Раскопки центрального квартала Двина 1964 и 1965 гг. ИФЖ, 1967, № 1.

19. Р. М. Жанполадян, Новые материалы по истории византийского стеклоделия, «Византийский временник», т. 27, 1967, стр. 248—257.

20. Կ. Ղաֆադարյան, Հնագիտական աշխատանքները Սովետական Հայաստանում, «Լենինյան ուղիով» ամսագիր, 1968, № 12, էջ 101—108:

ու բրիչի օգնությամբ, առանց նոր տեխնիկայի կիրառման, ուստի մեծազանգված կառույցների դժվարին պեղումները տևել են տասնյակ տարիներ:

Չնայած դրան, Դվինի ֆաղափի պեղումները ամեն տարի բացառիկ հաճախություններ են պարգևել մեր անցյալի մշակույթի պատմությանը: Միայն բանգահանային արժեք ունեցող նյութերի թիվը յուրաքանչյուր տարի ավելանում է մի քանի հարյուր տոննայով, որոնց բազմազան և մանրագին մասնագիտական ուսումնասիրությունը մեր այսօրվա նպատակից դուրս է, մանավանդ որ այդ որոշ շափով կառարել ենք առաջին հատորում: Ուստի, այժմ ներկայացնում ենք պեղումների համառոտ նկարագիրն ըստ տարիների՝ բա-

21. *Р. М. Жанполадян*, Резное стекло из Двина, СА, 1968, № 1, стр. 268—274.

22. Հո. Զանփուլադյան, Դվինի ապակյա ապարանջանները, «Լրաբեր» ԳԱ հաս. գիտ., 1969, № 1, էջ 94—100:

23. *Р. М. Жанполадян*, Новые данные о стеклоделии Двина, КСИА, вып. 120, М., 1969, стр. 28—31.

24. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի 5-րդ գիրք, Երևան, 1970:

25. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղի մետաղե իրերը, «Լրաբեր» ԳԱ հաս. գիտ., 1971, № 6, էջ 62—67:

26. Ա. Քալանթարյան, Դվինի IX դ. ջնարակած խեցեղենի հարցի շուրջը, ՊՐՀ, 1971, № 1, էջ 269—288:

27. Աղ. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի վաղ հախճապակյա խեցեղենի մասին, ՊՐՀ, 1973, № 1, էջ 279—285:

28. *К. Х. Кушнарева*, Производственный комплекс древнего Двина, см. «Кавказ и Восточная Европа в Древности», М., 1973, стр. 235—242.

29. Կ. Գ. Ղաֆադարյան, Դվինում պեղված ճարտարապետական երկու հուշարձան, ՊՐՀ, 1973, № 4, էջ 113—126:

30. Աղ. Ժամկոչյան, Դվինի XII—XIII դդ. ներմուծված խեցեղենը: «Հայագիտական հետազոտությունների ժողովածու», հ. I, 1974, էջ 123—129:

31. Կ. Գ. Ղաֆադարյան, Պետական գիվանի մնացորդները Դվինում, ՊՐՀ, 1974, № 2, էջ 101—112:

32. Կ. Գ. Ղաֆադարյան, Հեթանոսական շրջանի դամբարանները Դվինում, ՊՐՀ, 1974, № 4, էջ 35—43:

33. Հո. Զանփուլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ.: «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի VII գիրք, Երևան, 1974:

34. *А. А. Калантарян*, К вопросу о способах изготовления керамики в средневековой Армении, сб. «Археологические памятники феодальной Грузии», т. II, Тбилиси, 1974, стр. 280—290.

35. Ա. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի IX դարի հասարակ խեցեղենը, ՊՐՀ, 1975, № 1, էջ 239—247:

36. Կ. Գ. Ղաֆադարյան, Միջնադարյան ապակեգործությունը Դվինում, ՊՐՀ, 1975, № 4, էջ 76—84:

37. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի 1971—73 թթ. պեղումները, «Լրաբեր» ԳԱ հաս. գիտ., 1975, № 7, էջ 89—99:

Ֆրանսերեն լեզվով հրատարակվել է Ա հատորի ուսերեն ամփոփման թարգմանությունը. *К. Kafadarjan*, Les fouilles de la ville de Dvin (Dovin), „Revue des etudes armeniennes“ հանդեսի նոր հրատարակության Բ գրքի 283—301 էջերում:

Դվինի պեղածո նյութերը լայնորեն օգտագործվել են գիտական աշխատություններում. օրինակ՝ Վ. Աբրահամյանի «Արհեստները Հայաստանում XV—XVIII դդ.» (տպագրված Երևանում, 1956 թ.), Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» երկհատոր ուսումնասիրությունում (Ա հատոր, 1958, Բ հատոր, 1964):

Դվինի պեղումները մտել են նաև ՍՍՀՄ բուհական ձեռնարկների մեջ (Մ. Մ. Монгайт, Археология в СССР, М., 1955, стр. 224—228):

Տարիների ընթացքում Դվինի պեղումները լուսաբանվել են Հայաստանի և Սփյուռքի հայերին թերթերի ու հանդեսների էջերում:

Դվինի արշավախմբի մասնակից գիտական աշխատակիցներն արդեն ձեռնամուխ են եղել պեղածո նյութերի համակողմանի քննությանը, որոնց արդյունքները հետզհետե լույս կտեսնեն առաջիկա տարիներին:

ժանելով երկու մասի: Այնուհետև խոսում ենք հարտապետական մի ֆանի նորահայտ նուշարձանների մասին:

Ներկա հատորում բնության առարկա ենք դարձրել նաև Դվինում, ֆաղափի հիմնադրումից առաջ գոյություն ունեցող անտիկ և ավելի հին ժամանակների նախաֆաղափյին բնակավայրերը, որոնց վերաբերյալ մինչև պեղումները գաղափար չուներին:

Դվինի այդ հին շերտում գտնվեցին բազմաթիվ առարկաներ, պաշտամունքային կառույցներ, որոնց ուսումնասիրությունը ոչ մի առնչություն չունի միջնադարյան ֆաղափի հետ, հետևապես այդ շերտի պարունակության բնությունը առանձին հատորի գործ է², բայց իբրև նախնական կարծիք, շատ համառոտակի անդրադառնում ենք հեթանոսական շրջանի դամբարանների և ստորին շերտի պեղումներին:

Գրքի «Հավելված» բաժնում կանգ ենք առնում մի ֆանի առավել կարևոր հարցադրումների վրա, որոնք տարբեր ժամանակներում հրատարակել ենք գիտական ամսագրերում և պարբերականներում:

Այսպիսով, դուրս են մնում ֆաղափի և նրան նախորդող հին բնակավայրի սոցիալ-տնտեսական պատմությունը, ինչպես նաև արհեստների, արտադրական կառույցների հնագիտական բազմապիսի և հարուստ առարկաների լիակատար հնագիտական ուսումնասիրությունը, որոնք կարող են նոր լույս սփռել միջնադարյան Հայաստանի մշակույթի վրա:

* * *

Դվինի պեղումները դեկավարել է Դվինի հնագիտական արշավախմբի պետ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆ. Կարո Ղաֆադարյանը՝ 1951—1972 թթ.: Պեղումներին մասնակցել են.

ա) Պատմական գիտությունների բեկնածուներ. Արամիսյան Վալենտինա՝ 1951—1952, 1957—1959, Եսայան Ստեփան՝ 1955—1958, Խանգաղյան Էմմա՝ 1952—1959, Կարախանյան Գրիգոր՝ 1951—1952, Կարապետյան Լևոն՝ 1958, Հարությունյան Սարգիս՝ 1962—1965, Ղարիբյան Իգիթ՝ 1966—1968, Մնացականյան Հարություն՝ 1951—1952, 1955, Մուշեղյան Նվգինե՝ 1955—1961, 1963, Մուշեղյան Խաչիկ՝ 1951, 1958, 1960, 1963, Շահնազարյան Ասլան՝ 1951, Զանփուլադյան Հովհաննես (Լենինգրադ)՝ 1952—1954, 1956—1960, 1962—1970, 1972, Տեր-Ղևոնդյան Արամ՝ 1955, 1965, Քալանթարյան Արամ՝ 1962—1968, 1970—1972 (1971 և 1972 թթ. պետի տեղակալ), Քուշնարյան Կարինե (Լենինգրադ)՝ 1967—1968, 1970—1972:

բ) Գիտական աշխատողներ, ասպիրանտներ, լաբորանտներ, թանգարանի ավանդապաններ, ուսուցիչներ. Ալեքսանյան Ռիմա՝ 1965, Աղամալյան Արմենակ՝ 1966—1970, Անասյան Արսեն՝ 1957, Ասմարյան Հրաչյա՝ 1971, Բաբայան Ֆրինա՝ 1966—1972, Գևորգյան Էմմա՝ 1957—1962, Գրիգորյան Ռիմա՝ 1961—1964, Դանիելյան Ժաննա՝ 1964, Երեմյան Հասմիկ՝ 1969, Եփրեմյան Ռուդոլֆ՝ 1968, Ժամկոչյան Աղավնի՝ 1963, 1965—1968, 1971—1972, Կանեցյան Ամինա՝ 1969, Կարապետյան Մարգո՝ 1952—1953, 1959—1963, Հակոբյան Նունե՝ 1966—1972, Մախաբջյան Սոնա՝ 1962, 1964—1969, Պարսամյան Արմեն՝ 1971—1972, Բուրուշյան Ռուբեն՝ 1968, Սարգսյան Սարգիս՝ 1972, Վահանյան

² Արդեն պատրաստ է հրատարակության համար Լենինգրադի հնագիտության ինստիտուտի աշխատակից Կարինե Քուշնարյանի մանրամասն յուսումնասիրությունը Դվինի ստորին շերտի պեղումների մասին, որը շուտով լույս կտեսնի:

Գիրքը լույս տեսավ 1977 թ.՝ Կ. Խ. Կուշնարեա, Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

Մարզո՝ 1951—1963, Վարդանյան Լաուրա՝ 1972, Քալաշյան Կլարա՝ 1963, Քոչարյան Գայանե՝ 1971—1972:

զ) Ճարտարապետ Քոչոյան Գրիգոր (պետի տեղակալ)՝ 1951—1970:

դ) Վերականգնողներ. Արևշատյան Գուրգեն՝ 1951—1955, Հայրապետյան Հայկ՝ 1951—1958, 1962, Հովհաննիսյան Ուլիսես՝ 1959—1969, Ղազազյան Վահրին՝ 1951—1972, Նիկսալյան Հրաչյա՝ 1968—1969:

ե) Նկարիչներ. Առաֆել Պատրիկ՝ 1951—1952, 1954, Լեյլոյան Ազատ՝ 1958, Մարտիրոսյան Ռոբերտ՝ 1969:

զ) Լուսանկարիչներ. Ահարոնյան Մարո (Լենինգրադ)՝ 1968, Անեմյան Ասֆանազ՝ 1969, Գրիգորյան Պողոս՝ 1951—1955, 1957—1962, Ժամկոչյան Գրիգոր՝ 1964—1969, Բարսեղյան Աշոտ՝ 1972:

Դաշտային աշխատանքների փորձ ձեռք բերելու համար Դվինի պեղումներին մասնակցել են Նրեանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի և այդ ֆակուլտետի հնագիտության բաժնի բազմաթիվ ուսանողներ:

1956 թ. հոկտեմբերի 30-ին Դվին այցելեցին Կովկասյան հնագիտությանը նվիրված համամիութենական կոնֆերանսի 115 մասնակիցներ, տեղում Դվինի ավերակներում լսեցին պեղումների ղեկավարի ընդարձակ զեկուցումը կատարված աշխատանքների արդյունքների մասին, ծանոթացան հնավայրին և պեղածո առարկաներին:


Արշավախմբի հրավերով, կամ պեղումներին ծանոթանալու նպատակով տարբեր ժամանակներում Դվին են այցելել Վրաստանի, Ադրբեջանի և Սովետական Միության այլ վայրերի աչքի ընկնող բազմաթիվ գիտնականներ, որոնց թվում Հովսեփ Օրբելին (մի ֆանի անգամ), Բորիս Ռիբակովը, Բորիս Պիոտրովսկին, Կամիլա Տրեերը, Սերգեյ Կիսելյովը, Ալեքսեյ Բաշկիրովը, Ալեքսեյ Սմիրնովը, Եվգենի Կրուպնովը, Անատոլի Յակոբսոնը, Հովհաննես Խալփախչյանը, Տատյանա Իզմայլովան, Ակակի Շանիձեն, Անդրեյ Ապակիձեն, Ալեքսանդր Քալանթրաձեն, Իսահակ Զաֆար-զադեն և շատ ուրիշներ:

Դվինում են եղել նաև աչքի ընկնող օտար և սփյուռֆահայ գիտնականներ Սիրարվի Տեր-Ներսիսյանը (Ֆրանսիա), դոմագետ Զարեն Պուտուկյանը, Մանասե Սևակը (ԱՄՆ) և շատ ուրիշներ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ղեկավարությունը մի ֆանի անգամ անդրադարձել է Դվինի պեղումներին և որոշումներ կայացրել աշխատանքներն ընդարձակելու ու խորացնելու մասին:

Այդ կապակցությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ղեկավար աշխատողները, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ, մի ֆանի անգամ եղել են Դվինում:

Դվինի ավերակներն այժմ Սովետական Հայաստանի տեսարժան վայրերից մեկն են դարձել, որտեղ այցելության են գալիս տարեկան 40—50 հազար այցելու, այդ իսկ պատճառով այնտեղ անհրաժեշտ է հիմնել մի հնադարան:





Գ Լ Ո Ւ Խ Հ Ի Ն Գ Ն Ր Ո Ր Դ

1951—1960 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1937—1950 թթ. պեղումները, որոնց արդյունքները ամփոփված են այս աշխատության առաջին հատորում, կենտրոնացված են եղել միջնադարյան քաղաքի երկու տարբեր կետերում.

ա) կենտրոնական թաղում. որտեղ բացվել են՝

1. Կարողիկե մեծ եկեղեցին, կառուցվել է III դարում իբրև հեթանոսական տաճար, վերածվել է քրիստոնեական եռանավ եկեղեցու՝ IV դարի սկզբին, վերափոխվել գմբեթավոր եկեղեցու՝ VII դարի սկզբներին և կործանվել 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ:

2. Կաթողիկոսի պալատը, կառուցվել է V դարի երկրորդ կեսին, մզկիթի է վերածվել 893 թ. երկրաշարժից հետո, կործանվել է քաղաքի ավերման ժամանակ՝ XIII դ.:

3. Հիզդրուզիտի միանավ բազիլիկ վկայաբանը, կառուցվել է VI դարի կեսերին և կործանվել 893 թ. երկրաշարժից:

բ) Միջնաբերդի գագաթին, որտեղ բացվեցին քաղաքի գոյության վերջին շրջանին պատկանող պալատական մի մեծ շինության ավերակները: Այդ շենքը կառուցվել է 893 թ. մեծ երկրաշարժից հետո, փլատակված շենքերի ավերակների վրա և պահպանվել է մինչև XIII դարի երեսնական թվականները՝ ենթարկվելով բազմաթիվ վերանորոգումների, վերափոխությունների ու հավելվածների: Կործանվել է քաղաքի վերջնական ավերածությունների ժամանակ մոնղոլ-թուրքերի ձեռքով XIII դարում:

Բացի այդ, մինչև 1950 թ. սկսվել էին քաղաքի հարավային թաղերից մեկում գտնվող մի մեծ շինության պեղումները (4-րդ տեղամաս) և որոշ

հետախուզական աշխատանքներ կատարվել ստորին բերդի սահմաններում:

1951—1972 թվականների պեղումները, որոնց արդյունքներն ամփոփվում են աշխատության ներկա հատորի մեջ, հետապնդել են հետևյալ նպատակները.

1. Միջնաբերդի ավելի խորն ընկած շերտերի հետազոտությունը Արշակունի հայ թագավորների, մարզպանների և արաբ ոստիկանների պալատներն ուսումնասիրելու նպատակով:

2. Պեղումներ ստորին բերդում՝ ամրոցի այդ մասի նշանակությունն ու պարունակությունը պարզելու համար:

3. Քաղաքի հարավային թաղերից մեկում (4-րդ տեղամաս)՝ նախորդ տարիների պեղումների ժամանակ մասամբ ի հայտ եկած աշխարհիկ մեծ շինության հետազոտությունը, որ իր ձևերով բոլորովին նորություն էր հայկական ճարտարապետության համար:

4. Քաղաքի կենտրոնական թաղի լիակատար ուսումնասիրությունը:

5. Հետախուզական պեղումներ քաղաքի տարբեր մասերում և արվարձաններում:

1951 թվականի պեղումները.—1951 թ. պեղումները կատարվեցին երկու հերթով. առաջինը՝ հունիս և հուլիս ամիսների ընթացքում և երկրորդը՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Պեղումները կենտրոնացված էին երեք կետերում՝ միջնաբերդի գագաթին (առաջին տեղամաս), քաղաքի կենտրոնական թաղում (երկրորդ տեղամաս) և ստորին բերդում (վեցերորդ տեղամաս) (նկ. 1, ներդիր):

Միջնաբերդի գագաթի պեղումները կատարվեցին նախորդ տարիներին վերին շերտի մեջ

բացված պալատական մեծ շինություն տակ ավելի հին շենքեր հայտնաբերելու նպատակով, թեև դրան զուգահեռ, բլրի արևմտյան հատվածում պեղվեցին նաև մի շարք քառակուսիներ, որոնք վերին շերտի մեծ շինության սահմաններից դուրս էին գտնվում:

Այդտեղ՝ վերին շերտում, հնից եկող ոչ մի մնացորդ չէր պահպանվել, որովհետև 893 թ. մեծ

բշիջները: Բայց դրանցից մի քանիսը (№ 4, 6, 15 և 18) մնացին թիրափարտ՝ երկու պատճառով: Վերին շերտի մեծ շինության հիմնապատերի մեծազանգված քարերն ու բարձրադիր պատերը կարող էին փլվել, իսկ երբեմն էլ դժվար էր որոշել, թե որքան պետք է խորանալ, որովհետև լավ է քիչ պեղել և հետո շարունակել, քան թե աննպատակ մտնել ավելի խոր շերտերի մեջ:



2. Հում աղյուսե մեծ շինության պատերը միջնաբերդում (VIII դ.):

Երկրաշարժից հետո տարածությունը հարթել և նոր շենքեր էին շինել: Այդ պատճառով, երբ 1948 թ. սկսեցինք ստորին շերտերի մեջ խորամուխ լինել, որոշեցինք դեռևս չվնասել վերին շերտի շենքերը և խորանալ այնպիսի տեղերում, որոնք ազատ էին մնացել կառուցումներից: Այդ տեսակետից ամենից նպատակահարմարը վերին շերտի շենքի սենյակների միջի ազատ տարածություններն էին, որոնք համարակալեցինք մեկից մինչև երեսուն, սկսելով բլուրի գագաթի հյուսիսային մասից, որտեղ վերին շերտի շենքերն ավելի լավ էին պահպանվել:

Այդ բլուրից հետո 1948 թ. սկսեցինք խորանալ սենյակների մեջ:

Զգալի խորություն մեջ ի հայտ եկան հում աղյուսե մեծազանգված պատեր: Խորացման աշխատանքները շարունակեցինք նաև հետագա՝ 1949 և 1950 թվականներին և այդ երեք տարիների ընթացքում հետազոտեցինք № 1-ից մինչև № 20

1951 թ., երբ բլրի հյուսիսային մասում պեղվել էր մոտ 20 սենյակ և մի հատվածում էլ, բլուրի հյուսիսային ծայրամասում, 1949 թ. հետախուզել էինք շատ ավելի խորն ընկած շերտերը, № 4, 6, 15 և 18 բշիջների մեջ լրացուցիչ պեղումներ կատարեցինք և նրանց մակերեսը հավասարեցրինք մյուս բշիջների խորությունը:

¹ Բշիջ անվանում էնք վերևից հաշված երկրորդ և ավելի խորն ընկած շերտերի մեջ վերին շերտի շենքերի պատերով շրջափակված այն տարածությունները, որոնք պայմանականորեն համարակալեցինք և պեղումները շարունակեցինք վերևից հաշված երկրորդ և ավելի խոր շերտերի մեջ, որովհետև վերին շերտի պեղման ընթացքում կիրառված քառակուսիների (5×5 մ) վերականգնումն այստեղ դժվար էր և չափազորությունների համար անգործնական: Այստեղ պեղված 27, 31, 33 և 34 բշիջները քառակուսիների հետ առնչություն չունեցող, միմյանց անհավասար տարածություններ են, որոնց հիշողիրքավորումը երկրաչափական ցանցի նկատմամբ մեզ հայտնի է վերին շերտում: Բշիջների այդ կարգը կիրառեցինք միջնաբերդի ստորին շերտերի պեղումները դադարեցնելու նպատակով:

1951 թ. նոր ի նորո պեղեցինք նաև 21, 22, 23, 24, 25 և 29 բջիջները, որոնց տակից ի հայտ եկան ստորին շերտի հուշարձաններ:

Պարզվեց, որ միջնաբերդի գագաթին, վերին շերտի շենքերի տակ, մոտ երեք մետր խորությամբ վրա եղել է մի մեծ շինություն, կառուցված հում աղյուսից, զրաղեցրել է բավականին ընդարձակ տարածություն բլրի գագաթին և ավելի մեծ է եղել, քան վերին շինությունը (նկ. 2):

Այդ նորահայտ շենքի պատերը շարված էին հարդախառն մեծազանգված աղյուսներով՝ 43 սմ երկարությամբ, նույնքան լայնությամբ և 11,5 սմ հաստությամբ: Կան ամբողջի կեսը կազմող աղյուսներ: Պատերը շարված են խիստ կանոնավոր՝ մի շարքի աղյուսների եզրերը ընկած են հաջորդ շարքի աղյուսների մեջտեղին: Պատի միջուկում ևս մի շարքի աղյուսների եզրերը զուգադիպել են հաջորդ շարքի աղյուսների կենտրոնին: Աղյուսների ամեն մի շարքը մյուսի հետ շաղկապված է եղել 1,5—2 սմ հաստությամբ հարդախառն կավե շաղախով:

Այս բոլորի հետևանքով պատերը դարձել են միաձուլված, որոնք մինչև այսօր պահպանում են իրենց գոյությունը: Դրան մեծ շափով նըպաստել է նաև այն, որ աղյուսները պատրաստել են մեծ խնամքով և կոշտացող լարվ կավից:

Հում աղյուսե մեծ շենքն իր մեջ ընդգրկող միջնաբերդի այս երկրորդ շերտը (վերևից հաշված) զարմանալիորեն քիչ առարկաներ էր պարունակում իր մեջ: Եթե այդ շենքը միջնաբերդում շիններ, պետք է ենթադրեինք, որ նա ոչ թե սլաքատ է, այլ հասարակական կամ վարչական շենք, որտեղ մարդիկ չեն ապրել և կենցաղային առարկաներ չեն թողել:

Առավել անհասկանալի է, թե ինչպես կարող է երկրաշարժից հանկարծակի կործանված շենքը կենցաղային և կամ այլ առարկաներ չունենալ իր մեջ:

Այս բոլորին մենք մի բացատրություն կարող ենք տալ, որ 893 թ. երկրաշարժի ժամանակ այդ շենքը թեև մեծ վնասվածքներ է ստացել ու խարխլվել, բայց իսպառ չի փլվել: Նրա բնակիչները տեղափոխվել են մի այլ կացարան, իրենց հետ տանելով ամեն ինչ և հետո, հանգիստ պայմաններում, քանդել են հին շենքը, տեղը հարթել և վրան կառուցել նոր շենք:

Սակայն հում աղյուսե շենքի հողաշերտում գտնված հատ ու կենտ կենցաղային առարկաները դիտության համար ունեն բացառիկ արժեք, որովհետև 893 թ. մեծ երկրաշարժին նախորդող ժա-

մանակաշրջանից շատ քիչ բան է մեզ հայտնի քաղաքի կենտրոնական թաղից:

Մինչև Դվինի պեղումները, միջնադարյան Հայաստանը մեզ հայտնի էր Անիի պեղածո նյութերով, որոնք պատկանում են X և հետագա դարերին (Անին հիմնադրվել է 961 թվականին): Ավելի հին առարկաներ Անիում կարող են լինել միայն պատահականորեն:


Դվինի միջնաբերդի վերին շերտի առարկաների մեջ կան մի քիչ ավելի հին իրեր, որոնք զգալի թիվ են կազմում, բայց դրանց հնությունն էլ մեծ չի, որովհետև այդ շերտը գոյացել է 893 թ. մեծ երկրաշարժից հետո:

Միջնաբերդի վերին շերտը պեղելու ժամանակ աշխատել ենք այդ շերտի հետ կապված բոլոր հորերն էլ բացել և մաքրել, որոնցից մեծ թվով առարկաներ ենք ի հայտ բերել, բայց երբեմն էլ այդ հորերը չենք կարողացել գտնել, որովհետև փակել ու վերին մասը հողով լցրել են դեռևս վերին շերտի գոյության ժամանակ, ուստի անհատելի են մնացել: Իսկ այժմ, երբ խորացանք երկրորդ շերտի մեջ, այդ հորերը բացվեցին և մենք այդպիսի բազմաթիվ հորեր պեղեցինք 1951 և հետագա տարիներին՝ հում աղյուսե շենքը բաց անելու ժամանակ: Այդ հորերում հայտնաբերված առարկաները ոչ մի առնչություն չունեն հում աղյուսե մեծ շինության հետ և պատկանում են վերին շերտին, բացառությամբ այն առարկաների, որոնք այդ հորերի մեջ են ընկել փլվածքի պատճառով: Վերին շերտի հորերը, ինչպես և սպասելի էր, միջնաբերդի գագաթին երբեմն շարունակվում են ավելի խոր շերտերի մեջ, մինչև 6—8 մետր խորությամբ: Հետևապես և զարմանալի չէ, որ երբեմն միջնադարյան առարկաների հետ միասին ի հայտ են գալիս շատ ավելի հին ժամանակների իրեր, անգամ պղնձեդարյան, որ, հավանաբար, միջնաբերդի գագաթի ամենաստորին շերտին են պատկանում:

Պեղումների ընթացքում երկրորդ շերտում ի հայտ եկան մեծ մասամբ մետաղե իրեր, զենքի և ձիասարքի մասեր:

4-րդ բջիջում գտնվեց երկաթե մի փոքրիկ կաթսա, որը, հավանաբար, ծառայել է արհեստավորին և ապակե փոքրիկ սրվակ, 6-րդ բջիջում՝ պղնձե 2 դրամ, երկուսն էլ մաշված, արաբատառ գրության հետքերով:

15-րդ բջիջում ի հայտ եկան երկաթե երեք նետասլաք, երկուսը տերևաձև, մեկը քառակող: 18-րդ բջիջում՝ երկաթե երկու ձողեր, մեկը քառակող, մյուսը կեռ ծայրով, նաև երկաթե խողովակի



1. Կվին քաղաքի բերդը և կենտրոնական թաղամասը
Ա. Կենտրոնական թաղամաս, Բ. Միջնաբերդ, Գ. Ստորին բերդ:

բեկոր: 21-րդ բջիջում՝ դանակի երկաթե շեղք, պղնձե իրերի կտորտանք, ամանի ձևավոր ոտք, երկաթե օղ և այլն: 24-րդ բջիջում՝ ձիու երկաթից սանձ, մարմարից մի կախիկ, հավանաբար կրծքազարդ, որի վրա խաչի նշան կար: Այդ նույն տեղում գտնվեց շերտավոր դրահի երկաթե թերթիկներ, որոնք զինվորի լանջապանակի կամ զրահազգեստի մասն են կազմել: 25-րդ բջիջում՝ ձիու պայտ, երկաթե եռանիստ նետասլաք և մի քանի պղնձե առարկաներ՝ ասեղ և գմբեթավոր մի իր, որ կարող է կրակարանի կամ սեղանի վրա դրվող մեծ զարդանոթի կափարիչի գլուխ լինել: Այդ նույն բջիջում բանվորները գտան բյուզանդական մի ոսկեդրամ, թողարկված Կոստանդնուպոլսում Լևոն Առաջին կայսեր անունով (457—474 թթ.)²:

Հետաքրքիր է, որ, տեղ-տեղ, վերին շերտի և հում աղյուսե մեծ շինության միջև, հանդիպում էին միջանկյալ շենքերի մնացորդներ, երբեմն նույնպիսի մեծ աղյուսներով, երբեմն էլ անտաշ կամ կուպիտ տաշված լեռ քարերով շինված: Մեր բոլոր ջանքերը այդ հատ ու կենտ մնացորդներից որևէ բան վերակազմել և կամ հասկանալ, թե ինչի են ծառայել, ապարդյուն անցան, որովհետև այդ պատերը, հում աղյուսե շենքից անկախ, իրարից շատ հեռու փոքրիկ մնացորդներ են:

22-րդ բջիջում, որտեղ անվերջ մոխիր էր դուրս գալիս թե շերտի տակի և թե կողքի 21-րդ բջիջում, ի հայտ եկավ կավաշեն մի քուրա: Մոխիրը դուրս հանելուց հետո պարզվեց, որ քուրայի մեջ երկաթե օղակաձև հարմարանք կա, որի ելուստների վրա է դրվել տաքացվող (շիկացվող կամ հալվող) նյութը: Քուրայի կրակարանը գտնվել է երկաթե ելուստավոր օղակի տակ, բայց թե քուրան որտեղից է օդ ստացել՝ չկարողացանք պարզել, որովհետև իր երևացող մասերում կրակարանի մեջ բացվող օղանցք չունեի:

Այդ քուրայի էությունը հասկանալու համար, կարծում ենք, պետք է ծանոթ լինել միջնադարյան քիմիագործների աշխատանոցների սարքավորմանը³:

Վերին շերտից իջնող հորերը, ինչպես ասացինք, իրենց մեջ շատ առարկաներ էին պարունակում, որոնք թեև ջարդոտված էին, բայց մեծ մասը ամբողջանում էր: Պեղված բջիջների հորերում

գտնվեցին հախճապակե և կավե ջնարակապատ թասեր ու քրեղաններ, ձիթաճրագներ, ապակյա ափսե, ապակյա բաժակներ, սնդկամաններ և այլն:

Հորերից հանված խեցանոթների մեջ մեծ տոկոս են կազմում հոսարակ, մեծ մասամբ դեղնավուն և շիկակարմիր կավանոթները՝ փարչեր, գավեր, սափորներ, կրակի վրա դրվող պուտուկներ: Այդտեղ գտնվեցին նաև թրծած աղյուսներ:

Հորերում շատ կային որսի կենդանիների, տնային խոշոր և մանր եղջերավոր անասունների, թռչունների և ձկների ոսկորներ: Ամեն մի հորից դուրս էին գալիս ոչխարի բազմաթիվ վեգեր, երբեմն էլ ձվի կեղև, հացի ածխացած կտորներ, մրգերի կորիզներ, որոնք թափվել են հատուկ այդ նպատակով փորված հորերի մեջ՝ կոտրատված և անպետքացած ամանեղենի հետ միասին:

Ստորին բերդի սահմաններում որոշ փորձնական աշխատանքներ կատարել էինք նախորդ տարիների ընթացքում, բայց դրանք կենտրոնացված էին հյուսիսային, արևելյան և մասամբ էլ հարավարևմտյան կողմերում, իսկ հարավային և արևմտյան ընդարձակ հարթության վրա աշխատանքներն սկսեցինք 1951 թ.: Պեղումները թեև հետախուզական նպատակներ էին հետապնդում, բայց այնքան հետաքրքիր մի բնակելի տուն հայտնաբերվեց, որ որոշվեց ամբողջությամբ բացել՝ շրջապատի հետ միասին:

Սակայն այստեղ մի սխալ թույլ տվինք: Փոխանակ այդ տարածությունը բլրի գագաթի եռանկյունաչափական կետի հետ կապելու, շարունակեցինք հետախուզական պեղումների համար պայմանականորեն նշած քառակուսիները, որոնք թե իրենց ուղղությամբ և թե համարակալությամբ խոտոր էին հիմնական ցանցի նկատմամբ:

1951 թ. ստորին բերդի հր լանջի պեղումներն սկսեցինք բերդի հր մուտքի կողքից, բերդապարսպի ներսի երեսից, բայց որպեսզի չվնասենք պարիսպը, պեղումներն սկսեցինք պատի կենտրոնից՝ 12 մետր հեռվից, ենթադրելով, որ ոչ մի բերդապարիսպ չի կարող 24 մետր լայնություն ունենալ և, մոտ 2,5 մետր խորության մեջ բացված աղյուսաշեն հատակը հիմք ընդունելով, հետզհետե մոտեցանք բերդապարսպին: Շուտով մեր դիմաց բացվեց կավակերտ մի պատ, որ ճիշտ բերդապարսպի ուղղությունն ուներ և կարծեցինք, որ այդ պարսպի ներքին երեսն է: Հետագայում պարզվեց, որ դա այդտեղ կառուցված մի մեծ տան հարավային պատն է, որ գուցե հենել են բերդապարսպին, իսկ երեսը գտնվում համար պետք էր

² Տե՛ս «История Византии», т. 1, М., 1967, стр. 201.

³ Այդ առեղծվածային քուրան, հետագայում ուսումնասիրելու համար, հողաշերտի հետ միասին հանվեց և փոխադրվեց Դվինի հնագիտական պահեստը, որտեղ և պահպանվում է մինչև այսօր:

շատ ավելի խորանալ լիցք հողի մեջ. այդ առաջժմ հնարավոր չէ առանց վերին շերտի բնակելի տնե-
րը քանդելու:

Այդտեղ բացվեց իշխանական բնակելի տուն
իր բոլոր հարկաբաժիններով, որը միանգամայն
նորոթյուն էր հայկական ճարտարապետության
համար (նկ. 3): Բնակելի տան դահլիճի կենտ-
րոնի հորը, որ միայն երգիկից թափանցող անձ-

անցք ունեցող և տեղում լավ ամրացրած դարդա-
րուն սալաքարով, հետևապես պատահականորեն
այնտեղ չէր կարող ընկնել այդ եղակի առարկան:

Ստորին բերդի այս տան պեղումներից դուրս
եկան բազմաթիվ առարկաներ, որոնք պատկա-
նել են բարձր խավի բնակիչներին:

Բայց, պետք է նշենք, որ ստորին բերդում
հայտնաբերված դրամներն ավելի շատ են, քան



3. Բնակելի տուն ստորին բերդում (XII—XIII դդ.):

րևաջրերի ընկալմանն էր ծառայել, դատարկ էր
և մոտ հինգ մետր խորություն ուներ: Այդ հորի
միջից բոլորովին անսպասելիորեն դուրս եկավ
հախճապակյա մի գեղեցիկ սափորիկ (նկ. 4), կես
լիտրից մի քիչ ավելի տարողությամբ, անվնաս
վիճակում, որ հազվադեպ է Դվինում և մանավանդ
միջնադարյան այլ բնակավայրերում: Սափորը
դրսից սպիտակ ջնարակապատ է, վերջնարակա-
յին ոսկեգույն զարդաձևերով, Դվինում արտա-
դրված բարձրարվեստ խեցեղենի մի բացառիկ
նմուշ: Առանց կասկածելու կարելի է պնդել, որ
այդ սափորիկը հորի մեջ են դրել թաքցնելու նպա-
տակով: Հորը ծածկված էր 1,5 սմ տրամագծով

միջնաբերդում: Օրինակ, 1951 թ. ստորին բերդում
գտնվել են 26 պղնձե և 3 արծաթե դրամ, իսկ միջ-
նաբերդում՝ անհամեմատ քիչ:

Տարբեր են նաև միջնաբերդում և ստորին
բերդում գտնված խեցանոթները: Միջնաբերդում
գերակշռողը բարձրարվեստ հախճապակին է և
ջնարակած զարդարուն քրեղաններն ու թասերը:
Իսկ ստորին բերդում խեցանոթների մեջ գերա-
կշռողը բարձրարվեստ ամաններն են՝ գլխավորա-
պես դրոշմազարդ գոտիով կարասները, որոնցից
երեքը գտնվեց միայն մի հորի մեջ:

Հախճապակյա անոթների քիչ լինելը ստորին
բերդում ոչ թե հետևանք է բնակիչների շքավո-

րության, ինչպես կարելի է ենթադրել, այլ, կարծում ենք, կապված է սովորությունների հետ, որովհետև ստորին բերդի տներն իրենց ներքին հարդարանքով ոչ մի բանով էտ չեն մնում միջնաբերդի



4. Հախճապակե սափորիկ, գտնված ստորին բերդի հորերից մեկում (XII—XIII դդ.):

շենքերից: Հախճապակյա առնժները ստորին բերդում գործածվել են իբրև զարդարանք պատերի և տուֆակերտ խորշավոր կառուցվածքի վրա, իսկ դահլիճի հորի մեջ գտնված շողուն արտաքինով սափորիկն այդ տեսակի մեջ անպերազանցելի նմուշ է և վկայում է տեղացի վարպետների բարձր և նուրբ ճաշակի, ինչպես նաև կատարելության մասին:

Ստորին բերդում թոնիրների, պատրհանների, ինչպես նաև գոտեզարդ կարասների առկայությունը վկայում է այն մասին, որ այստեղի բնակիչները պահպանել են իրենց ազգային ավանդական սովորությունները և քիչ են հետամուտ եղել նորաձևություններին:

Շորերից մեկում գտնված դրոշմազարդ երեք կարասներից մեկը ունի հայերեն արձանագրություն, որ լրիվ շրջան է կազմում կարասի բերանի մոտ (նկ. 5):

Ստորին բերդում չափ են նաև աշխատանքա-

յին գործիքներն ու զենքերը՝ մեծ մասամբ երկաթից, պղնձից և բրոնզից:

Պեղումների ընթացքում բացված թոնիրների մեջ (նկ. 6), որոնք, ի դեպ, միևնույն բնակարանում մի քանիսն են՝ մեծ և փոքր, ի հայտ եկան խմորի երկու տաշտաքերիչ (թաթակիշ), դործածված և մեկը նույնիսկ խիստ մաշված: Հողաշերտերի մեջ գտնվեցին դահլիճի յոթ շեղբ, երկաթե մանգաղ, գդալանման բրոնզե գեղեցիկ դեղդիր, կշեռքի նժար և երկաթե ու պղնձե բազմաթիվ մանր առարկաներ. ինչպես նաև մեծ ու փոքր գամեր, օղեր, օղակներ, դուռն փակի և այլ հարմարանքների մասեր, ձողեր, կեռեր, թիթեղ և այլն, մատանիներ, բրոնզե ծակոտկեն կրծքազարդ և քիչ քանակությամբ բարե ուլունքներ:



5. Դրոշմազարդ կարաս հայատառ արձանագրությամբ, ստորին բերդ (XII—XIII դդ.):

Քաղաքի կենտրոնական թաղի (երկրորդ տեղամաս) պեղումները 1951 թ. կատարվեցին երկու տարբեր կետերում՝ Կաթողիկե եկեղեցու ներսում և եկեղեցուց դեպի հր:

Կաթողիկե եկեղեցու ներսում կատարվեցին մի շարք ստուգողական բնույթի պեղումներ, որոնց նպատակն էր եկեղեցու սկզբնական ձևերի պարզում և հետազայում կրած փոփոխությունների մանրամասնությունը, ինչպես նաև եկեղեցու կա-

ռուցումից առաջ եղած շերտի բովանդակությունը:

Պեղվեց եկեղեցու հր պատի տակը՝ ներսից, որտեղ ի հայտ եկան նրա որմնասյուների խարխիսները: Մաքրվեցին գմբեթակիր մույթերը, բացվեց խճանկարով ծածկված հնագույն հատակներից մեկը (նկ. 7): Խճանկարը պահպանվել էր միայն երկու տեղում, հր-ամ մույթի մոտ և տա-

կմախքից կային մի քանի մանր առարկաներ՝ տարբեր մեծության ուլունքներ, որոնք, ըստ երեվոյթին, շարված են եղել, ականջողեր, մատանի և այլն: Կարասը գտնվում էր եկեղեցու հնագույն պատի տակ, որի հիմքերը դնելիս էլ, հավանաբար, քանդել ու ավերել են:

Կարասային թաղումներ գտնվել են նաև նույն թաղամասում, 1938 թ. և հետագա տարիներին,



6. Թոնիրներ, պեղված ստորին բերդի սենյակներից մեկում (XII—XIII դդ.):

ճարի հր-ամ անկյունում, մյուս տեղերում քանդվել էր VII դարի սկզբին՝ եկեղեցու վերակառուցման ժամանակ⁴:

Պեղեցինք նաև տաճարի հր-ան ավանդատունը, պարզելու համար, թե եկեղեցու կառուցումից առաջ այնտեղ ինչ է եղել: Այդ նպատակով ավանդատան մեջ փորեցինք մեկ մետրից քիչ ավելի, որտեղից դուրս եկավ մի կարաս, որի մեջ բացի

որոնց նկարագիրը տվել ենք ներկա աշխատության Ա հատորում:

Այդ բոլոր հայտնաբերումները ցույց են տալիս, որ քաղաքի կենտրոնական թաղը քաղաքի հիմնադրումից առաջ, մեր թվականությանից առաջ եղել է գերեզմանոց, բայց թե որտեղի՞ բնակիչների համար, առայժմ մեզ անհայտ է, որովհետև կենտրոնական բլուրը, որ մեզ ծանոթ առայժմ միակ հին բնակավայրն է Դվինի միջնաբերդի սահմաններում, այդ դարերի մնացորդներ չունի:

Հետաքրքիր էին նաև Կաթողիկե եկեղեցուց դեպի հր ընկած տարածության պեղումները, որոնք նախորդ տարվա պեղումների շարունակությունն էին և նպատակ ունեին ընդարձակելու ու

⁴ Այս կետի պեղումների վրա չենք ծանրանա, որովհետև ժամանակագրությունը մի փոքր խախտելով նկարագրել ենք ներկա աշխատության առաջին հատորի 97—98 էջերում, որպեսզի Կաթողիկե եկեղեցու մասին մեր ասելիքը դրանով ավարտվեր: Տե՛ս Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:

ամբողջացնելու կենտրոնական թաղի պեղումները (նկ. 8):

Կաթողիկեի հր կողմում պեղած քառակուսիներում շենքեր պահպանելու հույս չունեինք, որովհետև այդ հսկայական տաճարի շրջակայքը պետք է ազատ լիներ՝ հրապարակ կամ լայն փողոց, եկեղեցու բակ, ինչպիսին ունեն էջմիածնի վանքը և այլ եկեղեցիներ: Այդպես էլ ստացվեց: Խեղճ ի

էինք ավելի խորանալ, երբ հողի շերտը փոխվում էր և կամ որոշ նշաններ էին երևում:

Հսկայական եկեղեցու փլատակումից պետք է առաջանար մեծ ըլուր և եկեղեցու բեկորները որոշ շառավիղով ցրվեին նրա շրջապատում, բայց պարզվեց, որ սրբատաշ տուֆ քարերը վաղուց են հափշտակվել շրջակայքի դյուղացիների և Դվին քաղաքի ու ժամանակի բնակիչների կողմից կա-



7. Կաթողիկե եկեղեցու խճանկար հատակի հատված (V—VI դդ.):

հայտ եկան մի քանի մանր հյուղակների մնացորդներ, բայց բոլորն էլ ուշ ժամանակի, հնագիտական նշանակությունից զուրկ ավերակներ էին, որոնք կառուցվել էին 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ Կաթողիկե եկեղեցու կործանումից և ավերակների կույտի վերածվելուց հետո:

Պեղումները կատարեցինք Կաթողիկե եկեղեցու երկայնքին զուգահեռ, մեր կազմած տեղադրական ցանցի ա, Ն և -ա, -ն գծերի ուղղությամբ՝ 5-ից 18 քառակուսիների սահմաններում: Պեղեցինք 32 քառակուսի, 800 քմ ընդհանուր տարածությամբ:

Գետնի հին մակերեսը շատ խորը չէր, 1,5 մետրից չէր անցնում, բայց երթճան սախաված 2—748

վակերտ տների հիմնաքարերի և այլ նպատակների համար: Գրեթե ամենուրեք Դվինի XI—XIII դարերի բնակիչները, առանց կրոնական վախի, եկեղեցու սրբատաշ քարերը, որոնք տարբերվում են իրենց անսովոր մեծությամբ և ուրույն տաշվածքով, օգտագործել են իրենց տներում:

Այսպիսով, արդեն XV դարում, գուցե և մի հարյուրամյակ դրանից առաջ, Կաթողիկե եկեղեցու փլատակների կույտը գրեթե ամբողջովին վերացել էր և իջել այն աստիճանին, որ XV դարից սկսած եկեղեցին և ամբողջ այդ թաղամասը դարձել էր գերեզմանոց շրջապատի գյուղերի բնակչության համար:

Կաթողիկե եկեղեցու հարավային կողմի տա-

բաժնիչունն էլ, այդ թաղի մյուս մասերի նման, ծածկված էր ուշ ժամանակների աղյուսաշեն գերեզմաններով, որոնց համար օգտագործել էին հին շենքերի վրայից ընկած քառակուսի աղյուսները:

Հնում էլ, V—VI դարերում, երբ եկեղեցին քաղաքի գլխավոր դարդերից մեկն էր, նրա հարավային բաղ տարածության վրա եղել են եկեղեցա-

Սակայն այս տեղամասի պեղումների մեջ ամենից ուշագրավն ու ողբերգականը —ա—7 քառակուսու (որ շարունակվում էր նաև —ա—6 քառակուսու մեջ) խմբական գերեզմանն էր, որտեղ իրար վրա թափած կանոնց ու երեխաների բազմաթիվ կմախքներ գտնվեցին, ուղղակի հողի մեջ, առանց դողաղների կամ գերեզմանական կառուցվածքի: Մեկի շորերի մնացորդների մեջ գտնվեց



8. եկեղեցուց դեպի հր ընկած տարածքի վերին շերտի պեղումները:

կան դործիշների մի քանի գերեզմաններ: Այդ հին գերեզմանների վրա սյունաձև կոթողներ են կանգնեցրել և գլխին քարե խաչ դրել: Սակայն այդ խաչերն ընկել և կոտրատվել են: Այսօր թեև հայտնի են մի քանի տասնյակ այդպիսի խաչեր՝ Դվինի, Չվարթնոցի, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի պեղումներից և շատ այլ հնավայրերից, բայց բոլորն էլ կոտրատված են:

Պեղումների ընթացքում —6+ա քառակուսում, հին մակերեսից ներքև բացվեց կարասի մեջ թաղված դամբարան, —10ա քառակուսում՝ իրար հադյրված չրառար խողովակներ, որոնք միմյուր մեկը նախորդ տարիներին բացված խողովակաշարերին:

Երկու ոսկե դրամ՝ կտրված բյուզանդական Կոստանդինոս X կայսեր (1059—1067) ժամանակ: Մի կնոջ մեջքին կար արծաթյա գոտի, սլատրաստած թերթիկներից, որոնք հատուկ հարմարանքով հազգված էին կաշվե ժապավենի վրա: Գոտին իր երկու ծայրերին ուներ արծաթյա ծակոտկեն ճարմանդներ: Գտնվեցին նաև ուլունքներ, ականջօղեր, դրամներ՝ փաթաթված լաթի մեջ, առյուծի սալարանջանի բեկորներ և այլն:

5 Գտնվեց մի կապոց քորձի մեջ փաթաթած և ազդուտած, որի մեջ կային 11 կես և քառորդ չափով կտրատված մանր դրամներ: Այդ փոքրիկ «պանձր», ըստ դրամագետ ի. Մուշեղյանի, Բագրի սելջուկների կողմից 1130—1135 թթ թողարկված դրամներ են:

Այս նույն տեղամասում 2—8 քառակուսու մեջ բացվեց ցորենի հոր, լեցուն արդեն ածխացած ցորենի հատիկներով: Հորի բերանը ծեփված էր կրային շաղախով:

Նույն հատվածի — 2—5 քառակուսու բացվեց մի հոր, որի միջից դուրս եկան մոխիր, փայտածուխ, մետաղի մնացուկի բեկորներ, ոսկերչի հալոց՝ հրակայուն կավից, ձիթաճրագներ և այլ մանր իրեր, որոնց թվում նաև ապակու բեկորներ:

Նկարագրված հորն իր գտնված առարկաներով ապացուցում է, որ մոտակայքում եղել է պղնձագործի կամ ոսկերչի արհեստանոց, որի բուրայի մոխիրը և անպետքացած առարկաները թափել են այդ՝ մոտ 6 մ խորությույն ունեցող հորի մեջ:

1952 թ. պեղումները շարունակեցինք քաղաքի երեք տարբեր տեղամասերում՝ միջնաբերդի գագաթին, ստորին բերդում և քաղաքի կենտրոնական թաղում, որոնք նախորդ տարվա աշխատանքների անմիջական շարունակությունն էին կազմում: Բացի այդ, մի քանի հուսալի տեղերում, գլուղական այգիների և ցանքսերի տարածությունից դուրս, հետախույզեցինք գետնի երեսը և ուրիշ տեղերում ստուգողական պեղումներ կատարեցինք՝ պարզելու երկրի ընդերքում թաքնված մշակութային մնացորդները:

Միջնաբերդի գագաթի պեղումները 1952 թ. նույն նպատակներն էին հետապնդում, ինչ որ նախորդ տարին: Մեր նպատակն էր բացել վերևից հաշված երկրորդ շերտը, որի մեջ մի քանի տեղերում արդեն ի հայտ էին եկել հում աղյուսե պատերով մի մեծ շինության տարբեր մասերը: Նույն նպատակին նվիրեցինք միջնաբերդի նաև հետագա տասը տարիների պեղումները, մինչև որ լրիվ բացվեց այդ շերտը և դրանով գագաթի բարձրությունն ամբողջ մակերեսով իջավ մոտ երեք մետրով ևս, իսկ նախնական մակերեսից, երբ դեռ պեղումները չէինք սկսել՝ մոտ հինգ մետրով:

1952 թ. խորացման աշխատանքները շարունակեցինք բլուրի գագաթի եռանկյունաչափական զրո կետի ամ կողմում, վերին շերտի մեծ շինության առկայության ներսից, նույն պատի ուղղությամբ, երկու ծայրերից միաժամանակ և հարավային ծայրամասից ու հյուսիսից, այն հաշվով, որ հետզհետե պեղումները առաջանալով դեպի զրո կետը, վերջում միանան միմյանց և մի ամբողջություն կազմեն:

Այդ տարածությունը, որ վերցրել էինք 10 մետր լայնքով, բաժանեցինք մի քանի բջիջների, սկսեցինք փորել ամեն մեկն առանձին, հորիզո-

նական մանր շերտերով. յուրաքանչյուրի խորությունը 25 սմ-ից ավելի չէր:

Շարունակեցինք նաև նախորդ տարին սկսած մի այլ տարածության պեղումները, որ բլուրի կենտրոնական մասում ձգվում էր արևելքից դեպի արևմուտք, վերին շերտի բաղնիքի մոտով: Այդ պիծը երկարացվեց դեպի առ՝ մինչև նախորդ գծի կենտրոնական մասը, որտեղ երկու շերտերը միանալու էին միմյանց: Պեղումները սկսեցինք առ ծայրից, պայմանով, որ երբ հողաշերտում երևան հում աղյուսե շենքի մասերը կամ ուրիշ շենքեր, պեղումները շարունակվեն միայն հայտնագործվող շենքի պատերի ուղղությամբ:

Շուտով, մոտ մեկ մետր փորելուց հետո, երկու գծերի մեջ էլ ի հայտ եկան հում աղյուսե շինության որոշ պատեր, միայն այն տարբերությամբ, որ հարավից հյուսիս ձգվող շերտում պատը, մեր պեղումներին դուգահեռ, երկարում էր հյուսիսից հարավ, առանց ընդմիջումների, որից և երևում էր, որ այն շենքի առ պատն է, նրա վերջին սահմանն այդ կողմում:

Մյուս ուղղությամբ կատարված պեղումների մեջ, առ մասում, միմյանց դուգահեռ երկու ուրիշ պատեր բացվեցին, որոնք նման էին հում աղյուսե մյուս պատերին և, անտարակույս, նրանց անքակտելի մասն էին կազմում: Սակայն նույն գծի ամ մասում, դեռևս հում աղյուսե շենքի հիմնապատերի ստորին շարքերին չհասած, այդ ժամանակ և հետագայում, բացվեց մի ընդարձակ տարածություն՝ երկու և երեք տակ շարված նույն չափի հում աղյուսով:

Այդ աղյուսաշար տարածության իմաստը մինչև այսօր մեզ համար մնում է հանելուկ, որովհետև, եթե ընդունենք, որ նա հատակ է, իսկ նրանից ավելի խորքը շարունակվող մեծ շենքի մոտ մեկ մետր պատերը գետնի տակի հիմքերն են, այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու հատակից վերև մուտքի կամ լուսամուտի բացվածք չկա ոչ մի տեղ և ինչու այդ հատակը չի շարունակվում շենքի մյուս մասերում: Իսկ եթե հատակ չէ, ուրեմն ի՞նչ է: Չենք կարող ենթադրել, որ այդ շարվածքը պատկանում է երկու հիմնական շերտերի արանքում գտնվող միջանկյալ մի այլ կառուցվածքի, որովհետև ոչ առանձին պատեր ունի և ոչ էլ որոշ տարբերություններ աղյուսների չափերի կամ ձևերի մեջ:

Միջնաբերդի հյուսիսային մասի մի հատվածում, որ պայմանականորեն 4-րդ բջիջ ենք անվանել, երկրորդ շերտի պեղումների ժամանակ որոշեցինք խորանալ ինչքան հնարավոր է և հաս-

եւ ի բնահողին. իմանալու համար, թե բլուրի դա-
դաթին մշակութային հողաշերտը մեզ մինչև ո՞ր
դարաշրջանն է առաջնորդելու և բոլոր շերտերը
միասին քանի մետր են բնական բլուրի գլխին և
լանջերին:

Բլուրի դադաթի մակերեսից, այսինքն զրո կե-
տից պեղմամբ խորացանք 12 մետր և հասանք
մշակութի հետքեր պարունակող հավանաբար
ամենահին շերտին, բայց չկարողացանք հասնել
բնահողին, որովհետև շարունակելու դեպքում ան-
խուսափելի էին փլուզումները: Բացի այդ, մենք
արդեն մտել էինք պղնձեդարյան (էնեոլիթ) հաստ
շերտի մեջ, որ Հայաստանում մինչև այժմ հայտնի
բնակավայրերից ամենահինն է և համընկնում է
դրեթե նստակեցության սկզբին:

Պղնձեդարյան շերտը Դվինի միջնաբերդի գա-
դաթին դեռևս չենք ուսումնասիրել, հետևապես և
նրա մասին որոշակի խոսք ասել չենք կարող,
բայց 4-րդ բջիջի պեղումներից բլուրի գանազան
տեղերում պատահականորեն հայտնագործված ա-
ռարկաներից արդեն պարզ է, որ նա մեծ նստվածք
է տվել այդտեղ և լավ պահպանված հիմնական
շերտերից մեկն է, որովհետև դեռևս հնագույն ժա-
մանակներում նրա ավերակների վրա նոր շեն-
քեր են կառուցվել և հետագայում այլևս քանդման
ու ոչնչացման չեն ենթարկվել:

4-րդ բջիջի խոր պեղումների շնորհիվ պարզ-
վեց Դվինի մեծ բլուրի (քաղաքի միջնաբերդի)
մշակութային շերտերի կազմությունը և շերտերի
հաջորդականությունը, նրանց բնույթը: Հաստատ-
վեց նաև այն ենթադրությունը, որ քաղաքի հիմ-
նադրումից շատ առաջ Դվինի բլուրը եղել է Հա-
յաստանի աչքի ընկնող հնագույն բնակավայրերից
մեկը, որի պեղումները, անկախ միջնադարյան
քաղաքի անգերազանցելի մնացորդներից, ինքնին
մեծ կարևորություն է ներկայացնում հնագույն
դարերի, մանավանդ վաղ հայկական շրջանի, մշա-
կութի ուսումնասիրության համար⁶:

Սակայն խորացման համար մեր ընտրած
4-րդ բջիջը, որ, ինչպես ասացինք, ընկնում էր
բլուրի ղլխահարդակի հյուսիսային եզրի մոտ,
այնքան էլ հաջող չէր, որովհետև, ինչպես երևաց

պեղումներից, բլուրը երկարատև բնակության հե-
տևանքով հետզհետե մեծացել է՝ բարձրացել և
միաժամանակ լայնացել: Բլուրի հնագույն և այ-
ժմյան շափերը խիստ տարբեր են. հինը փոքր
էր և ունեցել է փոքր շառավիղ, իսկ հետզհետե
բարձրանալով և լայնանալով ձեռք է բերել այսօր-
վա իր ընդարձակ մակերեսը:

Մեր պեղած վայրը ոչ թե հնագույն բլուրի
դադաթի վրա էր ընկնում, այլ նրա թեք լանջին:
Շերտերն այդտեղ մեծ թերության վրա էին դասա-
վորված, այնպես, որ բարձրի հորիզոնական շեր-
տերը խորքում հետզհետե թերվում են և ինչքան
խորը, այնքան ավելի:

Միջնաբերդի վերահիշյալ պեղումների ընթաց-
քում դուրս եկան բազմաթիվ առարկաներ, որոնք
բաժանում ենք երկու խմբի: Բուն շերտից ի հայտ
եկածները ավելի հին են և պատկանում են հում
աղյուսե մեծ շինության ժամանակաշրջանին, իսկ
հորերում գտնվածները ոչ մի կապ չունեն այդ շի-
նության հետ և պատկանում են վերին շերտին կամ
քաղաքի գոյության վերջին շրջանին (X—XIII դդ.):

Բուն շերտում հայտնաբերվեցին տարբեր ձևի
երկաթե սրի բեկոր, մի քանի նետասլաքներ և
երեք հեսանաքարեր: Պղնձե իրերն այս շերտում
ավելի շատ են, քան վերինում և տեսակներն էլ
բազմազան՝ շքասեղներ, ասպարանջան, փոքրիկ
կշեռքի նժար, ձողեր, մի փոքրիկ խաչ: Շատ են
հանդիպում ոսկրե մանր առարկաներ՝ հերուն,
սրածայր մի առարկա (հավանաբար ծակիչ), գայ-
լիկոնած մի անհասկանալի իր, եղջյուրի կտրատ-
ված բեկորներ, ոսկրե անցքավոր իր և այլն:

Այս շերտում կավանոթները հազվադեպ են:
Եթե պատահականորեն շերտի մեջ ընկած բացա-
հայտ վերին շերտին պատկանող առարկաները մի
կողմ թողնենք (ջնարակած թաս, ջնարակած բա-
ցերես ձիթաճրագ, ոսկեներկ հախճապակու բե-
կոր), բուն շերտի ժամանակաշրջանի առարկաներ
կամ չկան վերին շերտում և կամ այլ տեսք ունեն:

Հում աղյուսե շենքի հսկայական շերտում
1952 թ. պեղել ենք ինը բջիջ (№ 4, 24, 25, 27, 28,
29, 30, 31 և 32), որոնց ընդհանուր մակերեսը
մոտ 500 քառ. մետր է, միջին խորությունը՝ 2,5
մետր, գտնվել են ընդամենը մի քանի առարկա-
ներ՝ ձիթաճրագներ երկար քթով, բարձրավիզ բե-
րանով, կճուճաձև իրանով, որոնք երբեք ջնարա-
կած չեն: Այդ ձիթաճրագներից մեկն ունի երկու
քիթ, որոնց պատրույգ են դրել և զույգ կրակ վա-
ռել: Ձիթաճրագներից մեկն էլ ավելի հին է, նա-
վական իրանով. երեսը փակ: Շերտի մեջ գտնվել
են դեղնավուն կավից մի սափոր և մի փարչ, որոնք

⁶ Հին շերտի պեղումների վրա մենք չենք ծանրանա, որովհետև դրանք կապված չեն միջնադարյան քաղաքի ու-
սումնասիրության հետ: Այստեղ այդ հարցին կանգնողա-
նանք միայն պեղումների ընթացքի անհրաժեշտ նկարագրու-
թյան սահմաններում, իսկ ստորին, նախաքաղաքային շեր-
տերի քննությունը կկատարենք ներկա աշխատության այդ
հարցին նվիրված գլխում:

որոշակի տարրերովում են վերին շերտի նման առարկաներից:

Բուն շերտում հայտնաբերվեցին նաև նույն շերտին պատկանող ապակե անոթների մի երկու բեկոր:

Զորրորդ բջիջում, որտեղ, ինչպես ասացինք, խորացանք 12 մետր, վերջում ի հայտ եկավ սև փայլով մի կճուճ, մակերեսին ճնշմամբ արված պղնձեքարեդարյան զարդաձևերով: Այս բջիջում, բացի խեցանոթների բազմաթիվ բեկորներից, գտնվեց նաև օջախի եռոստանի մի նեցուկ, որ դարձյալ բնորոշ է այդ նույն դարաշրջանի համար:

Միջնաբերդում գտնված առարկաների մեծ մասը, ինչպես ամեն տարի, այնպես էլ 1952 թ., ի հայտ եկավ վերին շերտի բազմաթիվ հորերից, որոնց խորությունը սովորաբար 4—5 մետր է (եթե սենյակի խոնավությունը ներծծելուն է ծառայել), բայց կան հորեր, որ ունեն տասը մետրից ավելի խորություն (սառնարաններ, կեղտաջրի հորեր, աղբանոցներ, թաքստոցներ և այլն):

Միջաբերդի այդ հորերում է, որ հախճապակե և ջնարակած կավե բարձրարվեստ առարկաներ են ի հայտ գալիս: Դրանք տեղական արտադրության և դրսից բերված հախճապակյա թանկարժեք առարկաներ են, ապակյա անոթներ (թասեր, բաժակներ, ջրամաններ, սափորներ, սրվակներ, զարդաշշեր), ջնարակած լճազմագույն և փորագիր զարդաձևերով քրեղաններ ու թափեր (տախտ. III, 1, 2), գավեր, գավաթներ, սափորներ, ձիթաճրագներ, ինչպես նաև հասարակ խեցանոթներ (սնդկամաններ, կճուճներ, սափորներ, թոնրի և կարասի խփեր, կրակի վրա դրվող պուտուկներ և այլն):

Պեղած 31 և 32-րդ բջիջների հորերում գտնվեցին հախճապակյա 14 թաս՝ տարբեր չափսերի, ոսկեգույն վերջնարակային զարդաձևերով, ծակոտկեն կողերով ու փորագիր զարդերով, տեղական վարպետների գործեր և այլն:

Միայն 27, 28, 30, 31 և 32 բջիջներից դուրս եկան 50-ից ավելի տեղական արտադրության ամբողջական, կամ ամբողջացող ջնարակած թասեր ու քրեղաններ, որոնց մեջ կան բազմագույն եզակի բարձրարվեստ գործեր, որոնք հայ վարպետների բազմարվեստ տաղանդի արգասիքն են:

Ապակե բազմաթիվ առարկաներ գտնվեցին 28-րդ բջիջի հորերից մեկում, որոնցից տեղում հնարավոր եղավ լրիվ կամ թերի ամբողջացնել 24 առարկա՝ սափորներ, բաժակներ, թասեր, շշեր, սրվակներ, զարդանոթներ, քիմիական փորձանոթներ:

Այսպես առարկաներ շատ կային նաև 31-րդ բջիջում Այդտեղից հայտնաբերվեց ապակյա ամբողջական մի ջրաման երկու կանթով, տափակ, ձվաձև՝ նման այժմյան պինվորական տափաշշերին:

28-րդ բջիջի հորի ապակիների մեծ կույտը, ինչպես հայտնի դարձավ հետազայում, նրան մոտ գտնվող ապակու արհեստանոցի արտադրական խոտանը և ջարդոտված առարկաների բեկորներն են: Արհեստանոցում հայտնաբերվեցին իրար կողքի կառուցված երեք հնոցներ, սակայն այդ մասին կիսուս ենք իր տեղում: Գործարանային խոտան լիճեղու պատճառով է, որ վերոհիշյալ հորում տնային գործածության անոթների հետ միասին դուրս էին գալիս նաև քիմիական փորձանոթների և այնպիսի առարկաների բեկորներ, որոնք տներում երբեք չեն գործածվել: Միջնադարում ապակյա անոթների գործածությունը տներում, թեկուզ իշխանական, համեմատաբար սահմանափակ էր, հետևաբար կենցաղում գործածվող ապակյա անոթների ջարդվելուց այդպիսի մեծ կույտ չէր կարող առաջանալ:

Միջնաբերդի 27-րդ բջիջի մոտ եղել է ոսկերչանոց, որից թեև հետքն անգամ չի պահպանվել, բայց այդ բջիջում բացված հորի միջից գտնվեցին ոսկերչական արհեստի շատ առարկաներ և ապացույցներ՝ հրակայուն կավից պատրաստված ոսկերչի տասը փոքրիկ հալոցներ, շատ գործածությունից մաշված ու ճաքճքված, որոնց մեջ երևում էին ձուլված մետաղի հետքեր:

Միջնաբերդի հորերում գտնված առարկաները սակավաթիվ են, բայց բարձրարվեստ՝ պղնձե մի քանի մանր առարկաներ, երկաթե նիզակի ծայր, սրի բեկոր, երկաթե երկու նետասլաք և մի քանի գամեր (տախտ. XIV, 1, 2): 25-րդ բջիջի հորում գտնվեց ոսկյա մի փոքրիկ զարդ, 31-րդ բջիջում՝ արծաթե ուլունք, 32-րդ բջիջում՝ փռված շուրթերով պղնձե մի փոքրիկ թաս, միջի հեղուկի արտահոսքի համար արված երկարավուն առվակով, որ հնում ոսկերիչներն են գործածել և մեզ ծանոթ էր նախկին տարիների պեղումներից:

Մետաղե փոքրաթիվ առարկաների շարքում բացառիկ տեղ են գրավում 27-րդ բջիջի հորից հայտնաբերված միջակ մեծության պղնձե սափորն ու քանդակազարդ առյուծակերպ երկու կանթով փոքրիկ կաթսան (տախտ. XIII, 5):

Ստորին բերդի պեղումներն այս տարի կատարվեցին երկու տարբեր կետերում. նախորդ տարվա բացված իշխանական տան ամ կողքին և նրա դիմաց՝ միջնաբերդի լանջին, որտեղ պեղում-

ներն սկսել էին դեռևս անցյալ տարի՝ բայց որևէ արդյունքի չէինք հասել:

Անցյալ տարի պեղած իշխանական տուն ամ կողմի փոս մասում, այս տարի բացվեց անհամեմատ հետաքրքիր մի այլ իշխանական տուն, որի թեև մի մասը գրեթե ոչնչացել էր, և անգամ հատակագծից ոչինչ չէր մնացել, բայց կարևոր մասերից մեկը, որ մի խորշավոր փոքրիկ սենյակ է

ծովյուն են պարփակել իրենց մեջ: Դժբախտաբար, շորորոգ սյունը չհասցրինք պեղել: Պարզ է, որ այդ սյուններն իրենց գլխին կրել են փայտե դերաններով կառուցված քառակուսի ծածկույթ:

Հավանաբար, այդտեղ եղել է մետաղագործի մեծ արհեստանոց, ուր զբաղվել են նաև պղնձե մանր առարկաների արտադրությամբ ու զինագործությամբ: Թեև դարբնոցի քուրա չգտնվեց, բայց



9. Ստորին բերդում պեղված իշխանական տուն իր խորշավոր սենյակով (XII—XIII դդ.):

և ունի սրբատաշ քարե քանդակազարդ գոտի, լավ պահպանվել է ու նորություն է Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության համար (նկ. 9): Մեր կարծիքով, այդ շենքը, ինչպես նաև անցյալ տարի նրա կողքին պեղված բնակելի իշխանական տունը կառուցվել են XII դարում և կործանվել քաղաքի ընդհանուր ավերածության ժամանակ՝ XIII դարի կեսերին: Այս տունը ևս հայ իշխանական տուն է:

Միջնաբերդի լանջի պեղումներից, մոտ 1,5 մետր խորության մեջ, մեկը մյուսի հետևից բացվեցին թրծած աղյուսով շարված երեք սյունների մնացորդներ, որոնց դասավորությունից երևում էր, որ նրանք շորսն են եղել և քառակուսի տարա-

ցրիվ եկած, մի կողքը այրված աղյուսները, հաստ մոխրաշերտը և նրա մեջ թափված բազմաթիվ պղնձե և երկաթե իրերն ու բեկորները ցույց էին տալիս, որ մեր ենթադրությունն անհիմն չէ և այրված աղյուսները քանդված քուրայի բեկորներ պետք է լինեն:

Գտնված երկաթե իրերը ապացուցում են, որ այստեղ եղել է երկաթագործի արհեստանոց: Այդտեղ և շրջակայքում հայտնաբերվեցին տնային գործածության մկրատ, որն իր նրբությամբ համարյա չի տարբերվում այսօրվա գործարանային մկրատներից, դանակի բազմաթիվ շեղբեր, թակարդ (հավանաբար թռչուն որսալու համար), երկաթե խողովակ, կաթսա, ծորակ, դուր, բազմա-

թիվ օղակներ, ձիու մի բանի պայտեր, մի բառի տասնյակ դամեր և պարզադամեր, ինչպես նաև գենքի մնացորդներ՝ նետասլաքներ, տեպի ծայր, սրի շեղբ, սրի պատյանի երկաթե մաս և այլն: Հետաքրքիր են նաև պղնձե իրերը՝ գդալանման դեղդիր, ապարանջաններ, բրոնզե խաչ, որ կրել են կրծքի վրա, շքասեղներ, պղնձագործի և ոսկերչի արհեստանոցում գործածվող փոքրիկ թաս, ինչ-որ ամանի ձուլածո ոտք և շատ այլ առարկաներ:

Այս հատվածի պեղումները նույնպես ցույց տվին, որ պալատական տների և իշխանական ապարանքների կողքին միջնադարում, ինչպես մյուս քաղաքներում, նույնպես և Դվինում գոյություն են ունեցել արհեստանոցներ:

Գիտենք, որ Դվինը եղել է դենքի գլխավոր մատակարարը գրեթե բոլոր նախարարական տների համար: Պատերազմներից առաջ հայոց զորքը սպառազինվել է մեծ մասամբ Դվինում: Հետևապես, գլխավոր զինագործական արհեստանոցը պետք է տեղադրված լիներ Դվինի բերդի ներսում, սակայն մեր մինչև այժմ ուսումնասիրած արհեստանոցներից և ոչ մեկը չի կառուցվել համարվել այդպիսին:

Այսպիսի արհեստանոց մենք պեղեցինք 1952 թվականին՝ ստորին բերդում: Գտնված առարկաները վկայում են, որ արհեստանոցը մետաղագործական է, բայց, հավանական է, անհրաժեշտության դեպքում, այստեղ նույնպես պատրաստել են գենքեր:

Ստորին բերդի տարածության մեծագույն մասը դեռևս պեղված չէ և կարելի է հուսալ, որ մոտ ապագայում գետնի տակից ի հայտ կգա Դվինի նշանավոր զինագործարանը:

Քաղաքի կենտրոնական քաղում այս տարի ամռանը պեղեցինք եկեղեցուց հր ընկած տարածությունը, իսկ աշնանը՝ կաթողիկոսի պալատի ամ և հս կողմերը և կենտրոնը, որտեղ հողակույտեր կային, և պատերի արտաքին երեսը դեռևս մաքրված չէր: Բացվեց կաթողիկոսի պալատի շրջապատն այն չափով, որ արդեն կարելի էր որոշակի խոսք ասել ոչ միայն նրա կառուցվածքի, այլև այն միջավայրի վերաբերյալ, որտեղ այն կառուցված էր:

Այս պալատի մասին մենք արդեն խոսել ենք, այդ պատճառով այստեղ նրա վրա կանգ չենք առնի:

Կաթողիկե եկեղեցու ահ և հր կողմի պեղումներից պարզվեց, որ բազալի գոյություն վերջին շրջանում եկեղեցու փլատակված հսկայական շենքի կողքերին փոքրիկ տնակներ էին կառուցվել աղյուսաշար հատակով և մեծ մասամբ կավակերտ պատերով, ծածկված գաջի սվաղով: Այդտեղ կային նաև արհեստանոցներ՝ դարբնոց⁸, որ պեղմամբ բացվել էր դեռևս 1938 թվականին:

Կաթողիկե եկեղեցուց մի քիչ դեպի արևելք, Ը—2 քառակուսու մեջ բացվեց մի անսովոր լայնությունամբ հոր, 1,5 մետր տրամագծով, 3,2 մետր խորությամբ, ամբողջովին լցված մոխրով: Մոխրի միջից դուրս եկան կավանոթների երկու փոքրիկ բեկոր, մի մասը այրված մարդկային ծնոտ, հավանգի փոքրիկ կավե թակ և ոսկրե մի փոքրիկ առարկա, վրան դարդերով:

Այս հորի գոյությունը ևս ապացուցում է, որ Դվինի կաթողիկե եկեղեցու տեղում եղել է հեթանոսական տաճար, հայերի քրիստոնեությունը ընդունելուց առաջ, և հորի մեջ քրմերը լցրել են ատրուշանի սրբազան մոխիրը:

Հետաքրքիր է նաև այդ հորի մեջ մարդկային ծնոտի ի հայտ գալը:

Հին հայերը, հեթանոսության շրջանում, սովորություն չեն ունեցել մարդկային դոհաբերություններ ատրուշանի վրա:

Մեր պատմության մեջ ունենք մի փաստ, երբ քրիստոնյա հայերը, Դվինում, ատրուշանի վրա այրել են քրմապետին, իհարկե ոչ թե զոհաբերության համար, այլ իրրե պատիժ:

Ըստ մեր մատենագիրների, այդ դեպքը տեղի է ունեցել 450 թվականին:

Երկու ավագ նախարարներ՝ Դվինի բերդապահ Վնդոն և Շավասպ Արծրունին (Աղանի հոր՝ Վասակի եղբայրը) Դվինում վերահաստատեցին հեթանոսությունը և Վնդոյի որդուն նշանակեցին քրմապետ մեհյանի վերածած Կաթողիկե եկեղեցում: Վարդան Մամիկոնյանը վերահաստատում է քրիստոնեությունը, Վնդոյին այրում են ատրուշանի կրակի վրա, իսկ քրմապետ Շերոյին կախաղան բարձրացնում⁹:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 48:


⁹ Դվինի միջնաբերդում ևս 1962 թվականին ի հայտ եկավ ատրուշան. կանգուն վիճակում, որի կողքին գտնվող բնդարձակ հորը բերնեբերան լցված էր սրբազան մոխրով:

¹⁰ Դրասխանակերտցին Վնդոյին այրելու մասին գրել է. «Եւ զպիղծն Վնդոյ ձերբակալ արարեալ՝ յատրուշանի կրակին. զոր շինեաց ինքն իսկ ի Դվին՝ այրէր, և զորդի նորա Շերոյ ի վերայ դբազնին զփայտէ կախէր: Եվ ի տեղի բազնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի: Եւ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն

⁷ Տե՛ս ներկա աշխատության առաջին հատորը, էջ 110—122:

Բուլորովին անսովոր մի հոր էլ բացվեց Կաթողիկե եկեղեցուց դեպի հր Ե—14 և Ե—15 քառակուսիների մեջ (նկ. 10): Հորը սկսվում էր նեղ բերանով և հետզհետե լայնանում: Ունեւր ընդամենը

2,5 մետր խորություն: Հորաբերանի մոտ տրամագիծը 0,80 մետր էր, իսկ հատակին՝ 3,20: Հորը դատարկ էր. կողերի փլվածքներից հողակույտեր էին առաջացել մեջը: Հորի բերանի կառուցվածքը



10. Դվինի կենտրոնական թաղամասում պեղված հոր (IX դ.):

հայոց», Թիֆլիս, 1912, էջ 59: Տե՛ս նաև «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցույ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 74: Ավելի ընդարձակ և մանրամասն տե՛ս «Թովմայի վարդապետի Արժրունույ պատմութիւն տանն Արժրունեաց», ՍՊԲ., 1887, էջ 78:

և անսովոր էր: Անցքավոր բանդակադարդ քարերի փոխարեն, որոնք դրվում էին սենյակների մեջ խոնավությունը ծծող հորերի բերանին, այստեղ դրված էր $0,90 \times 1,25$ մ մակերեսով և 25 սմ հաստությամբ մի սալաքար, $0,45$ մ տրամագիծ

ունեցող անցքով: Սալաքարը տեղադրված էր հորի բերանին՝ դետնի մակերեսին հավասար, իսկ նրա անցքի վրա՝ մի կլոր սալաքար, որով հեշտությունը կարելի էր հորի անցքը փակել կամ բացել:

Հորը մտնելը խիստ վտանգավոր էր, որովհետև վերևի նեղ մասից այն կարող էր փլվել, այդ պատճառով միջի լիցք հողը, որ որոշ շերտ էր կազմում, և, ինչպես ասացինք, առաջացել էր փլուզումներից, մաքրելու համար հորի հս կողմի պեղումները խորացրինք և հավասարվելով հորի հատակի մակերեսին ծակեցինք դեպի հորը և այնտեղից դուրս քաշեցինք թափված հողը: Այդ հողի մեջ, ինչպես և հորի հատակին ոչ մի առարկա չկար, եթե չհաշվենք փլված հողի հետ ընկած խեցու մանր բեկորները:

Ի՞նչի էր ծագայել այդ տարօրինակ հորը:

Մեր կարծիքով, դա եղել է ստորգետնյա ղնդան, որտեղ գցել են ծանր հանցագործներին: Հնում այդպիսի բանտեր դոյություն են ունեցել: Դրանք ցամաք հորեր էին, վիճ կամ վիճալ, որ կոչվում էին նաև զնդան:

Ազաթանգեղոսի պատմությունից հայտնի է Արտաշատի այդպիսի վիրապը, որ այժմ հատուկ անուն է դարձել և կոչվում է Խորվիրապ:

Դվինում վիրապի գոյության մասին ունենք նաև գրավոր հիշատակություն: Դրասխանակերտցին պատմում է, որ արաբ արյունարբու ոստիկան Յուսուփը իրեն ձերբակալել է, բազմապիսի շարժարանների Լնթարկել և Դվինում գցել է վիրապի մեջ: «...այլ և ի վիրապս և ի վիհս խորոց—ընկեցայ սաստիկ և դառն կտտանօք»¹¹:

Հետախուզական պեղումներ կատարեցինք 4-րդ տեղամասից դեպի հր ընկած մի փոս վայրում, ուր գետնի երեսին խեցանոթների բազմաթիվ կտորտանք էր թափված: Պեղումներն այդ վայրում շատ չծավալվեցին, որովհետև շուտով պարզվեց, որ այդտեղ հողաշերտը բնահող է և իր մեջ ոչ մի առարկա չի պարունակում թեև նրա կողքերին կային կրաշաղախ շենքի մնացորդներ:

Այժմ այդ շենքի հիմքերի ամենաստորին քարերն անգամ հափշտակված են և միայն կրաշաղախի մնացորդներն են պահպանվել տեղում: Փորփրումների հետևանքով գետնի մակերես են դուրս եկել հասարակ, ջնարակած և հախճապակյա անոթների բազմաթիվ բեկորներ:

Հետախուզեցինք նաև միջնադարյան քաղաքի հս-ան թաղամասերից մեկը, որտեղ բազմաթիվ

շենքերի, ձևերի ևն երևում խաղողի այգիների և բամբակի արտերի մեջ:

Այդ վայրը գտնվում է վերին Դվինի և Նորաշեն գյուղի սահմանագլխին, որտեղից շրջակա գյուղերի ցանքսերը ոռոգող մի առու է հոսում:

Այդ առուն, որ թեք տարածության վրա պատռել էր երկրի մակերեսը 3—4 մետր խորությամբ, հունի մեջ ի հայտ էին եկել նախաուրարտական շրջանի դամբարաններ, որոնց շուրջը քարեր էին շարված կրոմլեխների նման, բայց շատ փոքր տրամագծով (1,5×2,0 մ): Գյուղացիները մեզ հանձնեցին այդ առվի մեջ գտած դամբարանային նյութը. բրոնզե երկու նիզակի ծայրեր, բրոնզե վարսակալ, կախիկներ և այլն¹²:

Միջնադարյան քաղաքի պատերի մնացորդներից երևում է, որ այդ թաղամասերն ունեցել են խիտ բնակչություն. ամեն տարի այգիները փորելիս, կամ հողը վարելիս շարվածքի բեկորներ են դուրս գալիս՝ քարից կամ թրծած աղյուսից: Ոռոգման համար բաց թողած ջուրը երբեմն մի տեղում գետնի տակն է անցնում, կորչում և հոսելով գետնի տակ եղած ավերակների միջով, դուրս է գալիս, հեռվում, բոլորովին մի անսպասելի տեղից:

Մենք հսկողություն սահմանեցինք այդ տեղի վրա, իսկ պեղման համար նշեցինք մի քանի կետեր և հեռացանք:

1953 թվականի պեղումները շարունակեցինք նախորդ տարին կիսատ մնացած երեք տեղամասերում՝ միջնաբերդում, ստորին բերդում և քաղաքի կենտրոնական թաղում:

Թանգարանային աշխատանքների պատճառով ծրագրով նախատեսված երեք ամսվա փոխարեն աշխատեցինք ընդամենը 19 օր, հուլիս ամսին: Աշնանն այլևս հնարավոր չեղավ վերսկսել աշխատանքները¹³:

¹² Տեղի գյուղացիները պատմում են, որ այդտեղ հաճախ են գտնվում նման տիպի առարկաներ և ամբողջական կճուճներ:

¹³ Այդ ժամանակ Հայաստանի պետական պատմական թանգարանը, որ կատարում էր Դվինի պեղումները, թեև գտնվում էր ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ցանցի մեջ, բայց պետական ղեկավար մարմինների որոշմամբ նրա ղեկավարությունը հանձնվել էր Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությանը:

Այդ նույն որոշմամբ, պատմության, գրականության, թատերական, արվեստի թանգարանները, ինչպես նաև Հայաստանի պետական պատկերասրահ՝ միացրել էին: Բացի դրանցից հիմնադրել էին ազգագրության և ճարտարապետության նոր թանգարաններ՝ Պատմության թանգարանի բաժինների հիման վրա և այդ յոթ միացյալ թանգարանների հա-

¹¹ Դրասխանակերտցի, էջ 215:

Միջնորդի գաղափարին շարունակվեցին 1952 թ. աշնանը կիսատ մնացած 31 և 32 բջիջների խորացման աշխատանքները։ Սկսեցինք նաև հում աղյուսե մեծ շինություն կենտրոնական մասի վրա ընկնող 33 և 34-րդ բջիջների պեղումները, որոնց վերին շերտը բաց էինք արել նախորդ տարիներին, իսկ հիմա խորացանք երկրորդ շերտի մեջ։

Այս երկու բջիջներում թեև աշխատանքները չկարողացանք ավարտել, սակայն բաց արինք հում աղյուսե մեծ շինության դեպի ամ գրնացող պատերի շարունակությունը, որ մեր գլխավոր նպատակն էր։

Պարզվեց, որ այստեղ ևս ամբողջ հողաշերտը, մոտ երկու-երկուսուկես մետր թանձրությամբ, առաջացել է մեծ շինության հում աղյուսե պատերի վերին շարքերի քայքայումից, այդ պատճառով էլ պատերի բացելը պահանջում էր մեծ զգուշություն, որովհետև լիցքն ու պատերը միևնույն աղյուսներն էին և միևնույն ամրությունն ունեին։ Պատերը լիցք հողից կարելի էր տարբերել միայն աղյուսների կանոնավոր դիրքով ու ուղղությամբ, իսկ փլված պատերի աղյուսները մեծ կամ փոքր զանգվածով թափված էին նույն աղյուսների քայքայումից գոյացած հողաշերտի մեջ։

Շերտի մեջ տեղ-տեղ հաստ մոխրակույտ էր բացվում՝ այրված փայտի և ածուխի մնացորդներով, իսկ մոխրի միջից՝ երկաթի կտորտանք և մանր իրերի բեկորներ։

Նախորդ տարիներին, ինչպես այդ մասին նշել ենք, կարծում էինք, թե վերին շերտի միջից իջնող բոլոր հորերն ալդեն գտել ենք և դատարկել, բայց ոչ։ Այժմ, երբ խորանում էինք երկրորդ շերտի մեջ, ամենուրեք նոր հորեր էին բացվում, բոլորն էլ դարձյալ վերին շերտին պատկանող։ Այդ հորերը նախապես չէինք նկատել զլխավորապես այն պատճառով, որ նրանցից ոչ մի նշան չէր պահպանվել վերին շերտում։ Նրանք դեռ այն ժամանակ լցված են եղել և տերերը քանդել են հորարերաններն ու փակել, իսկ նրանց մոտ նոր հոր բացել։

31-րդ բջիջում վեց հոր կար, որոնցից միայն մեկն էինք նկատել վերին շերտի պեղման ժամանակ։

մաք, տողերիս հեղինակին նշանակել էին ընդհանուր դիրեկտոր, թեև վերոհիշյալ յոթ թանգարաններն էլ ունեին իրենց առանձին դիրեկտորները։

Այս ուղղությամբ կատարվող վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև մեր թանգարանում XVI—XVIII դարերի պատմության մշտական ցուցահանդեսի կազմակերպումը, որ անհնար էր առանց Դվինի արշավախմբի անդամների, պատճառ եղան այս առարկա պեղումների ընդհատմանը։

Երկրորդ շերտի մեջ էլ առարկաները համուկենտ էին։ Ամենուրեք դուրս էին գալիս ոսկորներ։

Միջնաբերդի երկրորդ շերտում գտնվեցին ընդամենը մի քանի առարկա. երկարաքիթ մի ձիթաճրագ՝ փակ երեսով և երկար պարանոցով, երկաթե մաշված տաշտաքերիչ (թաթակիչ), երկաթե մի երկու նետասլաք, մի գամ, կապույտ զանգվածից և ոսկրանման նյութից պատրաստած ուլունքներ ու մի դրամ։

Նույն շերտում, վերևից իջնող հորերի մեջ, որ Դվինի ուշ շրջանին են պատկանում, դուրս եկան բազմաթիվ և շատ հետաքրքիր առարկաներ՝ ջնարակած բազմաթիվ թասեր և քրեղաններ, որոնցից շատերը զարդարուն, ջնարակած կճուճ, սափորներ, աղամաններ, պոչուկով ձիթաճրագներ, սնդկամաններ։ Ջնարակած խեցանոթների թիվը 60-ից ավելի է։

Նույն հորերում գտնվեցին 40-ից ավելի հախճապակյա թասեր, 29 հատ սափոր, ափսեներ, դավեր։

Խեցանոթների մի մասի դարդաձևերը բոլորովին նորություն են հայկական խեցեգործության համար և կամ լավագույնն են իրենց տեսակի մեջ։ Ընդհանրապես 1953 թ. հայտնաբերված հախճապակյա իրերը շատ են ընդարձակում մեր գիտելիքները Դվինի արհեստագործության վերաբերյալ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև բազմաթիվ ապակե առարկաները, որոնք, դժբախտաբար, շատ են ջարդոտված։ Ապակե անոթների մեջ կա ուռուցիկ փայտով կապույտ գույնի մի դարդանոթ, վրան ոսկեգույն շրջանաձև նախշեր։ Նախշերից մեկի կենտրոնում նստած է ջութակ նվագող մի մարդ (նկ. 103)։ Կան նաև բազմաթիվ մեծ ու փոքր բաժակներ, ապարանջանների բեկորներ և զանազան անոթների կտորտանք։

Մետաղե առարկաները քիչ են։ Բոլոր հորերից դուրս է եկել ընդամենը 14 իր. երկաթից՝ նետասլաքներ, տեգի ծայր, պոչուկով օղ և երկու անորոշ առարկաներ, բրոնզից կամ պղնձից՝ թռչնաձև մի կախիկ և զանազան մեծություն մի քանի օղեր։

Միջնաբերդի երկրորդ շերտի պեղումների ժամանակ տեղ-տեղ բացվում էին միջանկյալ աղյուսաշար հատակի կամ պատերի մնացորդներ, որոնք դեռևս հանելուկ են մեզ համար։

Ստորին բերդում պեղվեցին 1952 թ. կիսատ մնացած 4-րդ և 21, 2e, 3e, 4e քառակուսիները։

Պեղված բոլոր քառակուսիներն էլ գտնվում էին ստորին բերդի այն մասում, որտեղ նախորդ տարին դուրս էին եկել աղյուսաշեն չորս մույթերը և ենթադրում էինք, որ այդտեղ մետաղագործի

արհեստանոց է եղել: Պեղման հիմնական նպատակը այդ շենքի լրիվ բացելն էր և վերջնականապես նրա ինչ լինելը պարզելը:

Միջնաբերդի հարավային լանջի պեղումից բացվեցին մի քանի թոնիրներ, և ի հայտ եկավ այն, ինչին սպասում էինք անհամբերությամբ: Հայտնաբերվեց քառակուսի շարվածքով աղյուսաշեն մի քուրա, կամ հնոց, ճաքճքված պատերով և այրված աղյուսներով, լցված փայտի ածխով ու մոխրով: Առարկաներ չկային. հնոցի մոտ գտնվեց երկաթե խողովակի մի բեկոր, որ, անշուշտ, կապ ունի հնոցի կամ քուրայի հետ: Այդ խողովակը հավանաբար քուրայի օդանցքի կամ փութի մի մասն է, բայց, ըստ երևույթին, գտնվել է կրակից հեռու, այլապես ծայրերից մեկը անպատճառ այրված կլիներ, թեև այնքան ժանգոտված և քայքայված է, որ այրված մասը կարող էր բոլորովին չերևալ:

Այս հնոցը շենքի բնույթը որոշելու գլխավոր վկայությունն է, որով ապացուցվում է, որ իրոք այդտեղ եղել է մետաղամշակման աշխատանոց:

Այս հատվածում պեղումների ժամանակ ի հայտ էին գալիս նաև տաշված կամ անմշակ քարեր՝ բոլորովին անսպասելի տեղերում: Բայց նրանցից և ոչ մեկը կապված չի շենքի հիմքերի կամ կառուցվածքի հետ: Դրանք հավանաբար գլորվել են միջնաբերդից, քաղաքն ավերվելուց հետո:

Նույնը պետք է ասել նաև տեղի լիցք հողից դուրս եկած ոսկեգույն զարդերով հախճապակյա անոթների բեկորների, ինչպես նաև թանկարժեք հախճապակու մասին, որոնք չէին կարող հնոցի առաջ կանգնող գործավորներին լինել: Հասկանալի է, որ դրանք միջնաբերդից են գլորվել և եկել այդտեղ ձյան հալքից և անձրևաջրերից գոյացած հեղեղների ժամանակ:

Եթե դատենք միջնաբերդից եկած առարկաները, ստորին լեռդին կարելի է վերագրել միայն մի քանի իրեր. մի սնդկաման, որ միջնաբերդում էլ է հանդիպում, կարմրաներկ երեսով մի փարչ և մի փոքրիկ թաս, հախճապակյա ուլունքների մի շարան, պղնձե մի քանի դրամներ և երկաթե խողովակի մի բեկոր:

Կենտրոնական քաղում պեղումներն այս տարի կատարվում էին կաթողիկոսի պալատի ամ և հս պատերի արտաքին երեսը բացելու նպատակով, պարզելու համար, թե շենքն այդքանով ավարտվո՞ւմ է, թե շարունակվո՞ւմ է: Այս պատճառով +17 գծի վրա պեղվեցին չորս քառակուսիներ (1, m, n, o), որոնք ընկնում են կաթողիկոսի տան հս-ամ անկյունի վրա:

Այդտեղ ևս քաղաքի ավերումից հետո վեր էր ածվել գերեզմանոցի և ամբողջ տարածությունը գրավում էին XV—XVIII դդ. քարաշար, կամ աղյուսաշար սալաքարերով ծածկված գերեզմանները:

Հողաշերտի մեջ կային ծածկի կղմինդրի բաղմաթիվ բեկորներ, որոնք կաթողիկոսի տանը չէին կարող պատկանել, որովհետև այդ տան կրտուրը փայտե ծածկ է ունեցել, իսկ կղմինդրը հրում ծածկին միացնում էին կրաշաղախով:

1954 թ. պեղումները կատարվեցին քաղաքի երկու տարբեր մասերում՝ միջնաբերդում և կենտրոնական թաղում: Բացի այդ, փոքրածավալ հետախուզական աշխատանքներ անցին քաղաքի տարածության վրա՝ պատահաբար բացված հին դամբարանների տեղում:

Ծրագրով նախատեսված էր նաև ստորին բերդի հր-ամ կողմում բնակելի շենքերի բացելը, նախորդ տարիների ընթացքում բացածի շարունակության վրա, բայց պեղումներն սկսվելու երրորդ օրը ստիպված բանվորներին կենտրոնացրինք միջնաբերդում, այստեղ սկսած աշխատանքներն ամբողջացնելու նպատակով:

Միջնաբերդում աշխատող խմբերը պեղումները ծավալեցին երեք տարբեր կետերում՝ ա) միջնաբերդի կենտրոնական մասի բջիջներում, բ) արևմտյան կողմի քառակուսիներում և գ) արևելյան ծայրամասում:

ա) Միջնաբերդի կենտրոնական մասում պեղվեց ընդամենը հինգ բջիջ, որ պայմանականորեն թվագրել էինք 27, 31, 32, 33 և 34 համարներով: Դրանք քառակուսիների նման միաշափ և աշխարհի չորս կողմերին համընկնող տարածություններ չէին, այլ տարբեր մեծության և ուղղության իրարից հաճախ հեռու ընկած պեղման ենթակա վայրեր, որոնք սահմանափակված են վերին շերտի շենքերի պատերով:

27 և 31-րդ բջիջները գտնվում էին բլրի կենտրոնական շրջանի հս կողմում, նախորդ տարիներում բացված գետնուղու մոտերքում, իսկ 32, 33 և 34 բջիջները՝ վերին շերտում բացված բաղնիքի մոտ, քիչ դեպի հս:

Այդ բջիջներում նախապես պեղված 1,6—2,0 մետր խորությունից ի հայտ էին եկել վերին շերտի բնակելի մեծ տան մասերը, որոնք ունեին քառակուսի աղյուսներից կազմված լավ հատակ: Այս տարի հավաքեցինք աղյուսե հատակը և սկսեցինք խորանալ նրա տակ, առանց ձեռք տալու վերին շերտի տան պատերի մնացորդներին: Մեր նպատակն էր հում աղյուսե մեծ տան ղեռն մեղ հս-

մար անհայտ մասերի բացումը: Այլ, իրոք, ի հայտ եկան հում աղյուսե մեծազանգված պատերի մնացորդները 1,8—2 մետր բարձրությամբ:

Գտնվեցին և հետզհետե մաքրվեցին մեծ շինություն երկու տարբեր սենյակների պատերի մնացորդները: Շենքի կենտրոնական թևում բացվեց նաև ներքին ընդարձակ բակի ամ մասը:

Պատերը շենքի հատակից վերև շարված են խնամքով:

Զարմանալին այն է, որ շենքի հսկայական պատերը ոչ մի տեղում մուտքի կամ լուսամուտի բացվածքներ չունեն և հում աղյուսե մեծազանգված պատերը քարե հիմքերի վրա շեն դրված, ինչպես սովորություն էր Ղվինում՝ սկսած վաղ միջնադարից մինչև XIII դարը, երբ ամբողջ քաղաքն անհետացավ գետնի երեսից:

Մնում է ենթադրել, որ մոտ 1,8—2 մետր բարձրություն ունեցող պատերը շենքի նկուղային հարկին են, որոնց մուտքի և լուսամուտի բացվածքները գտնվել են ավելի բարձրում, պատերի վերին՝ անհետացած մասերի վրա:

Այդ ակներև բնակելի մեծ տան նկուղային հարկը մութ և գետնի մեջ թաղված լինելու պատճառով բնակելի չի եղել, այդ իսկ պատճառով շերտի մեջ շատ քիչ առարկաներ են գտնվում, այն էլ ոչ այնպիսի իրեր, որոնք սովորական են բնակելի տներում:

Այս երկու բջիջներում շատ առարկաներ գրտնրվեցին, բայց մեծ մասը վերին շերտի շենքերի մեջ փորված հորերի միջից, որոնց խորությունը երկրորդ շերտի միջից էլ ավելի խորն է իջնում: Այդ իրերը պատկանում են վերին շերտին և ոչ մի առնչություն չունեն հում աղյուսե շինության հետ:

Հիշյալ երկու բջիջների մեջ բացված հորերից ամենահարուստը 31-րդ բջիջն էր: Այնտեղ գտնվեցին 12 ջնարակապատ և զարդարուն քրեղաններ, 5 նույնպիսի թասեր, ջնարակած սափորներ, ձիթաճրագներ, աղամաններ, հախճապակյա երկու թաս, ապակյա առարկաներ և բազմաթիվ կավանոթներ, պղնձե կափարիչ, զանգակ, գնդասեղ, երկաթե և ոսկրե առարկաներ:

27-րդ բջիջում հայտնաբերվեցին ջնարակած քրեղաններ, թասեր, ափսեններ, երեք սափոր, աղամաններ, հասարակ կավամաններ, ապակյա իրեր, սնդկամաններ, ոսկրե իրեր, պղնձե առարկաներ (օղեր, ձող, կիսագնդիկ), երկաթե իրեր (դանակի շեղբեր, նետասլաք, գամ) և այլն:

Ինչպես 31, այնպես էլ 27-րդ բջիջներում հախճապակյա իրերի թիվը քիչ է, եղածն էլ միայն

տեղական: 27-րդ բջիջում գտնվեց ընդամենը մի թասի բեկորներ:

32, 33, և 34-րդ բջիջներում այս տարվա պեղումները բաց արին բավականին ընդարձակ տարածություն և հետաքրքիր նյութեր տվին վաղ միջնադարի համար: Կարևորն այն է, որ այդ բջիջները միայն իրենց հսկողմով էին նստած հում աղյուսե մեծ շինության հր պատի վրա, իսկ մեծ մասով գտնվում էին շենքից դուրս: Այդ երկու բջիջների պեղումներն սկսվել էին դեռևս անցյալ տարի, որոնք կիսատ էին մնացել և այս տարի շարունակվեցին: Այստեղ հում աղյուսե շենքից դուրս ի հայտ եկան վաղ միջնադարի ռազմական գործին վերաբերող հազվագյուտ առարկաներ՝ նիզակի ծայրեր (գեղարդ), դանակի շեղբեր, մի քանի տեսակ նետասլաքներ, օղակներ՝ բոլորն էլ երկաթից: Գտնվեց նաև պղնձից պատրաստած մի կեռ, որն, ըստ երևույթին, կապարճը կամ առարկան զինվորի գոտուց կախելուն է ծառայել: Այդ կեռի մի ծայրը սուր է, առանց ճանկերի, իսկ բութ ծայրը լայն անցք ունի, որ միացած է եղել կաշվե շերտի: 31-րդ բջիջում գտնվեցին մի քանի մաշված սրաքարեր: 27-րդ բջիջում գտնվեց ապակյա ջրաման (տափակաշիշ) ամբողջական վիճակում, գրեթե այնպիսին, ինչպիսին պատրաստում են և հիմա՝ ապակուց կամ մետաղից: Այդ ջրամանն ունի երկու կանթ, ձվաձև է, տափակ, նստուկ շունի:

31-րդ բջիջի շերտից ևս դուրս են եկել բազմաթիվ առարկաներ, որոնք նույնպես բնորոշ են ղենքի հետ առնչություն ունեցող անձի համար:

Քանձր մոխրաշերտի մեջ, ուր առաջացել է հրդեհից, գտնվել են ձիու պայտ, նիզակի ծայր, դանակի շեղբեր, սրաքարեր, բամբակ, բամբակյա կտորի մնացորդ, ոսկրե փոքրիկ շրջանակ, ածխացած փայտ, ցորենի, կանեփի, զարու կույտեր՝ ածխացած վիճակում, որոնց արտաքին տեսքը լիովին պահպանված է:

Այդ առարկաների ժամանակը որոշելու համար խիստ կարևոր են նույն տեղում մոխրաշերտում գտնված շորս կնքադրոշմները, որոնք ժապավենով կապված են եղել մագաղաթյա փաստաթղթերին:

Իհարկե փաստաթղթերն այրվել են ժապավենների հետ միասին, իսկ կավե կնքադրոշմները կրակի մեջ ավելի են ամրացել:

Կնքադրոշմներից մեկը վրան ունի շորս տարբեր կնիքների դրոշմ, մեկը մեծ, հավանաբար ղլխավոր անձի մատանիով կնքված, իսկ մյուս

երերը փոքր, համանաբար պաշտոնավ կամ դիրքով ավելի նվաստ անձերի:

Այդ կնքագրողները, ինչպես կոնսենսը նը-
րանց քննությանը նվիրված հատվածում, մարդ-
պանական շրջանի՝ V—VII դարերի են, որից կա-
րող ենք եզրակացնել, որ երկրորդ շերտի ավերու-
մը տեղի է ունեցել ավելի ուշ:

բ) Միջնաբերդի ամ քառակուսիներում պեղ-
վեցին —ա գծի վրա —14 և —15, —ն գծի վրա՝
13 և 14, —с գծի վրա՝ —15, —d գծի վրա՝ 13
և —14 և, վերջապես, —е գծի վրա՝ —12, —13,
—14 և —15 քառակուսիները: Ընդամենը 11 քա-
ռակուսի, 275 քմ մակերեսով: Բոլոր քառակուսի-
ները պեղվել են միայն վերին շերտում:

Այս վայրը, ինչպես վերևում նշեցինք, վերին
շերտում բացված պալատական շենքի սահմաննե-
րից դուրս մնալու պատճառով, նախկինում չէինք
պեղել, իսկ այժմ ստիպված էինք շուտափույթ
ուսումնասիրել վերին շերտը, որովհետև երկրորդ
շերտի մեջ բացված հում աղյուսե մեծ շինություն
արևմտյան մասերը դալիս հասնում էին այդ քա-
ռակուսիների սահմաններին: Թացելով վերին շեր-
տը, նախապատրաստեցինք երկրորդ շերտի պե-
ղումները:

Միջնաբերդի այս հատվածում վերին շերտը
դետնի մակերեսին մոտիկ էր, միջին հաշվով 1,5
մետրից ավելի չէր, իսկ շատ տեղերում պատերի
վերին մասերն ի հայտ էին դալիս 35—50 սմ խո-
րություն վրա:

Քառակուսիներում բացվեցին վերին շերտի
բնակելի տան, ինչպես նաև այլ շինությունների
արտաքին երեսին կպած, կամ նրանց մոտ X—
XIII դարերում կառուցած 2—3 և ավելի, ներքին
բաժանմունքներ ունեցող բնակելի տներ, թրծած
քառակուսի աղյուսե հատակով և քարաշար հիմ-
քերի վրա կավակերտ ու հում աղյուսե պատերով:
Ինչպես վերին շերտի բնակելի մեծ տան, սրանց
լուսամուտներն էլ մեծ մասամբ երդիկից են եղել՝
փայտե բրգաձև տանիքների կենտրոնի վրա բաց-
ված, որ հայկական ժողովրդական տան ամենա-
տարածված ձևն էր ոչ միայն Հայաստանում, այլև
Վրաստանի հայաբնակ Ախալցխա և Ախալքալաք
քաղաքներում ու շրջապատի հայկական գյուղե-
րում: Բնակելի տան այդ խիստ տարածված ձևը
գրական հայերենում և բարբառներում մի քանի
անուն ունի—գլխատուն, սողոմաֆաշ, կուլա (դիպ-
պա):

Բացվեցին բազմաթիվ հորեր: Փոքր տների
մեջ ապրողներն ավելի թիչ գույք են ունեցել, բան
կենտրոնական շենքի բնակիչները, այդ պատճառով

այստեղի հորերից, ինչպես նաև բուն շերտի միջից,
ավելի աղքատիկ և քիչ առարկաներ պտնվեցին:
Համեմատաբար հարուստ էր —е —14 քառա-
կուսին, նրա մեջ բացված հորը և հողի շերտերը:
Հայտնաբերվեցին կավամանների բազմաթիվ տե-
սակներ՝ ջնարակած սափորիկներ և աղամաններ,
թասեր, քրեղաններ ու ափսեններ, ձիթաճրագներ,
հասարակ կավամանների բազմաթիվ բեկորներ,
սնդկաման և այլն:

—с —14 շերտից և հարևան քառակուսինե-
րում պտնվեցին երկաթե նետասլարներ, դանակի
շեղրեր, երկաթե մեծ և փոքր դամեր, պղնձե օղակ
և, որ դիտավորն է, —е —12 քառակուսում, 1,5 մ
խորություն մեջ ի հայտ եկան երկաթե մանր թեր-
թիկներից կաղմված դրահի բեկորներ, հավանա-
բար լանջապանակի մասեր, որ հաղվադեպ է Դվի-
նում:

գ) Միջնաբերդի ամ ծայրին պեղվեց յոթ քա-
ռակուսի, բնդամենը 175 քմ մակերեսով: Պե-
ղումները կատարվեցին միայն վերին շերտում,
որի թանձրությունը հասնում էր 1,5—2,0 մ:

Այստեղ տարբեր խորությունների մեջ ի հայտ
եկան թրծած աղյուսի շարվածքներ և նրանց վրա
նույն աղյուսից պոչացած կույտեր, որոնք առաջա-
ցել էին այդ շարվածքների փլուզումից (նկ. 11):
Աղյուսի շարվածքներն ու փլված աղյուսի կույտե-
րը թաղված էին հաստ մոխրաշերտի մեջ: Այդ տա-
րածության մեջ անհնարին էր թափված աղյուսնե-
րը վերականգնել իրենց տեղերում և սխալներից
խուսափելու համար չափադրեցինք, իսկ աղյուսի
կույտերը լուսանկարահանեցինք հողը և մոխրա-
շերտը հեռացնելուց հետո:

Կառուցվածքը նման էր բաղնիքի լողասրահի
կրկնակի հատակի, որտեղ հնոցի ծուխը և շիկա-
ցած օդը անցել են աղյուսաշար հենակների վրա
դրված հատակի տակով և դուրս եկել պատերի
մեջ անցկացրած կավե խողովակների միջով:

Սակայն այս դեպքում անհասկանալի է, թե
այդ տարածության վրա ինչ գործ ունեն երկու
թոնրանման հնոցները: Պարզվում է, որ այդ ար-
տադրական բնույթի կառուցվածք է և, հավանա-
բար, մեծադազորի արհեստանոց (նկ. 12): Այդ
են ապացուցում նաև տեղում մոխրաշերտի միջից
դուրս եկած առարկաները, օրանցից, եթե հեռաց-
նենք ամբողջ միջնաբերդի համար սովորական խե-
ցանոթների քեկորները, կմնան աղյուսաշեն կա-
ռուցվածքի հետ առնչվող մի քանի իրեր, որոնք և
բանալի են հանդիսանում կառուցվածքի էությունը
հասկանալու համար:

Կառուցված առարկաների մեջ ամենակարևորը

մի քար է, մեջը փոս, որ մետաղագործի կաղապար է, մի անոթի բրոնզե կենդանակերպ կանթ, պղնձե ձևավոր մի ձող՝ չորս անցքերով, պղնձե երկարապոչ բերիչ, դանդակ, արլորակերպ մի առարկա:

Այս բոլորը ցույց են տալիս, որ աղյուսներից շարված թոնրանման հնոցները հղել են պղնձա-

կը —17, մեկը՝ —14 և մեկն էլ —11 գծի վրա, սակայն շինություններ չհանդիպեցին: Պարզվեց, որ կաթողիկոսի սլալատն իր ամ կողմում ունեցել է սրբատաշ քարե պարսպով փակված բակ և մի բանի ընդարձակ հավելված շինություններ, որոնցից պահպանվել են դետնի մակերեսին հավասար



11. Միջնաբերդի հր-ան հատվածի պեղումները:

գործի արհեստանոց, որտեղ ոչ միայն կոել և դրոշմել են, այլև ձուլել:

դ) Քաղաքի կենտրոնական թաղում պեղումները կատարվում էին կաթողիկոսի սլալատի հս-ամ անկյունի մոտ և Կաթողիկե եկեղեցու հր կողմում:

Կաթողիկոսի սլալատի մոտի պեղումների նըպատակը կաթողիկոսարանին հարակից շինությունների հայտնաբերումն էր: Ըստ մատենագիրների, Դվինի կաթողիկոսարանը բացի հոգևոր պետի սլալատից, ունեցել է նաև բարձրագույն դպրոց, որտեղ կրթություն են ստացել բարձրաստիճան հոգևորականները, գանձատուն, գրադարան և թանգարան, ինչպես նաև «գանձս ծածկութեան» ստորերկրյա թաքստոցներ և տնտեսական ու բնակելի հարակից շինություններ:

Թեև այստեղ բացվեց 200 քմ տարածություն և պեղվեցին ութ քառակուսիներ՝ հինգը —18, մե-


հիմնասլատեր, մի քանի տեղ երեսապատ սրբատաշ քարեր և ձևավոր մասեր: Այստեղ շենքերն ընդհանրապես այնքան վատ են պահպանվել, որ դժվար է որոշել, թե պատի որ բեկորը որ շենքին է պատկանում, կամ որտեղ է սկսվում ու որտեղ վերջանում շենքը:

Այնուամենայնիվ, Կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսի սլալատի շրջակայքում շենքերի գոյությունը կարելի է ապացուցված համարել:

Կաթողիկե եկեղեցու հարավային կողմի պեղումներից, նախկինում գտնված գետնափոր ղրնդանի մոտերքում, հայտնաբերվեցին մի քանի տնակների հետքեր, որոնցից մեկն ուներ երկու սենյակ: Այդ տնակը եթե ունեցել էր նաև այլ հարկաբաժիններ, չէին պահպանվել և նրանց հետքերն իսպառ չէին չափվել: Սենյակներից մեկում

ի հայտ եկան իրար կողքի շարված և քարե սալիկներով ծածկված գինու շորս ոչ մեծ կարասներ, զրեթե մինչև շրթները գետնի մեջ թաղված (նկ. 13), միասին հազիվ 1000 լիտր տարողությամբ:

զագաթին երեք տարբեր կետեր, կենտրոնական թաղամասի հարավային կողմի շորս քառակուսիներ և 4-րդ տեղամասում հս շորս քառակուսիներ: Միջնաբերդի զագաթի կենտրոնում պեղե-



12. Միջնաբերդի հր-առ ծայրամասի արտադրական շենքի մնացորդների հատակաձևը:

Կարասներն այդտեղ դրվել են հավանաբար մարգպանների ժամանակ, V—VII դդ.: Այդ ժամանակ էլ կառուցվել է այն շենքը, որի մեջ թաղվել են այդ կարասները: Շենքը կործանված պետք է լինի 893 թ. երկրաշարժի ժամանակ:

Գտնվեցին նաև արաբական շորս դրամ, որը հավաստում է մեր ենթադրությունը կարասների ժամանակի վերաբերյալ:

Այս տեղամասում գտնված առարկաների մեջ կարևորը երեք մասից կազմված արծաթե զոտին էր:

1955 թվականի պեղումները նախապես ծրագրված էր կատարել միայն երկու հատվածում՝ միջնաբերդի զագաթին և 4-րդ տեղամասում, բայց պեղվեց նաև քաղաքի կենտրոնական թաղամասի հր. կողմը՝ այդ հատվածի պեղումները ամբողջացնելու նպատակով:

Այսպիսով, 1955 թ. պեղվեցին միջնաբերդի

ցինք երեք բջիջ՝ 27, 35, 36: 35-րդ բջիջը գտնվում էր վերին շերտի մեջ բացված բաղնիքի հնուցի տեղում, իսկ 36-ը բնկած էր նրանից հարավ:

Միջնաբերդի 35 և 36 բջիջները 50—60 սմ պեղելուց հետո երևան եկան միջնաբերդի տարածության մեծ մասը բռնող հում աղյուսե շինություն պատերը, որոնց մնացորդներն այդտեղ 1,7 մ լայնություն և 1,5 մետրից ավելի բարձրություն ունեին:

35-րդ բջիջում, պեղումների հենց սկզբում, էր քանդում էինք վերին շերտի արդեն ուսումնասիրված աղյուսե հատակը, դուրս եկան երկու թռնիկ: Դրանք, անկասկած, վերին շերտին էին պատկանում, բայց այդ շերտի պեղումների ժամանակ չէինք նկատել, որովհետև բնակիչները թռնիկների շրթնամասերը քարոզել և հատակի տակն էին թողել: Այդ նշանակում է, որ վերին շերտի բնակիչները

թոնիրները որոշ ժամանակ օդադուրծելուց հետո նրանց տեղը հարթել և աղյուսե հատակ են շարել: Բջիջի հատակին մոտ գտնվեց կարմրավուն աուֆ քարից կերտված սյան խարիսխ, որի բունը փայտից էր եղել և ունեցել էր 44 սմ տրամագիծ: Այդ խարիսխը, որի նմանները և՛ դրանից առաջ, և՛ դրանից հետո շատ են բացվել մեր պեղած վերին շերտի մեջ, խիստ բնորոշ են միջնաբերդին,



13. Կենտրոնական թաղամասում պեղված մառան գինու կարասներով (V—VII դդ.):

որովհետև դրանց մեծ մասը ծառայել է իբրև հիմք գլխատան համար: Սյան խարիսխը իր տեղում չէր, նույնիսկ մի քիչ ավելի բարձր էր, քան 2-րդ շերտի ենթադրվող հատակը և ընկած էր կողքի:

Բջիջի մեջ պատահում էին նաև մեծադանգված անտաշ քարեր, որոնք դասավորված չէին: Դրանք, հավանաբար, որևէ նախնական շինության անշաղախ պատերի մնացորդներ էին:

Բացվեց նաև վերին շերտին պատկանող մի հոր, որի վերին մասը լցված էր թրծած աղյուսի բազմաթիվ բեկորներով, որոնք հորի աղյուսաշար բերանի մնացորդներն էին: Գտնված առարկաների թիվը քիչ էր՝ երկաթե իրերի բեկորներ, կավա՝ մանների և հախճապակե անոթների կտորտանք:

36-րդ բջիջն ավելի հետաքրքիր էր: Հայտնաբերված մի հորի բերանի տրամագիծը 1,2 մ էր, որը դեպի խորքը լայնանալով երկու մետր խորության վրա դառնում է 2,2: Հատած կոնաձև այդ հորը լցված էր փայտի ածխախառն մոխիրով, տնային գործածության հասարակ և ջնարակած ջարդված ամանեղենի կտորտանքով: Հորից դուրս եկան հախճապակյա մի քանի ջարդված թասեր, երկու բրնձան, երեք ափսե, մի ձիթաճրագ, աղամաններ, երկու սափոր, բոլորն էլ ջնարակած, հասարակ կավանոթների բազմաթիվ բեկորներ և ամբողջական իրեր, երկաթե մի ձող, դանակի շեղբեր, ապակե անոթների բեկորներ և այլն:

Այս բոլորի հետ այստեղ թափված բազմաթիվ ոսկորները և մոխիրը ցույց էին տալիս, որ ծառայել է իբրև աղբանոց:

Գտնված իրերը ապացուցում են, որ այդ փոսը ծառայել է վերին շերտի բնակիչներին, իսկ բուն շերտի միջից, ինչպես բլուրի մյուս մասերում, այնպես էլ այս բջիջներում առարկաներ չգտնվեցին, միայն 36-րդ բջիջում ի հայտ եկավ մարզպանական իշխանության ժամանակների, հավանաբար VI դարի խիստ հետաքրքիր կավե մի կնքադրոշմ:

Միջնաբերդի հր-ան ծայրամասում, որտեղ 1954 թ. բացել էինք աղյուսաշար մի արհեստանոց, մեր ենթադրությամբ մետաղագործի ձուլարան, ի հայտ եկան տարբեր մեծության վեց թոնիր (մեծի տրամագիծը՝ 1,0 մ., իսկ ամենամικրիները՝ 0,30 մ.): Դժբախտաբար, այդ թոնիրների վերին մասերի և բարձրության վերաբերյալ ոչինչ չենք կարող ասել, որովհետև պահպանվել են միայն ստորին մասերը՝ լցված մոխրով: Թոնիրների հատակը շարված էր թրծած քառակուսի աղյուսներով և ոչնչով չէր տարբերվում սովորական թոնիրներից:

Խեն մի քանի թոնիրների գոյությունը միևնույն հարկի տակ սովորական երևույթ է հայկական տների մեջ, մանավանդ, երբ նրանք մեծ ու փոքր են, բայց այստեղ մետաղաձուլական արհեստանոցի կողքին մի քիչ անսովոր էին: Ըստ երևույթին թոնիրները բոլորը մի հարկի տակ չեն եղել, այլ նրանք երկու խմբի են բաժանվել:

Բնակելի տներում թոնիրները սովորական երևույթ են Դվինի ինչպես միջնաբերդում, այնպես էլ մյուս թաղերում: Տարբեր թաղամասերում անցյալ տարիներին մի քանի հարյուր թոնիր է բացվել, որոնք պետք եղածին չափ ուսումնասիրվել են արշավախմբի կողմից: Այստեղ բացված վեց թոնիրների վրա առանձին ուշադրություն չէինք դարձնի, և թե նրանց շրջապատում մի քանի արտասո-

վոր առարկաներ չգտնվեին, որոնք ոչ մի առնչություն չէին կարող ունենալ թոնիրների հետ:

Այդտեղ, շերտի մեջ, գտնվեցին սղնձե առարկաների բեկոր, հատուկ դործիքով կտրած սղնձե ձողեր, կլորակ մի իր, մատանու մաս, երկաթե իրերի մնացորդներ և, վերջապես, պղնձի խարամ: Կամ պետք է ենթադրել, որ այդ առարկաներն այստեղ ընկել են թոնիրների մոտ գտնվող մետաղաձուլական արհեստանոցից, կամ կապենք թոնիրների հետ և ընդունենք, որ վերջիններս պատկանել են արհեստանոցին և ծառայել նրա կարիքներին: Վերջին ենթադրությունն անհավանական է, որովհետև վեց թոնիրներից և ոչ մեկը որևէ անսովոր բան չունի իր մեջ: Բոլոր վեցն էլ տնային թոնիրների կառուցվածք ունեին և օդ ստանալու համար օձտված էին սովորական ակով (սնվածքով): Նրանց մեջ գտնված մի քանի դրոշմազարդ և հասարակ խիբրը ևս վկայում են այն մասին, որ դրանք տնային գործածության թոնիրներ են եղել:

Պեղումների ժամանակ այդ քառակուսիների մեջ բացվեցին հորեր, որոնք բոլորն էլ պատկանում էին վերին շերտին՝ X—XIII դարերին: Այսպես, օրինակ, —1 —C քառակուսում թոնիրներից մեկի տակ բացված հորից գտնվեցին ջնարակած քրեղաններ, կարմրաներկ փոքրիկ խուփ և միջնադարյան այլ առարկաներ, որոնք բոլորն էլ վերաբերում էին Դվինի միջնաբերդի գոյության վերջին շրջանին՝ X—XIII դարերին:

Նույնն են ապացուցում նաև 1 —C քառակուսում մեջ բացված հորում ի հայտ եկած առարկաները. մի քանի բազմազույն և դարդարուն քրեղաններ ու թասեր, ձիթաճրագներ (նկ. 14), դրոշմազարդ սափորի բեկորներ, ապակյա զնդիկ, կճուճի խուփ և այլն:

Քանի որ այս հորերը բացվել են թոնիրների տակ, կարևոր նշանակություն ունեն թոնիրների ժամանակը որոշելու համար, որոնք գործածության մեջ են եղել հորերը փակելուց հետո միայն: Հետևապես, հորերի մեջ գտնվող առարկաները այնտեղ են ընկել ավելի վաղ, քան կառուցվել են թոնիրները: Նրանք թեև թաղված են ստորին շերտի մեջ, բայց պատկանել են վերին շերտին և բերանի մասով հավասարվել են վերին շերտի շենքերի հատակին:

Երկրորդ շերտ առկա է ընդհանրապես հասկանում ենք հում աղյուսե մեծ շինությունը, բայց այստեղ այդպես չէ, որովհետև հում աղյուսե շենքեր մինչև այդ քառակուսիներին չի հասել: Այդ տարածության երկրորդ շերտում ավելի հին մնացորդներ կան, քան հում աղյուսե շինություն շերտերում:

Այստեղ, բացի վաղ միջնադարյան առարկաներից, գտնվեցին նաև ոսկրե գդալածե դեղդիր, սրաքարեր, ջայլամի գեղեցիկ պատկերով գեմա (կնքաբար): Այս վերջինը անհերքելի մի ապացույց է, որ այդ շերտը պատկանել է սասանյան մշակույթի ազդեցության ժամանակներին՝ Հայաստանի մարզպանների տիրապետության շրջանին: Հետագայում մեր այս ենթադրությունը հաստատվեց բաղմաթիվ այլ փաստերով, որոնց կանդրադառնանք իր տեղում:



14. Կանաչ ջնարակով պատված ձիթաճրագ, գտնված միջնաբերդի հորերից մեկում (XII—XIII դդ.):

Միջնաբերդի ամ ծայրին պեղվեցին հինգ քառակուսիներ, մեծ մասամբ —11 գծի վրա, 125 քմ մակերեսով: Ծիշտն ասած, մեր բուն նպատակը վերին շերտի ուսումնասիրությունը չէր, որին ձեռնարկել էինք դեռևս նախորդ տարիներին և մեծ արդյունքների չէինք հասել շենքերի մնացորդները վատ պահպանված լինելու պատճառով: Այդտեղ մենք ստիպված էինք մաքրել վերին շերտը, որպեսզի հնարավորություն ստեղծվեր երկրորդ շերտի մեջ որոնումներ կատարել հում աղյուսե շինության ամ մասերը գտնելու համար:

Պեղումներն այդ կեսում մեծ արդյունքներ չտվին: Պարզվեց, որ ինչպես վերին շերտում, այնպես էլ նրա տակ գտնվող ճարտարապետական կառուցվածքներից քիչ բան է պահպանվել:

Ուշ ժամանակի քնակիչներն այդտեղ երկու շերտերն էլ տակն ու վրա են արել և ամեն ինչ

խառնել: Բացի այդ, միջնաբերդի ամ լանջը մաշվել է անձրևաջրերի հոսքից և, ինչպես պարզվեցին հետագա տարիների պեղումները, գետնի մակերեսից գրեթե մեկ մետր խորությամբ մեջ վերջանում են բաղարի հազարամյա գոյությունը բոլոր շերտերը և նրանց տակ ի հայտ են գալիս այլ շերտեր, որոնք բաղարի հետ ոչ մի առնչություն չունեն, պատկանում են Դվինի հնագույն բնակավայրին, որ սկզբնավորվել էր դեռևս պղնձե դարում:

Միջնաբերդի ամ ծայրամասի պեղումների ժամանակ, բացի հողի մեջ ամենուրեք տարածված հասարակ ու ջնարակած կավանոթների մանր բեկորներից, գտնվեցին ձեռքով շինած մատնոցալուսի մի փոքր կճուճ, որ, հավանաբար, երեխայի խաղալիք է և պատահաբար հողաշերտի մեջ բնկած մեծագույն երկաթի մի գամ:

Էր կրաշաղախի դանդաղածներով, տուֆ բարի կտորներով և ծածկի կղմինդրի բեկորներով, որոնք ստաջացել էին Կաթողիկե եկեղեցու ավերվելուց հետո սրբատաշ քարերը հափշտակելու հետևանքով: Նույնիսկ քաղաքի դեռևս շեն ժամանակներում, երբ 893 թ. մեծ երկրաշարժից հետո եկեղեցին խարխուլվել էր, միջնաբերդի հայ, արաբ ու քուրդ իշխանները եկեղեցու քարերը տարել են միջնաբերդ և օգտագործել իրենց տների հողե պատերի մեջ:

Այդ նույն շերտի մեջ բացվեցին XV—XVIII դդ. սալածածկ բազմաթիվ դամբարաններ:

Չորրորդ տեղամասում ընդարձակեցինք պեղումները՝ այնտեղ ի հայտ եկած շենքն ամբողջությամբ բաց անելու հույսով: Սակայն շահողվեց, որովհետև շենքը մեր սպասածից շատ ավելի մեծ



15. Սլուների խարխուլներ, գտնված 4-րդ տեղամասում (VII դ):

Ինչպես ստացինք, այդտեղի շենքերը չեն պահպանվել:

Քաղաքի կենտրոնական թաղում այս տարի պեղվեց ընդամենը 100 քմ տարածություն — Ե դժի — 8-ից մինչև — 11 քառակուսիներում:

Հողաշերտն այստեղ այնքան էլ խորը չէր՝ 0,6—1,2 մետր, քայքայված և անառնա լցված

էր: Շենքի արտաքին պատերն անգամ չկարողացանք գտնել: Պարզվեց, որ այդ շատ հետաքրքիր հասարակական շենքը իր բոլոր կողմերից կորցրել է արտաքին պատերի հետքերը, հավանաբար շրջակայքի բնակչությունը դարեր շարունակ փոփրումներ է կատարել սրբատաշ քարեր գտնելու նպատակով (նկ. 15):

Այդ փորձերումներից երևում է, որ շենքն ունեցել է հսկայական ծավալ, զբաղեցրել է առնվազն 3000—3500 քմ մակերես, մի քանի ներքին սյունասրահներ և ամենայն հավանականությամբ՝ խանութների մի քանի շարքեր, եղել է քաղաքի մեծագույն շենքերից մեկը։ Պեղումները մնացին անավարտ։

1955 թ. դարնանը, այգիներից ոչ հեռու մի հողամասում, Դվինի միջնաբերդից մոտ 600 մ ղեպի հս-ամ, հետևապես հին մայրաքաղաքի մեջ, հողը հարթող մեքենայի ետևից գնացող հողաբերդի գյուղացիները հողի մեջ ցրված արծաթյա բազմաթիվ հին դրամներ հավաքեցին և մեզ հանձնեցին 267 դրամ, որից 98-ը բյուզանդական, իսկ մնացած 169-ը՝ սասանյան։ Սասանյանները V—VII դարերի՝ Կավատի, Խոսրով Առաջինի, Որմիզդ շորրորդի, Խոսրով երկրորդի, իսկ բյուզանդականները՝ Հերակլի (610—641), կամ Հերակլի և նրա որդի Կոստանդինի ժամանակաշրջանում հատված դրամներ են (նկ. 16 ա, բ)¹⁴։

Մեր կատարած հետախուզությունները պարզեցին, որ դրամի գտնված տեղում մի փոքրիկ բարձունք է եղել, որտեղից գյուղացիները երբեմն տաշած քարեր են գտել։ Նշանակում է այդտեղ ինչ-որ շենք, հավանաբար բնակելի տուն է եղել, որովհետև հողի մեջ կան բազմաթիվ տնային դործածության խեցանոթների բեկորներ և ապակյա անոթների մնացորդներ։ Տաշված քարերը ապացույց են, որ այդ տունը պատկանել է ոմն մեծահարուստի։

Կարելի է ենթադրել, որ գանձը պահվել է արաբական արշավանքների ժամանակ, երբ 640 թ. նրանք առաջին անգամ գրավեցին Դվինը և ավարառության ենթարկեցին։ Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ բոլոր դրամներն, առանց բացառության, պատկանում են արաբական արշավանքներին նախորդող ժամանակաշրջանին և մեծ մասը՝ այդ արշավանքների նախօրյակին։

1955 թ. պատահական կարևոր գյուտերից մեկը, որ ի հայտ էր եկել տնամերձ խաղողի այգիներից մեկում, փոքրիկ, բայց վերին աստիճանի

¹⁴ Այդ գանձի դրամները, հատուկ վարձատրությամբ, մեզ հանձնեցին Հնաբերդի և Հողաբերդի կոլտնտեսականներ Արամ Ամիրխանյանը՝ 67 դրամ, Մանուկ Կիրակոսյանը՝ 92, Նշան Սամվելյանը՝ 12, Հարություն Վարդանյանը՝ 23, Հետազոտում ևս տեղի բնակիչները դաշտում նույն գանձից գտել էին և մեզ հանձնեցին։

Գանձի մասնագիտական քննությունը կատարել է Հայաստանի պատմության թանգարանի դրամագետ, պատմ. գիտ. թեկնածու Խաչիկ Մուշեղյանը իր «Денежное обращение Двина по нумизматическим данным», Ереван, 1962, գրքի 20 և 122—138 էջերում։

հետաքրքիր մի տուֆ քարաբեկոր է, որի մի երեսին պատկերված է երկար եղջյուրներով վայրի այծ, իսկ հակադիր երեսին երևում են ցլի կամ գայլի պատկերի հետքեր (նկ. 17 ա, բ)։

Այդ քարը հավանաբար տեղադրված է եղել բնակելի տան մեջ, գուցե և խոյակ է։ Հնարավոր չեղավ տեղում պեղումներ կատարել, որովհետև ճիշտ տեղը չկարողացանք որոշել։

Այս տարվա պատահական գյուտերի մեջ պետք է նշել նաև մոխրագույն տուֆ քարից պատրաստված մարդու գլուխը՝ սրագագաթ սաղավարտով (նկ. 18)։ Այս գլուխը ևս պատկանում է տարբեր տարիներում Դվինում գտնված մյուս արձանների շարքին, որոնց թիվը հետզհետև ավելանում է։ Այդ արձաններն արժանի են հատուկ ուսումնասիրության, որովհետև նրանց պատկանելի թիվը ցույց է տալիս, որ դրանք պատահական երևույթ չեն, այլ ծառայել են մեզ համար առայժմ անհայտ նպատակի։

Չմոռանանք վերջում նշել, որ այս տարի Վերին Արտաշատ գյուղի այգիներում գտնված Տիգրան Մեծի մի դրամը նորաշեն գյուղի պատմության ուսուցչուհի և Դվինի պեղումների երբեմնի մասնակից Քնարիկ Վարդանյանը նվիրեց արշավախմբին։

Այս պատահական գյուտը ևս մի ավելորդ ապացույց է այն բանի, որ Դվինի բլուրը բնակելի է եղել նաև Տիգրան Մեծի թագավորության ժամանակ՝ մ. թ. ա. առաջին դարում։

1956 թվականին պեղումներ կատարվեցին միայն երկու տեղամասերում՝ միջնաբերդում և քաղաքի հարավային մասի բացատում՝ 4-րդ տեղամասում։

Պեղման աշխատանքները շատ կարճատև եղան, որովհետև անձնակազմը ստիպված էր, Հայաստանի պետական պատմական թանգարանի վերակառուցման պատճառով, շուտ վերադառնալ Երևան։

Միջնաբերդում, որն այս տարի ևս մեր ուշադրության կենտրոնում էր, պեղումներ կատարեցինք երեք տարբեր հատվածներում։ Միջնաբերդի բլրի կենտրոնական մասում՝ նախորդ տարվա պեղածի անմիջական շարունակության վրա ավարտեցինք կիսատ մնացած 36-րդ բջիջը, պեղեցինք նրա շրջակայքում գտնվող 38, 39, 40 և մասամբ էլ 41-րդ բջիջները, բոլորն էլ VII—IX դարերի շերտի մեջ։ Մեր նպատակն էր բացել հում աղյուսի մեծ շինության դեռևս անհայտ մասերը։

Մի այլ խումբ պեղումներ սկսեց միջնաբերդի ամ մասում, որտեղ մերին շերտը դեռևս պեղված




16. ա. Սասանյան V—VI դարերի արծաթե դրամներ, գտնված Հնարեղ գյուղի դաշտերում, 1955 թ.:
 բ. Բյուզանդական արծաթե դրամներ, կտրված 615—641 թթ. կայսր Հերակլի և նրա որդիների
 պատկերներով, 1955—56 թթ. գտնված գանձից:

չվր: Այդտեղ ուսումնասիրվելիքն է —10 դժի վրա —Ը, —Վ և —Լ, ինչպես նաև —9 դժի —Վ քառակուսիները 100 քմ մակերեսով:

Միջնաբերդի Երրորդ խումբը բլուրի հրամ մասում պեղեց —Ձ դժի —10, —13, —11 և —Ե դժի —9 քառակուսիները, դարձյալ 100 քմ ընդհանուր մակերեսով:

Կիտով չափ բայրայված երեք թռիկ և մի հոր: Հորի միջից հայտնաբերված ջնարակապատ թևերի քրեղանը (№ 2046/29), փոքրիկ աղամանը (2046/80), ապակե անոթների (2046/136) և (2046/139), ապարանջանների (2046/155) բազմաթիվ բեկորներն ապացույց են, որ այդ հորը, ինչպես նաև նրա կողքին բացված երեք մեծ ու



17. ա. Քարայծի բարձրաքանդակ, գտնված քաղաքի հարավային թաղամասում, տուֆ քարից: Բ. նույն բարձրաքանդակի հակառակ երեսը, անորոշ զաղանի պատկերով:

Այսպիսով միջնաբերդում 1956 թ. բաց արինք 200 քմ նոր տարածություն միայն քաղաքի զոյություն վերջին շրջանի մնացորդներով և բլուրի կենտրոնական մասի վերահիշյալ հինգ բլիջներում՝ մոտ 300 քմ վերևից հաշված երկրորդ շերտի մեջ, որտեղ նախորդ տարիներին ի հայտ էր եկել հում աղյուսե մեծ շինության հսկա մնացորդների մի մասը:

Երկրորդ շերտի պեղումների ընթացքում, նախորդ տարվանից կիսատ մնացած 36-րդ բլջում բացվեց հում աղյուսե մեծ շինության արևելքից դեպի ամ ձգվող երկար պատերից մեկի միջին մասը: Իսկ նրա մոտակայքում, նույն բլջի սահմաններում, դուրս եկան տարբեր մեծություն և

փոքր թռիկները պատկանել են միջնաբերդի վերին շերտին և ոչ մի առնչություն չունեն երկրորդ շերտում բացված հում աղյուսե մեծ շինության հետ: 37-րդ բլջի բուն շերտում գտնվեցին միայն մի քանի երկաթե դամբեր և օղակներ (2046/119):

Ոչ մի առարկա դուրս չեկավ 38-րդ բլջի բուն շերտում: Այստեղ ևս ի հայտ եկած բոլոր առարկաները վերին շերտի հորերի միջից էին: Դրանք հախճապակյա զարդարուն թասեր են, սափորներ, ջնարակած խեցեղեն (նկ. 19), բազմաթիվ սնդկամաններ, որոնցից մեկը ծովոված՝ արտադրական խոտան (նկ. 20), կավե աղամաններ, ապակե բաժակների և այլ անոթների բազմաթիվ բեկորներ:

երկաթե զամեր, պայտերի ժառեր, օղակ, սղնձե ապարանջաններ և այլն:

Այդտեղ բացված երկու հորերից մեկի բերանը շարված էր քարերով: Սրա միջից, բազմաթիվ ա-

յի արևմուտք, որի նկարագիրը կտանք շենքի կառուցվածքի մասին խոսելիս:

Գտնված առարկաներից ամենահետաքրքիրը 37 և 38-րդ բջիջների սահմանում բացված հորից դուրս եկած երկու ափսեաձև և մեկ կճուճաձև ձիթաճրագներով զարդարված կարմրավուն կավե քրե-



18. Տուֆ քարից արձանի գլուխ, գտնված 1955 թվականին (պատահական):

ռարկաների բեկորների հետ, դուրս եկան խոշոր և մանր եղջերավոր անասունների մեծ քանակությամբ կոտորտված ոսկորներ: Նույն քառակուսու մի անկյունի հորի մեջ բացվեցին նույնպիսի ոսկորների մեծ կույտ, ձվի կճեպ, հավի և այլ թռչունների ոսկորներ, ձկան փշեր և ողնաշար, դեղձի կորիզ, դդումի կուտ և այլն: Հորերից մեկի խորությունը հասավ 7,5 մետրի:

Բջջի մեջ բացվեցին հում աղյուսե մեծ շինության պատերի շարունակությունը արևելքից դե-



19. Կանաչ ջնարակով սափորի կենդանակերպ ծորակ, պեղված 38-րդ բջջի հորից (XI—XIII դդ.):



20. Սնդկամանի արտադրական խոտան, գտնված միջնաբերդի հորերից մեկում (XI—XIII դդ.):

ղանն է, որով լուսավորել են տունը (նկ. 21): Այդ անոթն իր կենտրոնում ունեցել է ելուստ (որ այժմ կոտորված է), հավանաբար նրա վրա էլ մեկ կամ մի քանի ձիթաճրագներ են հարմարեցվել: Հայն նստուկը ապացույց է, որ անոթը դրել են սեղանի կամ հատուկ պատվանդանի վրա: Այս անոթը

կարելի է համեմատել Անիում գտնված կավե մի եղակի զմբեթավոր ճրագակալի հետ, որն իր վրա կրել է երկու շարք ափսեաձև ճրագներ¹⁵։



21. Ձևավոր ճրագակալ կավից, գտնված միջնաբերդի հորերից մեկում (XI—XIII դդ.)։

38-րդ բջջում, բուն շերտի միջից, ի հայտ եկան երկաթե փոքրիկ թիթեղներից կազմված զրահի բեկորներ, որոնք, հավանաբար, պատկանում են մարզպանության ժամանակներին։

39-րդ բջջում բացվեց 35-րդում սկիզբ առնող հում աղյուսե շենքի պատերից մեկի շարունակությունը, որը, ինչպես հետո պարզվեց, կենտրոնական բակի հարավային պատն է, որից հարավ, շենքից դուրս, հետագայում բացվեց քարաշար կլոր ջրավազանը։ Հում աղյուսե պատի լայնքը 1,6 մետր է, իսկ բարձրությունը, պայմանականորեն ընդունած մակերեսի համեմատությամբ, 1,95 մետր։ Պատերի վերին մասերը քանդել են և ամենուրեք մնացել են գրեթե նույն բարձրության ներանց ստորին մասերը, որոնք վերին շերտի շենքերը կառուցելու ժամանակ չեն խանդարել նոր շինարարությանը։

Երկրորդ շերտի մեջ գտնվեցին երկաթե գամերի բեկորներ։ Այստեղ ի հայտ եկած սնդկամանը և վերին շերտից ընդամենը 50 սմ խորության մեջ լինելը վկայում են, որ այդ գամերը կարող են պատկանել վերին շերտին, որովհետև սնդկամանները X դարից ավելի հին չեն կարող լինել։ Հուլիսի 6-ին այս բջջում վերին շերտին պատկանող մի հոր բացվեց, որի միջից դուրս եկան կոտրատված հախճապակե մի քանի թասեր, ջնարակապատ և հասարակ սափորներ, ապակե անոթների

բեկորներ, մի ձիթուճրաց, ամիսխառն մոխիր, ուեկորներ, կավե հասարակ ամանեղենի և դրոշմագարդ խփերի բազմաթիվ բեկորներ։ Խփերից մի քանիսը վերցրինք ամբողջացնելու և թանգարան փոխադրելու համար, իսկ մի մասն էլ Դվինի տեղական թանգարանում պահելու։

40-րդ բջիջը ընկած էր 39-ից դեպի ամ, 38-ի և 11-ի արանքում և, ինչպես հետո պարզվեց, բրունում էր հում աղյուսե մեծ շինության բակի հր-ամ գրեթե ծայրամասը։ Այստեղ 60 սմ փորելուց հետո մի հոր բացվեց, որի բերանի մոտ երեսն ի վայր ընկած էր մարդկային մի գանգ, առանց այլ ոսկորների և ծնոտի։ Ենթադրում ենք, որ գանգի այդ մասը ուրիշ տեղից է բերված և դրված հորի մեջ։ Բջիջի միայն հր կողմում բացվեցին հում աղյուսե պատերի շարունակությունը, որոնք այդ մասերում ավելի վատ էին պահպանված, քան աե կողմում։

Այս բջիջի մեջ ևս ի հայտ եկան վերին շերտին պատկանող շորս հորեր, որոնցից մեկը մենք արդեն պեղել էինք դեռևս վերին շերտը բացելու ժամանակ, մյուսները նոր էին բացվում։ Դրանցից մեկը, որ ամենից նեղ բերան ուներ (74 սմ տրամագիծ), լրիվ չկարողացանք պեղել, որովհետև մեջը սյան մի մեծ խարիսխ էր ընկած, որ դժվար էր դուրս բերել։ Այդ երեք հորերից, որոնցից մեկը շատ լայն էր (տրամագիծը 1,2 մետր), բազմաթիվ առարկաներ դուրս եկան՝ ջնարակած թասեր, քրեղաններ, ձիթաճրագներ, թոնրի դրոշմապարդ խփերի բեկորներ, ջնարակապատ և զարդարուն ափսեներ, աղամաններ, սնդկամաններ, հախճապակյա թասեր, դեղնավուն կավից սափորներ, ապակե անոթների բեկորներ, սրոցաքար։ Գտնվեցին նաև մետաղե իրեր՝ դանակի շեղբեր, երկաթե օղեր, դանակի արծաթե բռնակ, կնքաքար պղնձի կախիկով և այլն։ Բոլոր առարկաները, առանց բացառության, պատկանում էին Դվինի գոյության վերջին շրջանին՝ X—XIII դարերին։

Զմոռանալ ասել, որ 38 և 40-րդ բջիջներում, մեր պեղած մակերեսից մոտ մեկ մետր բարձր, ամենուրեք ի հայտ եկան հում աղյուսով շարված հատակ հիշեցնող ինչ-որ կառուցվածքներ։ Բայց հաջիվ թե դրանք հատակ լինեին, քանի որ աղյուսները բոլոր տեղերում երեք տակ էին շարված, մեկը մյուսի վրա։ Այդպես էլ այդ շարվածքների իմաստը և նշանակությունը մեզ համար մնաց անբացատրելի, որով գրեթե համատարած ծածկված էր հում աղյուսե մեծ շինության ներքին բակի արևմտյան մասը։

41-րդ բջիջը, որի երկրորդ շերտը պեղվեց այս տարի, գտնվում էր 40-րդ բջիջի հր կողմում և մեծ մասամբ կապված էր մեծ շինության պատերի

¹⁵ См. И. А. Орбели, Каталог анийского музея древностей, вып. 1, СПб., 1910, стр. 78—79, рис. 19.

ինս: Այստեղ չկային Նորի, Դեռնադեա և տափ-
կաներ: Անտի մեջ գտնվեցին վերին շերտից պա-
ստեպար աշխուղ ընկած սեղիամանի զարդա-
քան մի թևիչ և երկնագույն մի ուլունք:

Միջնաբերդի առ մասում այս տաքի ուսում-
նախնային երեք թառակաւներ — 10 գծի և մի
թառակաւ — 8 գծի վրա, յարադանշարը 5/5
մեայ մակերևութ:

Պնդամները կատարվում էին վերին շերտի
սահմաններում, թեև եղան զնայեր, երբ վերին և
երկրորդ շերտերի սահմանները պարզ չլինեյու
դասմամբ, որոշ լսմով խորացանք եան երկ-
րորդ մեջ:

Միջնաբերդի այս հատվածում, որ վերին շեր-
տի մեծ շինությանից գուրա էր, որնէ կարեւոր-
թյան ներկայացնող շինք լրացվեց: Հայտնաբեր-
վեցին փայտիկ, այլ տեղերից մեջ լսվ մանոթ աղ-
կանք, նրանցի վրա աղյուսաշար կամ կաճա-
կերա պատերով և թառակաւի աղյուսներով շար-
ված հատակով, որանք ընտրի այս մասում, Նոր-
շերտի մարմնիս դասմամբ, ծածկված էին հա-
ղիվ 4/5 մեայ հաղի:

Այստեղ տնայնիկի մեջ եւ Նորի էին թաղ-
ված, մի թանկաւ տաքիաների թևերներով և
սեղիներով լրված: Մեկայնիկի մեջ կային մեծ և
փոքր թանկեր, իրանց կաճի խորվանակաւոր սեղի:

Նորիից գուրա նկատ տաքիաների մեջ չկա-
յին հայտնաբերյալ թանկաւերից իրեր, զերանշում
էին հատարակ, կային և սեղիաւթիվ թառակած
թանկաւների թևերները: Թառակաւներից մեկի
մեջ թաղված Նորում (—13 —2) գտնվեց թանկ
մի թաղարկած թառ: Այդ ետին Նորում 3 հալս
նկան հատարակ թանկաւների թևերներ, թևաւս
եան զնգնաւան թնջիով մի սեղիոյի:

Վերին շերտում էլ ետին տաքիաներին էին
հանգիստ, միայն այստեղ սեղիների թևերնե-
րի հա հանալն 3 հալս էին գալիս զնգն սե-
ղիոյի որմնապարիս, կապույտ ներկած մասերով
և զրաւապար խթնի թևերներ: Թառակաւնե-
րից մեկի մեջ (—14 —3) թաղվեց լսվաներան,
թաղս ու սեղանի թաղ հալս հայտնաբեր Նոր-
հատիկի հանալս, լրված շրապարակ չկատարով:
Միջնաբերդի առ կողմում լսյա թառակաւների
զնայնից — 10 (—1, —2 և —3) և —5 (—4) գծի
վրա, ընտրի էլ միայն վերին շերտի մեջ, Թանկ
այս հատվածի զնգնաւները որնէ նորմիլան լսյ-
լին: Այստեղ եւ թաղվեցին վերին շերտի թնայու
աղյուս հատակով փայտիկ տնայնիկ, իրանց ա-
ղյուսան թանկաւների թևերներով: Թառակա-
ւներից մեկում գտնվեց զնայնի մի վնա, մեջը
երկնի լրված: Վերնաբերդի հայտնված զրաղերում

և թաղարկերով տարածված էր թաղիկներանի
որերին:

Թաղարի հր կողմում, 4-րդ տնգնամասում,
թաղիկին նախորդ տաքիներից կրտաւ մեայած
թառակով մեծ շինության մի թանի մալթերը: Հա-
վանաբար մի թանի լսյա մալթիս տնայնիկ աղ-
խարհիկ այս շինությանը, Կանալիկի վանի զա-
վթներից մեկի ետան, թևերիկայ տաքածակ տա-
նից է տնայնիկ: Ուսայնէ սահմանաւանաւան նե-
թաղարկյանն այն է, որ հայտնաւան շինքը թա-
ղարի զնայնիկ ինսանաւան-շուկան է եղել: Ենե-
լին սեղաղարկյանը զնա թաղված է:

Այստեղ գտնված սեղիաւթիվ տաքիաների
մեջ հանան նշանակաւթյան տնայնիկ հայտնաբեր-
յա մի փայտիկ թառ է, կապույտ շնայնակով, կայած
զաղի մի մեծ գտնովանի, որը զուլլ է տալիս, որ
հայտնաւան թառերը զարմանիկ: Ան ոչ միայն
իրան կերակուրի տնայնիկ, այլն որմնապարիկ,
զարդապարի կամ ընդ (նկ. 22): Այս թառի վնա և



22. Թառ կապույտ շնայնակով և սեղիաւթիվ տաքիաների
տնայնիկ հալս տնայնիկում (10—13 սմ.)

նշա մտաւանշում զուրա նկան եան զնգն սե-
ղիոյի թաղարկիվ թևերներ, աղյուսի մնայու
կապույտը, ընտրի էլ այդ մեծ շինի վնայնի վն-
թաղարկյանն հայտնաւի, որ հայտնաբեր
նշանի 205 թ. մեծ ներկաւարից հալս է տնայնի
տնայնիկ:

Այս տաքի եւ էին թաղարի տաքածակ
զնա թանկաւ շաղարկներից հայտնաբեր իրեր
էին հայտնաբերել: Մեջլայ տաքի թանկած զրաւների
զանից կապույտն աղյուսաներից հայտնաւի:
Նորի միջին հատարակ և միս աղյուսաներից մե
հանան, 10 տառակաւ և թաղարկիվ շաղարկաւ:


կան տրծաթն ու այդ գանձի հետ կապ չունեցող տարատառ պղնձե դրամներ:

Այս կարևոր գյուտը քուֆի ուղուցիկ գրությամբ մի երկարավուն ու նեղ աղյուս է, կանաչ ջնարակով պատած, որ գտնվել է Հնաբերդ գյուղում, տան հիմքեր փորելու ժամանակ:

Այս տարի Դվինի թանգարանում և պահեստային շենքերում հավաքված տարբեր տեսակի և մեծության խփերի բեկորներից մի ստվար ժողովածու կազմեցինք՝ թվով 60: Այդ խփերը մեծ մասամբ թոնրի դրոշմադարձ միջնադարյան կա-

մի քանի խումբ զբաղված էին վերին շերտի, դեռևս բոլորովին ձեռք չտված մասերի պեղումներով, պլաստիկապես միջնաբերդի ամ և հր ծայրամասերում, իսկ երկու խումբ էլ աշխատում էին բլրի զագաթի կենտրոնական մասում, նախորդ տարվա պեղումների շարունակության վրա, վերևից հաշված երկրորդ շերտի մեջ՝ ի հայտ բերելու համար հում աղյուսե մեծ շինության դեռևս չբացված մասերը և նրա շրջապատը (նկ. 23, ներդիր):

Միջնաբերդի հր կողմում գծեցինք երկու շարքով քառակուսիներ — I և — Q գծերի վրա — 7-ից



24. Պսկե մանյակ, գտնված միջնաբերդում, 1057թ. (XI—XII դդ.):

փարիչներ են, գտնված հիմնականում միջնաբերդում և ստորին բերդում ու այլ տեղերից: Թանգարանում պահեցված են 2006 համարի տակ:

1957 թվականին պեղման աշխատանքները կարճատև եղան, որովհետև պեղող անձնակազմը թանգարանում զբաղված էր ցուլադրական աշխատանքներով:

Այս տարվա աշխատանքները կենտրոնացված էին դարձյալ միջնաբերդում և որոշ չափով՝ շրրորդ տեղամասում:

Միջնաբերդում, ինչպես նախորդ տարիներում, աշխատանքները տարվում էին երկու ուղղությամբ:

մինչև — 14-ը, ընդամենը 16 քառակուսի, որոնք պեղելուց հետո ութ քառակուսի ևս գծեցինք — ի գծի վրա, դարձյալ — 7-ից մինչև — 14, բայց դրանցից կարողացանք պեղել միայն չորսը, մեջ ընդ մեջ, — 8 (կիսատ), — 10, — 12 և — 14: Մնացած չորսը և կիսատ պեղած — ի — 8 քառակուսին թողինք հաջորդ տարվան: Այսպիսով, միջնաբերդի հր թևի վերին շերտում պեղվեց 20 քառակուսի (5×5 մ), ընդամենը 500 քմ մակերեսով: Ձեռնարկեցինք նաև — 11 — ի քառակուսու պեղումները, որը, սակայն, կիսատ մնաց:

Վերին շերտի պեղումների ընթացքում բաց-

վեցին բազմաթիվ, դրեթև իրար հետ կապ չունեցող, բնակելի շենքերի պատերի մնացորդներ, հիմքում քարաշար, վերին մասերում երբեմն կավակերտ, երբեմն հում աղյուսով շարված: Մի տեղ պահպանվել էր սենյակի անկյունը՝ քառակուսի աղյուսներով շարված հատակի մասով, մի այլ տեղ պատի անկյունը նստած էր մեկ ուրիշ սենյակի կենտրոնին: Շենքի մնացած բոլոր մասերը ավերվել էին և հետքեր չկային: Վերին շերտի բոլոր այդ շենքերի մնացորդները պատկանում են քաղաքի գոյության վերջին շրջանին՝ X—XIII դարերին:

Այժմ հերթով նշենք, թե միջնաբերդի գագաթի հր կողմի այս տարվա պեղված քսան քառակուսիներից ինչեր են ի հայտ եկել:

—7 — Ի քառակուսում բացվեց աղյուսաշար հատակ բլուրի սկզբնական մակերեսից մոտ 40 սմ խորությամբ մեջ, ինչպես նաև քարաշար պատերի մնացորդներ, որոնք չէին միանում այլ պատերի հետ: Գտնված առարկաների մեջ հետաքրքիր էր պղնձե փոքրիկ դեղդիրը (կամ գդալիկը), որ վարպետ քիմիկոսի կամ ոսկերչի ձեռքի գործիք է (2047/79): Այդպիսի դեղդիրներ մեզ հայտնի էին նախորդ տարիների պեղումներից: Գտնվել են նաև ոսկրե նման առարկաներ:

—7—Ղ քառակուսու մեջ բացվեց հս դեպի հր ձգվող լայն պատի մնացորդ: Պեղումների ժամանակ ոչ մի հետաքրքիր առարկա դուրս չեկավ, եթե չհաշվենք հողաշերտի մեջ գտնված միակ երկաթե գամը (2047/61) և խեցու բազմաթիվ բեկորներ:

—8— Ի քառակուսու մեջ գտնվեցին հաստախեցի կարասի բեկորներ, որոնցից մեկի վրա՝ հախճապակու ներդիր կտորներ (2047/22): Քառակուսու մեջ թեև հորեր չկային, բայց հողաշերտը հարուստ էր առարկաներով՝ կենդանակերպ կավանոթի մաս (2047/24), կանաչ ջնարակով պատած խիփի բեկոր (2047/36), օղակավոր երկաթե մի ձող (2047/65) և դարդարուն ապակե անոթի բեկորներ:

—8—Ղ քառակուսում ի հայտ եկան համեմատաբար լավ պահպանված քարաշար պատեր, որոնք շարունակվում էին կողքի (—9—Ղ) քառակուսում: Այստեղ ևս հորեր չկային, այդ պատճառով էլ հայտնաբերված առարկաների թիվը շատ քիչ էր: Գտնված առարկաների մեջ ուշագրավ էին դրոշմազարդ կարասի մի բեկոր՝ աբլորի պատկերով (2047/23) և ապակե ապարանջանների բազմաթիվ կտորտանք (2047/94):

—8 — Ի քառակուսին պեղեցինք աշխատանքների վերջին օրերին, և չավարտեցինք: Գետնի մա-

կերեսից մի փոքր խորությամբ մեջ բացի ջնարակած խեցանոթներից (N 2047 ժողովածուի № 7, 8, 10) գտնվեցին նաև ոսկյա բազմաթիվ առարկաներ, ձույլ ոսկու մի կտոր (2047/123), ոսկե մանյակ, որ բաղկացած էր 21 կտորից, մարգարիտների 60 հատիկ, ուլունքների շարան՝ կանաչ և կարմրավուն քարերից (նկ. 24): Այս բոլորը մատնանշում են մոտակայքում ոսկերչանոցի գոյությունը, թեև այդտեղ ոսկերչի արհեստին վերաբերող գործիքներ չգտնվեցին: Ձույլ ոսկու բեկորներ լինում են բացառապես արհեստանոցներում: Մի քանի մետրի վրա (—7 — Ի) գտնվեց պղնձե դեղդիր, որը նույնպես վկայում է ոսկերչանոցի գոյության մասին:

—9 — Ի քառակուսում ևս դուրս եկան վերին շերտին հատուկ քարաշար հիմնապատեր քառակուսու հյուսիսային սահմանի վրա, որոնք, դրժբախտաբար, անհետանում էին հարևան քառակուսիների մեջ և շենքի, կամ, ավելի ճիշտ, սենյակի ամբողջական պատկերը չէին տալիս: Խեցանոթների բազմաթիվ մանր բեկորների հետ միասին ի հայտ եկան նաև մի ձիթաճրագ և դանակի թերի շեղբ:

—9 — Ղ քառակուսում բացվեցին ավելի կանոնավոր պատեր, որոնք անկյունավորվում են և սահմանագծում միջնադարյան սենյակներ: Ի հայտ եկած հորերում ու թոնիրներում բացի սովորական խեցանոթներից, աղյուսի կույտներից, ոսկորի կտորտանքից և նրանց մշտապես ուղեկցող մոխրաշերտերից հիշատակության արժանի հնագիտական իրեր չկային:

Վերոհիշյալ քառակուսիների ամ կողմում, —10 գծի վրա, պեղվեցին երեք քառակուսի (—Ի, —Ղ և —Ի): Բացված կանոնավոր պատերի մնացորդները իրար շեն միանում և աղյուսաշար հատակները միայն մասամբ են պահպանվել:

Հատակներից մեկը, որ բացվել է —10 — Ի քառակուսում, կենտրոնում ուներ ձևավոր քառակուսի քարով ծածկված մի հոր (նկ. 25), որ սովորաբար փորվում է գլխատան բացվածքի տակ, որպեսզի երդիկից ներս թափվող անձրևաջրերը թափվեն այդ հորի մեջ: Պարզ է, որ այդ նպատակին ծառայող հորերում հնագիտական առարկաներ չէին կարող լինել:

Այս քառակուսիներում իրեր դուրս եկան ոչ թե հորերից, այլ միայն հողաշերտի միջից՝ հիմնականում երկաթե նետասլաքներ, օղեր, գամեր, ինչպես նաև ջնարակած խեցեղենի մի քանի առարկա և ապակե ապարանջանի բազմաթիվ բեկորներ:

Մյուս քառակուսիները՝ —11-ից —14 դժերի վրա սուանձնապես մեծ հետաքրքրություն չէին ներկայացնում: Այդտեղ, բացի միմյանց հետ շրմիացող պատերի մնացորդներից, բազմաթիվ թռնիրներ և հորեր բացվեցին, որոնցից մի քանիսի մեջ կային արժեքավոր առարկաներ:

Այսպես, օրինակ, —12 —ի քառակուսու հորերից դուրս եկան կանաչ ջնարակապատ մի քանի սափորներ, ջնարակած քրեղաններ և թասեր, աղամաններ և ձիթաճրագներ, հախճապակյա թա-

վի էր նախորդ տարիներին, բայց նրա մակերեսը լրիվ չէր իջեցվել, այդ պատճառով այս տարի պեղումները շարունակեցինք և մակերեսը հավաւարեցրինք մյուսներին: Հարկ եղավ խորանալ ընդամենը 40 սմ: 39բ և 40բ բջիջները չպետք է շփոթել նախորդ տարիներին պեղած 39 և 40-րդ բջիջների հետ: Սրանք թեև նրանցից հեռու չեն, բայց ընկած են ավելի հարավ: Նույն տեղում պեղեցինք նաև մի այլ ավելի ընդարձակ տարածություն, որ մեր օրագրերում նշել ենք «բակ» անունով, որով-



25. Հորի ձևավոր քար, պեղված միջնաբերդում:

սեր, արաբատառ մակագրությամբ ոսկեգույն հախճապակյա թաս և ապակե անոթների բազմաթիվ կոտրտվածքներ:

—14 —ի քառակուսու հորերից մեկում գտնվեցին ապակե թասերի, գավաթների, շշերի և սրվակների բազմաթիվ բեկորներ, որոնցից հնարավոր եղավ ամբողջությամբ և թերի վերականգնել 10-ից ավելի առարկաներ:

Միջնաբերդի երկրորդ շերտի մեջ բացված հում աղյուսե մեծ շինության մասերը բաց անելու նպատակով պեղեցինք բլուրի գագաթի կենտրոնական մասը, անցյալ տարվա պեղումների շարունակության վրա, դեպի հր:

Պեղվեցին շորս հողաբաժին, որ մենք պայմանականորեն 37, 38, 39բ և 40բ բջիջներ ենք անվանել, ըստ որում 37-րդ բջիջը հիմնականում պեղ-

հետև հում աղյուսե մեծ շինության բակի մի մասն է կազմում: Այստեղ, ինչպես 39բ և 40բ բջիջներում, վերին շերտը հանված էր և երկրորդ շերտը պեղվեց ընդհանուր առմամբ 2,2 մետր խորությամբ:

39բ բջջում 1,10 մ տրամագծով մի հոր բացվեց, որի միջից դուրս եկան մեծ քանակությամբ կոտրատված քառակուսի աղյուսաներ, մոխիր, նետասլաքներ, երկաթե գամ, պղնձե տապակաձև փոքրիկ հալոց (նկ. 26)՝ երկարավուն քթով և հետևի կողմից բռնակով (2047/72): Հորից դուրս եկան նաև հասարակ ուղւմքներ, ինչպես նաև մի կախիկ և այլ առարկաներ:

40բ բջջի մեջ բացված հորից դարձյալ մոխիր ու ածուխ էր դուրս գալիս՝ կոտրատված ու ամբողջական քառակուսի աղյուսաների հետ միասին: Այդտեղ, հողաշերտի մեջ, գտնվեցին երկաթե

մի քանի իրեր՝ զսեռակի շեղբ, երկաթի գտնդված՝ նիզակի ծայր, կամ գուցե երկաթե դուր (2047/66), երկաթե կեռ խողովակի բեկոր (2047/69) և այլն։ Սրանք բոլորն էլ պատկանում են նախարարական և արտբական ժամանակներին։

Նման բաղմամբիվ առարկաներ ի հայտ եկան նաև վերոհիշյալ բջիջներին սահմանակից այն բնդարձակ տարածության մեջ, որ պայմանականորեն «բակ» ենք անվանել։



26. Պղնձե հալոց, գտնված միջնաբերդում (XI—XIII դդ.)։

100 քմ-ից ավելի տարածության վրա, որտեղ պեղումների միջին խորությունը մոտ երկու մետր էր, գտնվեցին երկաթե և պղնձե բազմաթիվ առարկաներ։ Երկաթի խարամը և ածխախառն մոխրակույտերը ցույց են տալիս, որ այդտեղ երկաթագործի կամ պղնձագործի արհեստանոց է եղել։

Գտնված բաղմամբիվ առարկաներից մեկ համար հետաքրքիր է քարե քառակող ամանը, որ կրակի մեջ տրարվել և մասերի է բաժանվել (2047/25)։ Հասկանալի է, որ սա արհեստանոցի կարասի է և ոչ տնային գործածության առարկա։ Նույնն են ապացուցում երկաթե տերեաձև և եռանիստ նետասլաքները (2047/48 և 49), դինվորականի շերտավոր լանջաույանակի թերթիկները, դանակի շեղբը, երկաթե քերիչը, ձողը և երկաթե բաղմամբիվ առարկաների մնացորդները մոխրակույտերի մեջ։ Պղնձե առարկաներ ևս շատ գտնվեցին՝ զլխին աղավնի քանդակած զարդասեղ (2047/77), պղնձե կափարիչ (2047/85), ինչ-որ կահույքի վրա գամված պղնձե զարդամասեր (2047/73, 75 և 76) և այլն։

Մետաղե իրերի հետ դուրս եկան նաև կավե երկու կնքադրոշմ, որ ժապավենով կապված են եղել ինչ-որ առարկայի (2047/86 և 87)։ Սկզբում ենթադրեցինք, որ դրանցով կնքված են եղել միջնաբերդի գինանոցների և պահեստների դռները կամ տրեղներ, բայց երբ հետազոտում այդպիսի

շատ կնքադրոշմներ գտնվեցին միջնաբերդի ուղիտական դիվանում, որոնց կապված լինելը մադաղաթյա փաստաթղթերին կասկած չի հարուցում, մեզ համար պարզ դարձավ, որ այդ երկու կնքադրոշմները ևս կարող էին կապված լինել արխիվային փաստաթղթերի՝ նրանց իսկությունը վկայելու համար։

«Բակում» գտնված եղջյուրի կտորն էլ, որի վրա գործածության հետքերն ակնառու են, դարձյալ ապացուցում են արհեստանոցի գոյությունը։ «Բակի» հրամ անկյուններից մեկում ի հայտ եկավ դետաքարերի մի կույտ, բոլորն էլ գրեթե ձվի մեծության։ Հավանաբար դրանք պարսաքարեր են և բերդի բնակիչների բերել են այդտեղ պատերազմի ժամանակ օգտագործելու համար։

«Բակում» մի քանի տեղերում բացվեցին աղյուսաշար օջախներ երկաթե առարկաների մոխրախառն կույտերի հետ միասին։

Այստեղ բացված մի քանի հորերից դուրս եկան X—XIII դարերին բնորոշ խեցանոթներ և ապակե իրեր։

Զորրորդ տեղամասում այս տարի աշխատեցինք գտնել բաղմամբիվ մուլթերով զարդարված մեծ շինության արտաքին պատերից մեկը, որ հայտնի էր մինչ այդ։ Պեղումները սկսեցինք տեղամասի հր կողմում և բաց արինք ութ քառակուսիներ՝ 2—Ե, 5—Ե, 5—Ե, 6—Ե, 7ա, 7—ա և 8ա, 8—ա, ընդամենը 200 քմ մակերեսով։



Տեղամասի հարավային սահմանագծին, գլուղական ճանապարհի կողքին, բացվեց մի հիմնապատ, որ կարծեցինք շենքի հարավային արտաքին պատն է, որից, սակայն, քիչ բան էր պահպանվել։ Մեր այս ենթադրությունը կարող է սխալ լինել, որովհետև այդ պատի մնացորդները շենքի ամբողջ տարածությունը չի ընդգրկում, այլ մի փոքրիկ հատված է։ Դարերի ընթացքում շրջապատի բնակչությունը տարել են ոչ միայն զենքի երեսին երևացող քարերը, այլև փորել են պատերի ուղղությամբ և հողի միջից հանել սրբատաշ քարերը։ Շենքի հր պատը դուրս եկավ — Ե դժի վրա, որտեղ մնացել էին հիմնապատերի միայն, իսկ երեսապատ սրբատաշ քարերից մի քանիսը գտնվեցին ընկած և տեղահան արված վիճակում։

Հայտնաբերված առարկաները քիչ են՝ մի ձևավոր աղյուս, որ օգտագործել են մեծ երկրաշարժից հետո շենքը վերաշինելու ժամանակ (2047/110), բրուտի հնոցում օգտագործված կավե մի եռոտանի (2047/37), պղնձե մի քանի մանր առարկաներ (2047/82 և 84 համարներ), հախճա-

պակու, սնդկամանի և հասարակ կավանոթների մի քանի օրինակ:

Հավաքած բաղմամբիվ խփերից (կավե տնոթների և թոնիրների) մի մասը պետեղեցինք (նկ. 27) Դվինի պահեստային շենքում, իսկ մի մասն

հայտ են եկել միջնաբերդի —11—(Վ քառակուսում (Ճ-ը՝ արառյան և 10-ը՝ իլդեգեղյան), 13 արծաթե դրամ՝ Վերին Արտաշատ գյուղում, տնատեղ փորելու ժամանակ (դանոդը Վաղինակ Աղիզյանն է):




27. Թոնրի խուփեր. գտնված միջնաբերդի հորերում (Ա—XIII դդ.):

էլ (36 կտոր) առանձին ժողովածու կազմեցինք (2047/107):

Պեղումների ընթացքում և պատահականորեն դտնվել են 90 դրամ, մեծ մասամբ արարական և մասամբ էլ պարսկական, բյուզանդական, մանգոլական և մի երկու հատ էլ վրացական՝ 13-ը ի

1958 թ. պեղումների կենտրոնացրինք միջնաբերդի գազաթին (նկ. 28) և մյուս տեղամասերում որևէ աշխատանք չկատարեցինք այն նկատառումով, որ կարողանանք ավարտել զբնթե մի տասնամյակ ձգված լուս ազյուսԱ մեծ չինության պեղումները:



28. Միջնաբերդի պեղումների հաշվառվածը 1958 թ. գրովյամբ: ա. Հովհաննիսյանի շինության 2-րդ շինություն: Զրազագանի ավերակները: 2-րդ շինություն:
 գ. Հովհաննիսյանի բնակարանի տան հիմքերը: Վերին շինություն: Գերին շինություն:

Սակայն աշխատանքների ընթացքում ստիպված եղանք շեղվել մեր ծրագրից, որովհետև բլուրի հրամ ծայրամասերում, վերին շերտի ավերակների անմիջապես տակ, որտեղ սպասում էինք, որ կերևան հում աղյուսե մեծ շինության մնացորդները, անսպասելի բացվեց մի այլ շերտ, որն իր մեջ պարունակում էր Հայաստանի հնագիտության համար բոլորովին անհայտ մի հնագույն մշակույթ:

Այդ շերտում գտնված բազմաթիվ առարկաները վկայում են, որ այդ մշակույթը տեղական ծագում ունի և ինքնատիպ է, թեև բովանդակությամբ և բնույթով մոտ է կանգնած Աքեմենյան իրանի մշակույթին և ոչ մի առնչություն չունի միջնադարի հետ:

Ինչպես կտեսնենք ներկա աշխատության այդ շերտի ուսումնասիրությանը նվիրված հատուկ դիտում, նորահայտ շերտն իր մշակույթով պատկանում է հետուրարտյան դարաշրջանին, VI—V դարերին մ. թ. ա., այսինքն այն հեռավոր ժամանակներին, երբ Հայկական լեռնաշխարհում ուրարտական հզոր պետության անկումից հետո դեռևս կազմակերպվող հայ ժողովուրդն իր առաջին քայլերն էր կատարում ազգային ինքնություն պետություն և մշակույթ ստեղծելու համար, Աքեմենյան իրանի կողքին:

Նախաքաղաքային հին շերտում կատարած մեր աշխատանքների մասին կխոսենք քաղաքի հիմնադրումից առաջ Դվինի բլուրի վրա գոյություն ունեցած հին բնակավայրի ուսումնասիրությանը նվիրված առանձին գլխում, իսկ այստեղ կնկարագրենք մեր աեղումները, որ կատարեցինք միջնադարյան քաղաքի երկու տարբեր շերտերում՝ վերին և նրա տակ գտնվող երկրորդ շերտերում:

Վերին շերտի ուսումնասիրությունը Դվինի միջնաբերդում այս տարի կատարեցինք երեք տարբեր կետերում՝ հս-ամ ծայրամասում, հարավային քառակուսիներում և հր-ամ լանջին, նախորդ տարիների պեղումների շարունակության վրա:

Միջնաբերդի հս-ամ ծայրամասում, հում աղյուսե մեծ շինության սահմաններից դուրս, բայց դրեթե նույն բարձրության վրա, ի հայտ եկավ բնակելի մի հետաքրքիր տուն, որը իր կազմության և ներքին բաժանումներով նման է տարիներ առաջ ստորին բերդում բացված երկու տներին և բլրի հս լանջի ստորոտին պեղված տանը:

Պեղումների ժամանակ այդ տան միջի հորերից գտնված հնագիտական առարկաներից շատերը ժամանակակից են նշված տներում հայտնաբերված իրերին: Փոքրիկ սենյակներից մեկում (—ա—14) գտնվեցին մի քանի երկարավուն, սրա-

ծայր և գմբեթավոր երկաթե նետասլաքներ, ինչպես նաև դանակի շեղր և այլ առարկաներ:

Տան բաժանմունքներից մեկում՝ —ա—13 քառակուսում երեք հոր բացվեց, որոնցից մեկի մեջ բացի հասարակ և ջնարակած խեցանոթների մանր բեկորներից ու կնիղանիների ցարդոտած ոսկորներից ոչինչ չկար, իսկ մյուս երկուսում գտնվեցին նիզակի ծայր և կոթառ, երկաթե ձող, մեծ ու փոքր երկաթե գամեր, օղ, փակի մասեր, նետասլաք և այլն: Մետաղե առարկաների մեջ կարևորը լավ պահպանված գեղեցիկ հորինվածքով երկրթանի բրոնզե ձիթաճրագն է (2045/378) (նկ. 29): Սա տեղական արտադրության լավագույն



29. Երկրթանի բրոնզե ձիթաճրագ, գտնված միջնաբերդի հորերից մեկում (XI—XIII դդ.):

նմուշներից մեկը կարող է համարվել: Ի հայտ եկան նաև ապակե և կավե ամանեղենի բազմաթիվ բեկորներ (որոնցից մի քանիսն ամբողջացող), ծոմոված մի սնդկաման, որ արտադրական խոտան է: Սա շատ կարևոր է մեզ համար, որովհետև մինչև այժմ էլ հնագետները վիճում են սնդկամանների արտադրության տեղի մասին, իսկ խոտանի գյուտը ցույց է տալիս առասրկայի տեղական ծագումը, որովհետև խոտանը միշտ մնում է իր ծագման վայրում:

Մենք թեև տվյալներ ունենք սնդկամանների մի տեսակի Դվինում արտադրված լինելու մասին, սակայն խոտանի գյուտը եկավ մի անգամ ևս հաստատելու այդ փաստը:

Միջնաբերդի հյուսիսային կողմում, վերևում նկարագրած տնից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա, ա—11 քառակուսում բացվեց մի թոնրատուն, որտեղ իրար կողքի թաղված էին տարբեր մեծության յոթ թոնիր:

Թոնիրները դուրս հայկական ծագում ունեն, ստեղծվել են մեզից մոտ 6000 տարի առաջ և

օգտագործվում են մինչև հիմա: Դվինի պեղումների ժամանակ թոնիրներ շատ են բացվել, նրանց թիվը միայն միջնաբերդում հարյուրների է հասնում, բայց մի հարկաբաժնում իրար կողքի յոթը թոնիր, առաջին անգամ էր հանդիպում: Սովորաբար, հարուստ տներում, նրանց թիվը 4—5-ից ավելի չի լինում:

Օգտվելով առիթից, այստեղ ուզում ենք շեղվել մեր բուն նյութից և մի քանի խոսք ասել թոնիրների նշանակության մասին, թեև այս աշխատության առաջին հատորում շոշափել ենք այդ հարցը¹⁶:

Ոմանց կարծիքով, արաբական տիրապետության տարիներին և հետագայում Դվինի բնակչության մեծագույն մասը եղել են արաբներ, և այդ ժամանակ Դվինը դարձել է մուսուլմանական քաղաք¹⁷:

Այդ կարծիքը հայտնել է ակադ. Ն. Մառը, իսկ նրան կրկնել է Աս. Շահնազարյանը, առանց հաշվի առնելու արաբ և հայ սկզբնաղբյուրների վկայություններն այն մասին, որ Դվինը առմանի քաղաք է և այնտեղ հայերեն են խոսել¹⁸:

Թոնիրները ևս գալիս են հերքելու Դվինի մուսուլմանական քաղաք լինելու տեսակետը:

Ճիշտ է, որոշ ժամանակ, երբ Դվինը արարոստիկանների կենտրոնն էր, միջնաբերդում նրստում էին արաբները, հետևապես հայերն այնտեղից արտաքսված էին, բայց հետագայում, արաբական իշխանության անկումից հետո, Դվինի հիմնական բնակչությունը դարձյալ հայերն էին:

Ուշագրավ հայտնագործություններ եղան այդ թոնիրներից դեպի հր-ան ընկած քառակուսիներից մեկում (—Ի—6): Վերին շերտի պեղման ժամանակ այնտեղ մի քանի հորեր բացվեցին, որոնցից մեկը, որ գտնվում էր քառակուսու հր-ան ծայրին, ամենից խորն ու լայնն էր (խորությունը մոտ 7 մետր) և լցված էր ածխախառն մոխիրով: Մի երկու օր բոլորովին առարկաներ դուրս չէին գալիս, բայց երբ հուսահատված հնազետները պատրաստվում էին պեղումները դադարեցնել, հորի միջից դուրս եկան թրծած աղյուսի բազմաթիվ բեկորներ, որոնց մի երեսին տարբեր տրամաչափի ակոսավոր փոսիկներ կային: Սրանք մետա-

ղագործի արհեստանոցում ծառայել են իբրև կաղապար, հեղուկ մետաղից ձողիկներ ստանալու համար:

Այդ նույն քառակուսու (Ի—6) վերին շերտում, մոտ 60 սմ խորությամբ մեջ, մոխրաշերտերեաց, խառը հախճապակյա կավանոթների մանր բեկորների ու ջնարակած ամանեղենի արտադրական խոտանի մնացորդների հետ: Այդտեղ գտնվեց նաև ապակեման նյութի մի զանգված, որն օգտագործվել է ջնարակի համար: Այդ կիսաեփ ապակի է (սմալտա), որից հնում պատրաստել են նաև խճանկարների համար օգտագործվող ոսկեգույն հատիկներ, իսկ IX—XIII դարերում՝ մետաղի օքսիդների խառնուրդի շնորհիվ, հնոցի ջերմության մեջ, տարբեր գույներ՝ սպիտակ մածուկով (անգոբ) պատած կավանոթները զարդարելու համար:

Եթե հորից դուրս եկած ձուլման կաղապարները, մեծ քանակությամբ մոխիրը, ինչպես և երկաթի կտորտանքը ապացույց են, որ այդտեղ գոյություն է ունեցել մետաղամշակման մեծ արհեստանոց, ապա ջնարակի զանգվածը և կավանոթների արտադրական խոտանը ապացուցում են, որ միջնաբերդում եղել է բրուտի արհեստանոց¹⁹:

Այդ նույն քառակուսու հորերից մեկում գտնվեցին երկու իրար նման արծաթյա բավականին մեծ անավարտ թասեր: Դրանք, ինչպես նաև հրակայուն կավից պատրաստած ոսկերչի հալոցը, մատնանշում են, որ միջնաբերդում X—XIII դարերում եղել է ոսկերչանոց: Նախորդ տարիների պեղումներից ևս դուրս են եկել այդ հաստատող բազմաթիվ ապացույցներ:

Այս տարի միջնաբերդի երկու տարբեր կետերում՝ գազաթի հարավային և արևելյան կողմերում զգալի աշխատանք կատարեցինք, որի նպատակն էր հում աղյուսե մեծ շինության հարավային և արևմտյան սահմանների որոշումը:

Եվ դա մեզ մասամբ հաջողվեց:

Բլուրի հարավային կողմում, երկար որոնումներից հետո, վերջապես գտանք հում աղյուսե մեծ շինության արտաքին պատը (նկ. 30): Այդ շենքի եզրափակիչ պատն իր ամբողջ երկարությամբ բաց անելուց հետո, մի քիչ հարավ, գրեթե նույն խորության մեջ, ի հայտ եկավ քարաշեն մի կլոր

¹⁶ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., I, էջ 52—53:

¹⁷ Տե՛ս А. Шахназарян, Двин, историко-географический очерк, 1940, стр. 83, 121.

¹⁸ Տե՛ս «Из книги путей царств Аву Исхака Ибрагим ибн Мухамеда ал Форисия ал Истрахрия, известного под именем ал-Кериха», СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 19.

¹⁹ Ի միջի այլոց, այդ ջնարակն ու խեցանոթների մնացորդները կարող են պատկանել Ի—6 քառակուսուց ընդամենը 15—20 մ դեպի արևելք ընկած քառակուսիներից մի քանիսի մեջ բացված բրուտի արհեստանոցին և թրծարանին, որոնք բացվեցին ընդամենը մի քանի տարի առաջ: Այդ արհեստանոցը մեր երբեք բացածների մեջ լավագույնն էր:

կառուցվածք, որի ավերակները բավականին ընդարձակ տարածություն են բռնում: Կառուցվածքի տրամագիծը 11 մ է. մնացորդներից երևում է, որ բուն շինությունն ունեցել է սրբատաշ ատֆ քարով շարված բոլորակ պատ՝ 35 սմ հաստությամբ: Հետագայում ուղեցել են քանդել այդ շինությունը և տեղում կառուցել մի այլ կառույց, այդ նպատակով տաշել և հանել են սրբատաշ քարերը, որից

րեկիքից դեպի արևմուտք հում աղյուսն շարվածքով մի երկար պատ է եղել, որի կենտրոնական մասը քանդել են և տեղում կառուցել ջրավազանը, իսկ այդ երկար պատը, ինչպես երևում է տարբեր տեղերում նրա մնացորդներից, մեծ շինության սրտաքին պատի մի մասն է: Այդ ջրավազանը չէր կարող պատկանել նաև միջնաբերդի վերին շերտին, որովհետև բացվեց վերին շերտի ավե-



30. Հում աղյուսն մեծ շինության արտաքին պատերը բլուրի առ կողմում (VIII դ.):

հետո տեղում մնացել են միայն մեծազանգված անտաշ քարերով և խճախառն կրաշաղախով շարված հիմքերը:

Այդ բոլորշի կառուցվածքն ամենայն հավանականությամբ ջրավազան է եղել, բայց թե ինչպես են ջուրը լցրել նրա մեջ կամ, ինչպես հեռացրել, հայտնի չէ, որովհետև ոչ մի հետք չի պահպանվել տեղում: Սակայն, նկատի առնելով տեղի բարձրությունը շրջապատի համեմատությամբ և այն ժամանակվա տեխնիկական հնարավորությունները, կարելի է ենթադրել, որ ջուրը ձեռքով կամ գրաստների միջոցով են բերել և լցրել ավազանի մեջ: Դատարկել են, հավանաբար, ավազանի հատակին ամրացված կավե խողովակների միջոցով:

Պարզ չէ նաև ջրավազանի կառուցման ժամանակը: Ըստ երևույթին այն ժամանակակից է հում աղյուսն մեծ շինությանը, որովհետև այդտեղ ա-

րակների տակ, նրանից մոտ մեկ և կես մետր խորությամբ մեջ:

Մնում է ենթադրել, որ ջրավազանը կառուցված է վերևից հաշված երկրորդ շերտում, բայց ավելի ուշ, քան հում աղյուսն պատերով մեծ շինությունը և նրա կառուցման համար քանդել են հարավային պատի մի մասը, մոտ 20 մ երկարությամբ:

Ջրավազանի կենտրոնին մոտ հորեր բացվեցին, որոնցից մեկում վերին շերտի բազմաթիվ առարկաներ կային: Այդ հորերը լրիվ չկարողացանք մաքրել, վախենալով, որ կախված մեծազանգված քարերը կարող են ընկնել հորի մեջ և վնասել փորող բանվորներին²⁰:

²⁰ Պեղումները շարունակեցինք 1966 թվականին, ևսիսապես հեռացնելով հորի մեջ կախված քարերը:

Բլուրի ամ կողմում մեծ շինություն մասերն աչքան վատ էին պահպանվել, որ շկարողացանք պարզել, թե դրանք որտեղ են վերջանում:

Այստեղ առաջին անգամ բացվեց երկրորդ շերտի մի հոր, որն իր բերանի կառուցվածքով բոլորովին տարբերվում է վերին շերտի հարյուրավոր հորերից: Հորի բերանը աղյուսաշար է և ցմբեթաձև: Բոլորշի շարված աղյուսները դեպի կենտրոն նեղանալով կազմում են մոտ 45 սմ տրամագծով մի անցք, որը ծածկել են մեծադիր աղյուսով:

Այդպիսի հորերի Դվինում հանդիպում ենք միայն քաղաքի կենտրոնական թաղում: Այդ հորերից դուրս են գալիս ավելի հին իրեր, քան միջնաբերդի վերին շերտի հորերից, որովհետև կենտրոնական թաղը կործանվել է 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ, իսկ միջնաբերդի վերին շերտի շենքերը կառուցվել են այդ երկրաշարժից հետո:

Ինչպես արդեն նշել ենք, միջնաբերդի երկրորդ շերտում քիչ են նյութական մշակույթի մնացորդները: Այդ իսկ պատճառով վերոհիշյալ հորը պեղող հնագետները մեծ հույսեր էին կապում նրա հետ: Եվ, իրոք, այդ հորի մեջ գտնված բազմաթիվ առարկաները VIII—IX դարերի հազվագյուտ իրեր են, որոնք մինչ այդ մեզ ծանոթ էին բեկորների միջոցով, իսկ այժմ այդ և մի քանի այլ հորերի պեղումներից ունենք մի քանի տասնյակ այդպիսի առարկաներ, որոնք ընդհանուր գաղափար են տալիս վաղ միջնադարի (IV—IX դդ.) մշակույթի մասին: Դրանք ջնարակապատ և հասարակ խեցանոթներ են, մետաղե զենքեր և դրահի մասեր, ապակե, պղնձե անոթներ, ոսկրե իրեր և այլն:

Այդտեղի հորերից մեկում գտնվեց դարձյալ VIII—IX դարերի ոսկերչի մի փոքրիկ անոթ, ոսկի ձուլելու հալոց, որի նմանները մեզ վաղուց էին հայտնի, ոսկերչի փոքրիկ և լավ թրծած ձեռքի քուրա, որ նորությամբ է Հայաստանի հնագիտության համար:

Մեծ շինության ամ քառակուսիների հորերում ի հայտ էին գալիս IX և դուցե ավելի հին դարերի ապակե սրվակների բազմաթիվ բեկորներ:

Պեղումների ընթացքում գտնվել է միջնադարյան 16 դրամ՝ մեկը ոսկի (բյուզանդական, IX դար), 15-ը արծաթ (9 Սասանյան՝ Խոսրով Բ-ի (590—628) ժամանակաշրջանի, 4-ը՝ բյուզանդական՝ Հերակլ ու Կոստանդին (614—641) թաղավորների և մեկը օմանյան, որ կտրված է հիջրեի 92 թ., մեր՝ 714—715 թթ.):

1959 թվականի պեղումները կատարվեցին երկու տեղամասերում՝ միջնաբերդի գաղաթին և

4-րդ տեղամասում, բայց որում միջնաբերդում ուսումնասիրությունները կատարվում էին երեք տարիներ հողաշերտերում:


Միջնաբերդի վերին շերտի պեղումները, բացառությամբ հս-ամ ծայրամասից և ամ կողմի քառակուսիներից, կատարվում էին վերևից հաշված երկրորդ շերտի կիսատ մնացած աշխատանքները շարունակելու նպատակով (նկ. 31): Մի քանի քառակուսիներում նույնիսկ ստիպված եղանք մեր թափած հողը հեռացնել՝ պեղումներ կատարելու համար:

Բլրի ամ կողմում պեղեցինք —15 գծի յոթ քառակուսիներ՝ —b-ից մինչև —h, որոնցից —c-ն և —e-ն մնաց՝ն անավարտ:

Բլրի այս լանջի պեղումները մեծ դժվարություն էին ներկայացնում. այստեղ խիստ դժվար էր շերտերն իրարից տարբերելը և նրանց հաջորդականությունը որոշելը: Ինչպես նշել ենք, վերին շերտը բլրի լանջին դարերի ընթացքում մաշվել է և տեղում շատ քիչ բան է պահպանվել, այդ պատճառով գրեթե զետնի մակերես են դուրս եկել ավելի հին շերտերը: Բացի այդ, բլրի գաղաթից այստեղ են տեղափոխվել և հետզհետե շերտավորվել միջնաբերդի վերին մասերում պահպանված մնացորդները և քանի որ քայքայումը կատարվել է նախ վերին շերտում և ապա ավելի խորքում, բլրի լանջին հաճախ հանդիպում ենք նյութերի հակառակ դասավորության՝ վերին շերտի պեղման ժամանակ, վերջին շրջանի իրերի հետ խառը ի հայտ են գալիս նույնիսկ այնպիսի մնացորդներ, որոնք պատկանում են քաղաքի հիմնադրումից առաջ այդտեղ գոյություն ունեցած հնագույն բնակավայրին:

Այսպես, օրինակ. —h —14 քառակուսու մեջ բացվեց մի կարաս, որի վրա էր դրված հում աղյուսե մեծ շինության ժամանակակից նույնպիսի աղյուսներով շարված մի անկյունապատ, բայց այդ պատի մյուս մասերը հետագայի շինարարական աշխատանքների հետևանքով ոչնչացել էին. այնպես որ այդ շինության մասին որոշ գաղափար կորոզ ենք կազմել միայն այդ փոքրիկ մնացորդով:

Այդ մնացորդի հիման վրա կարող ենք ասել, որ հում աղյուսե մեծ շինությունը Դվինում միակը չի եղել. այդպիսի շինություններ եղել են նաև բերդի այլ մասերում: Այստեղ հետաքրքիրն այն է, որ հում աղյուսե մեծազանգված պատը նստած էր մի մեծ, գնդաձև կարասի բերանին: Նշանակում է, այդտեղ, իրարից ժամանակով շատ տարբեր երկու շերտերի միջև այլ շերտ գոյություն չի ունեցել, հետևապես հում աղյուսե մեծ շինությունից



31. Միջնաբերդի պեղումների հատկաձևը 1959 թ. դրությամբ:
 ա. Ամ լանջի բնակելի տնակները վերին շերտում,
 բ. Հր-ամ կողմի արհեստանոցը իր հնոցներով՝ վերին շերտում,
 գ. Զրավազանը 2-րդ շերտում,
 դ. Հում աղյուսե շենքի բակը 2-րդ շերտում:

առաջ, բլրի ալդ լանջում վաղ միջնադարյան Դվին քաղաքը աներ չի ունեցել, հին շերտի տները պատկանել են հնագույն շրջանի բնակավայրին և ոչ թե քաղաքին:

Մեր այս ենթադրությունը հաստատվեց հետազոտարիներին, երբ —15 և նրանից ավելի արևմուտք —17 և —16 դեռի քառակուսիների մեջ ի հայտ եկան մի մեծ և լայն պարսպի մնացորդներ, որով միջնաբերդն անջատված է եղել ստորին բերդից: Այդ պարսպն ուներ հինգ մետրից ոչ պակաս լայնություն, տակը սրբատաշ քարերով էր շարված, վերևի մասերը՝ թրծած աղյուսով, իսկ լիցքը միաձույլ կավ էր: Պարսպը որոշ բարձրության վրա ունեցել է սրբատաշ քարերով գոտի, որը ապացուցվում է պարսպի երկարությամբ ընկած մեծադանգված քարերով: Այս նույն կազմությունն ունի նաև բերդի արտաքին պարսպը, որը պեղեցինք հետազոտում՝ բերդի արևելյան կողմում: Այն թվագրվում է IV դարի 30-ական թվականներով: Հետևապես, նույն կազմությունն ունեցող միջնաբերդի պարսպը ևս պետք է վերագրել քաղաքի հիմնադրման ժամանակներին:

Մենք այս հարցին դեռևս առիթ կունենանք անդրադառնալու, բայց այստեղ, ժամանակից մի քիչ առաջ անցնելով, հիշատակեցինք հետազոտում հայտնի դարձած փաստերը միայն նրա համար, որպեսզի պարզ լինի, թե ինչու քաղաքի գոյության սկզբնական շրջանում միջնաբերդի պարսպից դուրս որոշ տարածություն ազատ է եղել և պարսպին մոտիկ շենքերի կառուցումն արգելված: Հետազոտում, 893 թ. մեծ երկրաշարժից հետո, երբ արդեն միջնաբերդի պարսպը փլվել էր և կորցրել իր դերն ու նշանակությունը, պարսպի տեղում, հաճախ նրա զանգվածների վրա, ամենուրեք մանր տներ են կառուցվել, առանց նախագծի և այդ ամենի արդյունքը եղել է այն, որ երբեմնի միջնաբերդի լանջերին, քաղաքի գոյության վերջին շրջանում, փոքրիկ տների կույտներ են առաջացել:

Այստեղ դիմու բազմաթիվ կարասների և թոնիրների գոյությունը դարձյալ ապացույց է այն բանի, որ բերդի բնակիչների մեծամասնությունը X—XIII դարերում եղել են ոչ թե մահմեդականներ, որոնց արգելված էր գինու գործածությունը, այլ հայեր, որոնք անհիշելի ժամանակներից սկսած սիրել են խաղողն ու գինին և իրենց տան մահմաններում, կարասների մեջ պահել են դրանք ամենօրյա գործածության համար: Այդ է պատճառը, որ խաղողի ողկույզն ու տերևը եղել է հայերի սիրելի բանդակաձևերից մեկը, որսի աեսարանն ու գինեձոնը մինչև իսկ պերկամաքարների վրա

պատկերված են իբրև աշխարհիկ վայելքի տեսարաններ:

Սակայն միջնաբերդում ավելի մեծ աշխատանք կատարվեց երկրորդ շերտում, որտեղ աշխատում էինք բացել հում աղյուսե մեծ շինության պատերից դուրս մնացած տարածությունները:

Դժբախտաբար, հում աղյուսե շենքի շրջապատի պեղումները շատ բան չտվեցին, որովհետև շենքի ծայրամասերը, մանավանդ ամ և հս կողմերում, բնակիչները ավերել էին:

Միջնաբերդի ամ լանջին 1959 թ. պեղվեցին 22 քառակուսի, 550 քմ մակերեսով, նաև մի քանի քառակուսիներ՝ բլրի առ ծայրին և հր-ամ մասերում:

Այդ պեղումների ժամանակ գտնված բազմաթիվ առարկաներից նկարագրում ենք մի քանիսը:

Միջնաբերդի հս-ամ կողմի Ձ —15 քառակուսու մեջ բացված հորում, ի թիվս բազմաթիվ ջնարակած քրեղանների, թասերի, սնդկամանների, աղամանների, հախճապակյա անոթների, գտնվեց նաև կավից շինված մի փոքրիկ սափորիկ, ընդամենը 8 սմ փորի տրամագծով, որ թրծելուց հետո, կանխը, վիզը սուր գործիքով փորված հանված էին, ղլանաձև փորի վերին մասում փորված էին հինգ բոլորակ անցքեր՝ իրարից հավասար: հեռավորության վրա և մի փոքրիկ անցք էլ՝ հատակի կենտրոնում:

Մեզ թվում է, որ այս տարօրինակ առարկան շինվել է ոչ թե տնային գործածության համար, այլ պատրաստել են սովորական սափորիկ և հետո ձևափոխել որևէ արհեստանոցում օգտագործելու համար իբրև աշխատանոցի կարասի, բայց թե ի՞նչ դեր է կատարել նա, առայժմ ոչինչ չենք կարող ասել:

—Ձ —12 քառակուսու հորի մեջ գտնվեցին վաղ շրջանի բազմագույն ջնարակով պատած, ծաղկազարդ կավե մի մեծ սկուտեղի բեկորներ, որ եղակի օրինակ է և հայ արվեստի գլուխգործոցներից մեկը: Տրամագիծը 42 սմ, սկուտեղի բոլոր բեկորները կային, ուստի վերակազմվեց և ամբողջացավ առանց դժվարության (նկ. 32):

—Շ —12 քառակուսու հորից դուրս եկավ թրուշունի ոսկրից պատրաստած մի սրինգ, որն իր վրա ուներ երեք անցք: Այսպիսի սրինգ գտնվել էր նաև առաջ: Մեզ թվում է, որ այդ սրինգը տեճորի մաս է կազմել, որից Դվինում գտնվել էր մինչև 1950 թ. պեղումները: Ինչպես երևում է, տեճորը միջնադարյան Հայաստանի երաժշտական գործիքների մեջ որոշ կարևորություն է ունեցել: Նոր մասնաձևերում ևս, մոտ 50 տարի առաջ, տեճու-

րըն իրրե պարկապղուկ նվազում էին բարեկենդանին և զատկի տոներին:

Մի այլ քառակուսու մեջ այս տարի ևս ի հայտ եկան երկաթե թիթեղներ, որոնք պատհի մասեր են եղել: Զրահի բեկորների հետ գտնվեցին նաև նետասլաք և երկաթե այլ իրեր:



32. Բազմագույն շնարակով պատված մեծ սկուտեղ, պահված միջնաբերդի հորերից մեկում (IX դ.):

Հետաքրքիրն այն է, որ երբեմն փոքր թոնրի փոխարեն տակն ընկած կամ ճաքած ու գործածությունից դուրս եկած կճուճ են թաղել և նրա մեջ կրակ վառել՝ կերակուր եփելու համար: Այդպիսի «թոնիրներ» բացվել էին տարբեր ժամանակներում: Այս տարի —Վ—12 քառակուսու մեջ բացվեց մի մեծ կճուճ, որ դրված էր գետնի մեջ թոնրի կամ օջախի փոխարեն:

1959 թ. պեղումների ժամանակ և պատահականորեն պտնվել են 96 տարբեր դրամներ, որոնցից 10-ը՝ արծաթ, մնացածը՝ պղինձ: Մի քանիսր բյուզանդական են (2 արծաթ՝ VII դարի, իսկ սլոնձինները՝ X—XI դարերի), սասանյան, մեկը՝ պարթևական (Որոնտ Ա 57—37 մ. թ. ա.), իսկ մեծ մասը՝ արաբական և իլդեղեզյան, օմանյան, ինչպես նաև վրացական (Թամար և Դավիթ թագ. ժամանակաշրջանի):

Այս տարվա հայտնագործությունների մեջ բացառիկ տեղ է զբաղում քաղաքի կենտրոնական թաղի հր-ամ ծայրամասում գտնված մենավոր սյան մի խոյակը, վերից վար կենտրոնական անցքով, որտեղ հագցված է եղել քառաթև խաչ: Խոյակի արևմտահայաց ճակատին փորագրված է Մարիամ կույսը՝ գրկին մանուկ Հիսուսը: Այս փորագրությունը մեր V—VI դարերի սակավաթիվ

քանդակների շարքում առաջնակարգ տեղ է զբաղում (նկ. 33):

Շարունակեցինք նաև շորրորդ տեղամասում բացված ձեռ շինությունների, որի հր-ան կողմում ի հայտ եկան V—VI դարերի սյան գլանաձև բներ, ոլորազարդ խոյակներ և խարիսխներ, որոնք մի քանի շարքով զարդարել են շենքի ներքին գավիթը: Սակայն սյուների մասերը ոչ թե իրենց բուն տեղում էին, այլ հավաքված և լցված էին շենքի փոս տեղերը և ծածկված հողով:



33. Խոյակ Մարիամ Աստվածածնի քանդակով, պահված կենտրոնական թաղամասում:

Կարելի է ենթադրել, որ այդ շենքը 893 թ. ձեռ երկրաշարժի ժամանակ փլվել է, որից հետո այն ձևափոխել և նորոգել են: Այդ ժամանակ քանդված սյուների մասերը, որոնք, ըստ երևույթին, այլևս պետք չէին, հավաքել են. լցրել փոս տեղերը և հողով ծածկել:

Այդ նորոգման ժամանակ հատակի համար օգտագործել են քառակուսի աղյուսներ և դիպսե ձուլածո ու փորագիր դարձեր, որոնք բնորոշ են Դվինի վերին շերտի շենքերին:

Շենքի աե կողմում պեղվեցին մի քանի քառակուսիներ:

1960 թ. պեղումների կենտրոնը դարձյալ միջնաբերդն էր, գլխավորապես նրա եզրերը, որոնք դեռևս չէին պեղված և հնագույն մշակույթի բացված վայրի շրջակայքը, որտեղ պեղվեցին մի քանի քառակուսիներ՝ հնագույն մշակույթն ավելի լայն տարածության վրա ուսումնասիրելու նպատակով:

Որոշ աշխատանք կատարեցինք նաև շորրորդ տեղամասում, ուր նախորդ տարիներին բացված

մեծ շենքի ավերակների մեջ երևան էին եկել քարակոփ սյուների բազմաթիվ խոյակներ, խարխուլներ և գլանաձև բնեք:

Ամռան աշխատանքները կարճատև եղան Մոսկվայում հրավիրված Արևելագետների միջադպյին 25-րդ համաժողովի պատճառով, որին մասնակցելու էին Դվինի պեղումներով զբաղվողներից մի քանիսը: Սակայն տարվա ծրագիրն ամբողջությամբ կարողացանք կատարել աշնանը:

Միջնաբերդի պեղվող տարածությունները բլրի տարբեր մասերում պայմանականորեն բաժանեցինք հատվածների, պահպանելով նաև քառակուսիների համակարգը:

Ստորև ամեն մի հատված կներկայացնենք առանձին, այնտեղ կատարված պեղումների համառոտակի նկարագրության հետ միասին:

Ա հատվածն ընդգրկում է միջնաբերդի հր-ան ծայրամասի — Ի և — ց գծերի — 3-ից մինչև — 6 քառակուսիները և նեղ շերտով նաև — 7 գծի վերոհիշյալ քառակուսիների ան մասը, մոտ 350 քմ մակերեսով:

Քառակուսիների վրայից հեռացրինք հողը, հետո ձեռնամուխ եղանք վերին շերտի պեղումներին: Շուտով ուրվագծվեցին քարաշար եզրագծերով կավակերտ պատերի մնացորդներ, որոնք հետզհետե կապվելով նախկինում պեղված քառակուսիների մեջ երևացող պատերի հետ, պարզվեց, որ այդտեղ գոյություն է ունեցել Դվինի վերին շերտի համար սովորական մի բնակելի տուն՝ կենտրոնում մեծ դահլիճ 7,8×4,3 մակերեսով (մոտ 32 քմ), հատակը շարված քառակուսի աղյուսներով, կենտրոնում ջրանցույց հոր՝ երդիկից թափվող ջրերը ներծծելու համար, տան մեջ հորեր և թոնիր, ինչպես նաև գինու կարասներ ու տնային դործածության կավանոթների բազմաթիվ տեսակներ և այլն:

Դժբախտաբար, տան հր կողմը մնացել էր տարիներ առաջ մեր թափած հողի մեծ կույտի տակ, որի հեռացումը կապված էր ծանր աշխատանքի հետ: Հողակույտը շհեռացրինք, որովհետև տան այդ մասը բլրի եզրագծից դուրս լինելու պատճառով ամենայն հավանականությամբ ոչընչացած կլիներ, մանավանդ, որ հողը այդտեղ լցնելուց առաջ որոշ ստուգումներ կատարել էինք մինչև երկու մետր խորությամբ և հայտնաբերել մեծազանգված քարերով շարված ցիկլոպյան պատերի մնացորդներ, որոնք միջնադարյան քաղաքի հետ ոչ մի առնչություն չէին կարող ունենալ: Մեզանից շատ առաջ, դեռևս 1899 թվականին այդ նույն տեղում պեղումներ էր կատարել պրոֆեսոր

Ն. Մաուր, նա էլ բնակելի տան մնացորդներ չէր տեսել այդտեղ:

Տան մնացորդն իր երդիկով, թոնիրով և բազմաթիվ հորերով մի անգամ ևս համոզում է, որ Դվինի տարբեր մասերում բացված բնակելի այս տան օրինակները տեղական ծագում ունեն և հայկական միջնադարյան ժողովրդական բնակելի տան սովորական և ամենատարածված ձևն են:

Բնակելի նման տների մի քանի նմուշներ էլ բացվել են Անիում Ն. Մաուրի 1904 և 1913 թվականների պեղումների ժամանակ, որոնք բոլորն էլ X—XIII դարերի շինություններ են:

Բացի մեծ սենյակից, որը տան կենտրոնում էր, երկու փոքրիկ սենյակներ կային նրա հս կողմում, իսկ արևելյան մասում՝ մի թոնրատուն և մի քանի մանր սենյակներ: Այս տանն է պատկանել նաև տարիներ առաջ բացված թաղակապ նկուղը, որ գտնվում էր — 3 — Ի և — 3 — Ի քառակուսիներում, մեծ սենյակի հս կողմում:

Տան ուսումնասիրությունն ու չափագրություններն ավարտելուց հետո քանդեցինք նրա բոլոր մնացորդներն ու խորացանք տակի շերտի մեջ, որտեղ շուտով ի հայտ եկան հում աղյուսե մեծ շինության արևելյան կողմի երկու մեծ սենյակները և այլ հարկաբաժիններ:

Բացված հորերից և մասամբ էլ հողաշերտի միջից դուրս եկան բազմաթիվ արժեքավոր առարկաներ. հախճապակե զարդարուն թասեր, ջնարակապատ բազմագույն և քանդակազարդ քրեղաններ (տախտ. IV, 1, 2), գավեր, սափորներ, գավաթներ, աղամաններ, ձիթաճրագներ, սնդկամաններ, կճուճներ, կրակի վրա դրվող կավանոթներ, ջրի կուժեր, մետաղե շատ իրեր (երկաթե նետասլաքներ, լանջապանակի թերթիկներ, պայտեր, գամեր, շաղափ, օղակավոր և կեռիկավոր երկաթե իրեր, բրոնզե շքասեղներ), ապակե բազմաթիվ առարկաներ և այլն:

Գտնված իրերի մեջ եզակի և հազվագյուտ օրինակներ են մոզայիկ ապակուց պատրաստած մի պնակ՝ օղակավոր զարդերով (նկ. 34), բրոնզե զարդարուն կրակարան՝ ծակոտկեն կողերով և ձեռքի քառակող մի կրակարան, կողերին փոքրաքանդակ երկրաչափական զարդեր:

Բ հատվածը գտնվում էր ջրավազանի հր մասում և մի կողմով կպած էր նրան: Հատվածն ուներ ուղղանկյուն քառանկյունու ձև՝ ան-ամ 30 մ երկարությամբ և 10 մ լայնությամբ, ուր ընդգրկված էին — Ի և — ց գծերի — 6-ից մինչև — 11 քառակուսիները:

Այստեղ վերին շերտը պեղվել էր նախորդ

տարիներում, իսկ ալժմ տեղի առիթով էր խորանալ 2-րդ շերտի մեջ և բացել հում աղյուսե մեծ շինություն մնացորդները: Երբ վերին շերտի ավերակների հատակի թրծած քառակուսի աղյուսները հեռացրինք, նրանց տակ բացվեցին վերին շերտի



34. Մոզայիկ ապակուց պնակ օղակավոր զարդերով (V—VIII դդ.):

բազմաթիվ հորեր, որոնք տարբեր ժամանակներում օգտագործվելուց հետո փակվել էին և աղյուսով ծածկվել (նկ. 35): Դրանցից մի քանիսր լցված էին տնային գործածության կոտրտված բազմաթիվ ամանեղենով:

Քառակուսիների պեղումների ժամանակ, տարբեր խորության մեջ, ի հայտ եկան կավակերտ պատերի խղճուկ մնացորդներ, միմյանց նկատմամբ խոտոր դիրքավորումով, որոնց ինչ լինելը դժվարացանք որոշել:

Եթե ճարտարապետությունն այդտեղ կաղում էր երկու ոտով, ապա հնագիտությունը հիացած էր հորերից դուրս եկող բազմաթիվ առարկաների լավագույն նմուշներով, որոնք կարող էին ամենախստապահանջ արվեստագետին և տեխնոլոգին իսկ հիացմունք պատճառել:

Հորերից հանված և ամբողջացրած կավանոթների բազմաթիվ օրինակների մեջ աչքի են ընկնում հախճապակե մեծ և փոքր թասերը (նկ. 36), որոնցից երկուսը եզակի օրինակներ են և արվեստի գլուխգործոցներ կարող են համարվել:

Դրանցից մեկը նրբախեցի կապույտ մեծ թաս է, վերջնարակային զարդաձևերով, կենտրոնում վաղոդ առյուծի պատկերով (տախտ. IX), իսկ մյուսը նրբախեցի սպիտակ հախճապակյա թաս

է. որի շրթնամասի գոտին այրավոր դարձեր ունի և կիսաթափանցիկ է: Վերջինը ձենապակու տպավորություն է գործում: Գեղեցիկ են և հիշատակության արժանի նաև թոնիրների միջից դուրս եկած կերակուր եփելու կճուճները, որոնք շատ տարածված են եղել Դվինում:




35.—Ե—5 քառակուսու և շրջապատի պեղումները միջնաբերդում:

Գ հատվածը ընկնում էր միջնաբերդի ամ կողմում, —11-ից մինչև —14 գծերի —C-ից մինչև —Է քառակուսիները: Այստեղ ևս վերին շերտը պեղված էր և անհրաժեշտ էր խորանալ մյուս շերտերի մեջ՝ հում աղյուսե մեծ շինության ամ հատվածը վերջնականապես ի հայտ բերելու համար: Եվ իրոք, —12 —e և մասամբ էլ —13 —e քառակուսիների մեջ բացվեց հս-հր ուղղված մի մեծ պատ, հում աղյուսով շարված, որը միացավ անամ ձգված մեծ շինության բակի հր պատին:

Այդ պատը դեպի հարավ չավարտված ընդհատվում է: Կարելի է ենթադրել, որ շարունակությունը հնում քանդվել է նույն տեղում զանազան միջանկյալ կառուցվածքներ կատարելու ժամանակ: Մեղ թրվում է, որ այդ պատը ուղիղ անկյան տակ թեքվել է դեպի ան և ջրավաղանի կենտրոնով ձգվելով

բակի հր կողմում առաջացրել է նույնատիպ սենյակներ՝ ինչպես արևելյան կողմում: Սենյակների այդպիսի շարք եղել է նաև բլրի հս կողմում, որոնցից մի երկուսը պահպանվել են Ե և Շ գծերի —6-ից —9 բառակուսիների մեջ, իսկ նրանցից արևմուտք ընկած սենյակներից ոչինչ չի մնացել:



36. Հախճապակե թասեր, գտնված միջնաբերդի Թ հատվածի հորերից մեկում (XI—XIII պղ.):

բացի մի երկարավուն պատից, որ որոշ թեքությամբ ձգվում է հարավից հյուսիս —9 և —10 աստիճանի արանքով: Այդ պատը պահպանվել է միայն այն պատճառով, որ օգտագործվել է ամ կողմում կառուցված նոր հարկաբաժիններում: Այդ հարկաբաժինները, ինչպես և նրանց ծառայող այդ հաստահեղույս հում աղյուսե մեծ պատը, քանդվել են Դվինի 893 թ. մեծ երկրաշարժից: Պատերի վերին մասերը փլվել են և իրենց զանգվածների տակ պահել ստորին մասերն իսպառ ոչնչացումից:

Թյունը դեռևս մի մեարի շատած, երևաց շիկարմիր մի հողաշերտ՝ սև և մոխրագույն կավանոթների բեկորներով, որոնք պատկանում են քաղաքի հիմնադրումից առաջ այդտեղ դոյություն ունեցած հնագույն բնակավայրին:

Առայժմ զգուշացանք այդ հնագույն շերտի մեջ խորանալուց, որովհետև դեռևս շատ անելիքներ ունենք քաղաքին վերաբերող շերտերի ուսումնասիրման համար, այդ պատճառով պեղումները դադարեցրինք և տեղափոխվեցինք բլրի



37. Բնակելի տան մնացորդներ միջնաբերդի և հատվածում (XI—XIII դդ.):

Բացվեցին նաև քարաշար եզրերով տարբեր ուղղությամբ պատերի մնացորդներ, որոնք չեն ամբողջանում և տներ կամ հարկաբաժիններ չեն կազմում:

Այստեղ ևս վերին շերտի 10 հոր բացվեց, որոնց միջից ի հայտ եկան Դվինի համար սովորական դարձած հախճապակե, կավե և ապակե անոթներ:

Դ հատվածը գտնվում է բլրի արևմտյան ծայրամասում, —ժ և —e գծերի վրա, ուր այս տարի պեղվեց բնդամենը շորս քառակուսիների (—e —13, —e —14, —ժ —13 և —ժ —14) երկրորդ շերտը (վերինը պեղված էր նախորդ տարիներում):

Պեղումների ընթացքում, փորվածքի խորու-

հա կողմը, պեղելու c և ի գծերի —10 և —11 քառակուսիները:

Այստեղ վերին շերտը պեղված էր դեռևս մի քանի տարի առաջ: Բացի այդ, 1937 թ. մի երկար խրամատ էր փորվել, բլրի մի ծայրից մինչև մյուսը՝ վերին շերտի մեծ շինության ամ արտաքին պատին զուգահեռ:

Այդ խրամատի խորն ընկած մասերը խանդարեցին պեղումներին, որովհետև վնասել էին պեղվող շենքերը և խաթարել հողաշերտը:

Այս հատվածի —ժ —13 և —ժ —14 քառակուսիների մեջ ի հայտ եկան իրար շարունակող երկու փոքրիկ միջանցք, երկու մետր լայնությամբ և երկուսը միասին յոթ մետր երկարությամբ:

Միջանցքների պատերը քտրաշեն էին, մեկ մետր լայնքով և նման շէին նույն շերտում ամենուրեք բացվող հում աղյուսով շարված պատերին:

Այդ արդեն մի ապացույց է, որ միջնաբերդի վերին երկու շերտերի համար անսովոր կառուցվածք ունեցող այս տունը, որի միայն միջանցքներն ենք դեռևս բացել, կարող է կառուցված լինել ավելի հնում:

Գտնված առարկաները քիչ են, ինչպես սովորաբար երկրորդ շերտում: Վերին շերտի հորերում ևս առարկաները սակավաթիվ էին: Հիշատակության արժանի են IX դարի աբասյան պղնձե մի դրամ և արծաթե մի մատանի արաբերեն մակագրությամբ. «Իսահակ իբն Ազդար»:

Ն հատվածն ընկնում է միջնաբերդի հս-ամ ծայրամասում, որտեղ 1958 թ. ի հայտ էին եկել վերին շերտին պատկանող բնակելի տան մասեր: Այս տարի տան մյուս հարկաբաժինները գտնելու նպատակով պեղումները շարունակեցինք կողքի քառակուսիների մեջ և՛ Ե, և՛ Ը գծերի —13, —14, —15 և —16 քառակուսիներում: Վերին հողաշերտում բացվեցին բնակելի տան երկու մեծ սենյակները՝ $6,8 \times 7,0$ մ և $7,0 \times 7,0$ մ մակերեսներով:

Այդ սենյակներից մեկը կապված էր միջանցքի հետ, իսկ մյուսը, որ գտնվում էր առաջինի ամ կողմում, հատակին, պատերի հավասար հեռավորության վրա, ունի փայտե սյուներ՝ քարե խարիսխներ (նկ. 37), իսկ կենտրոնում՝ ձևավոր ծակ քարով ծածկված մի հոր: Սրանք վկայում են, որ սենյակն ունեցել է ղխատան գմբեթաձև ծածկ, երդիկի լուսամուտով: Մյուս սենյակի ծածկի մասին դադափար չունենք:

Այնուամենայնիվ, այս տունն իր կառուցվածքով և բոլոր մասերով խիստ բնորոշ է Դվինի X—XIII դարերի համար և այդ տիպի շենքերի լավագույն օրինակներից մեկն է:


Այս հատվածում չափազանց քիչ էին տնային գործածության և ընդհանրապես հնագիտական առարկաները:

Զորրորդ տեղամասում (քաղաքի հր թաղերից մեկը) պեղեցինք այն վայրի արևմտյան մասը, որ նախորդ տարի սյան բազմաթիվ բեկորների էինք հանդիպել՝ $a-2$, $-a-2$, $-b-2$ և $-c-2$ քառակուսիներում: Այստեղ բացվեց թրծած հավասարակողմ աղյուսներով շարված բարձրադիր հատակ:

Պեղումների ընթացքում հողակույտի աղյուսախառն շերտից դուրս էին գալիս ուշ շրջանի դիպսե ձուլածո և փորագիր որմնազարդի բեկորներ ու ձևավոր աղյուսներ:

Այդ շենքը ոչ հնում և ո՛չ էլ երկրաշարժից հետո բնակելի չի եղել, որովհետև այդտեղ ոչ մի կենցաղային իր չկար:

Այս տարի հորերից դուրս եկած բազմաթիվ առարկաների մեջ քիչ են դրամները՝ ընդամենը 12 դրամ, բոլորն էլ պղնձից, մեծ մասը արաբական (VIII—XIII դդ.), երկու բյուզանդական (X—XI դդ.), մի վրացական երկլեզվյան (XIII—XIV դդ.) և իրանական ուշ ժամանակի մի դրամ (XVII—XVIII դդ.), կտրված Նրեանում: Այս վերջինը, որ պատահականորեն գտնվել է Հնարերդ ղյուղի հանդերում, Դվին քաղաքի հետ առնչության չունի:





Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

1961—1972 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1961 թ. պեղումները մի քիչ այլ ընթացք ունեցան, քան ծրագրել էինք նախօրոք: Այս տարի ևս աշխատանքների կենտրոնը միջնաբերդն էր և մասամբ էլ 4-րդ տեղամասը, բայց ստիպված եղանք աշխատել նաև ստորին բերդի պարիսպների տակ, որտեղ անձրևաջրերն ամռան ամիսներին բացել էին պարսպի բուրգերից մեկի երեսը, որ մինչ այդ որոնում էինք:

Միջնաբերդում շարունակեցինք անցյալ և նախանցյալ տարիների պեղումները գլխավորապես բլրի ծայրամասերում և զրո կետի մոտերքում՝ բլրի աե կողմում: Միջնաբերդի պեղումների գլխավոր նպատակը 2-րդ շերտի (վերևից հաշված) բացելն էր, թեև որոշ տեղերում (բլրի հս-ամ կողմում) պեղեցինք վերին շերտին պատկանող տան մի քանի սենյակներ: Արևմտյան լանջին պեղեցինք —16 գծի մի շարք քառակուսիների միայն վերին շերտը:

Միջնաբերդի աե քառակուսիների երկրորդ շերտի մեջ եղան մի քանի հետաքրքիր հայտնադործություններ:

2 — d քառակուսում և նրանից դեպի աե բացվեց աղյուսաշար մի հնոց ձգված աե-ամ, մի հնոց էլ՝ նրա կողքին, թոնրանման, բուրրձի, կառուցված կավից (նկ. 38): Այս երկուսը միասին 1 — d և 1 — c քառակուսիներում մի քանի տարի առաջ բացված պալատական բրուտի արհեստանոցի շարունակությունն են:

Այստեղից ոչ հեռու, 2 — c քառակուսու մեջ ի հայտ եկած ակնագործի այրված արհեստանոցի ածխախառն մոխրաշերտից հուլիսի 2-ին և 3-ին գտնվեցին կանաչավուն քարից մատանու քառանկյունի մի ակ, եզրերը մշակած, սև գույնի քարե մի կնիք՝ տղամարդու դիմանկարով (նկ. 39), ձույլ ոսկու մի կտոր, միջնադաս քարերի

կտորներ (մեկը կարծեք ագաթ), որոնցից մատանու փորագիր քարեր են պատրաստել: Հավանաբար, այդ արհեստանոցում պատրաստել են նաև քարե և մարգարտե ուլունքներ: Նույն տեղում սեպտեմբերի 18-ին գտնվեցին՝ դեղնավուն քարից կլսագնդաձև մատանու ակ, դրամի չափ պղնձե կնիք՝ թռչունների պատկերներով և հունարեն գրերով ոսկրե երկու սկավառակաձև կոճականման իրեր՝ մի երեսին զարդեր, կարմրավուն քարից մի կնիք (գեմմա), վրան վարագի պատկեր, կավե սափորանման փոքրիկ սրվակ կարմրավուն արտաքինով և, որ գլխավորն է՝ օրհնած ջուր պահելու կավե մի փոքրիկ անոթ, որի երկու երեսին էլ կաղապարների մեջ ձուլված Անդրեաս առաքյալի դիմապատկերներն են հունարեն մակագրությամբ. մի երեսին՝ «Սուրբ Անդրեաս» մյուսին՝ «առաքեալ» (նկ. 40):

Այդտեղից ոչ հեռու, —1 — b քառակուսում մոխրաշերտի միջից ի հայտ եկավ մի հետաքրքիր կնքադրոշմ, կապույտ ապակուց, միջակ կոճակի չափ, խաչի պատկերով:

Սակայն ավելի ուշագրավ էին հուլիսի 2-ին և 3-ին այդ նույն տեղից ոչ հեռու, 3 — a քառակուսում բացված իրերը: Այդտեղ ածխախառն մոխրաշերտ երևաց, այրված կտորեղենի և կաշու հետքերով, որի մեջ կային կավե բազմաթիվ կնքադրոշմներ, որոնք ներքևի մասում նեղ ու տափակ անցքեր ունեին: Այդ ճգմված անցքերն, ինչպես հայտնի է, օգտագործվում են կնքադրոշմները ժապավենով կամ թելով փաստաթղթին միացնելու համար:

Մոխրաշերտի մեջ կնքադրոշմների թիվը բավականին շատ է եղել, հավանաբար մի քանի հարյուր, բայց մեծ մասը քայքայվել և փոշիացել է:

Դժվարությամբ հավաքեցինք ընդամենը քսան կնքադրոշմ և մի քանի բեկորներ:

Գտնված կնքադրոշմներից մի քանիսը մեծ են

և իրենց վրա կրում են տարրեր կնիքների դրոշմ (№ 2197/313). ամենամեծի վրա կա 37 դրոշմ (2197/314), մի բեկորի վրա՝ 10 դրոշմ: Կան նաև



38. Հնոցներ. պեղված միջնաբերդի զազաթում՝ 1961 թվականին (V—VI դդ.):



39. Գեմմա, գտնված միջնաբերդի ակնագործի արհեստանոցի պեղումներից (II—III դդ.):

Տինգ, երեք և երկու դրոշմ ունեցողներ: Դժվարում գրեթե ամեն տարի գտնվում են այդպիսի կնիքներ:


Առանց կասկածելու կարող ենք ասել, որ ակնագործի արհեստանոցում գտնված առարկաները, ինչպես և բոլոր կնքադրոշմները մարդանական իշխանության ժամանակաշրջանի՝ V—VII դարի կեսերի իրեր են: Այդ են հաստատում բարձրաստիճան հոգևորականների խաչազարդ կնքադրոշմներն ու աշխարհիկ իշխանների կենդանադարդ կնիքները և նրանց վրայի պահպանված դրուժյունները, ինչպես նաև մյուս նյութերը:

Անսովոր և տարօրինակ կառուցվածքներ բացվեցին Շ — 2 քառակուսու մեջ և նրանից ահ ընկնող մյուս քառակուսիներում:

Սովորականից մի քիչ ավելի մեծ տրամաչափի թոնրի կողքին բացվեց հում աղյուսից շարված մի այլ թոնրանման վառարան: Այդտեղ եղել էր նաև աղյուսաշար ինչ-որ մի կառուցվածք, որն ամբողջովին քայքայվել էր, իսկ նրա աղյուսները թափվել էին հնոցների մեջն ու շուրջը: Այդ աղ-

յուսաշին կառուցվածքը հնոցների հետ կապ է ունեցել, թե հետո է շինվել, սլարդ չէ: Հնոցների վերին մասը քանդված ու ոչնչացված էր, իսկ ներքևում երկուսն էլ ունեին աղյուսաշար միջնորմ-

րությամբ ձգվում էր դեպի արևելք, որի շարունակովյունը բնդհատվում էր քանդված լինելու հետևանքով: Առաջին երկու հնոցների մոտ բացվեց մի հոր կս. որի վերին մասում՝ ամ և հս կող-



40. Փորրիկ անոթ Անդրեաս առաքյալի պատկերով (V—VI դդ.):

ներ և օդ փչելու համար կավե խողովակով շինված օդանցքներ (նկ. 41, 42): Դեպի ան, նույն խորության մեջ, բացվեց երրորդ հնոցը, որն ամենամեծն էր (տրամագիծը՝ 1,45 մետր): Սրա միջից կավե խողովակների մի շարք 10 մետր երկա-

մերից կավե խողովակներ են մտնում: Այդ խողովակներով հորի մեջ ջուր կամ այլ հեղուկ է թափվել: Հորը կապված է հնոցների հետ և նրանց սխառեմին է պատկանելու: Առաջին երկու հնոցների և հորի մոտ կա հորի մեջ ուղղաձայաց թափված

կավե մի խողովակ, որով, հավանաբար, հեղուկը հոսել է հորի մեջ:

Ամենից հետաքրքիրը երրորդ հնոցն է, որի մեջ ամ կողմից կավե խողովակ է մտնում և հնո-



41. Հնոցների հատվածներից մեկը, պեղված 1961 թ., միջնաբերդում (V—VI դդ.):



42. Հնոցների տեղամասում բացված խողովակաշար (V—VI դդ.):

ցի ներսում միանում միջակ մեծության մի կճուճի հետ, որի մյուս կողմից դուրս գնացող խողովակը հնոցի կենտրոնում ծունկ է կազմում, թերվում դեպի հր-առ և դուրս գալիս հնոցից ու միանում մյուս հնոցից դուրս եկող կավե խողովակներին (նկ. 43):



43. 1961 թ. պեղված 3-րդ հնոցը (V—VI դդ.):

Այս բոլորը վկայում են, որ այդ կառուցվածքը տնայնագործական աշխատանոցի արտադրական սարքավորում է (նկ. 44), որի ինչ լինելը մեզ անհասկանալի մնաց: Սկզբում ենթադրում էինք, որ այդտեղ ապակեգործի հնոցներ են եղել և խողովակաշարերով օդ են փչել հնոցի մեջ, ջերմաստիճանը բարձրացնելու և ապակու հումքը հեղուկ վիճակի հասցնելու համար, բայց ենթադրությունն անհավանական է, որովհետև հնոցների մեջ կամ նրանց շրջապատում ապակու կամ նրա հումքի մնացորդ բոլորովին չգտնվեց, թեև կարող ենք ենթադրել, որ այժմյան մնացորդների վառարանների միայն կմախքն են և նրանց միջի սարքավորումը մեզ չի հասել:

Կարելի է ենթադրել, որ այդ հնոցները պատկանել են մեզ համար անծանոթ սարքավորում:

ունեցող ինչ-որ աշխատանոցի (նկ. 45), որը կապ է ունեցել քիմիական արտադրության հետ: Մեր այս ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ այդ հնոցների մոտակայքի հորերից դուրս

դոյության վերջին շրջանի՝ X—XIII դարերի: Բըլ-րի լանջի վրա շենքերի կավակերտ պատերի մնացորդները բացվում են տարբեր՝ 10—20 սմ-ից մինչև 2 մետր խորության մեջ: Հորերի թիվը շատ



44. Հնոցների տեղամասում բացված աղյուսաշար պատեր՝ աչքոված վիճակում, 1961 թ. (V—VI դդ.):

և կող ապակե անոթների անթիվ քեկորների մեջ կային գոլորշիացման միջոցով նյութերի թորմանը ծառայող ալամբիկներ և այլ անոթներ, որոնք միայն քիմիական գործողությունների հետ առնչություն ունեցող արհեստանոցներում կարող էին լինել:

Այս հնոցները ևս կարող ենք վերագրել մարդ-պանական ժամանակներին, որովհետև ի հայտ եկան կնքադրոշմների հետ նույն շերտի մեջ, բայց կարելի է ենթադրել, որ օգտագործվել է նաև արար ոստիկանների օրոք, որովհետև մինչև վերին շերտը, որ գոյացել է 893 թ. երկրաշարժից հետո, ոչ մի այլ կառուցվածքների հետք չկա միջնաբերդի այդ մասերում:

Միջնաբերդի ամ լանջին այս տարի պեղվեց ընդամենը վեց քառակուսի — 16 գծի վրա 150 քմ մակերեսով: Տարբեր խորությունների մեջ ի հայտ եկան անկանոն շարվածքով մի քանի պատերի մնացորդներ, որոնք տարբեր շենքերի այժմ անհասկանալի մնացորդներ են, բոլորն էլ քաղաքի


քիչ է, մակերեսային, որոնց մեջ հանդիպում են հատ ու կենտ ջարդուտված թերի առարկաներ:

Միջնաբերդի հս-ամ կողմում, որտեղ անցյալ և նախանցյալ տարիներին վերին շերտի մեջ բնակելի տան մասեր էին երևացել, պեղեցինք այդ տան այն մասերը, որոնք ընկնում էին միջնաբերդի C գծի 10, 11 և 12 մասամբ էլ b և d մի քանի քառակուսիներում:

Այս տարվա պեղումներով բնակելի այդ շենքի մնացորդները լրիվ բացվեցին: Պարզվեց, որ շենքը իր հս մասում ունեցել է հինգ ընդարձակ սենյակ 40—50 քմ մակերեսով, որոնցից չորսը մի շարքի վրա, իսկ հինգերորդը՝ երրորդի հս կողմում: Այս վերջինը միայն մասամբ կարողացանք պեղել, որովհետև գտնվում էր մեր թափած հսկայական հողակույտի տակ:

Նախօրոք բացված երկարավուն միջանցքը, որի մուտքը բլրի կենտրոնական մասից էր, իր մյուս ծայրով կապված էր երկրորդ սենյակի հետ: Վերջինս փաստորեն մի մեծ դահլիճ էր, որ բա-

ժանարար սենյակի դեր էր կատարել՝ մի կողմից (ամ) մտել են շորս փայտե սյուների և զմբեթավոր ծածկ ունեցող № 1 սենյակը, իսկ դիմացի կողմից (առ)՝ № 3, 4 և 5 սենյակները:



45. Հնոցին պատկանող կավե սարք (V—VI դդ.):

Երկար միջանցքից դեպի ամ, առաջին սենյակից դեպի հր հերթով տեղավորված են եղել շենքի փոքրիկ բաժանմունքները՝ 6—8 քմ մակերեսով, իսկ այդ բոլորի ծայրին եղել է մի ուրիշ՝ մյուսաներից մի քիչ ավելի մեծ (19 քմ) սենյակ (նկ. 46):

Այս տունը հավանաբար սենյակներ է ունեցել նաև ամ թևի հր կողմում, որտեղ սլատերը շարունակվելով երեք առանձին սենյակների տեսք են ստանում: Սրանք երկար միջանցքի և մյուս սենյակների միջից դռներ չեն ունեցել: Կարծում ենք, որ այդ երեք սենյակները, ինչպես նաև երկար միջանցքի արևելյան կողմի մի քանի բաժանմունքները, պատկանել են այս բնակելի տանը, մանավանդ, որ այս մեծ բնակելի տունը չէր կարող ունենալ մի փոքրիկ՝ 9 քմ մակերեսով թոնրատուն: Այդպիսի մեծ տները սովորաբար ունենում են մեծ թոնրատներ, երեք կամ չորս մեծ և փոքր թոնիրներով:

Տան բոլոր բաժանմունքներն ունեցել են թրթածած քառակուսի աղյուսներով շարված հատակ, որոնց մնացորդներն ու հետքերը պահպանվել են գրեթե բոլոր սենյակներում, իսկ ամենից լավ՝ երկար միջանցքում:

Արևելյան ծայրի շորորոդ սենյակում հատակը բոլորովին չէր պահպանվել, այդ պատճառով պեղումները շարունակեցինք և խորացանք երկրորդ շերտի մեջ: Սենյակի մեջ բացվեց մի ավելի փոքրիկ սենյակ 5,6×2,4 մ մակերեսով, որն ուներ կրաշաղախ հատակ: Այդ հատակը նորոթյուն էր Դվինի 2-րդ շերտի համար: Սենյակի պատերը

շարելուց հետո հատակը հարթել էին, վրան մանր գետաքարեր փռել, լավ ծեծել, նորից հարթել և գետաքարերի վրա ավազախտոն կրաշաղախ լրցրել: Հատակը այնքան ողորկ էր, որ ապակու նման փայլում էր:

Միջնաբերդի այդ կրաշաղախ հատակը մեր կարծիքով ավելի հին է, որովհետև այդպիսի հատակ այս տարի բացվեց դրո կետի մոտերքում, որն ավելի խորն էր ընկած, քան մարզպանական շրջանին պատկանող կնքադրոշմներն ու ակնագործի արհեստանոցի իրերը:

Այդ փոքրիկ սենյակի մեջ վերևի շերտից յոթ հորեր էին փորված, որոնց միջից ի հայտ եկան վերին շերտին բնորոշ ջնարակած բազմաթիվ քրեղաններ ու թասեր, սնդկամաններ, սափորիկներ և կճուճներ, հասարակ կավանոթներ ու ապակե իրեր:

1961 թ. միջնաբերդում պեղեցինք նաև բլրի հարավային եզրի — ի դժի — 7-ից մինչև — 13 քառակուսիները՝ նախ վերին և ապա երկրորդ շերտերը, որով միջնաբերդի պեղած տարածության լայնությունը բլրի գագաթին ընդարձակվեց հինգ մետրով և հասավ մինչև 80 մետրի, իսկ երկարությունը մնաց նախկինը՝ 100 մ:

Բացի դրանից, դգալիորեն ընդարձակեցինք բլրի հր մասի խորքում բացված հնագույն մշակույթի պեղման տարածությունը, որտեղ — Ի — 10 քառակուսու սահմաններում ի հայտ եկավ մինչև այդ Հայաստանի հնագիտության համար անհայտ մի հեթանոսական տաճար իր ատրուշանով և աստվածություններ խորհրդանշող սրբազան տախտակով:

Ամառվա անձրևաջրերի հեղեղատում պատահաբար բացված պարսպի բուրգերից մեկի երեսը ուսումնասիրելու նպատակով այդ վայրում պեղումներ ձեռնարկեցինք և հսկայական հողաշերտ հեռացրինք (մինչև 6 մետր խորությամբ):

Պարզվեց, որ պարսպի բուրգերի միայն միջուկն է կավակերտ, արտաքինը ստորին մասում քարակերտ է, իսկ վերևում շարված է մի քանի շարք թրծած աղյուսով, մինչև 90 սմ թանձրությամբ (նկ. 47): Հավանաբար, պարսպի վերին մասերում եղել են նաև քարաշար գոտիներ, որովհետև տեղ-տեղ պարսպի տակ ընկած մարուր տաշված քարեր կան: Բուրգը մեծ է. նրա երեսի բացման աշխատանքները շարունակվելու են նաև 1962 թվականին:

Այս տարի 4-րդ տեղամասի հս-ան անկյունում պեղեցինք երեք քառակուսի՝ 75 քմ մակերեսով: Բոլոր քառակուսիներն ընկնում են սյունա-

վարդ մեծ շինություն մեջ և այդ հետաքրքիր շենքի արտաքին պատի հայտնագործումը, եթե, իհարկե, պահպանվել է, մնում է հաջորդ տարիներին:

1962 թվականի պեղումները ղյուստրայես կենտրոնացված էին միջնաբերդում (նկ. 48): Միջնաբերդից դուրս աշխատեցինք նաև ստորին բերդի

քայլած էին և խզնուկ, որ որևէ չափով նրանցից բան հասկանալն անհնարին էր:

Բացի այդ, բլրի այս լանջին, մոտ մեկ կամ մեկ ու կես մետր խորության մեջ, վերին շերտի մնացորդների տակ, շիկակարմիր հողաշերտի զանգվածների տակից ի հայտ են գալիս մոխրա-



46. Միջնաբերդի հս-ամ կողմի սենյակների պեղումները:

պարսպի վրա, որտեղ շարունակեցինք կիսատ մընացած բուրդի արտաքին երեսի բացումը:

Միջնաբերդում աշխատանքները գնում էին երեք տարբեր հատվածներում՝ երկուսը քաղաքի շերտերում, իսկ մեկը՝ քաղաքից առաջ գոյություն ունեցած բնակավայրի շերտում, որի համառոտ նկարագիրը կներկայացնենք շորրորդ շերտի ուսումնասիրությանը նվիրված գլխում:


Առանձնապես կանգ չենք առնի նաև միջնաբերդի բլրի ամ լանջի պեղումների վրա, որտեղ նորից փորեցինք —ի և —ի գծերի —14, —15 և —16 քառակուսիները, ընդամենը 150 քմ մակերեսով, որովհետև բացված շենքերը և գտնված առարկաները իրենցից ոչ մի նորություն չէին ներկայացնում:

Այդտեղ, բացի միջնաբերդի ստորին բերդից անջատող մեծազանգված պարսպի մնացորդներից, որ հավանաբար լրիվ գոտի է կազմել բլրի պագաթի շուրջը, շենքերի մնացորդներն այնքան քայ-

գույն մեծ ու փոքր կավանոթներ, կճուճներ, գընդաձև մեծ կարասներ, որոնք, անկասկած, պատկանում են քաղաքի հիմնադրումից առաջ այստեղ գոյություն ունեցած բնակավայրին: Պեղումների ընթացքում —ի —14 քառակուսու մեջ երեք մեծ,



47. Միջնաբերդի պարսպի հարավային կողմի բուրգերից մեկի արտաքին տեսքը:



48. Միջնաբերդի պեղումների հատակածը 1962 թ. դրությամբ:

մոխրագույն, գնդաձև կարաս երևացին¹ (նկ. 49):

Կարասների հետ ի հայտ եկան նաև սև արտաքինով, միջակ մեծության, նեղբերան, բայց լայնափոր կճուճներ, ցլագլուխ բռնակներով, որոնցից նույնպես միայն մեկ հատը հանեցինք և ամբողջացրինք, մյուսները, որոնց կտորները երևում էին հողի մեջ, դարձյալ թաղեցինք:

Մեր աշխատանքները հետզհետե ծավալվեցին միջնաբերդի գագաթի ան կողմում, երկրաչափական ցանցի զրո կետի մոտակայքում, որտեղ մոտ 1000 քմ տարածություն պեղեցինք, պարզելու համար, թե անցյալ տարի աստ ու անդ ի հայտ եկած կրաշաղախ հատակն ի՞նչ շենքի է պատկանել:

1961 թ. պեղումների ընթացքում պարզվեց, որ այդ տարածության վրա, ավելի բարձրում ի հայտ եկած կնքադրոշմներն ու ակնագործի արհեստանոցը պատկանել են մարզպանության ժամանակներին՝ V—VII դարերին, հասկանալի է, որ այդ մնացորդներից ավելի խորն ընկած կրաշաղախ հատակը պետք է պատկաներ ավելի վաղ ժամանակներին:

Մեզ շատ հետաքրքրեց այդ շենքի բացումը, որովհետև նախորդ երկու տասնամյակի պեղումների ընթացքում դեռևս ոչ մի շենք չէինք հայտնաբերել միջնաբերդում, որն առանց վարանման վերադրեինք քաղաքի հիմնադրման ժամանակներին՝ IV դարին:

Այդ դարից մեզ հայտնի էր միայն միջնաբերդից դուրս գտնվող Կաթողիկե մեծ եկեղեցին, բայց այն կարող էր կառուցված լինել քաղաքի հիմնադրումից անկախ, ինչպես մեր նույնատիպ բազմաթիվ տաճարները, որոնք IV և V դարերում կառուցվել են Հայաստանի բազմաթիվ վայրերում: Այդ էր պատճառը, որ մեր ուժերը կենտրոնացրինք բլրի այդ մասի վրա և բացեցինք շենքի մնացորդներն ու շրջապատի տարածությունները:

Նախ պեղեցինք այն վայրը, որտեղից հայտնաբերել էինք կնքադրոշմները: 0,7 մ և ավելի խոր փորելուց հետո բացվեց կրաշաղախ հատակը, որը շարունակվում էր նաև հնոցների բացված տեղում: Այդ պատճառով ուսումնասիրելուց և չափագրելուց հետո պեղեցինք նաև այդ հնոցների տակը:

Երկար տարիներ պահել էինք վերին շերտի արևելյան արտաքին պատի հիմքերը, որի մնացորդները մոտ շորս մետր բարձրությամբ և երկու մետրից ավելի լայնությամբ միջնաբերդի գագաթի հյուսիսային ծայրից մինչև հարավային եզրն էին ձգվում: Այդ հսկայական զանգվածը ևս վերաց



49. Գնդաձև կարաս միջնաբերդի ստորին շերտի պեղումներից:

րինք, տեղում պահպանելով միայն եռանկյունաչափական կետն՝ իր բնական բարձրության վրա: Բացվեց մի հետաքրքիր, շատ մեծ դահլիճ՝ երկարությունը անամ 29 մ, իսկ լայնությունը հս-հր 12,50 մ, 362 քմ մակերեսով (նկ. 50): Ներսում ունեցել էր երկու շարք սյուներ, որոնցից այժմ միայն մի գեղեցիկ խարիսխ է պահպանվել տուֆ քարից: Դահլիճի ամ կողմում, հետևից կիսաշրջանաձև, գետնին ամրացված բարձրադիր գահավորակ է եղել: Այդ գահավորակի վրա բարձրացել են առջևում կառուցված երկու աստիճանով, որոնց հետքերը որոշակի պահպանվել են տեղում: Դահլիճի պատերի հիմքերը խիստ կանոնավոր շարվածքով պահպանվել են տեղում կրաշաղախ հատակին հավասար բարձրությամբ, իսկ բուն պատերը, ինչպես այդ կարելի է հզրակացնել շրջապատում թափված քարերից, սրբատաշ տուֆ քարով են հղիլ շարված:

¹ Այդ կարասներից մեկը հանեցինք և տեղափոխեցինք հնադարան ցուցադրելու համար, իսկ մյուս երկուսը նորից ծածկեցինք, որպեսզի չփչանան և բաց կանենք այն ժամանակ, երբ քաղաքային շերտերն ուսումնասիրելուց, հետո, ձեռնամուխ լինենք նրանց բնակավայրի ուսումնասիրությանը:

Դահլիճի կառուցման ժամանակը որոշելու համար կարևոր նշանակություն ունի այն, որ մարդկանցների օրոք կառուցված հում աղյուսե մեծ շինության ան պատը նստած է այս դահլիճի հիմնապատերի վրա:

Այս փաստը ևս դալիս է հաստատելու, որ դահլիճը, ինչպես կտեսնենք իր տեղում, կառուց-

աշնանը և 17 մ տրամագծով պեղելուց հետո կիսատ էինք թողել, այս տարի շարունակեցինք և բաց արինք ամբողջությամբ: Բուրգի կիսաբոլոր պարադիծը մի անկյունից մյուսը 38,7 մ է, ընդհանուր պատից դուրս է կես շրջանից ավելի և որոշ չափով պայտաձև է (նկ. 51):

Այդ կետի աշխատանքները դադարեցրինք,



50. Գահանիստ դահլիճի ընդհանուր տեսքը (IV դ.):

ված է Արշակունի թագավորների օրով, IV դարի երեսնական թվականներին, և առայժմ մեզ ծանոթ միակ շենքն է, որ կառուցված է քաղաքի հիմնադրման ժամանակ: Դահլիճի հիմնապատերը լավ են պահպանվել, ինչպես ասացինք, կրաշաղախ հատակի բարձրության հավասար, միայն արևելյան պատն է, որ բլրի գագաթի սահմանագծի վրա գտնվելու պատճառով ոչնչացել է, բայց այդ մասի հր կողմում պարզ երևում է ան պատի սահմանագիծը և կրաշաղախ հատակի վերջավորությունն ուղիղ գծով:

Կրաշաղախ հատակը պահպանվել է դահլիճի արևելյան կողմի երկու երրորդ մասում, իսկ ամ կողմում, որտեղ ավելի ենք փորել, քան կրաշաղախ հատակն է, բոլորովին չկան նրա հետքերը: Այդտեղ, անշուշտ, հատակը շարունակվել է, բայց հետագայում քանդել են: Այդ են վկայում հատակի կոտորտված բեկորների մնացորդները:

Սառիճն բերդի հր-ան բուրգերից մեկի երեսի պեղումները, որ սկսել էինք դեռևս անցյալ տարվա

որովհետև լիցք հողի բարձրությունը 5 մ էր, շերտերով փլչելու վտանգ կար, իսկ վրայից հորիզոնական պեղումը աշխատանքի ծավալը մի քանի անգամ մեծացնում էր, ուստի շարունակությունը հետաձգեցինք հաջորդ տարվան:


Ստորին բերդի պարիսպների արտաքին երեսը բացվեց նաև հարավային կողմում, հր մուտքից քիչ դեպի ամ: Հետախուզական պեղումների ժամանակ բացված կոր գծով շարվածքը պարզվեց, որ պարսպի հնադարյան կարկատան է:

1962 թ. պեղումների ընթացքում գտնվեցին մեծ թվով հնագիտական առարկաներ, որոնք զբաղեցրին 478 համարի տակ: Մետաղե իրերի մեջ կարևոր են դենքի և դրահի տեսակները, որոնց մեջ կան լուսնապանակի բաղաձախի երկաթե թերթիկներ, նիզակի երկաթե ծայրեր, նետասլաքներ, կեռեր և այլն: Մեծ թիվ են կազմում հախճապակյա և ջնարակապատ կավե զեղարվեստորեն ձևավորված առարկաները՝ իկարապարզ թասերը, երկու իերանդ ջնարակապատ քրեղանները, սափորները,

դավաթները, կճուճները, ձիթաճրտուները, սղոմանները, դրոշմազարդ խփերը, սնդկամանները, ինչպես նաև բազմաթիվ ապակյա անոթներ:

որոնց պեղումները սկսել էին 1962 թվականին՝ պարսպից ներս:

Այստեղ, դահլիճի մակերեսին հավասար, ի



Ճ1. Միջնաբերդի հր-աւ բերդապարսպի բուրդերի հատակաձևերը (1963 թ.):

Գտնվեց ընդամենը 15 դրամ, մեծ մասամբ արարական և սելջուկյան:

1963 թ. պեղումներ կատարեցինք քաղաքի երեք տարբեր տեղամասերում. միջնաբերդի գագաթի մի քանի կետերում, ստորին բերդի հր-աւ պարիսպների արտաքին երեսին և շորրորդ տեղամասում:

Միջնաբերդում պեղեցինք աւ ծայրամասը, մեհյանի շրջապատը և ամ լանջը:

Միջնաբերդի աւ ծայրամասում, որտեղ նախորդ տարիներին ի հայտ էր եկել արշակունիների գահանիստ դահլիճը, շրջապատը դեռևս անհրաժեշտ չափով պեղված չէր և միջնաբերդն ստորին բերդից անջատող պարսպի դրսի և որոշ չափով էլ ներսի երեսները չէին ստուգված:

Գահանիստ դահլիճի հս կողմում սկսեցինք պեղել մի մեծ տարածություն b, c, d և e գծերի —2, —1, 1, 2, 3 քառակուսիներում, 350 քմ մակերեսով: Քառակուսիներից երեքը գտնվում էին պարսպից դուրս (—1d, 1d և 2), իսկ մյուսները,

հայտ եկան բնակելի տան պատեր և հատակին՝ փայտե սյուների երկու խարիսխ, միմյանցից 4,0 մ հեռավորության վրա, որոնք, ամենայն հավանականությամբ, գլխատան սյուների մասն են կաղմել, բայց այդ խարիսխների երկրորդ զույգը, որ համաձայն պատերի դասավորության պետք է լինել գտնվածներից դեպի աւ, տեղում չկար: Նախկինում կատարված քանդումների և վերաշինումների հետևանքով խարիսխների երկրորդ զույգը անհետացել էր:

Պահպանված խարիսխներն իրար չափ են ունեն 0,33 մ բարձրություն, իսկ բնի տրամագիծը, ինչպես երևում է խարիսխի վերին մասի քուրակից, եղել է 0,28 մ:

Այդպիսի քարե խարիսխների վրա կառուցված ղլխատները սովորական էին միջնադարյան Դվինում: Միջնաբերդում, քաղաքի կենտրոնական թաղում և ստորին բերդում հանգիպում են 4 սյունանի բազմաթիվ սենյակներ: Կենտրոնում սյուները սենյակի պատերից հավասար հեռավորու-

թյան վրա քառակուսի են կալմել, որոնց կենտրոնում, հատակին, հորի վրա դրված անցքավոր քարըն է՝ գլխատան երգիկից հոսող ջրերը կլանելու և խոնավությունը հորի մեջ ներծծելու համար:

Այս խարիսխները նշանավոր են նրանով, որ դտնվել են մեծ խորություն մեջ, վերևից հաշված երկրորդ շերտում, որ համընկնում է հում աղյուսե մեծ շինության շերտին, սակայն կառուցվել են նրանից էլ առաջ, հավանաբար V—VI դարերում:



52. Գոտկավոր կարաս (XII—XIII դդ.):

Նշանակում է գլխատունը Հայաստանում սկիզբ է առել շատ հին ժամանակներում և իր գոյությունը պահպանել է երկար դարեր:

Խարիսխներից ղեպի աե, 3—4 մ հեռավորության վրա, ի հայտ եկան երկու իրար նման, միջակ մեծության կարասներ, կարմրավուն կավից, որոնք քարե հղկված խփերով ծածկված էին այնպես, որ նրանց մեջ բոլորովին հող չէր լցվել (նկ. 52):

Այս հատվածում պեղվեցին նաև վերին շերտի հորեր, որոնց միջից դուրս եկան ջնարակած քրեղաններ, կարմրախեցի պնակներ, կրակի վրա դրվող կճուճներ և այդ շերտին հատուկ այլ առարկաներ:

Խիստ հետաքրքիր էին միջնաբերդի բերդապարսպի արտաքին կողմում կատարված պեղումները:

Սկզբնապես այդտեղ ընտրեցինք հինգ մետր լայնությամբ մի շերտ, որ սկիզբ էր առնում միջնաբերդի 2Վ քառակուսուց և շարունակվում դեպի ամ: Պեղվող տարածությունը շուտով եռանկյունու ձև ստացավ, որովհետև 2Ճ քառակուսու մեջ բացված պատի մնացորդը հետզհետե մոտեցավ պարսպին և —1Ճ քառակուսու մեջ միացավ նրան, ուստի սկսեցինք պեղել այդ երկու պատերի արանքը:

Պարզվեց, որ միջնաբերդի պարսպի դրսի երեսին կից, քաղաքի գոյության ուշ շրջանում, եղել են բաղմաթիվ բնակելի փոքր տնակներ, որոնց գոյության մասին արդեն գիտեինք տարիներ առաջ կատարած հետախուզական պեղումներից:

Տները թեև մեծ դահլիճից ավելի ցածր են ընկած, բայց կառուցվել են նրանից շատ ավելի ուշ՝ X—XIII դարերում: Դա բացատրվում է նրանով, որ միջնաբերդի պարսպի ներսի տարածությունն ավելի բարձր է, քան պարսպից դուրս կառուցված բլրի լանջի տնակները:

Այստեղ բացված սվաղված աղյուսախառն քարե պատերն սպիտակեցրած էին կրաջրով: Հատակը ծածկված էր թրծած աղյուսով, հատակի տակ կային կարասներ, բերանները ծածկված գեղեցիկ քարերով: Գտնվեցին նաև հորերի բերանին դրվող ձևավոր քարեր, կեղտաջրի արտահոսման կավե խողովակներ:

Իրար հատող պատերը և մի շարք այլ երեվույթներ (պատի տակ հոր, նեղ անցքի մեջ կարաս) ցույց են տալիս, որ այդ տնակն իր գոյության ընթացքում ենթարկվել է բաղմաթիվ նորոգումների և ձևափոխումների:

Միջնաբերդի ամ լանջին —16, —17 և —18 գծերի վրա այս տարի պեղվեց 10 քառակուսի 250 քմ մակերեսով:

Պեղումների նպատակն էր միջնաբերդը լայն շերտով կապել ստորին բերդի հետ, որը և հետզհետե իրականացվում է 60 մ լայնությամբ:

Այս լանջի պեղումները ևս կատարում էինք միայն վերին շերտի սահմաններում:

Այստեղ բացվեց միայն մի բնակարան —17ա և —17բ քառակուսիներում, որը թեև բավականին խորն է նստած հողաշերտի մեջ, բայց պատկանում է X—XIII դարերին:

Շարունակեցինք ստորին բերդի պարիսպների արտաքին երեսները բացելու աշխատանքները մեծ բուրգի երկու կողմերում, որի հս մասում ի հայտ եկավ մի անհամեմատ փոքրադիր բուրգ: Սա ամենայն հավանականությամբ պատերազմական ժա-

մտնակներում կոստուցված ամկաղիթ մի բուրդ է՝ անկանոն շարվածքով:

Չորրորդ տեղամասում շարունակեցինք սյունազարդ շենքի (հավանաբար իջևանատան) ներքին մասերի պեղումը: Իրեր չկային, բացի մի քանի կտոր գիպսե ձուլածո հարդարանքի բեկորներից, որոնք ծառայել են իբրև որմնազարդ:

Այս տարի պեղումներից բացի կատարել ենք նաև բարեկարգման և պահպանման որոշ աշխատանքներ: Կարգի ենք բերել անցյալ տարի ատրուշանի վրա կառուցած տնակը և կառուցել մի տնակ ստորին բերդում, իշխանական առանձնասենյակի վրա, գտնված քարերով վերականգնել ենք իշխանական տան խորշը, դիմացի քանդակազարդ դռտին, նորոգել ենք հատակը:

Հողով ժամանակավորապես ծածկել ենք զահանխտ դահլիճի հատակը, զահավորակի տեղը և պատերի գլուխները, քանդումներից պահպանելու նպատակով:

1964 թվականին մի քանի կետեր պեղեցինք միջնաբերդի գազաթին, որոնք այս և նախորդ տարիների աշխատանքների կենտրոնն էին: Պեղումներ կատարեցինք նաև քաղաքի կենտրոնական թաղամասում և ստորին բերդի հր-ան բերդապարիսպների տեղում, որտեղ շարունակեցինք նախորդ տարվա կիսատ մնացած աշխատանքները և որոշ տարածություն վրա բաց արինք պարսպի արտաքին երեսը:

Միջնաբերդում այս տարի պեղումները կենտրոնացրել էինք երկու կետերում՝ բլրի ամ լանջին և ջրավայանի շուրջը:

Բլրի ամ լանջին պեղվեց ընդամենը հինգ քառակուսի 125 քմ մակերեսով, որոնցից չորսը —17 գծի վրա (—d, —c, —i և —h), մեկն էլ՝ —14 (—f): Պեղումները կատարվեցին միայն վերին շերտի սահմաններում և առանձնապես մեծ հետաքրքրություն չէին ներկայացնում:

Բացված տնակների մնացորդների մեջ կային բազմաթիվ թոնիրներ և մեծ ու փոքր կարասներ: Կարասները վերին շերտում ջարդված են, իսկ ներքևում, որ, ինչպես նշել ենք, քաղաքից առաջ գոյություն ունեցած հին բնակավայրի շերտն է, մոխրագույն են, զնդած և հաստախեցի, թաղված աչքված շեկ հողի մեջ (նկ. 53):

Կարասներից մեկի բեկորները հանեցինք և տեղափոխեցինք հնադարան՝ վերականգնելու և այնտեղ պահելու համար: Գետնի մեջ թաղված հաստախեցի մոխրագույն մեծ կարասները ամբողջական են երևում, բայց հողից հանելու ժամանակ պարզվում է, որ կոտրատված, կամ ճաք-

չրած են: Բեկորները լավ չորացնելուց հետո միայն կարելի է ամբողջացնել:

Միջնաբերդի ամ լանջի (—14 գծի վրա) ընկած այդ քառակուսիների տեղում, քաղաքի հիմնադրումից շատ առաջ, մառան է եղել, որտեղ դեռևս չսլեղած հողաշերտի մեջ երևացին զնդած և մեծ կարասներ, որոնք դարձյալ ծածկեցինք հողով:



53 Միջնաբերդի ջրավայանի մոտի հայտ եկած մեծ կարաս:

Այս տարի զգալի պեղումներ կատարվեցին ջրավայանի շրջապատում (նկ. 54): Պեղվելիք տարածությունը բաժանեցինք չորս մասի, յուրաքանչյուրը մոտ 100—125 քմ մակերեսով և խորացանք մոտավորապես մեհյանի մակերեսի չափով, որ բլրի դազաթի սկզբնական բարձրության համեմատությամբ 6,5 մետր խորություն ունի:

Այս հատվածներում պեղումների ընթացքում վերին շերտի հորերի միջից դուրս եկան հետաքրքիր իրեր՝ բազմաթիվ քրեղաններ, հախճապակյա թասեր, ձիթաճրագներ, սնդկամաններ և այլ առարկաներ, որոնց մեջ եզակի տեղ ունի հախճապակյա շողուն մի մեծ պնակի կես, որի վրա լյուստրով նկարված է մոնղոլ իշխանավորի դիմանկար՝ զլխավերևում արաբասառ անընթեռների մակագրությամբ (տախտ. X, 2): Հում աղյուսե շենքի պատերը քանդելուց պատի միջից դուրս եկավ նախաքրիստոնեական դարաշրջանի II—III դդ. մի քարե արձան՝ մարդու գլուխ, սրագազաթ գլխարկով, կոպիտ աշխատանք: Այդպիսի 10-ից ավելի գլուխներ են գտնվել Դվինում: Քրիստոնեության մուտքի ժամանակ դրանք ջարդվել և թաղվել են հողի մեջ կամ օգտագործվել իբրև շինանյութ:

Ստորին բերդում պարիսպների բացման աշխատանքներն սկսեցինք պարիսպների գլխից, որովհետև ներքևից կատարվող պեղումները վտանգավոր էին և կարող էր վերևի հողի պանդվածը

փլշել ու պեղումներին վնասել, բայց բուրդի պլսին նստած հողակույտի մեծությամբ պատճառով որևէ արդյունքի չհասանք:

Հետաքրքիր ընթացք ունեցան քաղաքի կենտրոնական մասի պեղումները: Պեղվեցին ց—19 և շ—19 քառակուսիները, որտեղից հայտնաբերվեցին Դվինի համեմատաբար վաղ շրջանի հնագիտական նյութեր (IV—IX դդ.) և դա հասկանալի է, որովհետև այդտեղի շենքերը կործանվել են 893 թ. երկրաշարժի ժամանակ և չեն նորոգվել:

պեղեցիներ բնդամենը 675 քմ մակերես, որից 300-ը ջրավազանի շրջակայքում, իսկ 375-ը միջնաբերդի ամ լանջին:

Ջրավազանի շրջապատի պեղումներով ուսումնասիրեցինք քաղաքի հիմնադրումից առաջ այդտեղ գոյություն ունեցած հին բնակավայրը, որն ընկած է վերևից հաշված շորորդ շերտի մեջ: Միայն նշենք, որ հորերից մեկում (—5—ց քառակուսու մեջ) գտանք բաղմամբիվ խեցանոթներ, որոնց թվում հախճապակյա մի քանի սկուտեղ-



54. Ջրավազանի շրջապատի պեղումների բնդամենուր տեսքը:

Պեղվող քառակուսիների առ սահմանագծով՝ հս-հր ի հայտ եկան կանոնավոր պատի հիմքեր, որ արտաքին երեսով առ են նայում՝ եկեղեցու կողմը: Պատի ներսի երեսին կան միջնորմներ, իսկ հատակին՝ խիստ հետաքրքիր կառուցված հորեր, որ նման են նույն թաղամասում տարիներ առաջ բացված մի զնդանի, որի բերանին նեղանցք բար էր դրված, իսկ հորը ներքևում լայնանում էր: Այդ հորերից դուրս եկան բաղմամբիվ առարկաներ:

1965 թվականին պեղումներ կատարեցինք քաղաքի տարբեր կետերում՝ միջնաբերդում՝ կենտրոնական թաղում և ստորին բերդում:

Միջնաբերդում շարունակեցինք ջրավազանի շրջապատի ուսումնասիրությունը, և բլրի ամ լանջին բացեցինք —17 դծի —ա-ից մինչև —յ քառակուսիները: Միջնաբերդում պեղեցինք և կրկնա-

նեցինք (տախտ. X, 1, XXX, 5, 6, XXXI, 6), թասեր, սափորներ և այլ առարկաներ, վերջնաբերդին ոսկենախշ նկարներով, որ իրենց տեսակի լավագույն նմուշների թվին են պատկանում:

Սակայն զարմանալին այն է, որ այդ հորի մեջ իսպառ բացակայում էին ջնարակած բարձրորակ կավանոթները, որ այնքան սովորական են Դվինի վերին շերտի համար: Թանկարժեք շողուն հախճապակյա առարկաների հետ դուրս էին գալիս միայն հասարակ խեցեղեն և պարզ, մեծ մասամբ կանաչ ջնարակով կուպիտ կավանոթներ:

Այդ հորում գտնվեցին բավականին մեծ քանակով նաև ջարդոտված ու փշրված կարմրաներկ նուրբ կավանոթներ, հատկապես՝ սափորներ:


Ջրավազանի շրջապատում պեղեցինք անցյալ տարվանից թերի մնացած պայմանականորեն

ընդունած առաջին և երրորդ հատվածները և 5-րդ հատվածը՝ ամբողջությամբ: Ստորին շերտերում ի հայտ եկան մոխրագույն և սև փայլուն մեծ ու փոքր կավանոթների բազմաթիվ բեկորներ:

Միջնաբերդի ամ լանջի պեղումները, որի նըպատակը միջնաբերդի գաղաթը ստորին բերդի հետ միացնելն էր, մեծ արդյունք չտվին: Ոչ միայն քիչ էին գտնվող առարկաները, այլև շատ խղճուկ էին շենքերի մնացորդները (նկ. 55):

Մի քանի տարվա դադարից հետո այս տարի վերսկսեցինք ստորին բերդի պեղումները մի նոր հատվածում, որին նախօրոք ձեռք տրված չէր:

Նոր վայրը ստորին բերդի հարավային հարթակն էր, մուտքից դեպի առ ընկած տարածության վրա: Այդ նպատակի համար միջնաբերդի կոորդինատների երկրաչափական ցանցը կապեցինք ստորին բերդի հետ և պեղման համար ընտրեցինք —23, 24 և —25 գծերի —Ո-ից մինչև —Զ քառակուսիները:



55. Միջնաբերդի ամ լանջում պեղված բնակելի տների հատակածները:

Սակայն ի հայտ եկող բազմաթիվ թոնիրներն ու կարասները, երդիկի տակ հորի բերանին դրված անցքավոր քարերը, բացված սենյակներն իրենց աղյուսաշար հատակով, դիպսե ձուլածո որմնապարդերը վաղուց կենդանիների ուռուցիկ պատկերով, գալիս են ապացուցելու, որ միջնաբերդի փեշերում բնակվել են հասարակ ընտանիքներ՝ բավականին խիտ:

1965 թվականին այդտեղ պեղեցինք ութ քառակուսի 200 քմ մակերեսով և բացեցինք միայն վերին շերտի մնացորդները, որ շատ խորն էին ընկած՝ մոտ 2,0—2,5 մետր: Պարզվեց, որ վրայի հողի մի մասը անձրևաջրերի հետ իջել և նստվածք է առաջացրել միջնաբերդի գաղաթից: Այդտեղ զլորված քարն ու աղյուսը ևս բավականին հաստացրել են ստորին բերդի հողաշերտը:

Բացվեցին ուշ ժամանակին բնորոշ քարա-
խառն թրծած աղյուսե հիմնապատերով տնակներ,
քառակուսի աղյուսաշար հատակով և հորի բերա-
նին դրվող անցքավոր քարով: Հիմնապատերը ժա-
մանակի ընթացքում կատարված նորոգումների և
փոփոխությունների հետևանքով խառնված են:

Գտնված առարկաները քիչ են, հասարակ ու
աղքատիկ, որը բնորոշում է քաղաքի գոյության
վերջին շրջանում (X—XIII դար) այդտեղ ապրող
բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

—24— քառակուսու մեջ ի հայտ եկան իրար
կողքի թաղված վեց թոնիրներ, մի երկուսն էլ՝
նրանցից մի քիչ հեռու: Նույն քառակուսու ծայրին
բացվեց մի հոր, որի խորությունը հինգ մետր էր,
իսկ վերին շերտի մնացորդները թաղված էին
գետնի մակերեսից 2,5 մետր խորության մեջ:

Հորի միջից դուրս եկան երկանքի քար, կա-
րասների քարե խուփեր, քրեղաններ, կճուճ, փարչ,
կարասի, ուռուցիկ զլխով կավե խուփ, ձիթաճրագ
և այլն: Այս առարկաները նույնպես բնորոշ են
քաղաքի գոյության վերջին շրջանում այդտեղ
ապրող չքավոր բնակչության համար:


—25— քառակուսու մեջ գտնվեց փայտե
սյան քարե խարիսխ: Հավանաբար այդ խարիսխը
թոնրատան գմբեթաձև ծածկը պահող չորս սյու-
ներից մեկին է պատկանել:

Քառակուսիներից մեկում բացվեցին հնոցա-
նման բոլորաձև ինչ-որ մի կառուցվածքի փլա-
տակված մնացորդներ, երկաթե իրերի բեկորներ,
մեծ մասամբ քայքայված ու այլանդակված, որոնց
մեջ, այնուամենայնիվ, ճանաչելի էին տարրեր
մեծության դամեր, օղակավոր երկաթներ, դանակի
շեղր, նիզակի ծայր, նեռասլաք, պայտերի կտոր-
տանք և այլն: Այդ առարկաները, ինչպես նաև
մոխրակույտի մեջ թաղված բաղմաթիվ աղյուսե-
րը վկայում են, որ այդտեղ գոյություն է ունեցել
դարձողի բուրա:

Քաղաքի կենտրոնական թաղում այս տարի
պեղեցինք ընդամենը հինգ քառակուսի, 125 քմ
մակերեսով, կաթողիկե եկեղեցու ամ կողմում,
անցյալ տարվա պեղածների կողքին:

Բացվեց կրաշաղախ հիմնապատերով մի մեծ
շենքի, որին հանդիպել էինք և նախորդ տարիներ-
ին, աե ճակատի շարունակությունը, որ, անշուշտ,
Դվինի կաթողիկոսարանի մասն է կազմել: Տարի-
ներ առաջ այդտեղ գտնված տուֆակերտ սյան մեծ
խարիսխը², եկեղեցու ամ կողմի շինարարությու-
նների տակ բացված կենցաղային իրերով (նկ. 56)

լեցուն ստորգետնյա ղեկավարները և չորերը մեղ-
րերում են այն եղրակացության, որ Դվինի վեհա-
րանի բնակելի մասը գտնվել է եկեղեցու ամ կող-
մում, իսկ հս կողմի շենքը, որտեղ կենցաղային
առարկաներ քիչ են հանդիպում, վեհարանին ծա-
ռայել է իբրև պաշտոնատուն, իսկ մեծ երկրաշար-
ժից հետո, երբ կաթողիկոսն իր աթոռը տեղափո-
խել էր Զվարթնոց, արաբները վեր են ածել մզկիթի:



56. Ոսկրե առարկաներ և ուլունքներ, գտնված Դվինում:

ց—19 քառակուսու մեջ բացված մեծ հորից,
որ ի հայտ էր եկել 2,5 մետր խորության մեջ,
դուրս եկան Դվին քաղաքի գոյության վաղ շրջա-
նին պատկանող բաղմաթիվ իրեր (V—IX դդ.)՝
մեծ թվով ապակե առարկաներ, վաղագույն ծիրա-
նաներկ, միագույն և բաղմագույն ջնարակով
պատած (տախտ. I, XX) թասերի բեկորներ (որոն-
ցից մի քանիսը վերակազմվում են և ամբողջա-
նում), կճուճաձև երկարաքիթ ձիթաճրագներ, ո-
րոնք նախորդել են նավակաձև պոչուկավոր ճրագ-
ներին, կրակի վրա դրվող կերակրի մրոտ կճուճ-
ներ: Մի փոքրիկ փոսից գտնվեցին իրար կողքի
շարված ապակե բաժակներ, թասեր, գավաթներ և
սրվակներ:

Կարելի է հզրակացնել, որ այդ հորը գոյու-
թյուն է ունեցել Դվինի 893 թ. մեծ երկրաշարժից
առաջ:

² Տե՛ս Կ. Ղաֆաղաշյան, Դվին քաղաքը..., 1, էջ 149,
նկ. 130:

Հետաքրքիր է մի երևույթ ևս. կտրասների ուռուցիկ բռնակով խփեր, որոնք մենք այս աշխատության առաջին հատորում վերադրել ենք X—XIII դարերին, գտնվում են նաև այս հնագույն ջնարակապատ առարկաների մեջ, բայց այս դեպքում միշտ փոսիկավոր բռնակով: Նշանակում է, այս տիպի խփերը ևս պետք է ծագած լինեն IX դարում, կամ նրանից էլ առաջ և գործածության մեջ են եղել մինչև XIII դ.: Դվին քաղաքի կործանումը:

1966 թվականին պեղումները շարունակվեցին երկու տեղամասերում՝ միջնաբերդում և կենտրոնական թաղում:

Ինչպես արդեն նշել ենք, 1961—1962 թվականներին, միջնաբերդի գագաթի առ ծայրին, ի հայտ եկավ սրբատաշ քարով շարված, սյունադարձ մի մեծ դահլիճ՝ 272 քմ մակերեսով, որը, անկասկած, Արշակունի թագավորների գահանիստ սրահն է եղել, ուր հատակի վրա երևում էր, աստիճանավոր բարձրության վրա դրված, արքայական գահի հաստատուն տեղը:

Հիմնական պեղումներին զուգահեռ հետախուզական պեղումներ կատարեցինք միջնաբերդի գագաթին՝ Արշակունյաց պալատի մյուս մասերը հայտնաբերելու նպատակով, բայց այդ պեղումները զգալի արդյունքներ չտվին: Աշխատանքներին խանգարում էին հում աղյուսե մեծ շինության մնացորդները, որոնք իրենց հսկայական չափերով զրեթե բռնել էին միջնաբերդի գագաթի ամբողջ կենտրոնական մասը:

Այս տարի որոշեցինք պեղել հում աղյուսե մեծ շենքի ընդարձակ բակը: Եթե այդ շինությունը կառուցվել է VIII դարի սկզբներին, ինչպես ենթադրում ենք և ծառայել է արար ոստիկաններին մինչև 893 թ. մեծ երկրաշարժը, ապա նրա տակ պետք է որոնել Արշակունյաց խոսրովաշեն պալատի մնացորդները, ինչպես նաև մարզպանների պաշտոնական և բնակելի տները: Դժվար է պատկերացնել, որ գահանիստ դահլիճը լինե՞ր բլուրի գագաթին, իսկ պալատը՝ ստորին բերդում կամ մի այլ տեղ:

Արշակունյաց պալատի ավերակները հայտնաբերելու նպատակով այս տարի հում աղյուսե շենքի ընդարձակ բակի ներսը պայմանական քառակուսիների բաժանեցինք, առանց ձեռք տալու նրա պատերի հսկայական զանգվածներին և չորս կողմերում էլ ազատ տարածություն թողնելով, սկսեցինք պեղել բակի կենտրոնում ստացված 10

քառակուսիները (երկու շարք 5. 5 մ քառակուսիներ) (նկ. 57):

Պեղումներն ավարտվեցին հաջորդ՝ 1967 թվականին, և այդ արդյունքների մասին կխոսենք պեղումների հաջորդ տարվա համառոտ նկարագրության մեջ:

Միջնաբերդի ամ լանջին —18 գծի վրա այս տարի պեղվեցին 9 քառակուսի 225 քմ մակերեսով: Միջնաբերդի լանջերը բնակելի են դարձել միայն ուշ միջնադարում՝ X—XIII դդ., որտեղ կառուցվել են բնակելի փոքր տներ, և մի 300 տարվա ընթացքում անընդհատ քանդվել ու վերակառուցվել են, այդ պատճառով մեր պեղումների ընթացքում ոչ մի տուն և ոչ մի սենյակ, թեկուզ հիմքերի մասում, պարզորոշ պատկեր չունեն: Սակայն այդ բոլոր խառնաշփոթությունների մեջ մի շարք ընդհանուր երևույթներ (թոնիրներ, հորեր, քառակուսի աղյուսե հատակներ, գտնվող առարկաները) հաստատում են, որ այդտեղ ապրել են մեծ մասամբ արհեստավոր ընտանիքներ, որոնց արհեստանոցներն իրենց տների մեջ են եղել (նկ. 58): Այդ է պատճառը, որ այդ լանջերին, տների մեջ, երբեմն թոնիրների կողքին ի հայտ են գալիս մոխրակույտով ծածկված արհեստավորի քուրաներ և այլ արհեստանոցային հարմարանքներ, երբեմն նաև գործիքներ:

Քաղաքի կենտրոնական թաղում պեղումները շարունակվել են եկեղեցուց դեպի ամ ընկած տարածության վրա, որի գլխավոր նպատակը քաղաքի կենտրոնական թաղի ընդհանուր պատկերի պարզումն է:

Այս տարի այդ տարածության վրա պեղեցին մի քանի քառակուսիներ —20, —21, ինչպես նաև —18 գծերի վրա: Այդտեղ թեև առկա են մեծ շենքի գոյության մնացորդները, բայց նրա հետքերը լավ չեն պահպանվել և հատակագիծն անգամ անորոշ է: Դյուղացիները սրբատաշ տուֆ քարերը տարել և սալահատակել են գոմերը:

1967 թվականի պեղումները նախորդ տարվա շարունակությունն էին՝ միջնաբերդի գագաթին, նրա ամ լանջին և քաղաքի կենտրոնական թաղում:

Միջնաբերդի գագաթին ավարտվեցին հում աղյուսե մեծ շինության բակի տասը քառակուսիների պեղումները, որոնց ընդհանուր մակերեսը 250 քմ էր:


Այստեղ, հում աղյուսե շենքի հատակից ստորին շերտի մեջ 20—50 սմ իջնելուց հետո ի հայտ եկան անտաշ քարերով շարված ուղղաձիգ ու երկար պատերի հիմքեր, որոնք կրաշաղախով չէին:

³ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., հ. 1, էջ 197—200:

ներքին բաժանմունքներն էլ ցույց կին տալիս, որ այդտեղ մեծ շենք է եղել, որի մասերը շարունակվում էին մեր պեղած քառակուսիների սահմաններից դուրս (նկ. 59):

Իր կառուցվածքներով նորին է նախատրվել մեծ երկրաշարժի ժամանակ:

Այդ երկու շերտերի տակ մեկ կամ երկու շերտ կարող է լինել: Մեկ շերտ՝ եթե մարզպաններն



57. Հում աղյուսե շենքի բակում, ստորին շերտի պեղումներից ի հայտ եկած քարաշար հիմնապատերը 1900 թ. (V—VI դդ.):

Ավելորդ չէ այստեղ մի անգամ ևս նշել միջնաբերդի գազաթի այս մասում քաղաքի շերտերի դասավորվածությունը:

Վերին շերտը առաջացել է 893 թ. մեծ երկրաշարժից հետո, քաղաքի կործանման ժամանակ՝ XI—XIII դարերում:

Երկրորդ շերտը, որի մեջ է հում աղյուսե մեծ շինությունը, ինչպես կտեսնենք ճարտարապետական կառուցվածքներին նվիրված գլխում, կապմավորվել է VIII դարի սկզբներին: Այդ շերտը

ապրել են Արշակունյաց թագավորների կառուցած շենքերում և երկու շերտ՝ եթե մարզպանները ոչընչացրել են Արշակունի թագավորների բնակելի տները և նրանց վրա նոր տներ կառուցել:

Այստեղ գլխավոր հարցը այն է, թե բակում, հում աղյուսե շենքի տակ բացված մնացորդները ո՞ր ժամանակի են և ո՞ւմ են սլատկանել:

Մենք հակված ենք ենթադրելու, որ դրանք Արշակունի թագավորներինը չեն, որովհետև հում աղյուսե շենքի տակ ի հայտ եկած մնացորդները

ոչ մի բանով չեն կապվում զահանխատ դահլիճի հետ. ո՛չ շինանյութերի տեսակով, ո՛չ շենքերի աշխարհադրական ուղղություններով: Այդ երկու շենքերն իրար կից չեն և ոչ էլ մեկը մյուսի շարունակությունն են կազմում:

Այստեղ գտնվածները իրենց շափերով շատ մեծ են Զվարթնոցի, Դվինի Կաթողիկեի, Աշտարակի Կաթմբավոր եկեղեցու կղմինդրներից և նման են Հայաստանի ու Վրաստանի անտիկ հուշարձանների ծածկի կղմինդրներին⁴:



58. Միջնաբերդի ամ լանջի պեղումները 1966 թ.:

Առայժմ հում աղյուսե շենքի բակի մեջ ի հայտ եկած շինություն ուսումնասիրությունը թողնում ենք մինչև այդտեղ ծավալում պեղումներ կատարելը:

Այդ երկու շենքերի (զահանխատ դահլիճի և հում աղյուսե շենքի տակ բացված հիմնապատերի) զանազանությունը այն է, որ զահասրահը կառուցված է կրաշաղախով և սրբաթաշ քարերով, իսկ բակի միջի հիմնապատերից երևում է, որ այն ունեցել է կավի շաղախ, իսկ պատերն էլ շարված են եղել տձև քարերով:

Գահանխատ դահլիճի շրջակայքում բացված շենքերից շատերը կրաշաղախ չեն, անկասկած կառուցվել են Արշակունյաց թագավորների օրով:

Հում աղյուսե մեծ շենքի տակ հին հիմնապատերի պարզ ապացույցներ կան: Բակի մեջ —Վ—2 բառակուսում ի հայտ եկան ծածկի կղմինդրների բեկորներ, որոնք զգալիորեն տարբերվում են Հայաստանի այլ հնավայրերի ծածկերի կղմինդրներից:

Եթե բակում ի հայտ եկած երկու շերտի հիմնապատերը ավելի ուշ շրջանի շենքերի են (մարդպանական), ապա այդտեղ գտնված ծածկի կղմինդրները, առանց սխալվելու, կարելի է վերագրել Խոսրով Կոտակի պալատին, մանավանդ որ այդտեղ միջնադարյան կամ անտիկ այլ շենքեր գոյություն չեն ունեցել:

Նշանակում է զահասրահը, որի ծածկի կղմինդրները չեն պահպանվել, եթե շահավենք մի երկու բեկոր, և Խոսրովակերտ պալատական շենքերից մի քանիսը, ինչպես և սպասելի էր, սկզբնական շրջանում ծածկված են եղել անտիկ ժամանակների հատուկ մեծադիր կղմինդրով:


Բակի մեջ բացված երկու տարբեր շենքերի հիմքերը, որ ի հայտ եկան դրևթե իրար կողքի և իրար վրա տարբեր դրվածքով ու տարբեր ուղղու-

⁴ Տե՛ս Ա. Մ. Առաքիձե, Գ. Փ. Գոբեժաշվիլի, Ա. Մ. Կալանթաձե, Դ. Ա. Լոյտալոձե, Միլետ, արևելագիտական ակադեմիայի, տ. 1, Երևան, 1958, թ. 64, LXXXIV.

թյամբ, երկուսն էլ հին են, բայց առայժմ չդիտենք կառուցման ճիշտ ժամանակը: Ինչպես ասացինք, այդ հարցի պատասխանը կարող ենք տալ այդտեղ ծավալուն պեղումներ կատարելուց հետո:

րակած խեցանոթներ, դրամներ, երկաթե իրերի բեկորներ:

—18— Ե քառակուսում թրծած աղյուսե հատակով մի սենյակ բացվեց, որտեղ կար թրծած



59. Հում աղյուսե շենքի բակում, ստորին շերտի պեղումներից ի հայտ եկած քարաշար հիմնապատերը 1967 թ. (V—VI դդ.):

Միջնաբերդի գազաթի հը կողմում նախորդ տարիներին պեղել էինք մինչև —ի գիծը, բայց որոշ տեղերում, վերին շերտում ի հայտ եկած քարախանոն կավակերտ պատերի պատճառով, —ի դժի վրա մնացել էին չպեղված մնացորդներ: Այժմ այդ մնացորդները խանգարում էին ստորին շերտերի պեղումներին, և սկսեցինք մաքրել այդ մնացորդները: Մաքրման աշխատանքների ժամանակ վերին շերտում —ի —6/7 քառակուսու մեջ սենյակ բացվեց՝ մեջը վեց թոնիր և մի հոր: Այդ հորից դուրս եկան բազմաթիվ հասարակ և ջնարակած խեցանոթներ:

Միջնաբերդի ամ լանջին այս տարի պեղեցինք հինգ քառակուսի, որոնց մեջ խառնակ վիճակում ի հայտ եկան ուշ շրջանի Դվինին բնորոշ մի քանի բնակելի տնակներ, գտնվեցին հասարակ և ջնար-

աղյուսներով շինած փոքրիկ (նկ. 60) հավանաբար պղնձագործի քուրա, որովհետև նույն քառակուսու մեջ ի հայտ եկան ժանգի վերածված պղնձի բաղմաթիվ բեկորներ: Սենյակի մեջ մի հոր բացվեց, որը մի փոքր պեղելուց հետո թոնիր երևաց, կողքին կրակի վրա դրվող մրոտված մի կճուճ, հետաքրքիր ունկերով: Կճուճն ունեւ նաև կեղծ ունկեր: Կճուճի տակ, ստորին շերտերի մեջ, որ այդտեղ այնքան էլ խորը չէր, գտնվեցին իրար վրա դրված սև փայլով մի քանի կճուճներ, մեջը կենդանիների ոսկորներ:

Ավելի հետաքրքիր էր —a—18 քառակուսին, ուր բացվեց նույն բնակելի տան կողքի սենյակը, որի մի պատը պահպանվել էր մոտ 1,5 մետր բարձրությամբ:

Աղյուսաշար հատակի մոտ այդ սենյակի պա-

տի հիմքը անտաշ քարերով էր շարված, երեսապատված հարդախառն կավե սվաղով: Քարերի վրա պատր քարձրացել էր թրծած քառակուսի աղյուսներով, հետո՝ կավակերտ մի դռտի, որի վրա պատր շարունակվել էր թրծած աղյուսներով: Գտնվեցին ձուլածո որմնապարզիք վազող կենդանիների պատկերով, որը ապացույց է, որ այդ բնակելի տունը կոտուցվել է քաղաքի գոյության վերջին դարերում:

Բայց ժամանակին բանդվել էր, իսկ տակի ավելի լայն մասը լավ էր պահպանվել: Հորի մեջ, բացի ապակու բեկորներից և կավանոթների վաղ միջնադարյան բեկորներից, ոչինչ չկա:

1968 թվականին պեղումները շարունակվեցին միջնաբերդի գագաթին, նրա ամ լանջին և քաղաքի կենտրոնական թաղի հր-ամ քառակուսիներում:

Միջնաբերդի գագաթին և նրա ամ լանջին աշխատանքները տեւեցին մինչև այս տարվա պե-



60. Արտադրական կոտուցի մնացորդներ միջնաբերդի ամ լանջին:

Փաղափի կենտրոնական թաղի հր-ամ կողմում պեղվեցին ութ քառակուսիներ:

Այստեղ հետաքրքիր էր — 2 — 20 քառակուսու մեջ բացված կոյուղու գիծը, որի միջով կեղտաջուրը հոսել է թաղի սահմաններից դուրս: Կոյուղու համար փորված առվի երկու եզրերին քարեր են շարել, տափակ քարերով ծածկել, վրան հող լցրել, գետին հավասարեցրել և աննկատելի դարձրել:

Այսպիսի կոյուղիները սովորական են միջնադարյան Հայաստանում: Մեզ ծանոթ են Դվինի միջնաբերդի, Ամբերդի և Անիի բաղնիքների կոյուղիները: Նման կոյուղիներ Հայաստանում հայտնի են դեռևս ուրարտացիների ժամանակներից:

Նույն քառակուսու մեջ բացվեց տանձաձև մի հոր, որի նեղ բերանը աղյուսաշար էր հղել:

Պումների վերջը, իսկ քաղաքի կենտրոնական թաթաղում շուտով ընդհատվեցին, որովհետև նրանից դեպի հր, պատահաբար, հետաքրքիր հայտնագործումներ եղան և կենտրոնական թաղի խումբը տեղափոխվեց ու հետախուզական պեղումներ սկսեց այդտեղ:

Միջնաբերդի գագաթին այս տարի ավարտվեցին անցյալ տարվանից կիսատ մնացած — 1 — 4 քառակուսու պեղումները: Պեղվեց նաև ան կողմի — 1 — 3 քառակուսին: Վերին շերտում ի հայտ եկավ 40-ական թվականներին բացված մեծ շենքի ծայրամասի հարկաբաժիններից մեկը, որից հայտնի դարձավ, որ վերին շերտի այդ շենքը շարունակվում է դեպի հր՝ չպեղած քառակուսիների մեջ: Բայց այլևս հնարավոր չէր այդտեղ պեղումները

շարունակել, որովհետև շենքի շարունակությունը փորփրված տարածության մեջ էր ընկնում:

Այս տարի շարունակեցինք — ի գիծն ուղղելու և հետզհետե խորանալու աշխատանքները, որոնք շարունակվելու են հետագա մի քանի տարիների ընթացքում ևս:

— ի — 6/7 քառակուսիների մեջ բացված հորից գտնվեցին բազմաթիվ ամբողջ և ամբողջացող սափորներ, քրեղաններ, սնդկամաններ, և միջնադարյան այլ խեցանոթներ:

Այս տարվա կարևոր գործերից մեկն էլ մեհյանի շրջապատի և նրանից դեպի առ ընկած մի շարք քառակուսիների գետնի մակերեսը մի ընդհանուր խորություն բերելն էր, որ մասամբ կատարեցինք և շարունակելու ենք նաև մյուս տարվա ընթացքում:

Բլրի ամ լանջին պեղեցինք ութ քառակուսի (200 քմ) — 18 և — 19 գծերի վրա, որոնց մեջ բացվեցին Դվինի վերին շերտին հատուկ փոքր տնակներ և արհեստանոցներ: Քառակուսիներից մեկում (— Ե — 19) բացված հորից, ի թիվս այլ առարկաների, դուրս եկան տասնմեկ հատ, մոտավորապես մարդու բռնցքի մեծության, չեղաքարե առարկաներ, որոնց քառակող կամ եռանկյունաձև պատվանդանների վրա պառկած կամ առաջին թափերին հենված առյուծների արձանիկներ են կերտված (նկ. 61, ներդիր) արձանիկները իրենց պատվանդանի հետ միակտոր քարից են, բացի մեկից, որի բուրգաձև պատվանդանի փոսիկի մեջ հաղցրած է առյուծի արձանիկը: Խնամքով պատրաստված այդ առարկաներն ընդելուզված են եղել կապտականաչ հախճապակու փոքրիկ բեկորներով (կենդանիների աչքերը և այլն), որոնցից շատերն այժմ թափված են, բայց տեղը երևում է:

Նախորդ տարիներին ևս Դվինում մեկ-երկու հատ նման առարկաներ գտել էինք, որոնց այն ժամանակ մեծ նշանակություն չէինք տվել, կարծելով, թե դրանք մանկական խաղալիքներ են, բայց այժմ, երբ գտնվեցին 11 հատ միասին և բոլորն առյուծներ՝ քանդակված տարբեր դիրքերում, պարզ է, որ մանկական խաղալիքներ չեն, այլ ինչ-որ խաղի քարեր, որոնցով մեծերն են խաղացել: Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ լինի, ուրեմն այդ խաղաքարերը այժմ մոռացված մի խաղի քարեր են եղել:

Դվինում գտնվել են նարդու զառեր և փուլեր, որոնք ոչնչով չեն տարբերվում այսօրվա նարդու խաղաքարերից⁵: Ինչպես վկայում են փաստերը,

ճատրակի (շախմատի) խաղն էլ տարածված է եղել դեռևս հին ժամանակներից սկսած:

Դվինում գտնված բոլոր խաղաքարերը (արձանիկները) միադույն են, սրանով հերքվում է այն կարծիքը, թե դրանք ճատրակի քարեր են, սակայն կարող է, որ դրանք միայն մի կողմի քարեր են, իսկ հակառակ կողմի, ասենք, սև խաղաքարերը դեռևս գտնված չեն:

Այն հորերը, որոնց մեջ գտնվել են այդ առեղծվածային առարկաները, պատկանում են միջնադարյան քաղաքի գոյության վերին շերտին, որը սկիզբ է առել 893 թ. կործանիչ երկրաշարժից հետո և իր գոյությունը պահպանել է մինչև քաղաքի վերջնական ավերումը: Նշանակում է, այդ առարկաները պատրաստված են X—XIII դարերում:

1968 թվականի կարևոր հայտնագործությունը բրուտի արհեստանոցի խոտանի և հնոցի թափոնի հսկայական կույտն էր, որ ի հայտ եկավ քաղաքի հրամ կողմում, այժմյան Հնաբերդ գյուղի մոտ, որին պայմանականորեն 7-րդ տեղամաս անվանեցինք:

7-րդ տեղամասը վաղուց ծանոթ էր հնագետներին իր տարօրինակ մեծ փոսով: Այնտեղ 1939 թ. մակերեսային հետախուզություն էր կատարվել և գետնի երեսից բազմաթիվ հասարակ ու ջնարակապատ անոթների բեկորներ հավաքվել: Ուշագրության էր արժանացել մի ընդարձակ փոս: Պարզվեց, որ այդտեղից մարդիկ տարիներ շարունակ կավահող են տարել, որից և առաջացել է այդ հսկա փոսը: Փոսի մեջ չկար և չէր էլ եղել մարդկային մշակույթի հետքեր: Նույնիսկ բացակայում էին կավանոթի բեկորները, որոնցով այնքան առատ են շրջակա դաշտերը: Դեռ այն ժամանակ մեր արշավախումբը եկավ այն եզրակացության, որ մոտակայքում գոյություն է ունեցել բրուտի արհեստանոց և կամ գյուղերի կավակերտ տների կավը տարել են այդ փոսից:

Այս տարվա հունիս ամսին, Հնաբերդի գյուղացիները հողային աշխատանքներ կատարելիս այդ փոսի ամ եզրին ի հայտ էին բերել կավանոթների բազմաթիվ բեկորներ: Լրացուցիչ պեղումների ժամանակ ի հայտ եկան հաղարավոր սափորների, քրեղանների, թասերի, ափսեների ջնարակած և հասարակ այլ կավամանների բեկորներ, ինչպես նաև բրուտի թրծարանում օգտագործվող փոքրիկ եռոտանիներ և զլանաձև երկարավուն

⁵ Դվինում գտնված նարդու փուլերի և զառերի մասին տե՛ս ներկա աշխատության Ա հատորում, էջ 181:

⁶ См. Н. А. Орбелли, К. Е. Трещер, Иллатрагъ емига о шахматах, Л., 1936, стр. 140.

հարմարանքներ (նկ. 62), որոնց վրա հնոցում շարել են թրծվող անոթները: Բավականին շատ էին նաև արտադրական խոտանի մնացորդները, թրծելու ժամանակ իրար կպած, ծոմոված, ճաքճքած կավանոթները, որոնք մենք երեք խմբի բաժանեցինք: Բոլորովին անպետքները, որոնք արժեք և նշանակություն չունեին, տեղում հողի մեջ թաղեցինք, մի մեծ կույտ տեղափոխեցինք Դվինի հնագիտական պահեստը, գիտական ուսումնասիրությունների նպատակով պահելու համար և զգալի թվով առարկաներ էլ համարակալեցինք ու տեղափոխեցինք Երևան և հանձնեցինք Հայաստանի սպառնություն պետական թանգարանին:


Արտադրական թափոնից և խոտանված առարկաներից պարզվում է, որ այդտեղի բրուտանոցում պատրաստել են հասարակ և ջնարակազարդ միագույն և բազմագույն խեցանոթների շատ տեսակներ: Խոտանի մեջ բոլորովին բացակայում էին հախճապակին և սնդկամանը, որոնց արհեստանոցներն առանձին են եղել: Հետաքրքիր է, որ Դվինի սնդկամաններն ամենուրեք ճանաչելի են իրենց փոքրությամբ և արտաքին զարդարանքի ժլատությամբ: 7-րդ տեղամասի փոսի եզրերին և մերձակա դաշտերում սնդկամանի բեկորներ շատ են գտնվել, բայց, ինչպես ասացինք, բրուտանոցի խոտանի մեջ բոլորովին չկա:

Պեղված 5 քառակուսիներում անսպասելի է հայտ եկան ութ շարք տարբեր տարողությունների կավե ջրատար խողովակներ, որոնց միջոցով ջուրը քաղաքի հյուսիսային բարձրադիր կողմից հոսել է դեպի հր: Տարբեր տրամագծեր ունեցող խողովակների գոյությունը ցույց է տալիս, որ գանազան ուղղություններով տարբեր քանակի ջուր է հոսել տեղական պետքերը բավարարելու համար:

Միջնադարում խմելու մաքուր ջուրը շատ քիչ է օգտագործվել այլ նպատակներով: Նույնիսկ օտար հեղինակները, օրինակ, Պրոկոպիոս Կեսարացին, գրվեստով են խոսել Դվինի ջրի մասին¹: Երկար տարիների մեր դիտողությունները բերել են այն եզրակացության, որ Դվին քաղաքն իր խմելու ջուրը ստացել է առնվազն երկու տարբեր կողմերից՝ Գառնիի ձորից (հավանաբար մեծ մասը) և քաղաքից հս-ան ընկած լեռներից:

Միջնադարյան Հայաստանում սովորություն է եղել կավե ջրատար խողովակաշարի որոշ տեղերում հողի մեջ կարասյա պարզարաններ դնելը, որոնք երկու նպատակի են ծառայել. մեծ թեթու-

թյան վրա դանդաղեցրել են ջրի հոսանքի թափը, իսկ ընդհանուր առմամբ պարզարաններում կարասի հատակին են նստել ջրի բերած խիճն ու ավազը, տիղմը և այլն: Պարբերաբար բացել են պարզարանի բերանը, մաքրել նստվածքներից, ծածկել ու երեսին հող լցրել:



62. Բրուտի հնոցում օգտագործվող երեսանի՝ խոտանված քրեղանի մասի հետ և կավե գլան ջնարակի մնացորդներով (XII—XIII դդ.):

Նման մի կարաս 1958 թ. գտել է վարորդ Ազատ Պետրոսյանը Վերին Դվին գյուղից հս-ան ընկած տարածությունում, բերել և հանձնել է Հայաստանի սպառնություն պետական թանգարանին (հնագիտական բաժին № 2080):

Պարզարանը միջնադարյան կարմրախեցի մի փոքրիկ կարաս է, 50 սմ բարձրությամբ, վերին մասի երկու հակադիր կողմերում՝ կավե խողովակներ հաղցնելու ելուստավոր անցքերով (նկ. 63): Հետադաշտում գտնվեցին նաև քարե և կավե փողրակով եռաբաշխիչներ (նկ. 64):

1969 թվականին ծրագրված պեղումներ կատարել ենք դարձյալ միջնաբերդի գագաթին, նրա ամ լանջին և քաղաքի կենտրոնական թաղում: Սակայն այս տարի ևս ունեցանք անակնկալ նորություններ, որոնց շնորհիվ հետախուզական աշխատանքները կարևոր տեղ գրավեցին և մեծ ծավալ ստացան:

¹ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., հ. 1, էջ 80:

Միջնաբերդի գագաթին մեր երկրաչափական ցանցի —i գիծն ուղղելու նպատակով շարունակեցինք անցյալ տարվանից կիսատ մնացած —i —7 և —j —8 քառակուսիների պեղումները, սակայն շուտով դադարեցրինք այդ աշխատանքները և հետախուզական աշխատանքներ սկսեցինք ներքին Դվին գյուղում, որտեղ դաշտերը հարթելու ժա-



63. Զրատարի պարզարան, գտնված վերին Դվինում, պատահական (V—VII դդ.):



64. Զրատարի եռաբաշխիչ քարեր, գտնված 1968 թ. (V—VII դդ.):

մանակ, հողի մեջ ի հայտ էին եկել հեթանոսական արձաններ և քանդակազարդ քարաբեկորներ: Այդ պատահական գյուտերը այս տարվա ամենակարևոր հայտնագործություններն եղան:

Միջնաբերդի ամ լանջին ամռան և աշնան ամիսներին —19 և —20 գծերի վրա պեղվել են ութ քառակուսի՝ 200 քմ ընդհանուր մակերեսով:

Պեղումներն իրենց մի ծայրով հասել են ստորին բերդին, որտեղ տարիներ առաջ բացվել էին իշխանական բնակելի տներ և զինագործի արհեստանոց: Այստեղ այս տարի ևս բացվեցին բնակելի փոքր տնակների մնացորդներ՝ իրենց սովորական թռնիրներով, տան ներսի հորերով, քառակուսի աղյուսե հատակով և ջնարակած ու հասարակ խեցանոթների հազարավոր բեկորներով:

Քաղաքի կենտրոնական թաղում շարունակվեցին կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսարանի ամ կողմի պեղումները —19, —20 և —21 գծերի վրա: Պեղվեց 12 քառակուսի, 300 քմ ընդհանուր մակերեսով: Հողաշերտն այստեղ շատ հաստ է, մոտ 2,0—2,5 մետր, գրեթե ամբողջովին խիճ ու ավաղ, որ առաջացել է մեծ մասամբ շրջապատի մեծ շենքերի, կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսարանի կործանումից: Շրջապատի բնակիչները սրբատաշ քարերը տարել են: Կենտրոնական թաղի սրբատաշ քարերն օգտագործվել են նույնիսկ միջնաբերդի վերին շերտի շենքերի մեջ:

Քաղաքի կենտրոնական թաղում հետաքրքիր էր ց —19 քառակուսու մեջ բացված հորը, որի նեղ բերանի վերին մասն աղյուսաշար էր: Այդ հորը, որ զնդան կամ ստորգետնյա պահեստ էր եղել, դատարկ էր և բերանն այնքան խնամքով ծածկված հատուկ տաշված բոլորակ տուֆ քարով, որ դարերի ընթացքում մեջը հող, կամ խոնավություն բոլորովին չէր անցել: Հորի բերանը հազիվ 38—40 սմ բացվածք ուներ, խորությունը՝ 2,8 մ, իսկ ստորին մասը հետզհետե լայնանալով՝ հատակի տրամագիծը երկու մետրից ավելի էր:

1970 թվականին ծրագրված պեղումներ կատարեցինք միջնաբերդի գագաթին, նրա ամ լանջին և քաղաքի կենտրոնական թաղում, որոնք բոլորն էլ նախորդ տարիների պեղումների շարունակությունն էին:

Հետախուզական աշխատանք կատարեցինք Քաղցրաշեն (նախկինում՝ Զորրորդ տեղամաս) գյուղի սահմաններում և Հնաբերդի հր դաշտերում:

Միջնաբերդի գագաթին, առանց ձեռք տալու հում աղյուսե մեծ շենքին և ջրավազանին, աշխատեցինք շորրորդ շերտի մակերեսին (վերևից հաշված) ստեղծել մեծ հրապարակ, որպեսզի հետագայում այդտեղ հնարավոր լինի պեղել նաև նախաքաղաքային վաղ հայկական ժամանակաշրջանի շերտը:

Այդ խորության մեջ պեղումներ կատարելը մեզ համար մեծ կարևորություն ուներ, որովհետև առանց այդ պեղումների գրեթե անհնար է լուծել 4-րդ շերտի որ դարաշրջանին պատկանելու:

Ոմանք Դվինի միջնաբերդի մեհյանը և նույն շերտի մշակույթը, առանց վերապահության, վերագրում են նախաուրարտական դարաշրջանին. ուշ բրոնզի դարին: Այդ տեսակետին հարողներն իրենց կարծիքը հիմնավորում են այն բանով, որ գտնված իրերի մեջ կան խեցանոթներ, որոնք որոշ նմանություն ունեն այլ վայրերի դամբարանային և կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրերում ի հայտ եկած առարկաներին⁸:

Մենք դժվարանում ենք ասել՝ նմանություններն են շատ, թե՞ տարբերությունները, բայց կարող ենք պնդել, որ այդ «բրոնզեդարյան» շերտում երկաթե իրերը այնքան շատ են, որ խոսք անգամ չի կարող լինել նախաուրարտական լինելու մասին: Պետք է գոույշ լինել դամբարանային նյութերը բնակավայրի նյութերի հետ համեմատելու ժամանակ, որովհետև կենցաղում գործադրում են ժամանակի առաջավոր տեխնիկան, իսկ դամբարանային առարկաները կապված են կրոնական փասկացողությունների և բնակչության սովորույթների հետ:

Միջնաբերդի 4-րդ շերտի ժամանակը որոշելու խնդրում կարևոր դեր է կատարելու ավելի խորքում գտնվող 5-րդ շերտը: Սակայն այդ շերտի մեջ պեղումներ կատարելու համար անհրաժեշտ է 2—3 տարվա նախապատրաստական աշխատանք ևս՝ պեղման հրապարակը որոշ չափով ընդարձակելու և վերին շերտերի մնացորդները վերացնելու համար:

Միջնաբերդի պապաթին հրապարակն ընդարձակելու համար պեղվեցին մի քանի քառակուսիներ, վերին շերտից մինչև 4-րդը: —i—5 քառակուսու մեջ, վերին շերտում, մոտ 5 մետր բարձրությամբ առարկաներով լեցուն հոր բացվեց, որտեղից ի հայտ եկան բազմաթիվ խեցանոթներ՝ կանաչավուն ջնարակով պոչուկավոր ձիթաճրագներ, բնորոշ XI—XIII դարերին, բազմազույն ջնարակով զարդարված թասեր և քրեղաններ, ափսեներ, կրակի վրա դրված մրոտ կճուճներ, հասարակ կարմրախեցի փարչեր, սափորներ: Գտնվեց պղնձե գեղեցիկ դեղդիր, արծաթե մատանի, ապակե անոթների բեկորներ և այլն: Հայտնաբերված առարկաների մեջ բացառիկ տեղ է գրավում ապակե հաստախեցի մի անոթ, որ սնդկամանի է նման և վրան ունի շորս շարք եռանկյունաձև զարդեր:

Կողքի —i—6/7 քառակուսու ցցուն մասերը պեղելու միջոցին հատակին գտնվեց փշրված վիճակում երեսնիվար ընկած մեհենական սրբազան

տախտակ, որի վերևի մասում պատկերված էին երեք գլխավոր աստվածները: Այս տախտակը դրված է եղել գետնից 12 սմ բարձրություն ունեցող կավակերտ պատվանդանի վրա, որի եռանկյունի գոգը ծառայել է իբրև կրակարան:

Այժմ, երբ երեք տարբեր տախտակներ ունենք ձեռքի տակ, կարող ենք համարձակորեն պնդել, որ այդ տախտակների վրայի երեք աստվածությունները ներկայացնող դիմաքանդակներից բացի մնացած փորագրությունները կանոնական չեն, որովհետև ոչ մի տախտակ մյուսի կրկնությունը չի: Դեռ ավելին, Դվինի միջնաբերդում տեղում պահպանված մեհյանի տախտակի երեսը պոկվել էր, որից պարզվեց, որ կավակերտ այդ տախտակը բազմաթիվ անգամներ նորոգվել է, ամեն անգամ մի բարակ շերտ ավելանալով վրան, բայց միևնույն տախտակի ոչ մի շերտը մյուսի կրկնությունը չէ և միշտ մի այլ բան է քանդակվել:

Միջնաբերդի կենտրոնում լրացուցիչ պեղումների ժամանակ, մեհենական տախտակի մոտ, —i—6/7 քառակուսում ի հայտ եկավ անսովոր ձևի գլանաձև կավանոթի նմանվող մի առարկա (նկ. 65), որի բարձրությունն այժմյան մնացորդներով 75 սմ է, տակը փշրված է, հատակ չունի, բայց շրթները վրա են գալիս և իրար չեն միանում, մի կողմը սև է, իսկ մյուսը՝ դարչնագույն: Գույների տարբերությունը առաջ է եկել թրծելու ժամանակ ջերմության տարբերությունից: Այս առարկան, կարծում ենք, տնտեսական նշանակություն չի ունեցել և կապված է եղել մեհյանի հետ ու ծառայել նրան:

Միջնաբերդի ամ լանջում այս տարի ավարտեցինք —20 գծի վրա ընկած քառակուսիների վերին շերտի պեղումները, որից հետո ձեռնարկեցինք —21 գծի քառակուսիների պեղմանը: Ի հայտ եկան Դվինի վերին շերտի համար սովորական հասարակ և ջնարակած խեցանոթի բեկորներ, ապակե իրեր, պղնձե դրամներ և այլն: Պեղած իրերի մեջ շատ կան գրեթե ժանգի վերածված երկաթե իրերի կտորտանք:

Քաղաքի կենտրոնական թաղում պեղեցինք 10 քառակուսի կենտրոնական թաղամասի ծայրամասերում՝ —19, —20 և —21 գծերի վրա: Ի հայտ եկան ուշ ժամանակի բազմաթիվ գերեզմաններ, իսկ ավելի խորքում՝ բավականին բարձրադիր պատերի մնացորդներ, որոնց հիմքը և երկու կողերը քարաշար են, միջուկն ու վերին մասերը կավակերտ, կամ հում աղյուսով շարված: Առարկաները քիչ են, թեև բացված շինության մասերը քնակելի տների տպավորություն են թողնում: Այդտեղ գրտ-

⁸ См. А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 178.

նըվեցին դրամներ, խեցանոթների բեկորներ, երկաթե առարկաներ:

Այս տարի Հնաբերդի դաշտերում հողը վարելու ժամանակ և անձրևներից հետո, հրք գետնի երեսից հողի փոշին վերանում է և պղինձն իր կանաչ ժանգոփ տեսանելի է դառնում, հավաքվեցին հարյուրավոր պղինձն դրամներ, մեծ մասամբ արտաբաշտառ, կան նաև բյուզանդական ավելի ծանրակշիռ դրամներ:



65. Կավե անոթ, գտնված մեհյանի պեղումների ժամանակ:

Հետախուզական աշխատանքներ կատարեցինք Քաղցրաշեն գյուղի այսպես կոչված Միմոն դայու կամուրջի մոտի հանդամասում, որի միջով

հոսում է դաշտերը ոռոգող ջրանցքի առուն: Այդ առուն իր հունը բաժականին խորն է ճեղքել, մոտ 5—6 մետր և հողի կտրվածքի մեջ ամենուրեք երևում են գորշ դույնի կավանոթի բեկորներ:

Սակայն այդտեղ գտնված առարկաները չեն կապվում քաղաքի հետ: Հանդամասը շատ ավելի հնում, մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբներին դամբարանադաշտ է եղել մերձակա բնակիչների համար: Այստեղ մենք պեղումներ չկատարեցինք, որովհետև նախ դամբարանների վրա նստած հողի բարձրությունը հասնում է 5—6 մետրի և երկրորդ՝ մեր ծրագրից դուրս է այդպիսի դամբարանների պեղումները:

Հետախուզական աշխատանքներ կատարվեցին Այգեստան և Բզովան գյուղերի միջև ընկած տարածության վրա, որտեղից գյուղացիները իրենց շենքերի համար քար էին տանում հին հիմնապատերից:

Այդտեղ գտնվեցին ուշ ժամանակի տապանաքարեր և խաչքարեր: Կարելի է ենթադրել, որ տեղում հին եկեղեցի կամ մատուռ է եղել, իսկ շրջապատում՝ գերեզմանոցներ:

1971 թվականին շարունակեցինք քաղաքի երեք տարբեր կետերի պեղումները, որոնք վերջին մի քանի տարիների մեր աշխատանքների հիմքն են կազմել. ա) միջնաբերդի գագաթի վերևից հաշված չորրորդ շերտը, բ) միջնաբերդի ամ լանջը և գ) քաղաքի կենտրոնական թաղը:

Ընդհանուր առմամբ, այս տարի պեղված տարածությունն ընդարձակվեց 350 քմ:

Ամենից հետաքրքիրը միջնաբերդի գագաթի պեղումներն էին: Այդտեղ, վերևից հաշված չորրորդ շերտի մեջ, որ տեղամասի զրո կետից 7 մետրը խորություն ունի, այնպիսի իրեր ի հայտ եկան, որոնք Հին Հայաստանի պատմության համար բացառիկ նշանակություն ունեն:

Գտնվեց նետասլաք ձուլելու քարե կաղապարի երկու փեղկերից մեկը: Մինչև այժմ Հայաստանում նետասլաքի որևէ կաղապար չէր գտնվել և չդիտեինք, թե ճանկավոր նետասլաքներն ուրարտացիներից հետո ո՞ւմ են պատկանել՝ տեղի բնակիչների՞ն, թե՞ Հայաստան ներխուժած Թշնամի ցեղերին:

Հայտնի է, որ ուրարտացիները ունեցել են ճանկավոր նետասլաքներ, որոնց վրա կան նույնիսկ սեպագիր արձանագրություններ (Կարմիր բլուր), իսկ ուրարտական թագավորության անկումից հետո, տեղի բնակչության կողմից այդպիսի նետասլաքներ պատրաստելու, հետևապես և զարծածելու մասին դադարափար չունենք:

Այս կաղապարի գյուտը կարևոր է նաև նե. տասլաքներ պատրաստելու եղանակը պարզելու համար:

Այս գյուտից հետո կարևոր էր իմանալ, թե Դվինի հնագույն բնակիչներն ինչպես են կռվել

նման, բայց փոքր չափերի: Նրա վերին մասը լայն էր հետզհետե նեղանում էր մինչև գոտկատեղը, իսկ գոտուց ներքև քիչ մասն էր պահպանվել, բայց երևում էր, որ դարձյալ հետզհետե լայնացել էր: Այդ առարկան իր թիկունքի մասով կպած է



66. Որսի տեսարան պատկերող կավե առարկա, գտնված միջնաբերդի ստորին շերտի պեղումներից:

թշնամիների դեմ և ինչպես որսացել գազաններին:

Այդ հարցի պատասխանը գտանք նույն տեղում, նեոտասլաքի ձուլման կաղապարի մոտ, մոխրակույտի մեջ: Դուրս եկավ կավե հանելուկային մի առարկա, որ կիսաբոլոր ծածկի կղմինդրի էր

եղել մի այլ իրի կամ պատի: Վրան շորս ձիեր են պատկերված, որոնցից երկուսը կառքի (կամ ուղի) առեղի մի կողմում են լծված, իսկ մյուս երկուսը՝ մյուս (նկ. 66): Կենտրոնի երկու ձիերի ուսին լուծ է դրված, իսկ երկու ծալքերի ձիերը փակված

են միացած կառքին: Սովորաբար մարտակառքերին լծված են լինում մի զույգ ձի, իսկ այստեղ չորս ձիերի առկայությունը ցույց է տալիս, որ մարտակառքը մեծ է և ծանր: Հավանաբար, կառքի մեջ բացի կառավարից և աղեղնավոր կամ նիզակավոր մարտիկից եղել են նաև այլ անձինք: Կառքը շի երևում, հավանաբար այն դրոշմված է եղել այն իրի վրա, որին միացած է եղել այս առարկան:

Ձիերը կատաղած, քառատրոփ վազքի մեջ են, իսկ նրանցից առաջ, իրարից որոշ հեռավորության վրա կանգնած են որսորդներ, որոնք աղեղները լարած պատրաստ են նետահարելու որսի կենդանիներին, որովհետև հետիոտն որսորդների միջև կան կենդանիներ:

Որսի տեսարան պատկերող այս առարկան կապված է եղել հեթանոսական մեհյանի հետ և կազմել է տեղի բնակիչների առօրյան արտացոլող մի դրվագ:

Նույն միջավայրում, մեհյանի տախտակի մոտ այս տարի ևս գտնվեցին գլանաձև առարկայի բեկորներ³, նման անցյալ տարի գտնվածին, բայց դարձյալ անհասկանալի է մնում նրա դերը մեհյանի կողքին:

Միջնաբերդի նույն շերտում, մեհյանի սրբալան տախտակի ընկած տեղից ոչ հեռու, հայտնաբերվեց գնդաձև մի կարաս, հաստ խեցիով և մոխրագույն արտաքինով: Կարասը թեև ջարդոտված էր, բայց բոլոր բեկորները տեղում էին: Այս տիպի կարաս առաջին անգամ գտնվեց 1936 թ. Կարմիր բլուրում կատարած մեր առաջին հետախուզության ժամանակ, որի հատակին անցք կար, իսկ վերին մասում գալարվող օձի ուռուցիկ պատկեր: Նման կարասներ այժմ դուրս են գալիս Դվինի միջնաբերդի գազաթի ստորին շերտերից և ամ լանջից: Դվինի գնդաձև կարասները, բացի լայն գոտիներից, այլ զարդեր չունեն, բայց նույն շերտին պատկանող այլ տիպի կարասները, որոնք տարողությամբ ավելի փոքր են և ոչ այնքան լայնափոր, իրենց վրա ունեն բացի օձերի վերադիր պատկերներից նաև կենցաղային տեսարաններ:

Միջնաբերդի ամ լանջին պեղվեցին մի քանի քառակուսիներ —21 գծի վրա: —Ի—21 քառակուսում խրճիթ բացվեց աղյուսե հատակով, մեջը թաղված թոնիր և մի հոր: Նույն շարքի —ց—21 քառակուսում ի հայտ եկավ գոտեզարդ մի ջարդված կարաս, որի բեկորները դուրս եկան նույն և շրջապատի քառակուսիների միջից: Դրոշմազարդ դոսու վրա պատկերված են մարդիկ և կենդանիներ:

Քաղաքի կենտրոնական թաղում —с—20 քառակուսու մեջ բացվեց մի հոր, որի նեղ բերանը դեպի խորքը հետզհետե լայնանում էր: Պեղման ժամանակ, հորի վերին նեղ մասերը քանդված էին, մեջը լցված էին կոտրատված կավանոթներ և անպետքացած այլ առարկաներ: Գտնվեցին հաստապատ ապակե բաժակ, պղնձե դրամ, երկաթե պայտ, հասարակ սափորիկ և այլն:

Այս տարի որոշ արդյունքներ տվին նաև հետախուզական աշխատանքները: Հնաբերդի դաշտերում դրամներից բացի հայտնաբերվեց թոնրի մի հետաքրքիր կափարիչ: Հնաբերդ գյուղում Անդրանիկ խերանյանի տան հիմքը փորելու ժամանակ դուրս եկավ արձանագրված մի քար, որ, ամենայն հավանականությամբ, VII դարին է պատկանում: Քարի վերին մասում քանդակված խաչի տակ փակագրով փորագրված է Գրիգոր: Այդ քարը հնում պոկել և այստեղ են բերել որևէ եկեղեցու կամ մատուռի վրայից ու օգտագործել իբրև շինանյութ:

1972 թվականին դարձյալ պեղումները կենտրոնացված էին միջնաբերդի գազաթին, նրա արևմտյան լանջին և քաղաքի կենտրոնական թաղում:

Միջնաբերդի գազաթին այս տարի նոր տարածություններ դրեթե չընդգրկեցինք. աշխատեցինք ստորին շերտում (4-րդ) վերացնել վերին շերտի մնացորդները, ճանապարհի համար թողնելով տարածություններ: Հեռացվեց մոտավորապես 100 խմ հող և քար:

Այդ աշխատանքների ժամանակ միջնադարյան շերտերում և հորերում գտնվեցին բազմաթիվ հնագիտական առարկաներ: Խաչի նշանով ապակե կնքադրոշմ գտնվեց —i—9 քառակուսու հորում, որի նմանները մեզ հայտնի էին նախորդ տարիների պեղումներից: Նույն հորից ի հայտ եկան նաև մի քանի քրեղաններ և թասեր, որոնցից մի քանիսն ամբողջանում են ու հետաքրքիր են իրենց բազմագույն ջնարակով, երկաթե տերեւաձև նետասլաք, ակնափոսիկով պղնձե մատանի, նրբախեցի հասարակ սափորներ և հաստախեցի հասարակ կավամանների բազմաթիվ բեկորներ: —i—10 քառակուսու վերին մասում ևս մի ոչ շատ խոր հոր բացվեց, որը լցված էր խեցանոթների և ապակյա զործածված առարկաների բազմաթիվ բեկորներով:

Նույն տեղամասի մեհյանից դեպի աե ընկնող քառակուսիներից մեկի մոխրակույտում գտնվեց ճանկավոր նետասլաքներ ձուլելու կաղապարի մի փեղկը: Կաղապարը մի քիչ կարճ է, քան անցյալ տարի գտնվածը: Սրա մեջ էլ երկու նետասլաքի

³ Տե՛ս լուսանկար № 64:

փոսիկներ կան, հետևապես միաժամանակ երկու նետասլաք են ձուլել (նկ. 67):

Կաղապարը շատ մրոտ էր, որոշ տեղերը մաշված, ծայրերը փշրված. նշանակում է նա գործածվելուց մաշվել և անպետքացել էր, այդ պատճառով էլ գցել էին հնոցից (քուրայից) հանված մոխրակուլտի մեջ: Նույն տեղում գտնվեց բրոնզե մի նետասլաք, որ ձուլված է նույն կաղապարի փոսիկներից մեկի մեջ, պղնձե նեղ գոտու բեկորներ, ինչ-որ զանգվածից պատրաստված ուլունքներ, ուլունքի կամ կախիկների վերածած խխունջի պատյաններ, սևախեցի փոքրիկ կճուճներ, որոնք, մեր հասկացողությամբ, առօրյա կյանքում գործածության համար պիտանի չեն, օգտագործվել են, հավանաբար, արհեստանոցներում իբրև հալոց կամ կթղա:

Միջնաբերդի ամ լանջին ավարտեցինք —21 գծի աշխատանքները և պեղումներ սկսեցինք տեղամասի երկու ծայրերից՝ մի կողմից —22 գծի քառակուսիներից մի քանիսում, իսկ մյուս կողմից՝ հակառակ ծայրի քառակուսիներում —28, —27 և —26 գծերի վրա:

—21 գծի քառակուսիներում ի հայտ եկավ տարիներ առաջ ստորին բերդում բացված զինագործի արհեստանոցի և դարբնոցի բաժանմունքներից մեկը, ուր գտնվեցին երկաթե իրերի բազմաթիվ բեկորներ, բոլորն էլ ժանգի վերածված և երկաթի տձև զանգվածներ:

Արհեստանոցի այս բաժանմունքը հատակագծում կորացող շարվածքով աղյուսե պատեր ունեն և հատակին փռված սալաքարերից սարքած ինչ-որ անհասկանալի կառույցներ: Նույն բաժանմունքում կար թաղված մի թոնիր, որը, գուցե, արհեստանոցի քուրա է եղել: Գտնվեց նաև շեշաքարե առյուծակերպ մի իր, որից 11 հատ գտել էինք նախորդ տարիներին և պայմանականորեն անվանել խաղաքարեր, գոտեզարդ կարասի բեկորներ և շատ այլ հասարակ ու ջնարակած խեցանոթների, ապակե անոթների կտորտանք և ձևավոր աղյուսներ:

Քաղաքի կենտրոնական թաղում այս տարի ավարտվեցին ամ ծայրամասի քառակուսիների պեղումները:

Այժմ հերթը հասել է նաև թաղի հր մասի պեղումներին: Եկեղեցուց հր ընկած տարածությունը լայն շերտով պեղվել է անցյալ տարիներին, սակայն, ինչպես այժմ պարզվում է, այդ մասը մակերեսորեն է պեղվել և որպեսզի հասնենք վաղ միջնադարյան շերտի մակերեսին, անհրաժեշտ է լրացուցիչ պեղումներ կատարել միջին հաշվով

մոտ մեկ մետր խորությամբ: Այդտեղ գետնի հին մակերեսը որոշելը մեծ դժվարություն չի ներկայացնում, որովհետև VII դարասկզբին, երբ վերակառուցել են Կաթողիկե եկեղեցին, տուֆ քարերի մանրուքը փռել են եկեղեցու շրջապատում, որի շնորհիվ, առանց սխալվելու, հնարավոր է բացել հին մակերեսը:



67. Նետասլաքի կաղապար, գտնված միջնաբերդի ստորին շերտում:

Կենտրոնական թաղում թեև եղել են սրբատաշ քարով կառուցված աշխարհիկ շենքեր, որոնց երկարաձիգ սրբատաշ պատերի հետքերը երևում են տեղում, բայց նրանցից շատ քիչ բան է պահպանվել: Այս տարի —C—20 քառակուսում, գետնի մակերեսից 1,10 մ խորության մեջ, տուֆակերտ սյան մի գեղեցիկ խարիսխ ի հայտ եկավ, որի հիմնամասի քառակուսու յուրաքանչյուր երեսն ունի 108 սմ երկարություն, իսկ սյան նստած տեղի տրամագիծը 82 սմ է:

Եկեղեցուց դեպի ամ ընկած տարածության վրա սյան նման խարիսխներ գտնվել են նաև անցյալում, դարձյալ տեղահան արված, տարբեր ձևերի և տարբեր չափերի: Այդ նշանակում է, որ տեղի մոնումենտալ մեծ շենքը (կամ շենքերը) ունեցել են մեկից ավելի սյունազարդ սրահներ¹⁰:

¹⁰ Տե՛ս Կ. Ղաֆալաբյան, Դվին քաղաք..., հ. 1, էջ 58, ինչպես նաև հետագա տարիների պեղումների արդյունքները,

Այստեղ, թաղամասի հրամ ծայրամասի քա-
ռակուսիներից մեկում, գտնվեց մաքուր տաշված,



68. Փորվածք ունեցող տուֆ քարե տախտակ,
գտնված կենտրոնական թաղամասում:

որ նրատարակել է Ա. Քալանթարյանը «Կենտրոնական թա-
ղամասի 1971—73 թթ. պեղումների արդյունքները» հոդվա-
ծում: ՏԼ՝ս ժլրարեր» ԳԱ հասարակական գիտությունների, 1975,
N 7:

երեսին փորվածք ունեցող մոխրագույն տուֆի մի
տախտակ: Տախտակի հաստությունը 7,9 սմ է:
Ակոսավոր փորվածքն իր ստորին մասում լայնա-
նում է և կիսագնդի ձև ստանում: Տախտակը ելուստ
ունի, որ մակերեսից դուրս է ցցված երկու սմ-ով
(նկ. 68):

Նման (մի քիչ տարբեր) մի քար էլ, բայց ավե-
լի կոտրտված վիճակում, գտնվեց նախորդի մոտ:
Այս քարն ունի նույնպիսի փորվածք, որը, սակայն,
եզերված է ոչ թե ակոսով, այլ առվով: Պարզ է,
որ այդ երկու քարերն իրար են հագցվել առ ու
ակոսի միջոցով, բայց թե ի՞նչ նպատակի են ծա-
ռայել՝ հայտնի չէ: Եթե ենթադրենք, որ դրանք կա-
ղապար են, այդ դեպքում անհասկանալի կմնա, թե
ինչու նրանց երկու ծայրերն էլ բաց են, որտեղից
դուրս կհոսեր ձուլման ենթակա նյութը, մանա-
վանդ, որ փոսացրած տարածությունը երկու քարի
վրա էլ մաքուր տաշվածք չունի:

Ահա համառոտ նկարագիրը այն պեղումների,
որ կատարել ենք Դվինում 1951 թվականից հետո:





Գ Լ Ո Ւ Խ Յ Ո Ր Ե Ր Ո Ր Դ

ՆՈՐԱՀԱՅՏ ԸՄԲՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Վերջին երկու տասնամյակներում Դվինի պեղումների ընթացքում, քաղաքի տարբեր մասերում և տարբեր հողաշերտերի մեջ, ի հայտ են եկել աշխարհիկ բնույթի ճարտարապետական մի քանի կառուցվածքներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ ճարտարապետության պատմության համար:

Մինչև 1950 թ. հայտնաբերած շինությունների մասին մեր խոսքը հրատարակել ենք աշխատության առաջին հատորում, ուստի այստեղ կանգ կառնենք այդ թվականից հետո բացված քիչ թե շատ հետաքրքրություն ներկայացնող կառույցների վրա, որոնք նորություն են հայկական ճարտարապետության համար¹:

ա. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԳԱՀԱՍՐԱՀԸ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԹԵՐԴՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ դարի մատենագիր Փավստոս Բուզանդի վկայությամբ հայոց խոսրով Կոտակ թագավորը (331—339), իր արքունիքը Արտաշատից Դվին փոխադրելու ժամանակ, Դվինի բլուրի վրա կառուցում է արքունական ապարանքներ (զապարանսն արքունականս)², որոնց մեջ կարևոր տեղ պետք է գրավեր արքունական գահասրահը, որտեղ տեղի են ունեցել հայոց նախարարների խորհրդի նիստերը թագավորի նախագահությամբ և որոշվել են պետական կարևոր խնդիրներ:

10—12 տարի ապարդյուն պեղումներից հետո, 1962 թվականին, Դվինի միջնաբերդի գագաթի առ

¹ Այստեղ կանգ կառնենք միայն միջնադարյան կառույցների վրա: Դվինում բացվել են նաև քաղաքի հիմնադրումից առաջ գոյություն ունեցած բնակավայրի հնագույն շենքեր, որոնց մասին կիսոսենք առանձին, ներկա հատորի ստորին շերտերին վերաբերող հատվածում:

² Տե՛ս Փավստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 28—29:

եզրագծի մոտ, վերևից հաշված երրորդ շերտում, ի հայտ եկան այդ գահասրահի ավերակները:

Այդտեղ, վերին շերտում (1946—1948 թթ.), բացվել էր բնակելի մի մեծ տուն, կառուցված 893 թ. մեծ երկրաշարժից հետո, որը կործանվել էր քաղաքի վերջնական ավերման ժամանակ՝ XIII դարի կեսերին:

2-րդ շերտի մեջ ի հայտ եկավ հում աղյուսե մի մեծ շինություն, իսկ նրանից մոտ 4 մ ավելի խորքում բացվեց Արշակունյաց հայ թագավորների գահասրահը:


Գահասրահից վերև և հում աղյուսե շինության տակ կար նաև միջանկյալ մի շերտ, որի մեջ գտնվեցին մարզպանական Հայաստանի պետական դիվանին պատկանող բազմաթիվ կնքադրոշմներ³:

Միջանկյալ շերտում բացվեց նաև կնիքներ և կնքամատանիներ պատրաստող վարպետի արհեստանոց, որտեղից դուրս եկան մատանու փորագիր քարեր, ակնեղենի կիսապատրաստ քարեր, ձույլ ոսկու կտոր և արհեստանոցային այլ պարագաներ:

Վերևից հաշված 3-րդ շերտում բացված մեծ սրահը (նկ. 69) անվերապահորեն անվանեցինք Արշակունի հայ թագավորների գահասրահ ոչ միայն այն պատճառով, որ կառուցվել է քաղաքի հիմնադրման ժամանակ և իր ծավալով միջնաբերդի ամենամեծ դահլիճն է եղել, այլև այն պատճառով, որ նրա կենտրոնում պահպանվել են արքայական գահավորակի հետքերը:

Մինչև այժմ IV դարից մեզ հայտնի էին եկեղեցական շենքեր, իսկ այժմ հայտնի է դառնում նաև Արշակունյաց գահասրահը, որից տեղում պահվել են միայն հատակաձևը՝ սրահի հատակին

³ Կնքադրոշմների մասին կիսոսենք «Պետական դիվանի մնացորդները Դվինում» բաժնում:



ՈՅ. Արշակունիքի Գրառարարական ճարտարապետական համալիրի շինությունների համալիրը:

իավասար բարձրությամբ, ներքին սյուներից մեկի խարխուլը՝ այլանդակված վիճակում (նկ. 70), պատերից ընկած առանձին սրբատաշ քարեր: Պահպանվել է նաև կրածեփ հատակը իր սկզբնական վիճակում:



70. Արշակունյաց զահանխատ դահլիճի ներքին սյուներից մեկի խարխուլը:

Իհեռ տեղում քիչ բան է պահպանվել, սակայն ղփար չէ ընդհանուր վերականգնումը թեկուզ այն պատճառով, որ սրահը հետագայում չի փոփոխվել և լավ նշմարելի են ներքին սյունաշարերի տեղերը,

որոնց օգնությամբ կարելի է առանց սխալվելու վերականգնել զահասրահի ներքին ձևը:

Նկատելի է, որ սրահը ավերվել է ոչ թե երկար ժամանակ բաց երկնքի տակ անխնամ մնալու և հետզհետե քանդվելու հետևանքով, այլ քանդվել է մարդու ձեռքով՝ տեղում այլ շենքեր կառուցելու նպատակով:

Սրահի հատակը լավ է պահպանվել նրա աե կողմում, շնայած վերին շերտի մեջ փորված 18 հորեր իջել են սրահի հատակից ներքև և վնասել այն, իսկ ամ մասում հատակը բոլորովին չի պահպանվել (նկ. 71): Սրահի աե պատը, բլուրի ծայրին գտնվելու պատճառով, մեծ մասամբ քանդվել է և քարերը գլորվել են ներքև: Դահլիճի ներսից, ինչպես նշեցինք, դուրս եկավ սյունաշարքերի խարխուլներից մեկը՝ տեղահանված վիճակում, իսկ սյուների բներից և խոյակներից ոչինչ չի պահպանվել: Ավելի լավ վիճակում էր նույնատիպ կառուցվածքի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճը: Այստեղ պահպանվել էին արմավենազարդ խոյակներից մեկը, մի քանի խարխուլներ և պատերի սրբատաշ շարվածքներ:

Պետք է ենթադրել, որ Արշակունյաց զահասրահն ունեցել է ժամանակի ոգուն համապատասխան հարուստ հարդարանք, արտաքին և ներքին կողմերից զարդարված բարձրաքանդակներով, խճանկարներով և որմնանկարներով: Ճիշտ է IV



71. Արշակունյաց զահասրահի պեղումներից մի տեսարան:

դարի զարդարանքները զուսպ են, եկեղեցական շենքերում արգելված էր աշխարհիկ տեսարանների պատկերումը, բայց այդ օրենքը հաճախ խախտվում էր, և քանդակվում էին որսի տեսարաններ նույնիսկ կրոնական շենքերի վրա, ինչպես, օրինակ, Զվարթնոցի IV—V դդ. շինությունների մեջ (արջաորս, մենամարտ, ծաղկազարդ տախտակներ խոշոր վարդյակներով)⁴, Արշակունյաց դամբարանում (Աղց, IV դար)⁵, որտեղ որսի տեսարանի հետ համատեղել են խաչի պատկերը առանձին տախտակի վրա: Եթե այդ բոլորին ավելացնենք նաև 'Իվինում տեղահան արված վիճակում գտնված այգեկութի տեսարանով քարը և այլ բեկորներ, միանգամայն հասկանալի կդառնա, որ այդպիսի տեսարաններով զարդարված պետք է լինեն 'Իվինի արքայական գահասրահը:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ գահասրահը սոսկ պաշտոնական ժողատեղի չէր: Այն միաժամանակ եղել է ճաշկերույթների և արքայական խրախճանքների պաշտոնական սրահ: Փավստոս Բուզանդը Արշակունյաց գահասրահն անվանում է «Տաճար ուրախութեան», ուր ճաշկերույթներ են տեղի ունեցել բոլոր իշխանների մասնակցությամբ⁶: Նույն սովորությունը գոյություն է ունեցել նաև Պարսկաստանում⁷:

Հայոց խոսքով Կոտակ թագավորն իր աթոռը 'Իվին փոխադրելուց առաջ նոր մայրաքաղաքի շրջապատում անտառ տնկեց, շրջափակեց պարիսպներով և որսի կենդանիներ լցրեց, որպեսզի որսով զբաղվի: Կարծում ենք, որ գահասրահի ներսը և դուրսը որսի տեսարաններով զարդարված լինելը կասկածից դուրս է:

Գահասրահը հարմար դիրք ունի Արարատյան լեռների և դաշտի նկատմամբ: Կառուցվել է մերձակա լեռներից բերված սպիտակավուն ավազաքարով, ինչպես 'Իվինի գրեթե բոլոր հնագույն շենքերը՝ Կաթողիկե եկեղեցու սկզբնական տաճարը հեթանոսական շրջանում, միջնաբերդի և կենտրոնական թաղի մյուս հնագույն շենքերը:

Ուշագրավ է գահասրահի ինքնատիպ հատակը: Հատակի հողը լավ հարթելուց և մամլելուց հետո ծածկել են մանր և տափակ գետաքարերի

բարակ շերտով, նորից հարթել ու մամլել, հետո հատակը ծածկել են կրաշաղախի շերտով և վերջում փայլեցրել:

Սրահը ներսում ունեցել է երկու շարք տե-ամ դասավորված քարե սյուներ, որոնցով բաժանվել է երեք նավի, ըստ որում կենտրոնական նավը սյուների առանցքից-առանցք ունեցել է 7,1 մ լայնություն, իսկ կողքի նավերը՝ 2,7 մ: Ծածկի վերաբերյալ թեև տվյալներ չունենք, բայց ակնհայտ է, որ փայտակերտ է եղել՝ կաթողիկոսի տան սյունազարդ դահլիճի նման, քանի որ կենտրոնական նավըն այնքան լայն է կողմնային նավերի համեմատությամբ (մոտ 3 անգամ) (նկ. 72):

Հավանաբար, այս սրահի օրինակով, մոտ 100—150 տարի հետո կառուցել են կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճը: 'Եռ ավելին, VII դարի երկրորդ կեսին պատկանող նույնատիպ սլալատ բացվել է Արուճում, որ իր իշխանության տարիներին կառուցել էր Գրիգոր Մամիկոնյանը: Այդ բոլորից կարելի է եզրակացնել, որ վաղ միջնադարից մինչև արաբական տիրապետության սկիզբը իշխանական ասպարանները, կաթողիկոսարաններն ու արքայական գահասրահները կառուցվել են միևնույն ձևով և ներքուստ եղել են եռանավ:

Արշակունի հայ թագավորների գահասրահը ևս փայտակերտ ծածկ է ունեցել: Թեև կենտրոնական նավի 7,1 մ բացվածքը մեծ է մի գերանի երկարությամբ ծածկելու համար, բայց հնում այդպիսի դեպքերում դիմում էին օժանդակ զերանաշարքերի օգնության. շենքի լայնքի կողմնային նավերը փակող գերանների գլխին դնում էին երկրորդ շարքի գերաններ, որոնց գլուխներն ավելի առաջ էին գալիս և դրանով կենտրոնական նավի բացվածքը մոտ մեկ մետրով (կամ ավելի) նեղանում էր և հնարավոր էր լինում կենտրոնական նավը փակել մի գերանի երկարությամբ: Բացի այդ, կողմնային նավերի կրկնաշար գերանները ղգալի կերպով բարձրացնում էին կենտրոնական նավի առաստաղը և հանդիսավոր բնույթ տալիս նրան:

'Իվինում բացված գահասրահի եռանավ տեսքը, այն էլ աշխարհիկ բնույթի կառուցվածքի մեջ, գալիս է հերքելու գրեթե արմատացած այն սխալ տեսակետը, որ իբրև թե բազիլիկ տիպի շենքերը Հայաստան մուտք են գործել քրիստոնեության հետ միասին Ասորիքից, եկեղեցիների միջոցով և հաստատվում է այն տեսակետը, որ այդ տիպի շենքերը Հայաստանում գոյություն են ունեցել անկախ քրիստոնեությունից՝ Հայաստանի աշխարհիկ կառուցվածքների մեջ: Բազիլիկ անունը, որ մեր ժամանակների ճարտարապետները տալիս են 'Իվինի

⁴ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Զվարթնոց (դիտողություններ), ԼՂ 174—194, նկ. 2, 3—4 (ՊԲՀ, 1959, № 4):

⁵ Տե՛ս Թ. Քուրամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Նրևան, 1948, էջ 112—114, նկ. 66—67:

⁶ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 104:

⁷ Տե՛ս «Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արհեստակողոսի Սինեաց», Թիֆլիս, 1911, էջ 32:

գահասրահի տիպն ունեցող միանավ կամ եռանավ շենքերին, առաջ է եկել հունարեն *βασιλειῶν* բազիլիկոս—թագավոր բառից: Հունաստանում արքայական ապարանքը հնում կոչվել է *βασιλειῶν* բազիլիկոն—արքունիք, թագավորանիստ պալատ: Նշանակում է, բազիլիկ անունը միանգամայն համապատասխանում է գահասրահներին և՛ իմաստով, և՛ ճարտարապետական առումով: Դրան հակառակ եկեղեցիներին բազիլիկ անունը տրվում է նրանց ճարտարապետական կառուցվածքի համար, այն բանի համար, որ նրանք իրենց ձևերով նման են արքայական հին գահասրահներին, իսկ բուն իմաստով եկեղեցիները չեն համապատասխանում իրենց այդ անվանը:

Դվինի գահասրահի ներքին հարդարանքի և կահավորման վերաբերյալ ոչ մի տվյալ չունենք: Բնական է, որ պետք է զարդարված լիներ արքայավայել՝ հատակին փռած հայկական լավագույն գորգերով, արքայական ու իշխանական գահավորակներով և բարձերով:

Ստեփանոս Օրբելյանը՝ Սյունյաց իշխանական գահասրահի մասին հետևյալն է պատմում.

«Եւ այսպէս փառաւորութեամբ տարեալ (զկաթողիկոսն հայոց Մուշէ) (520—534) իջուցանէին ի խորանն արքունական. և նստուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն, ի տեղին, որ կոչի Կից վտակաց»⁸:

Հասկանալի է, որ այդպիսի մի գահ էլ Սյունյաց մեծ իշխանն ունեցել է Արշակունյաց թագավորական գահասրահում, եթե ոչ ավելի շքեղը և սնպայման Սյունյաց իշխանական տան տոհմանշանով:

Արշակունյաց գահասրահը Դվինում պետք է զարդարված լիներ խճանկարներով, որմնանկարներով և մանավանդ՝ որսի տեսարաններ ներկայացնող բարձրաքանդակներով, յուրահատուկ IV—V դդ. ճարտարապետական կառույցներին:


Կարևոր է պարզել, թե Արշակունյաց արքունիքում իշխանական «գահ» կամ «բարձ» ունեցող նախարարների թիվը որքա՞ն է եղել:

Փավստոս Բուզանդը Մամիկոնյան իշխանների քաջությունն ու հավատարմությունը գովաբանելուց հետո գրում է.

«Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի զլուխ բազմէին. թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ ոչ մտանէր ի ժամ տաճարին ուրա-

խութեանն բազմակալացն կարգելոց. թող զոտընկալս գործակալութեանն սպասու»⁹:

Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ Արշակունյաց գահասրահում բարձ են ունեցել 400 իշխան, որոնք բազմել են արքայի աջ և ահյակ կողմերում, նրանցից ութ իշխան գահազլուխ են եղել՝ «...Բրդևաշխն Գուգարաց և իշխանն Աղձնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, ասպետն Բագրա-



72. Արշակունյաց գահասրահի հառաիւստի վերակազմությունը

տունի և իշխանն Արժրուեհաց, իշխանն Միւնեհաց և իշխանն Մամիկոնէից: Մաքս էին գահազլուխք ամենայն իշխանացն հայոց»¹⁰:

⁸ Փավստոս Բուզանդ, էջ 104.

¹⁰ Ստեփանոս Օրբելյան, էջ 34.

⁸ Ստեփանոս Օրբելյան, էջ 74.

Դվինում մեր բացած գահասրահը չէր կարող իր ներսում տեղավորել իշխանական 900 կամ 400 բարձ, եթե նույնիսկ ընդունենք, որ 900-ը ձեռագիրն արտագրողի գրչասխալ է (Դ հարևար-ի փոխարեն Թ հարևար):

Մի հանգամանք էլ կա, որ դահլիճի տարողությունն ավելի է փոքրացնում:

Արքայական գահավորակը հատակին ամրացված է դահլիճի կենտրոնում, երեսով դեպի արևելք: Այդ ցույց է տալիս, որ իշխաններն իրենց ավագության կարգով կարող էին նստել, ինչպես նշում են մատենագիրները, արքայի աջ և ահյակ կողմերում և նրա առաջ, բայց ոչ երբեք արքայական գահավորակի թիկունքի կողմում, ուրեմն դահլիճի միայն արևելյան կեսն էր օգտագործվում, որտեղ հնարավոր էր տեղավորել՝ կենտրոնական նավում մոտ մի հարյուր մարդ, իսկ սյուների ետևի նավերում կանգնել են երկրորդական իշխանները:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը գրում է. «Հիմնվելով աղբյուրների սխալ հասկացված վկայությունների վրա, պատմագիտական և բանասիրական աշխատություններում նախարարությունների թիվը Հին Հայաստանում ենթադրում էին 900 կամ 400: Սակայն Ն. Ադոնցը մանրախույզ կերպով ուսումնասիրել է այս խնդիրը և, օգտվելով աղբյուրների արժանահավատ տեղեկություններից, պարզել է արդեն, որ Հին Հայաստանում նախարարական տոհմերի թիվը, որոնք այս կամ այն չափով հայտնի են եղել, պետք է հաշվել մոտավորապես մինչև հիսուն»¹¹:

Մեղ թվում է Ն. Ադոնցը ճիշտ է. իրոք որ քիչ թե շատ հայտնի նախարարությունների թիվը հազիվ 50 է եղել, բայց քանի որ գահնամակի թերի օրինակում արդեն 70 նախարարություններ հիշատակված են իրենց տոհմանուններով, նշանակում է, նրանց ընդհանուր թիվը, փոքր նախարարությունների հետ միասին, 70-ից ավելի է եղել:

Այս հարցում մեզ օգնության է գալիս զորանամակը, որ հ. Ղ. Ալիշանը հրատարակել է իր «Այրարատ» աշխատության մեջ, ուր հիշատակված են 86 իշխանական տներ, որոնք որոշյալ թվով զորք են տվել Հայաստանի սահմանները պաշտպանելու համար¹²:

Ճիշտ նույն տեղեկություններն է հաղորդում նաև Ստեփանոս Օրբելյանն իր պատմության էջերում: Նա գրում է, որ հայոց սահմանապահ զորքը

Արշակունյաց ժամանակ չորս մեծ խմբերի է բաժանված եղել, Հայաստանի աշխարհագրական չորս կողմերը պաշտպանելու համար: Նշում է նաև յուրաքանչյուր կողմին զորք տվող իշխանությունների թիվը, որոնց զումարը 86 է: Ահա նրա խոսքերը.

«Իսկ զօրացն և աշխարհին չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն. Երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին: Արևելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք. հիւսիսային կողմանն՝ բղեաշխն Գուգարացոց 22 իշխանօք. արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք. հարավային կողմանն՝ իշխանն Անգեղտանն 22 իշխանօք: Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն Հայոց զոր Ղևոնդ գրեաց»¹³:

Ստեփանոս Օրբելյանի «Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն հայոց» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ գահնամակի լրիվ ցանկի մեջ, որ մեր ձեռքը չի հասել, հայոց իշխանների թիվը Արշակունյաց թագավորության ժամանակ դարձյալ 86 է եղել: Անկախ դրանից գահնամակի և զորանամակի համեմատական քննությունից պարզվում է, որ գահնամակի թերի ցուցակի մեջ եղած տոհմանուններից զորանամակում չեն հիշատակվում իշխանական վեց անուն¹⁴: Մեղ հասած գահնամակի թերի ցուցակը 70-րդ տոհմանունից հետո ընդհատվում է և շարունակությունը չկա: Այստեղ բացակայում են զորանամակի մեջ եղած երեսուն անուն, մեծ մասամբ փոքր իշխանությունների, որոնցից շատերը (հավանաբար 16-ը) տեղավորված են եղել գահնամակի բացակայող վերջին մասում: Կան նաև իշխանություններ, որոնք երկու ցուցակներում տարբեր անուններով են հանդես գալիս և միայն այդ պատճառով գահնամակի և զորանամակի տվյալները միմյանց չեն բռնում¹⁵:

Եթե հաշվի առնենք Ն. Ադոնցի դիտողությունները և դուրս հանենք իշխանական տոհմանունների կրկնությունները, ինչպես նաև մանր իշխանությունները, որոնք հազիվ թե գահ կամ բարձ

¹³ Ստեփանոս Օրբելյան, էջ 24—25:

¹⁴ Իրականում տարբերությունը ութ անուն է, բայց զորանցից երկուսը հիշատակված են ոչ թե իրենց տոհմանունով, այլ գործակալական պաշտոնի անունով, ինչպես, օրինակ, «Քաղաքապետն արքունի» կամ «որեապետն»:

¹⁵ Զորանամակի և գահնամակի միջև եղած 30 անունների տարբերությունը մեծ չէ, որովհետև 16 անուն գրված է եղել գահնամակի վերջում. 10 տոհմանուն էլ զորանամակում կրկնություն են, այսինքն այն նախարարությունների անուններն են, որոնց իշխանությունը երկուսի կամ երեքի է բաժանված եղել: Ուստի, իրական տարբերությունը երկու ցուցակների միջև 3—4 տոհմանուններից ավելի չէ: Այդ էլ, ըստ երևույթին, առաջ է եկել իշխանների տարբեր անվանումներից:

¹¹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 320—321:

¹² Տե՛ս «Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղ. վ. Ալիշան, Վենետիկ, 1890, ներդիր էջ:

կարող էին ունենալ արքայական սրահում, և ընդունենք, որ արքունիքում բարձ են ունեցել այն իշխանները, որոնք 500 և ավելի զինվոր են տվել Հայաստանի սահմանները պաշտպանելու համար, այդ դեպքում արքունական գահասրահում բարձ կունենային միայն 33 իշխան: Գուցե այդ թվի վրա գումարվեն նաև զինվորականներ, հողերականներ և գործակալական պաշտոններ ունեցողներ:

Բոլոր դեպքերում Դվինի գահասրահի թագավորական գահավորակի դիմաց, կենտրոնական նավում կարող էին նստել մինչև 70—80 մարդ, իհարկե, նայած թե իշխանական բարձերից յուրաքանչյուրն ինչքան տեղ էր գրավում և ինչքան տաբաթություն էր հատկացվում ելք ու մուտքի համար:

Դվինի Արշակունյաց գահասրահը հետագայում ժառանգել են մարզպանները և օգտագործել նույն նպատակով, այսինքն հայ իշխանների մասնակցությամբ նիստեր են գումարվել V—VI դարերում, իսկ մարզպանության վերջում այդ շենքը քանդված էր ու տեղում կառուցված էին այլ շենքեր՝ պետական դիվանը և կնքադրոշմների արհեստանոցը:

Մի կարևոր դիտողություն ևս:

Ակադ. Հակոբ Մանանդյանը բղեղխությունների հետ կապված իշխանությունների մասին գրում է.

«Պետք է առանձնապես նշել, որ աղբյուրների մեջ հիշատակվում են նախարարություններ, որոնք ենթարկվում էին բղեղխներին»¹⁶:

Կարծում ենք, որ այս հարցում ակադ. Հ. Մանանդյանը ճիշտ չէ:

Եթե խոսքը վերաբերեր մեծ նախարարություններից կախում ունեցող վասալ իշխանություններին, հասկանալի է, որ չէինք առարկի, բայց չենք կարող հաշտվել այն մտքի հետ, որ զորանամակում և Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ հայոց զորքերի չորս խմբի բաժանվելու վերաբերյալ խոսքերից կարելի է ենթադրել, որ սահմանապահ զորք տվող նախարարությունները ենթակա են եղել բղեղխներին և մեծ իշխաններին: Նախ այն պատճառով, որ զորք տվող իշխանների կազմում իրենք՝ բղեղխներն ու սահմանային մյուս իշխանությունները ևս հիշատակված են (Գուգարացվոց բղեղի, Սյունյաց իշխանությունը, Անգեղտունը և Կորդվաց իշխանը) և երկրորդ այն պատճառով, որ Հայաստանում պետական սահմանների պաշտպանությունը ընդհանուր գործ էր բոլոր նախարարությունների համար և չէր կարելի թողնել

միայն բղեղխների վրա: Այդ էր պատճառը, որ Հայաստանի սահմանները թշնամուց պաշտպանելու համար բոլոր մեծ և փոքր նախարարությունները բաժանված են եղել չորս խմբի և ամեն մեկը որոշյալ թվով զորք էր տալու իրեն որոշած կողմի սահմանների պաշտպանության համար:

Յուրաքանչյուր նախարարությունից տրվող զինվորների թիվը, որ նշված է զորանամակում, անշուշտ կախված է եղել իշխանության հողորությունից, մեծությունից և մարդաշատությունից: Երկրի պաշտպանության համար ամենամեծ թվով զորք է տրամադրել Սյունյաց իշխանությունը՝ 19400 զինվոր, իսկ մանր իշխանություններից շատերը տվել են միայն 50 զինվոր: Այդքանից պակաս թվով զինվոր տվող իշխանությունն չկա զորանամակի մեջ:

Ըստ զորանամակի բոլոր 86 նախարարությունները տվել են 84500 զինվոր: Նշանակում է այդքան է եղել սահմանապահ զորքի ընդհանուր թիվը Հայաստանում Արշակ Երկրորդի ժամանակ:

Զորանամակի տվյալներով Հայաստանի ու արևելյան սահմանների պաշտպանությանը մասնակցել են 21 իշխանություն, որոնց զորաբանակն ունեցել է 21400 զինվոր: Արևմտյան սահմանի պաշտպանությունը հանձնված է եղել 21 իշխանության, որոնք ունեցել են 24100 զինվոր: Հյուսիսայինը պաշտպանել են 22 իշխանություն՝ իրենց 18000 զինվորով: Հարավայինը՝ 22 իշխանություն, 21000-անոց զորաբանակով: Ընդամենը՝ 84500:

Սկզբնաղբյուրներից երևում է, որ բացի սահմանապահ զորաբանակից Արշակունի հայ թագավորներն ունեցել են նաև գլխավոր կովոդ զորաբանակ հայոց սպարապետի անմիջական հրամանատարության ներքո: Սպարապետության պաշտոնը թեև Մամիկոնյան տոհմի մենաշնորհն էր, բայց սպարապետին անձամբ թագավորն ինքն էր նշանակում:

Փավստոս Բուզանդը գրում է.

«Եւ կացոյց արքան (Արշակ Բ—Վ. Ղ.) զՎարդան (Մամիկոնյան—Վ. Ղ.) զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց. և զՎասակ միջին եղբայրն. զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիրս պատերազմացն. սոյնպէս զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր»¹⁷:

Սահմանապահ չորս հրամանատարներին և մյուս մեծ հրամանատարներին Արշակն ինքն էր նշանակում:

Փավստոսը գրում է.

«Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծա-

¹⁶ Հ. Մանանդյան, նշված աշխ., հ. Բ, մասն Ա, էջ 384:

¹⁷ Փավստոս Բուզանդ, էջ 103:


մեծացն նահապետացն, որպես առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր շափու: Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր»¹⁸:

Սակայն պետք է համաձայն լինենք ակադ. Հ. Մանանդյանի այն տեսակետին, որ սահմանապահ զորքերի շորս զլխավոր հրամանատարները նշանակվում էին բղեշխների և սահմանային մեծ իշխանությունների տոհմից:

Հայաստանը բացի սպարապետի և սահմա-

երկրորդ շերտի մեջ, ավելի ընդարձակ տարածություն էր գրավում, քան նույն տեղում վերին շերտի մեջ պեղված տունը, որի մասին դրել ենք մեր հաշվետվության մեջ¹⁹:

Հում աղյուսե շենքը թեև բավականին խորն էր թաղված հողի մեջ (մոտ 1,5—2,0 մ) և արևելյան կողմի մնացորդների բարձրությունը հասնում էր երկու մետրի, սակայն բլրի հյուսիսային և արևմտյան մասերում նրա մնացորդների հետքերը կորչում էին և երբեմն առանձին զանգվածներ էին մյուսփյամոխի թղսմս 'ձգր վամզլունսյ յուսչտտուի



73. Հում աղյուսե մեծ շինության հատակաձևի մասերը 2-րդ շերտում:

նապահ զորքերից, ունեցել է նաև ներքին զորամասեր՝ երկրի կարգը, արքունիքը, բերդերը, քաղաքները, գանձատները պահպանելու համար:

Բ. ՀՈՒՄ ԱՂՅՈՒՍԵ ՄԵՍ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Հում աղյուսե շինությունը, որ բացվել է 1948—1955 թվականների պեղումների ժամանակ Դվինի միջնաբերդի դադաթին, վերևից հաշված

էին տարբերվում աղյուսների քայքայումից առաջացած հողաշերտից (նկ. 73):

Այս շենքը հիմքից սկսած կառուցված է եղել հում աղյուսով: Տարօրինակ կերպով շինության մեջ ոչ մի կտոր քար չի օգտագործվել և կարծեք թե այդ շենքը քարաշատ Հայաստանում չի կառուցվել:

Ճիշտ է, Հայաստանում աղյուսաշեն շենքեր

¹⁸ Տե՛ս Կ. Ղափաղաբյան, Դվին քաղաք..., հ. 1, էջ 122—128:

¹⁹ Նույն տեղում:



23. Միջնաբերդի պեղումների ժամանակ, 1957 թ.



61. Խաղաղապետի անվամբ միջնաբերդի շրջանից ձեռքացած, 1968 թ.



78. Զիպսե և Կուրման հրմնադարձերի ժառանգություն: Կանգնած
 ասորեր, ասորիների պեղումներից (XI—XIII դդ.):



102. Տարբեր կիրառության ապակե անոթներ, գտնված կենտրոնական
Քաղաքապետարանի պեղումներից (XI—XIII դ.):

շատ կան, սկսած ուրարտական ժամանակներից և վաղ հայկական դարաշրջանից, ինչպես, օրինակ, Կարմիր բլուրում, Արին բերդում, Գվինի մեհյանը և այլն, բայց նրանց բոլորի հիմքերը և պատերի ստորին մասերը քարով են շարված, այն էլ անպատճառ սրձաքարով, որպեսզի խոնավությունը վերև չբարձրանա: Իսկ այստեղ կառուցողները բոլորովին հաշվի չեն առել խոնավության հանգա-

դաշտի տեսարանը Սիս և Մասիս լեռների ու Հայկական Պարի եզրագծով:

Շենքն արևելյան թևում ունեցել է իրար կից վից սենյակ, մի շարք սենյակներ էլ՝ հյուսիսային թևում, դարձյալ մի շարքի վրա և մի քանի սենյակներ՝ արևմտյան թևում: Սակայն, ինչպես ասացինք, հյուսիսային և արևմտյան շարքերի սենյակները չեն պահպանվել: Այժմ հնարավոր է միայն ընդհա-



74. Հում աղյուսե մեծ շինության կավե պատերը պեղումներից հետո:

մանքը, և պատերը այնպես էին խոնավացել, որ հետագայում տարիներ շարունակ արևի տակ մնալուց հետո էլ լավ չէին շորանում, որովհետև կավահողը, որից պատրաստված են հում աղյուսները, ներծծած խոնավությունը երկար ժամանակ պահում են իրենց մեջ:

Մնացորդներից երևում է, որ այդ մեծազանգված կառույցը, որի դրսի պատերի հաստությունը 2,0 մետր է, իսկ ներսի պատերինը՝ 1,8, սկզբնապես ուսական Մ գրի ձև է ունեցել, բակը ուղղված դեպի հարավ, արտաքին պատերը բոլորովին խուլ: Ուրեմն, դռները և պատուհանները (եթե ունեցել է) բակի կողմից են եղել:

Բակի տեղադրությունը դեպի հարավ կարևոր է համարվել երկու տեսակետով՝ հաշվի է առնվել բամինների ուղղությունը և երկրորդ՝ Արարատյան 7—748

նուր գծերով որոշել շենքի այդ երկու կողմերի սահմանները: Պեղումների ժամանակ նույնիսկ հնարավոր չեղավ պարզել, թե հյուսիսային և արևմտյան շարքերում իրար կողքի քանի՞ սենյակներ են գոյություն ունեցել:

Արևելյան շարքի սենյակները միաշափ չեն եղել. մեծ սենյակն ունեցել է 46, իսկ փոքրը՝ 36 քմ մակերես: Արևմտյան շարքի սենյակների մասին ոչինչ չենք կարող ասել, իսկ հյուսիսային կողմի սենյակները, մեր կարծիքով, ամենամեծերն են եղել: Այդ երևում է արևելյան շարքին կից սենյակի մնացորդներից և ընկած բեկորներից:

Այդ շենքը՝ սենյակների երեք շարքերով, բակով ու ջրավազանով բռնել է մոտավորապես 3000 քմ տարածություն (50×60 մ) (նկ. 74):

Հետաքրքիր է, որ շենքն իր երկու մետր պա-

տերի մնացորդներով սենյակների մուտքեր շունի, բացառությամբ մի տեղի:

Ե՛րբ է կառուցվել այս իրոք որ տեղի սովորույթյուններին հակառակ կառուցվածքը և ի՞նչ նպատակների է ծառայել:

Եթե վերին շերտի շենքերը ՚Դվինում կառուցվել են 893 թ. մեծ երկրաշարժից հետո, նշանակում է, այս շենքը պետք է կառուցված լիներ այդ երկրաշարժից առաջ: Սակայն, ինչպես հայտնի է, այդ երկրաշարժից առաջ, մոտ երկու հարյուր տարի, արաբական կողոպտիչ տիրապետության ժամանակ Հայաստանում ոչ մի նշանավոր բան չի կառուցվել: (Բացի մի դեպքից, որի մասին հիշատակություն ունեն թե՛ հայ մատենագիրները, թե՛ արաբ հեղինակները):

Հայ մատենագիրները վկայում են, որ արաբական ավերիչ արշավանքներից հետո, երբ Մուհամեդ իբն Մովանը VII դարի վերջին և VIII-ի սկզբին կարողացավ վերջնականապես նվաճել Հայաստանը և այնտեղ ստեղծել Արմինիա ոստիկանությունը²⁰, Աբդու-Ազիզն (706—709 թթ.) իր ոստիկանական աթոռը հաստատեց Դվինի միջնաբերդում և Դվին քաղաքը դարձրեց ոստիկանության կենտրոն: Աբդու-Ազիզի մասին գովեստով են խոսում նույնիսկ հայ մատենագիրները, նշելով, որ հատուկ թղթով նա ետ է կանչել արաբական հալածանքներից փախած Դվինի հայ բնակչությանը, քաղաքում բարեկեցիկ պայմաններ ստեղծել և վերահաստատել խաղաղությունը:

Մեր մատենագիրները վկայում են, որ Աբդու-Ազիզը խաղաղություն հաստատելուց հետո վերակառուցում է Դվին քաղաքը, ամրացնում և ավելի ընդարձակում:

Դեպքերին գրեթե ժամանակակից Ղևոնդ Երեցը գրում է. «Իսկ Աբդու-Ազիզն տիրեալ աշխարհիս Հայոց՝ խաղաղացոյց զամենայն յարձակմունս անիրաւութեան յաշխարհէս. և զխրոխտացեալ անզգամութիւն որդւոցն Իսմայելի սաստիկ կշտամբութեամբ ցածուցանէր: Շինէր վերստին զքաղաքն Դուին հզորագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և սմրացուցանէր դրամք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին. քանզի ասեր զիրմէ Աբդու-Ազիզ «յառաջնում աւերածին Դունայ, եթե ի ձեռն իմ եղև կործանումն քաղաքին, և ես կանգնեցից զսա»²¹:

Մխիթար Այրիվանցին գրել է. «Աբդուազիզ շինեաց զԴուին»²²:

Իններորդ դարի արաբ մատենագիր Բալաձորին իր «Երկրների նվաճման մասին» դրքում գրում է, որ Աբդուլլահ իբն Հաթիմի մահվանից հետո Հայաստանի կառավարիչ է նշանակվում նրա եղբայր Աբդու-Ազիզը, «որը կառուցեց Դեբիլ (Դվին) քաղաքը, ամրացրեց և մեծացրեց նրա մզկիթը: Նա էլ կառուցեց Նաշավա (Նախճավան) քաղաքը և վերակառուցեց բերդաքաղաքը, իսկ ըստ այլոց կառուցեց և լավ ջրափոսով շրջափակեց և սկսեց Բայլական (Փայտակարան) քաղաքի կառուցումը, քանի որ այդ քաղաքները բոլորովին քարուքանդ և անկյալ (վիճակում) էին»²³:

Ասողիկը գրեթե կրկնել է Ղևոնդ Երեցին. «Իսկ փոխանակ Մահմեդի առաքէ Վլիթ յԱբդուազիզ ոմն, որ էր խօթ լսելեօք, որ խաղաղացոյց զաշխարհս Հայոց և շինեաց զքաղաքն զԴուին հզորագոյն և ևս արձականիստ մեծութեամբ քան զառաջինն: Զի աւեր. թի ձեռն իմ եղև կործանումն քաղաքիս, և ես կանգնեցից զսա. զի էի ես, ասէ, մանուկ ժրամեայ և ռնեի սփածանելի կարմիր. և յորժամ մարտնչէր զօրն Իսմայիլի ընդ քաղաքս՝ մտի ես ընդ խողովակ մի և ելի ի պարիսպն և ի ձայն ուժգին աղաղակեցի առ զօրսն մեր. և թօթափեցան ամենայն պայիկք նախամարդկացն ի պարսպէն. և զօրացեալ զօրն Տաճկաց՝ առին զքաղաքս»: Եւ այս այսպէս»²⁴:

Այս բոլոր տեղեկությունները գալիս են ապացուցելու, որ Դվինի բուրգավոր պարիսպները, բերդը շրջապատող ջրափոսը, ինչպես նաև Հայաստանի համար խորթ հում աղյուսե մեծ շենքն (նկ. 75) ու ջրավազանը, կառուցվել են VIII դարի առաջին տասնամյակում՝ արաբ ոստիկան Աբդու-Ազիզի ժամանակ. Դվինի և մի քանի այլ քաղաքների վերականգնումը ծայրահեղ անհրաժեշտություն էր, Երեցը պատմում է հնում տարածված այն ավանդությունը, թե ինչպես 12-ամյա Աբդու-Ազիզը պատճառ է դարձել Դվին քաղաքի կործանման. 12 տարեկան հասակում Աբդու-Ազիզը մասնակցել է Դվինի կռիվներին, խողովակի միջով բարձրացել է բերդի պարսպի գլուխը, մի շոր գցել գլխին և արաբներեն լեզվով կանչել արաբ զինվորներին: Բերդը պաշտպանող պարսիկ զինվորները փախել են և արաբները կարողացել են մտնել ամրոցը: Այդ է պատճառը, որ Դվինի անկման և կործանման մեջ Աբդու-Ազիզն իրեն մեղավոր է համարել և ասել է. «Ես եմ կործանել քաղաքը. ես էլ շինում եմ»:

²² «Մխիթարայ Այրիվանցոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 51:

²³ Из сочинения Баладзори «Книга завоевания стран», перевод с арабского П. К. Жүзе, Баку, 1927, стр. 15.

²⁴ «Ստեփանոսի Տարոնացոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Բ տպ., ՍՊԲ., 1885, էջ 125—126:

²⁰ Տե՛ս Ա. ՏԵՐ-ՂԵՆՊՅԱՆ, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 269:

²¹ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի պատմութիւն Հայոց», Բ տպ., ՍՊԲ., 1887, էջ 36: Այնուհետև Ղևոնդ


որովհետև այս անգամ նրանք եկել էին հաստատվելու և իշխելու նպատակով: Դրա համար էլ անհրաժեշտ էր բերդ ու քաղաք ամրացնել, տեղում մզկիթ և բնակելի տներ կառուցել հին ավերակների վրա²⁵:

Արաբների տիրապետության երկուհարյուրամյա ժամանակաշրջանում սա միակ դեպքն է, երբ արաբները շահագրգռվածություն են ցուցաբե-

Այդ շենքի ներսում արաբ ոստիկանները իրենց կանանց բոլորովին մեկուսացրել են արտաքին աշխարհից և հանձնել ներքինիների դաժան հսկողությանը:

դ. ՄԻՋՆԱՐԵՐԴԻ ՀՍ-ԱՄ ԿՈՂՄԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ

Դվինում X—XIII դարերի բնակելի բազմաթիվ տների շարքում մեծ հետաքրքրություն է ներ-



75. Հում աղյուսե մեծ շինության ավերակների հեռապատկերը:

րել շինարարության նկատմամբ: Այդ ժամանակ է, որ կառուցվել է Հում աղյուսե մեծ շենքը Դվինի Միջնաբերդում: Սակայն ինչի՞ է ծառայել խուլ պատերով այդ արտասովոր շենքն իր ջրավազանով, իր փակ ու բաց բակերով:

Ամենայն հավանականությամբ, այդտեղ տեղավորված է եղել Աբդլ-Ազիզի և նրա հաջորդների կանանց քաղմանդամ հարեմը, որին այնքան մեծ նշանակություն էին տալիս իսլամի դավանանքին պատկանող բոլոր իշխաններն ու թագավորները, ամբողջ մուսուլմանական աշխարհը:

կայացնում միջնաբերդի գագաթի հս-ամ ծայրամասի շինությունը: Զբաղեցնում է մոտ 450—500 քմ, կառուցված է —16 —18 և —a, c գծերի սահմաններում: Շենքից պահպանվել են միայն պատերի ստորին մասերը, ամենաշատը 70—80 սմ բարձրությամբ և սենյակների հատակի մի մասը: Հյուսիսային կողմի սենյակները, որոնք բլրի ծայրամասում են եղել, հետզհետե քայքայվել ու ոչնչացել են:

Տան գլխավոր մուտքը եղել է միջնաբերդի կենտրոնից և —a 12 քառակուսու մեջ սկիզբ առնող երկար միջանցքով (նկ. 76) կապված է եղել տան ընդհանուր բաժանարար սենյակի հետ: Այդ միջանցքը սկզբում նեղ է՝ 1,65 մ, հետզհետե լայնանալով հասնում է 2,10 մետրի: Միջանցքի երկարությունը 10,0 մետր է, մեծ մասամբ պահպանված հատակը թրժած քառակուսի աղյուսներով է շարված, որ շատ սովորական է Դվինի X—XIII

²⁵ Աբդլ-Ազիզի կառուցած մզկիթի տեղը հայտնի չէ: Այն պետք է եղած լինի քաղաքի մեջ, բերդից դուրս, որովհետև բերդը, որտեղ իշխանությունն էր տեղավորված, մատչելի չէր մահմեդական հասարակ բնակչության համար: Բոլոր դեպքերում այդ շենքը նշանավոր բան չի եղել, քանի որ 893 թ. երկրաշարժից հետո մզկիթի են վերածել կաթողիկոսի կիսավեր պալատը:

դդ. բնակելի տների համար: Միջանցքը թևադիր է, սկզբում մակերեսը բարձր է, հավասար միջնաբերդի կենտրոնի մակերեսին, բայց դեպի տան խորքը իջնում է և բաժանարար սենյակի մոտ երեք աստիճան էլ իջնելով միանում է մի ընդարձակ քառակուսի սենյակի հետ ($6,75 \times 6,75$ մետր մակերեսով, մոտ 45 քմ): Նրանից դեպի ամ բնահանուր սենյակի կողքին կա նույնանման մի այլ

ցուցվում է նրանով, որ սենյակի հատակին, իր բուն տեղում պահպանվել է գլխատան ծանրությունը կրող փայտե շորս սյուներից մեկի խարխիսը, իսկ երեքը ժամանակի ընթացքում կորել են²⁶:

Երրորդ սենյակի ծածկից ոչինչ չի պահպանվել, ոչ խարխիսի կա տեղում և ոչ էլ կենտրոնական հոր, բայց բանի որ այդ սենյակի մի կողմի սլափի շափերը նույնն են, ինչ որ առաջին սենյակինը և



76. Միջնաբերդի հս-ամ կողմի բնակելի տան միջանցքը:

սենյակ, իսկ երրորդ սենյակը գտնվել է առաջինի ան կողմում, որի հատակի ստույգ շափերը հայտնի չեն: Պահպանվել է այդ սենյակի հս պատը և ունի $6,75$ մ երկարություն: Եթե ընդունենք, որ սա ևս հավասարակողմ քառանկյունի սենյակ է եղել, ուրեմն ունեցել է 45 քմ մակերես: Այս երեք սենյակներն էլ գլխատան գմբեթավոր ծածկ են ունեցել: Սենյակների անկյուններից որոշ հեռավորության վրա, ներսում շորսական փայտե սյուներ են կանգնեցրել՝ փայտե գմբեթավոր ծանր ծածկը վրան հանգեցնելու համար: Երկրորդ սենյակի փայտե 4 սյուների քարե խարխիսները պահպանվել են տեղում: Սենյակի կենտրոնում, հատակի վրա, պահպանվել է նաև երդիկի տակի հորը՝ ձևավոր քարե կափարիչով:

Առաջին (բաժանարար) սենյակը ևս ունեցել է բուրգաձև երդիկավոր փայտե ծածկ: Այդ ապա-

բուր կողմերից շրջապատված է եղել այլ շինություններով, ուրեմն պատերի մեջ լուսամուտներ չէր կարող ունենալ, հետևապես այս սենյակը ևս հավասարակող քառանկյունի է եղել՝ փայտե զրմբեթավոր ծածկով և լուսավորությունը ստացել է երդիկից:

Տեղում պահպանված մնացորդները վկայում են, որ այս բնակելի տան հատակը բոլոր սենյակ-


²⁶ Փայտե սյան քարե խարխիսներ Դվինի միջնաբերդում և քաղաքի տարբեր մասերում շատ են գտնվել իրենց բուն տեղերում և տեղահանված վիճակում: Այդ ցույց է տալիս, որ բնակելի տների սովորական ձևերից մեկը գլխատունն է եղել: Հասկանալի է, որ փայտե սյուներն օգտագործվել են նաև այլ նպատակների համար, բայց երբ տան բաժանմունքներն ունեցել են իրար հավասար շորս պատեր, անկյուններին մոտիկ շորս սյուներ և կենտրոնում էլ հոր, նշանակում է այդտեղ եղել է գլխատուն, լուսանցքով:

ներում և մյուս բաժիններում թրծած քառակուսի աղյուսներով է շարված եղել: Հատակը լավ է պահպանվել երկար միջանցքում (նկ. 77):

Շենքի պատերը քարաշար են, երեսները համաժառար կանոնավոր շարված, իսկ միջուկը լցված է մանր քարերով և ամրացված կավի շաղախով: Պատերի մեջ ևս շերտ առ շերտ օգտագործված է թրծած աղյուս: Պատերը ներսից բոլի (գա-

ծուլածո զարդերը որոշ բարձրության վրա դասի են կազմել կամ շրջանակել են մուտքերն ու խորշերը (նկ. 78, ներդիր): Գիպսե ձուլածո զարդեր գտնվեցին սենյակների լիցք հողաշերտի մեջ:

Բացի վերևում նկարագրած երեք սենյակներից, տունն իր հր, այսինքն՝ թիկունքի կողմում ունեցել է երեք փոքրիկ սենյակներից բաղկացած տնտեսական հարկաբաժին: Այդ սենյակներից ա-



77 Միջնաբերդի հս ամ ծայրամասի վերին շերտի բնակելի չենքի հատակաձևը:

ջի) ծեփ են ունեցել, մոտ 2 սմ հաստությամբ, որոնց բեկորների վրա երևում են կապույտ, կանաչ և կարմիր ներկերի հետքեր: Նշանակում է, եթե ոչ նկարներ, ապա գունավոր նախշազարդեր են եղել սենյակների պատերին: Նրանցից մեկի մեջ, հատակից մոտ կես մետր բարձրության վրա, 27 սմ բացվածքով մի խորշ կար: Այս տունը պատերի վերին մասերում ունեցել է գաջի ձուլածո որմնազարդեր, որոնք սովորական են միջնաբերդի, ստորին բերդի և քաղաքի տարբեր վայրերի նույն ժամանակներում կառուցված շենքերի համար՝ իրար նույնիսկ վազող կենդանիներ՝ (շներ, գայլեր, առյուծներ, թռչուններ), բուսական զարդերով շրջապատված կամ երկրաչափական հյուսածո զարդեր՝ նման ճարտարապետական քանդակներին: Այդ

ռաջինը 5,0, երկրորդը՝ 13,5 և երրորդը՝ 10,0 քմ մակերես ունեն: Առաջին օժանդակ սենյակի մեջ ոչինչ չկար, իսկ մյուս երկուսում բացվեցին հորեր և թոնիրներ:

Շենքի հարավային պատի մյուս կողմի սենյակները, որոնց կառուցվածքը բոլորովին այլ է, կարծում ենք այս տանը չեն պատկանել, մանավանդ, որ երկուսի միջև կապ չկա:


Մեր նկարագրած տունն իր հս կողմում ունեցել է այլ բաժանմունքներ, որոնք իսպառ ավերվել են բլրի մաշվող ծայրամասում գտնվելու պատճառով. պատերի քարերը և շենքի հատակը քայքայվել են, հետզհետե ցլուրվել թլթից ներքև:

Շենքը Դվին քաղաքի գոյության վերջին շրջանի հայ ունևոր ընտանիքի անհնի տան բնորոշ

մի նմուշ է: Դրա ապացույցն են մեծ և փոքր թռչնիկները և տեղական բնույթի բազմաթիվ առարկաներ: Այդ շենքի գոյության ժամանակ միջնաբերդը կորցրել էր իր նշանակությունը որպես վարչական կենտրոն: Այստեղ, ինչպես և նրա լանջերին ապրում էին բազմաթիվ ունևոր և չքավոր տեղացի հայեր:

որի ավերակները բավականին լավ էին պահպանված լիցք հողի թանձր շերտի մեջ (2,0—2,4 մ):

Նկարագրվող տունն իր կազմությամբ և ներքին բաժանումներով բոլորովին նորություն է X—XIII դդ. Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության համար, այդ պատճառով էլ նրա ավերակների համառոտ քննությունը դնում ենք այստեղ:




79. Ստորին բերդում 1951 թ. պեղած մեծ տան հատակաձևը:


դ. ԲՆԱԿԱՆԼԻ ՏՆԵՐ ՍՏՈՐԻՆ ԽՆԴՈՒՄ

ա) 1951 թվականին ստորին բերդի հր կողմում կատարված հետախուզական պեղումների ժամանակ, մուտքից դեպի ամ, բերդապարսպի ներսի երեսին բացվեց բնակելի մի տուն (նկ. 79),

Տունը ուղղանկյուն քառանկյունու ձև ունի, երկարությունը 18,0 մետր է, լայնությունը՝ մոտավորապես 13,0 մ: Բաղկացած է երեք մասից. կենտրոնում մի մեծ դահլիճ է 9,5 մ երկարությամբ և 5 մ լայնությամբ (47,5 քմ մակերեսով): Դահլիճի աջ և ձախ կողմերում տեղադրված են



103. Ապակե անոթների տարրեր ձևեր, գտնված միջնադարի պեղումների ժամանակ (IX—XII դդ.):



104. Ապագի սրճակի բուրգի մասերը, գտնված Երևանի մոտ (II դ.)

սենյակներ, իսկ տան հր կողմում՝ արևելքից արև մուտք ձգվում է նեղ ու երկար միջանցքը: Միջանցքը սկիզբ է առնում շենքի հր-ան ծայրին գտնվող թոնրատան մուտից և հասնում է մինչև գլխավոր սենյակի վերջը: Հետաքրքիր կառուցվածք ունի թոնրատունը՝ ամբողջովին սալահատակված է քառակուսի, 20—22 սմ մեծության թրծած աղյուսներով, բարձրադիր թոնրափի կենտրոնում թաղված է թոնիրը, պատերը ունեցել են գիպսե ձուլածո որմնադարձեր: Այդ ցույց է տալիս, որ թոնրատունը համարվել է բնակելի տան կարևոր մասերից մեկը և զարդարված է եղել: Այլապես բարձրադիր թոնրափի և որմնազարդերի գոյությունն այդտեղ անբացատրելի կմնան:

մնացորդների թափված էին տեղում: Դույնների մեջ գերակշռողը կապույտն է:

Սենյակի կենտրոնում կար 5 մետր խորությամբ մի հոր, ծածկված քարե ձևավոր կափարիչով: Հորը ծառայել է սենյակի գմբեթավոր առաստաղի լուսամուտից թափվող անձրևաջուրը հեռացնելուն: Ընդհանրապես նման հորերի մեջ առարկաներ չեն լինում, սակայն այս հորի հատակից անսպասելի դուրս եկավ հախճապակե շատ գեղեցիկ, բոլորովին անվնաս մի սափորիկ, որի սպիտակ մակերեսը զարդարված է ոսկեգույն զարդերով²⁷:

Հստ երևույթին տան տերերը ինչ-որ պատճառով այդ առարկան թաքցրել են հորի մեջ. հե-



80. Նորշավոր տան ընդհանուր պատկերը պեղումներից հետո (XII—XIII դդ.):

Առաջին (աե) հարկաբաժնում, թոնրատնից դեպի հս, տունն ունեցել է ևս երկու սենյակ, մեկը՝ մեծ (4,7×4,7 մ), մյուսը՝ փոքր՝ (4,7×2,2 մ): Այս երկու սենյակներն ըստ երևույթին սալահատակված չեն եղել: Ամենայն հավանականությամբ օժանդակ բաժանմունքներ են կապված թոնրատան հետ:

Մեծ սենյակը, որ տան գլխավոր սրահն է եղել, աղյուսաշար հատակ ուներ և գիպսե ձուլածո որմնազարդեր, որոնք գաջով ծեփած պատերի վրա գոտիներ են կազմել: Հավանաբար, գաջածեփ պատերն ունեցել են նաև գունավոր նկարներ, որոնց

տագայում այնտեղից հանելու մտադրությամբ, բայց ինչ-ինչ պատճառներով մնացել է հողի մեջ: Հետագայում այդպիսի բազմաթիվ հորեր պեղեցինք, որոնց նախապես չէինք անդրադարձել, բայց նրանց մեջ ոչինչ չգտնվեց²⁸:

²⁷ Տե՛ս Կ. Ղաֆաղաբյան, Դվին քաղաքը..., հ. 2, նկ. № 4:

²⁸ Հաբեկավոր է Դվինի սենյակների կենտրոնում փորված անձրևաջրի հորերը զանազանել այն հորերից, որոնք կեղտաջրի են ծառայել: Վերջիններս նույնպես ծածկված են ձևավոր քարե կափարիչով և շատ անգամ փորված են սենյակների մեջ: Սակայն բերանի մոտ ունեն հորի մեջ մտնող մեծ տրամաչափի մի փողրակ, որի միջով լցրել են կեղտաջուրը և



81. Ստորին բերդում բացված առանձնառենյակի խորշերը (XII—XIII դդ.):

Տունն ամ մասում ունեցել է երեք սենյակ, որոնցից երկուսը իրենց մուտքերով կապված են եղել կենտրոնական մեծ սենյակի հետ, իսկ երրորդ, ամենափոքր սենյակի միակ մուտքը եղել է դրսից՝ շենքի հս. բակի կողմից:

Տան ծածկից ոչինչ չի պահպանվել, սակայն պարզ է, որ մեծ սենյակի կենտրոնական մասը և խոնրատունն ունեցել են երկրկափոր կոնաձև ծածկ:

որ, որոնց մնացորդներն ակնհայտ են սենյակի լիցք հողի մեջ:

Ամենահետաքրքիրն ու լավ պահպանվածը մի շատ փոքրիկ սենյակ է, ըստ երևույթին ունեորտանաիրոջ առանձնասենյակը (նկ. 80):

Այդ սենյակի գլխավոր դարպը 2 խորշերն են փորված մոխրագույն տուֆ քարով շարված աստիճանավոր կառույցվածքի մեջ (նկ. 81): Այդ խորշե-



82. Նույն խորշավոր սենյակի քանդակազարդ պատերից մեկը (XII—XIII դդ.):

շենքի մյուս սենյակները ևս փայտածածկ են եղել, բայց թե ինչ ձևի, առայժմ դժվարանում ենք ասել:

բ) Երկրորդ տունը բացվեց նախորդի ամ կողմում, նրանից մոտ 1,5 մետր ավելի խոր: Այդ երկու շենքերը թեև տարբեր խորությւնի մեջ են, բայց գրեթե նույն ժամանակին են պատկանում. կառուցվել են մեկը մյուսից մի քանի տասնամյակ հետո կամ առաջ, 893 թվականի մեծ երկրաշարժից հետո՝ X—XIII դդ.:

Համեմատաբար լավ են պահպանվել աև կողմի երկու սենյակները, որոնց պատերի մնացորդները հասնում են մինչև 1,8 մ բարձրության:

Սենյակներից հյուսիսայինը ամենափոքրն է, ընդամենը 3×2 մ մակերեսով:

Ըստ երևույթին այս տունը ավերվելուց հետո երկար ժամանակ բաց է մնացել, այդ պատճառով պատերից հետզհետե թափվել են զաջե սվաղը և գիպսե ձուլածո որմնազարդերն ու որմնանկարնե-

րից մեծը ունի 0,65 սմ լայնություն, 0,35 սմ խորություն. իսկ փոքրը՝ մի գրպան, որտեղ դրված էր հախճապակե կապույտ, գեղեցիկ մի սափոր: Մեր կարծիքով, մեծ խորշի մեջ պահվել են պանազան թանկարժեք իրեր, գուցե և ձեռագիր գրքեր. իսկ փոքրում ձիթաճրագն է վառվել, որովհետև փոքրիկ խորշը մրոտ էր, իսկ մեծը՝ ոչ:


Խորշերի դիմացի պատի ստորին մասը նույնպես տուֆակերտ է, որը եզերվում է հյուսածո քանդակների ելուստով (նկ. 82): Նրանից վերև պատը աղյուսաշեն է ու կավակերտ: Մեծ աղյուսներով պատված հատակի կենտրոնում կա մի հոր, ծածկված անցք ունեցող ձևավոր քարով (նկ. 83): Այդ հորը և սենյակի քառակուսի լինելը (եթե խորշը հաշվի չառնենք) ապացույց են, որ այն ունեցել է փայտակերտ գմբեթավոր ծածկ, որի կենտրոնական անցքից լուսավորվել է սենյակը:

Այս սենյակի խորշի աստիճանավոր կառույցը ծառայել է տան կտուրը բարձրանալուն: Աստիճանները շատ ուղղաձիգ են և անհավասար բարձրություն ունեն: Անցյալում, սկսած առաջին դարից (Գառնի) մինչև ուշ միջնադար (Ամաղուի

կոտրատված ու անպետքացած իրերը, գլխավորապես խեցանոթները: Դվինի պեղածո առարկաների մեծ մասը ի հայտ են եկել այդպիսի հորերից:

Քուրթիաշեն եկեղեցին, XIV դ.), բարի սանդուղ-
ների աստիճանները շատ բարձր և նեղ էին կառու-
ցում: Տան մյուս մասերը այնքան մեծ ավերածու-
թյունների են ենթարկվել, որ այժմյան աղքատիկ
մնացորդների հիման վրա դժվար է նրանց մասին
որոշ կարծիք կազմել:

Ներսի Քանի դեռ այդ տեղի պեղումները չեն ու-
վարտվել, դժվար է որոշել այդ բաժանմունքի ինչ-
պես և նրանցից շատերի ինչ նպատակին ծառայած
լինելը: Գտնված իրերի հիման վրա կարելի է որո-
շակի կերպով եզրակացնել, որ այս արհեստանոցը
պատկանել է քաղաքի վերջին դարաշրջանին: Այդ



83. Ստորին բերդում պեղված բնակելի տան խորշավոր սենյակի հատակածը և կտրվածքները:

Ե. ԶԻՆԱԿԱՐԾԻ ԱՐՇԵՍՏԱՆՈՑ

Այս երկրորդ տնից ոչ հեռու, նրա հս կողմում
պեղմամբ ի հայտ եկավ զինագործի և փականա-
գործի բավականին մեծ արհեստանոց՝ երկաթե
իրերի և մետաղե զենքերի բազմաթիվ մնացորդ-
ներով:

Աշխատանոցը, ինչպես ասացինք, բավակա-
նին մեծ էր և ուներ իրարից միջնորմներով բա-
ժանված մասեր: Բուն արհեստանոցը, որտեղ գրտ-
նըվում էր նաև քուրան, տեղադրված էր ամբողջ
կոմպլեքսի կենտրոնում: Քուրայի շրջապատում ի
հայտ եկան աղյուսաշեն քառակուսի չորս սյուներ,
որոնցից երեքի մնացորդները 0,5-ից մինչև 1,0 մ
բարձրություն ունեին, իսկ չորրորդի միայն հետ-
քերն էին պահպանվել: Այդտեղ, հավանաբար, քու-
րայի միայն գլխամասն է եղել՝ ծածկված չորս
սյուների օգնությամբ, իսկ կողքերը բաց են թողել,
որպեսզի քուրայի ծուխը ելք ունենա:

Արհեստանոցի բաժանմունքներից մեկը, որ
պեղվեց 1970 թ., հատակազգծում կոր շարվածք ու-

ցույց է տալիս, որ Դվինի միջնաբերդը, երբ արդեն
կորցրել էր իր բուն իմաստը, այնտեղ դեռևս զինա-
գործներ կային, որոնք աշխատում էին տեղական
իշխանության զորքերի կարիքների համար:

Զ. ԴՎԻՆԻ ՄԾԾ ՇՈՒԿԱՆ

Շուկան 4-րդ տեղամասում բացված աշխար-
հիկ բնույթի մեծ շենքն է, որ ի հայտ եկավ քա-
ղաքի հարթ տարածության մեջ, միջնաբերդից դե-
պի հը-ամ՝ մեկ կիլոմետր հեռավորության վրա:

Այս տեղամասը, որ ավելի բարձրադիր էր,
քան շրջապատի հարթությունները, մնացել էր ան-
օգտագործելի, որովհետև բնական ճանապարհով
անհնարին էր ոռոգել և օգտագործելի դարձնել:
Գետնի երեսին ցրիվ եկած միջնադարյան քառա-
կուսի աղյուսների բազմաթիվ բեկորներ ակնհայ-
տորեն ցույց էին տալիս, որ այդտեղ, մոտ մեկ հեկ-
տար տարածության վրա, ինչ-որ շենք է գոյություն
ունեցել:

Դեռևս 1940-ական թվականներին այդտեղ
կատարվել էին հետախուզական որոշ աշխատանք-

ներ, իսկ 1950 թ. սկսեցինք պեղումները, որը որոշ ընդհատումներով տևեցին մինչև 60-ական թվականների սկիզբը:

Այդ տարածության վրա ի հայտ եկավ տարօրինակ քարաշեն մի հսկա շինություն, չորս շարք սյուներով և ներքին այնպիսի սալահատակ միջանցքներով, որոնք կարելի է ծածկված փողոց անվանել:

Տարիներ շարունակ մեր կատարած պեղումների ընթացքում չկարողացանք գտնել նրա արտաքին պատերից և ոչ մեկը, թեև այդ ուղղությամբ քիչ ջանք չգործադրեցինք: Շենքի արտաքին պատերը չգտանք ոչ միայն կառույցի մեծության, այլև գլխավորապես այն պատճառով, որ շրջապատի գյուղերի բնակիչները դարեր շարունակ հին շենքերի ավերակներից տարել են սրբատաշ քարերը՝ գոմերը սալահատակելու համար: Այդ հափշտակությունների հետևանքով այս հետաքրքիր կառույցը բոլոր կողմերից այլանդակվել է և զրկվել իր պատերի մնացորդներից: Շենքի բռնած ամբողջ տարածությունում փռված էին կրաշաղախի, տուֆ քարի մնացորդներ և թրծած քառակուսի աղյուսի բեկորներ: Չնայած այդ ավերումներին, պեղմամբ բաց արած տարածության վրա սյուների հիմքերի մնացորդներից երևում էր, որ շենքն ունեցել է ան-ից ամ ձգված չորս շարք սյուներ՝ յուրաքանչյուր շարքում իննական իրար նման կոթողային սյուներ:

Սյուների խոյակներից և խարխուլներից (նկ. 84) պարզ երևում է, որ շենքը կառուցվել է մարդպանության ժամանակ (V—VI դարերում), մոխրագույն սրբատաշ տուֆ քարով: Հետագայում շենքը կործանվել է և վերակառուցվել նույն հիմքերի վրա, բայց բոլորովին այլ շինանյութով:

Սկզբնական շենքը, ինչպես արդեն ասացինք, կառուցված է եղել տուֆ քարով: Նույնիսկ հատակը սալած է եղել նույն քարով, բայց վերակառուցել են թրծած քառակուսի աղյուսներով, որոնք Դվինում ավելի ուշ են օգտագործվել: Այդտեղ գտնված առարկաների մնացորդները ցույց են տալիս, որ շենքը կործանվել է 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ և վերակառուցվել է X դարում: Այս վերակառուցման ժամանակ նույնիսկ սյունաշարերը, որ հնում եղել են տուֆ քարից, փոխարինվել են թրծած քառակուսի աղյուսաշեն սյուներով: Հավանորեն այս շենքը վերջնականապես ավերվել է քաղաքի կործանման ժամանակ, XIII դարի կեսերին:

Դժբախտաբար, շենքի ընդհանուր ձևերի մասին քիչ բան գիտենք, որովհետև քացի սյունա-

շարերի մնացորդներից և շենքի հրամ կողմի սալահատակից ու այնտեղ թափված սյան բների, պարիսպների և խոյակների կույտից և ուշ ժամանակի աղյուսաշեն հատակից մեզ ոչինչ հայտնի չէ: Հասկանալի է, որ այդքանով դժվար է վերակազմության մասին խոսել, մանավանդ, որ այս շենքն իր տարօրինակ ձևերով գրեթե իր նմանը չունի ամբողջ հայ ճարտարապետության մեջ (նկ. 85):

Այնուամենայնիվ, մենք որոշակի կարող ենք ասել, որ հսկայական շենքը պալատ կամ բերդ չէ: Բնակելի տուն ևս չէ, որովհետև այնտեղ իսպառ բացակայում էին կենցաղային առարկաները, կրոնական շենք (եկեղեցի կամ մզկիթ) ևս չէ, որոնց բաղմամբիվ օրինակներ են մեզ հայտնի, ուստի պետք է ենթադրել, որ այն հասարակական մեծ կառույց է: Շենքի մեծությունը և ներքին բաժանումները մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այդ կառույցը քաղաքի գլխավոր վաճառատունն է եղել՝ մեծ շուկան, որի նմանը հետագայում (XI դ.) կառուցվել է Անիում:

Միջնադարյան շուկաները Հայաստանում լավ են ուսումնասիրված: Նրանք հիմնականում բաժանվել են երկու տիպի՝ արհեստավորների կամ առևտրականների շարքեր և քաղաքների մեծ շուկաներ, որտեղ առևտուր էին անում օտար տեղերից եկած մեծ վաճառականները, ժամանակավորապես այդ շուկաներում զբաղեցնելով խանութներ և գոմեր²⁹:

Այսպիսի շուկաները, որ ծառայում էին օտարերկրյա առևտրականներին, որոնք իրենց քարավաններով էին ապրանք բերում վաճառելու համար, հաճախ կոչվում էին քարավանատուն, իջեվանատուն, իջևան, շահաստան, ավելի ուշ՝ քարավանսարա և այլն³⁰:

Պատերի և ծածկի մասին ոչինչ չգիտենք: Ըստ երևույթին ծածկը եղել է առանց հիմնավոր պատերի և միջնորմների, այլապես տեղում որոշ հետքեր պահպանված կլինեին: Անիի մեծ շուկայից մնացել է Թորամանյանի գծագիրը, բայց այնտեղ էլ պահպանված մասերը չեն նշված:

Համենայն դեպս հայտնի է, որ Դվինի այս մեծ շուկան ունեցել է չորս շարք խանութներ երկու երկարաձիգ միջանցքների կողմերում: Անիում ևս

²⁹ Տե՛ս Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 351:

³⁰ Տե՛ս Վ. Հաբուրյունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 11—68: Օ. Մ. Պապուխյան, Гражданское зодчество Армении, М., 1971, стр. 184—210:




84. Որմնառյան խարիսխ և մենավոր սյան խոյակ, գտնված քաղաքի 4-րդ տեղամասում (V—VI դդ.):

չորս շարք խանութները միմյանցից բաժանված են եղել ևրկու միջանցքով, բայց այնտեղ չափազրությունների մեջ սյուների չեն նշված:

Դժբախտաբար, մեզ հասած մնացորդների հիման վրա ավելին չի կարելի ասել այս եղակի և

շատ հետաքրքիր շենքի մասին: Միայն կարելի է ավելացնել, որ, հավանաբար, այդ շուկայում է եղել նաև Դվինի մաքսատունը ինչպես մարդպանության, այնպես էլ արաբական տիրապետության ժամանակներում և հետագայում:



85. Դվինի մեծ շուկայի հատակածի մնացորդները 4-րդ տեղամասում:

է. ՄԻՋՆԱՐԱՆՐԻ ԲԵՐԴԱՊԱՐԻՍՊԸ

Ինչպես հայտնի է, Դվինում հսկայական բերդապարիսպները հողակույտի են վերածվել և այժմ բուրգերի տեղ բլուրներ են առաջացել: Բուրգերն ու մեծ աշտարակները բարձրագույն բլուրներ են դարձել, իսկ պարսպապատերը այդ բլուրներն իրար միացնող լեռնաշղթաների են նմանվել:

Բուրգերի և պարսպապատի միջուկը մեծադանգված (15 մ բարձրությամբ և մոտ 50×35 մ) հում աղյուսով է շարված: Նույնպիսի աղյուսով է կառուցված և միջնաբերդի հում աղյուսն մեծ շինությունը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Բալաձորին և հայ մատենագիրներն իրավացիորեն այդ պարիսպների կառուցումը վերագրել են Աբդլ Ազիզին՝ VIII դարի սկզբներին:

Մի շարք տարիներ բերդապարսպի տարբեր մասերում որոնումներ կատարեցին բերդապարսպի արտաքին երեսը գտնելու նպատակով և ոչ մի տեղ չգտնելով, եկանք այն կարծիքին, որ մոտ 700 տարի բերդն ավերակ և անտեր մնալուց հետո, երեսամասը բոլորովին չի պահպանվել, մնացել է միայն պատի հողակերտ միջուկը, որից և բերդն ստացել է իր նոր անունը՝ Հողաբերդ (Քուիրակ կալե): Անգամ XVII—XVIII դարի ճանապարհորդները գրել են, որ այդտեղ նրանք տեսան միայն հողաբլուրներ:

Այսպես, օրինակ, 1814 թ. հունիսի 12-ին անգլիացի դիվանագետ Ջեմս Մորիսը հասնելով Աբաշ գյուղը (այժմ՝ Արևշատ), գրել է, որ Դվինի (սխալմամբ կոչում է Արտաշատ) ավերակները նրման են մեյի ավերակներին, «բաղկացած քանդված հողե պարիսպների բլուրներից, և այստեղ ու այստեղ գունավոր կղմինդրի և ամանեղենի փոքրիկ կտորտանքներ կան: Պահանջվում է շատ վառ երկավակայություն՝ ներկա մնացորդներից մեծ ու փառահեղ դադափարներ կազմելու համար»³¹:

1960 թ. ամռանը, հորդ անձրևի ժամանակ, միջնաբերդից հոսող հեղեղատը բերդի հրան կողմում բացեց բերդապարսպի արտաքին երեսը: Այդ և հաջորդ երկու տարիների պեղումներից հետո բացվեցին երկու բուրգերը և նրանց միացնող պատի հատվածը:

Պարզվեց, որ այստեղ բերդապարսպի արտաքին երեսը, որ հողի մեջ շատ խորն էր նստած, պահպանվել էր անաղարտ վիճակում մինչև 1,80 մ բարձրությամբ: Պատերի ու բուրգերի հիմքերը խորը չէին, դրված էին գրեթե գետնի մակերեսի վրա. հազիվ մի տասն ամ խորության մեջ: Այդտեղ հարթել և 10—12 մ բարձրությամբ շարել են ուսփակ լեռ քարեր, որոնց վրա՝ երկու շարք մոտ 50 մ

31 ՏՊ՝ Վ. Գեղարթունյանի, Գաղմեր Հովհ. Հախրյան, Ն. Ե. Երևան, 1934, էջ 215—216:

բարձրության համարյա անտաշ քարեր, բայց ոչ բոլոր տեղերում: Այդպես է մեր բացած մեծ բուրգի ստորին բարաշար մասը, իսկ նրան հաջորդող փոքր բուրգի տակ միայն մի քանի շարք բարեր կան (նկ. 86):



86. Դվինի միջնաբերդի պարսպի արտաքին երեսի շարվածքը:

Ստորին բարաշար մասից հետո, պատերը և բուրգերը երեսապատվել են $20 \times 20 \times 5$ սմ ծավալով թրծված քառակուսի աղյուսներով: Տակի շարքերում աղյուսները դեպի պատի խորքը ութ շար-

քով են դրված, վերևում նրանց քանակը հետզհետե պակասում է:

Այժմյան մնացորդների հիման վրա անհնարին է որոշել բերդապարիսպների ճիշտ բարձրությունները, սակայն նկատի ունենալով նրանց հարաբերական չափերը, կարելի է ենթադրել, որ քառակող բերդի շորս անկյունների աշտարակները հսկայական մեծություներ են ունեցել: Բարձրությունը, ըստ երևույթին, եղել է 15 մետր, գուցե և ավելի: Բուրգերը պետք է լինեին նրանցից ավելի ցածր, իսկ պատերը հավանաբար ունեցել են 10—12 մետր բարձրություն: Պատերի լայնության մասին առայժմ որոշակի խոսք չենք կարող ասել, որովհետև ոչ մի տեղում նրանց ներսի երեսը չենք գտել, բայց մնացորդներից կարելի է ենթադրել, որ ունեցել են 5—7 մետր լայնություն:

Անշուշտ, պատերը, ինչպես նաև բուրգերն ու անկյունների շորս մեծ աշտարակներն իրենց զրլխին ունեցել են ատամնավոր հրակնատներ եթե ոչ քարից, գոնե թրծած աղյուսից, կրաշաղախով միմյանց միացրած. բայց այժմ ոչ մի մնացորդ չի պահպանվել տեղում:

Բերդապարսպի ընդհանուր նկարագրությունը մենք տվել ենք ներկա աշխատության առաջին հատորում³²: Այստեղ միայն կնշենք, որ շահաստանի պարիսպները, որոնք անցնում են Վերին Արտաշատ գյուղի միջով և հասնում մինչև Բզովան, Այգեստան, Հնաբերդ և այլ գյուղերի սահմանները, կազմել են միջնաբերդի պարիսպների շարունակությունը և կառուցվել են միաժամանակ:

Այդ ժամանակների կառույց է նաև բերդը շրջապատող ջրային օղակը, որն իր ջուրն ստացել է Աղատ գետից:

Դվինում բացվել են նաև արտադրական բրնույթի շենքեր, ինչպես, օրինակ, փականագործի, դինագործի, դարբնի, բրուտի, ապակեգործի, դրոշմակնիքներ պատրաստողի, ոսկերչի, ջուլհակի և այլ արհեստանոցներ, որոնց մասնագիտական ուսումնասիրությունը առանձին մենագրության նյութ կարող է լինել:

³² Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., հ. 1, էջ 21—36:





Գ Լ Ո Ւ Խ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՇԵՐՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Ինչպես հայտնի դարձավ պեղումների ընթացքում, Դվինի բլուրի վրա գոյություն է ունեցել մի մեծ բնակավայր, որի հնությունը հասնում է մինչև պղնձի դարի սկիզբը, մ. թ. ա. V հազարամյակը։ Այդ հին բնակավայրի հողաշերտի նստվածքը բլրի գագաթի շրջանում հասնում է մինչև 10—12 մ և շատ հարուստ է տարբեր դարաշրջանների նյութական մշակույթի մնացորդներով, որոնք հետզհետե լույս աշխարհ են դալիս ամեն տարի կատարվող պեղումների շնորհիվ։

Բացի Դվինի բլրի վրա հնից սկսած մինչև մեր դարաշրջանի XIII դարը հերթականությամբ իրար վրա նստած հողաշերտերից, բլրի շրջակայքում և ավելի հեռուներում երբեմն-երբեմն ի հայտ են գալիս տարբեր դարաշրջանների հին դամբարաններ, որտեղ իրենց ննջեցյալներին են թաղել Դվինի հին բնակիչները՝ ժամանակի սովորույթյունների և թաղման ծեսերի համաձայն։

Այսպես, 1952 թ. Դվինի բլրից արևելք, մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա, դեպի հարավ հոսող առվի հունի տակ, մոտ 5—6 մ խորության մեջ բացվեցին բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան քարարկղյա դամբարաններ, որոնց մեջ գտնվեցին բրոնզե երկարավուն և սլացիկ սնամեջ կոթառով նիզակներ։

1971 թ. վերին Արտաշատ գյուղից արևելք, առվի հեղեղատի մեջ բացվեցին երկաթեդարյան դամբարաններ, որոնց մեջ ի հայտ եկան բրոնզե իրեր և երկաթե առարկաներ։

1973 թ. դեկտեմբերին բլրից արևելք, Այգեկարդ գյուղի սահմաններում, դարձյալ առվի հունի մեջ, բացվեց մ. թ. ա. առաջին—մ. թ. առաջին դարերին պատկանող կարասյա թաղում։

1940-ական թթ. Դվինի կենտրոնական թաղում, Կաթողիկե եկեղեցու տակ և Կաթողիկոսարանի մոտերքում բացվեցին դարձյալ նույն ժամանակների կարասյա թաղումներ¹։ Հայտնի էին նաև Դվինում գտնված հեթանոսական մշակույթի մի քանի մնացորդներ, որոնք քաղաքի տարբեր վայրերի պեղումների ժամանակ և նրանից էլ առաջ ի հայտ էին եկել միջնադարյան շերտերում՝ ջարդոտված և իբրև հասարակ քար օգտագործված հետագա դարերի պատերի մեջ։ Կային մեծ քանակությամբ մարդկային գլուխներ, որոնց ժամանակը հնարավոր է ճշտությամբ որոշել, որովհետև սաղավարտների և գլխարկների ձևերը հայտնի են հին դրամների դրոշմներից և թվագրվում են մ. թ. ա. II—I դդ. այսինքն քրիստոնեություն ընդունելուց առաջ։ Քրիստոնեությունը մարդկային արձանները համարել է կոապաշտություն, և քրիստոնեության մուտքի ժամանակ ոչնչացվել են բոլոր արձանները։

Ազաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ թագավորը, Գրիգոր Լուսավորչի առաջնորդությամբ, ղենքի ուժով ոչնչացրել է Հայաստանի հեթանոսական մեհյանները և նրանց տեղում հիմնել քրիստոնեական տաճարներ։ Նա գրում է. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղալը գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբազինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քա-

¹ Տե՛ս Կ. Ղափաղաբյան, Դվին քաղաքը, 82—84։

կեալ այրեալ, աւերեալ քանդեցին»²: Այնուհետեւ Ագաթանգեղոսը շարունակում է, որ բոլորը «ի զէն և ի զարդ վառեալք, մեծաւ գոշմամբ զաղաղակ հարեալ՝ փոխստեայք յԱնահտական մեհեանն անկանէին, ուստի ընդ հասեալսն մարտ եղեալ կոուէին. նէտս անոյժս քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկան ցընդէին. զորս և սակաւ մի զարհուրեցուցեալ, զնորահաւատ մարդիկն...: Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և, նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»³: ...«երթայր հասանէր ի Գաւանաղեաց գաւառն... ի գեօղն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափառ դիցին, Բարշամինայ. նախ զնա կործանէին, և զպատկեր նորին փշրեին և զգանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին: Եւ գեօղն... յանուն եկեղեցւոյն նուիրէին»⁴, «...ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի ի թագաւորաբնակ կայանսն հանգստոցած գերեզմանաց թագաւորացն Հայոց: Եւ անդ կործանեցին զբագինն Զես դիցն Արամաղայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի: Եւ ընդ կանգնեալ զտերունական նշանն... ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին»⁵:

Գրիգոր Լուսավորչին և Տրդատ թագավորին ուժեղ դիմադրութիւն են ցույց տվել Եկեղյաց գավառում, երբ նրանք գնացել են քանդելու Անահիտի մեծ տաճարը: Ագաթանգեղոսը գրում է. «Եւ ապա... դաւառն եկեղեաց ելանէր: Եւ անդ երևեալ դիւսցըն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացըն, ի տեղիս պաշտամանցն, յԱնահտական մեհենին, յերեզն աւանի, ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոշ բարբառով զլերինս հնչեցուցանէին: Որք փախըստական եղեալք, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան: Եւ որք դիմեալ հասեալ էին զգաստացեալ զօրօքն, սուրբն Գրիգոր թագաւորան հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն և ամենեկն գտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւար առեալ»⁶: ... «Եւ անտի ընդ գետն Գայլ յանկոյս անցանէին և քանդէին զնանչական մեհեանն դստերն Արամաղայ ի Թիլն աւանի: Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւերեալ ժողովեալ ի նուէր

սպասուց սուրբ եկեղեցւոյն աստուծոյ թողուն տեղեօքն հանդերձ»⁷:

Նույն ավերվածութեանն է ենթարկվել նաև Միհր աստծո մեհյանը: Ագաթանգեղոսը գրում է, որ Գրիգոր Պահլավունին «գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամաղայ, ի դիւղն զոր Բագայադիճն կոչնն ըստ պարթեւագանձսն մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին և զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ»⁸:

Գրիգոր Պահլավունին Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, վերադարձի ճանապարհին «Եհաս ի սահմանս Հայոց լուաւ Գրիգորիոս, թե Վահեվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բաղում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ. ութերորդ պաշտոն հռչակաւոր, անուանեալ Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղացն՝ Յաշտիշատ: Զի յայնժամ դեռ ևս շեն կային երեք բագինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահեվանեան, երկրորդն՝ Ոսկեմոր Ոսկեծին դից... և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտես»⁹: Գալիս է Գրիգոր Պահլավունին իր մեծ շքախմբով և քանդում է այդ տաճարները ևս, որոնք մինչ այդ անաղարտ էին մնացել:

Այս բոլոր տեղեկութիւնները մեզ հայտնի էին մատենագիրներից: Արտաշատի պեղումներից ի հայտ եկան աստվածների մարմարյա նրբաքանդակ արձաններ, բայց կոտրատված վիճակում: Նման արձան գտնվել է նաև Գառնիի ամրոցի պեղումների ժամանակ¹⁰:

Դվինի պեղումները պարզեցին, որ Գրիգոր Պահլավունին ու Տրդատ թագավորը քրիստոնեութեան մուտքի ժամանակ ոչնչացրել ու կործանել են ոչ միայն մեհյաններն ու հեթանոսական տաճարները՝ իրենց ոսկեծույլ և մարմարակերտ արձաններով, այլև հեթանոսական դարաշրջանի բոլոր գերեզմանոցները՝ իրենց արձաններով ու կոթողներով, որոնք տեղական (ժողովրդական) արվեստի արտահայտութիւնն են եղել և մեհյաննե-

² Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 395:

³ Նույն տեղում, էջ 395—397:

⁴ Նույն տեղում, էջ 398:

⁵ Նույն տեղում, էջ 399:

⁶ Նույն տեղում, էջ 399—400:

⁷ Նույն տեղում, էջ 400:

⁸ Նույն տեղում, էջ 401—402:

⁹ Նույն տեղում, էջ 410—411:

¹⁰ Տե՛ս Ե. Կ. Արաքելյան, Основные результаты раскопок древнего Арташата. ՊԲՀ, 1974, № 4, էջ 52—54:

րի աստվածությունների հետ ոչ մի առնչություն չեն ունեցել: Դրանք հասարակ մարդկանց գերեզմանական արձաններ են, հետաքրքիր իրենց արտահայտած դադափարներով և հասկացություններով (նկ. 87):



87. Քարարձանի չարդված գլուխ, գտնված 1969 թ. Ներքին Դվինի հեթանոսական դամբարանադաշտում:

Այդ տեսակետից երջանիկ պատահականության արդյունք կարելի է համարել 1969 թ. խիստ արժեքավոր գյուտերը: Այդ թվականի զարնանը Ներքին Դվին գյուղի կոլտնտեսության ցանքատարածություններն ընդարձակելու նպատակով անօդատագործելի բարձունքները հարթելու ժամանակ Հողաբերդ կոչվող փոքրիկ գյուղակի մոտ ի հայտ էին եկել մի երկու տասնյակի չափ մշակված և մի քանի քանդակված քարեր, որոնք պատկանում են մ. թ. ա. III—մ. թ. III դարերին, երբ հայերը դեռևս քրիստոնեություն չէին ընդունել: Ուսումնասիրությունները պարզեցին, որ այդտեղ եղել են հե-

թանոսական դամբարաններ, բայց բոլորն էլ շատ հնում քանդվել են ու ավերվել:

Դամբարանները ունեցել են ննջեցյալների հետ թաղված իրեր՝ անձնական զենք ու զարդարանք, կերակրի կավանդներ և այլ առարկաներ, բայց հնում քանդելու և ավերելու ժամանակ իրերը, մանավանդ մետաղե առարկաները, կողոպտել են: Այնուամենայնիվ, գտնվեցին կողոպտիչների աչքից վրիպած մետաղե մի քանի առարկաներ և կավանդներ: Գտնված առարկաներից մեկը բրոնզե օձագլուխ ապարանջան է, մյուսը՝ ծայրերը կեռացրած բրոնզե ոլորուն մանյակ: Շատ են եղել կավանդները, բոլորն էլ սև կամ մոխրագույն արտաքինով, որոնց բեկորները (հին և նոր կոտրվածքի հետքերով) ցրված են ամբողջ տեղամասի տարածության վրա: Կոլտնտեսականները ամբողջական վիճակում գտել են միայն երկու միանման կճուճ, որոնք ունեն թեք փոսիկներից կազմված զարդագոտիներ: Կավանդների ցրվել եկած բեկորներից երևում է, որ դրանք մեծ տարողություն չեն ունեցել և դրված են եղել դամբարանների մեջ:

Այստեղ ցավալին այն է, որ ժամանակը որոշել հնարավոր է միայն դամբարանների վրա դրված, այսպես կոչված սեմական նշաններով, իսկ գերեզմանական առարկաները շատ ընդհանուր են, և նրանցով անհնարին է որոշել դամբարանների ճիշտ ժամանակը: Հարցն այն է, որ կենցաղում գործածվող առարկաները և դամբարանի մեջ դրվող իրերը կարող էին տարբեր լինել: Կենցաղում մարդիկ գործ են ածել այն ամենը, ինչ որ նպատակահարմար էր տվյալ ժամանակի համար, իսկ դամբարանի մեջ դրել են այնպիսի իրեր, որոնք ննջեցյալի հետ թաղելի վաղուց ի վեր ավանդական սովորություն է դարձել: Այդ պատճառով դամբարանային նյութի հիման վրա դժվար է նրանց ճիշտ թվագրումը: Դամբարանի հետ զուգահեռ անհրաժեշտ է որոնել և գտնել այն բնակավայրը, որի ննջեցյալները թաղվել են տվյալ գերեզմանոցում: Այդ երկու տարբեր տիպի նյութերի համատեղ ուսումնասիրությունից հետո միայն կարելի կլինի որոշել դարն ու դարաշրջանը¹¹:

Կարծում ենք, անձնական գույք պարունակող բոլոր դամբարանները անխտիր բրոնզի դարին կամ երկաթի դարի սկզբներին վերագրելը, ինչպես անում են հնագետներից ոմանք, սխալ է: Օրինակ, Կիրակոս Գանձակեցու պատմությունից պարզվում է, որ մ. թ. XIII դարում անգամ Հայաստանում

¹¹ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումներ Կիրակոսյանում, «Տեղեկագիր» ԱրմՖԱՆ-ի, 1941, № 3—4, էջ 67:

այդպիսի թաղումներ տեղի են ունեցել մոնղոլ-թուրքերի կողմից: Նա գրում է. «Եւ յօրժամ ոք մեռանէր ի նոցանէ, կամ սպանանէին, էր զոր բազում աւուրս շրջեցուցանէին ... էր զոր այրէին, և գկէս թաղէին յերկրի խոր փոսիւք, և ընդ նմին դնէին զգէնն իւր և զհանդերձն, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր: Եւ թէ ի մեծաց ոք լինէր, ի ծառայից և յաղախնեայց ևս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա. այլ և ձիես, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել»¹²: Նշանակում է, անձնական գույքը բոլորի հետ են թաղել, իսկ եթե մեծամեծ է եղել և ունեցել է ձի, սպասավորներ ու հարճեր, դրանք ևս դրել են իրենց տիրոջ գերեզմանի մեջ, ինչպես որ ընդունված էր դարեր առաջ Հայաստանի բնիկների մեջ: Չնայած միջնադարյան այդպիսի գերեզմաններ մինչև այժմ հայտնի չեն Հայաստանում, բայց կարող են բացվել հետագա պեղումների ժամանակ կամ պատահականորեն:

Բացի այդ, հայտնի է, որ Հայաստանում մինչև X դարը, գուցե և ավելի ուշ, գոյություն են ունեցել դեռևս հեթանոսական կրոնը պահպանած համայնքներ, որոնք, անշուշտ, իրենց ննջեցյալներին թաղել են հեթանոսական ծեսերով: Քրիստոնյա եկեղեցին անհաշտ պայքար է մղել հեթանոսության դեմ ոչ միայն քրիստոնեության տարածման սկզբներին, այլև հետագա դարերում, ամեն կերպ աշխատելով արմատախիլ անել հեթանոսական ծեսերն ու սովորությունները:

Դեռևս IV դարում հայոց սպարապետ Մանվել Մամիկոնյանը Ներսես Պարթևի (353—373) մասին ասում է, որ նա «զաշխար կամ ղկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարէր ... զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր դնել կօծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել»: Ուրեմն՝ նա խստիվ արգելել էր մեռելների վրա կատարվող հեթանոսական լաց ու կոծը: Այնուհետև Մանվել Մամիկոնյանը, խոսքը մասնավորելով իր մասին, հայոց թագավոր Արշակի, նրա կնոջ՝ Հայկանդուխտ թագուհու և բազմաթիվ իշխան-իշխանուհիների ներկայությամբ ասում է. «Այլ վասն իմ ոք, կոծ մի դիցէ, եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ»¹³:

Լաց ու կոծի արգելքի վերաբերյալ մեկից ավելի կանոններ են հորինվել եկեղեցու հայրերի կողմից: Դեռևս քրիստոնեության սկզբին, Գրիգոր Լուսավորչին (302—335) վերագրվող կանոնների մեջ

կարդում ենք «Որք կոծ դնեն և զհերս խզեն և կամ ղճակատ հարկանեն՝ նզովեալ լիցին ի կեանս և ի մահ»¹⁴: Աթանաս Աղեքսանդրացու կանոններից երևում է, որ հեթանոսաբար կոծ դնողներն իրենց ճակատին խփում էին և արյուն հանում: «... պարուք ղճակատ հարկանել, արին հանել...»¹⁵: Սահակ Պարթևին (387—436) վերագրվող կանոնների մեջ ասված է. «Աշխար ի վերայ մեռելոյ մի ոք առցէ, քանզի դիւական են ամենայն այնպիսի իրք. ապա եթէ ոք և անհնազանդեալ արասցեն՝ ապաշխարութեան առ դուրս սուրբ եկեղեցւոյն»¹⁶: Աշխարելու և կոծ դնելու մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին: Նկարագրելով Արտաշես Ա-ի մահն ու թաղումը, նա գրում է. «Եթե որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք և որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոս»¹⁷: Նշանակում է՝ հեթանոս Հայաստանում ննջեցյալների վրա կատարվող լացն ու կոծը, ինչպես նաև կանայք, հարճերի և ծառաների սպանությունները կատարվել են թաղման ծեսերի և ընդունված կանոնների համաձայն, բայց, ինչպես նշում է Խորենացին, գոյություն է ունեցել նաև թաղման «բարբարոսական» եղանակ, երբ դուրս են եկել ընդունված ծեսերի սահմաններից:

* * *

1969 թ. Ներքին Դվին գյուղի սահմաններում գտնված հեթանոսական առարկաների մեջ կար մի ֆալլոս (նկ. 88): Ինչպես բոլոր իրերը, այնպես էլ այս ֆալլոսը, գտնվել է տեղահան եղած վիճակում, այդ պատճառով էլ անհայտ է նրա կանգնեցրած տեղը, բայց կարծում ենք, որ սա ևս գերեզմանի վրա է դրվել և հավանաբար ոչ հասարակ մարդու, այլ՝ տոհմապետի, որից առաջ են եկել գերդաստանի կամ տոհմի անդամները: Հայաստանում շատ են գտնվել ֆալլոսներ ոչ միայն Դվինում, այլև այլ տեղերում: Նրա պաշտամունքը տարածված է եղել Արարատյան դաշտում, Արագածոտնում, Կոտայքում և այլուր:

1969 թ. հայտնաբերված հեթանոսական առարկաների մեջ բացառիկ տեղ ունի տուֆ քարից կերտած կնոջ մի արձան, որի դեմքը, ոտքերը,

¹⁴ «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 247:

¹⁵ Նույն տեղում, էջ 305:

¹⁶ Նույն տեղում, էջ 385:

¹⁷ «Մովսիսի Խորենացու պատմութիւն Հայոց», Տփլիս, 1913, էջ 190:

¹² «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1910, էջ 259:

¹³ Փատառս Բիզանդ, էջ 385:

կուրծքը ջարդոտել են, բայց մարմնի վրա ցայտուն կերպով դրսևորված են մերկանդամ կնոջ սեռական հատկանիշները (նկ. 89)։ Հայտնի է, որ հեթանոսական Հայաստանի աստվածների պանթեոնում



88. Ֆալլոս, գտնված Ներքին Դվինի հեթանոսական դամբարանադաշտում։

իր հատուկ տեղն է ունեցել Աստղիկ դիցուհին, որի զլխավոր տաճարը եղել է Տարոնում։ Ագաթանգեղոսի ասելով, քրիստոնեություն ընդունելուց հետո էլ «տգեստ մարդիկ» այդ տաճարն էին զնում «խառնակության համար»։ Գրիգոր Լուսավորիչը հայոց 16 մեծ իշխանների և նրանց սպառազեն զորքի ուղեկցությամբ Կեսարիայից վերադարձի ժամանակ մտնում է Տարոն՝ հեթանոսական երեք մեծ տաճարները փակելու։ Դրանցից առաջինը Վահեվանյան տաճարն էր, երկրորդը՝ «Ոսկեմոր-Ոսկեծին դից» մեհյանը և «երրորդ մեհեանն անուանեալ Աստղկան դից ... որ է ըստ յունականին Ափրոդիտէս։ Արդ՝ դիմեաց գալ սուրբն Գրիգորիոս, զի քանդեսցն և դայն ևս, զի տակաւին իսկ տգեստ մարդիկ խառնակութեան զոհէին յայս բազինս մնացեալս»¹⁸։

¹⁸ Ագաթանգեղոս, էջ 411։

Այդ հաշվի առնելով հանդերձ, մենք այն կարծիքին ենք, որ Դվինում գտնված մերկանդամ կնոջ արձանը ոչ թե դիցուհի է պատկերել, այլ՝ իրական անձ, տոհմի կամ դերդաստանի նախամոր, որից սերվել են նրանց բազմանդամ ընտանիքները, ինչպիսին է նաև Ֆալլոսի արձան ունեցող տոհմապետը։ Դրանցից մեկը արական հատկանիշ ունեցող տոհմապետն է, մյուսը՝ իգական հատկանիշ



89. Մերկանդամ կնոջ արձան, գտնված Ներքին Դվինի հեթանոսական դամբարանադաշտում։



90. Կնոջ արձանի բեկոր վզնոցով և այլ զարդերով, գտնված նույն դամբարանադաշտում։




91. Կնոջ մահարձան, գլուխը ջարդված, գտնված նույն դամբարանադաշտում:

ունեցող մեծ մայրը: Որ երկրորդ դամբարանի տե-
րը հասարակ կին չէ, երևում է այն բանից, որ նույն

գերեզմանոցում գտնվել են կանացի երկու ար-
ձաններ ևս: Նրանցից մեկը շորերով է՝ վզին մի
քանի շար ուլունքներ (նկ. 90): Գլուխը ջարդել են
(քրիստոնեությունը ընդունելու ժամանակ) և տե-
ղահան արել:

Կնոջ մյուս արձանի գլուխը պակված է և մար-
մինը վնասված, ձեռքերը ծալված են կրծքի վրա,
մերկ է և ստորին մասն անմշակ, որից երևում է,
որ այդ մասով նա թաղված է եղել գետնի մեջ (նկ.
91): Այս արձանի սեռական հատկանիշները ցույց
չեն տրված, հավանաբար այն պատճառով, որ նա
տոհմի նախամայր չի համարվել:

Հայաստանում կինը առանձնապես չի ստոր-
կացվել ոչ ստրկատիրական կարգերի օրով, երբ
կային անգամ կին աստվածներ (Անահիտ, Աստ-
ղիկ, Նանե) և ոչ էլ միջին դարերում, ավատական
կարգերի օրով, երբ կինն անգամ շինարարական
սշխատանքների և նվիրատվությունների մեջ հան-
դես է գալիս իբրև բարեգործ՝ իր ամուսնու կամ
հոր ու եղբայրների հետ հավասար, երբ նրանց
հիշատակին կամ արևշատության համար եկեղե-
ցիներում պատարագ է մատուցվում: Ստրկատի-
րական կարգերի ժամանակաշրջանի այր և կնոջ
դաշինքի օրինակ կարող է ծառայել 1969 թ. Ներ-
քին Դվինում բացված դամբարանի քանդակազարդ
բարր: Քարի վրա պատկերված են կողք-կողքի



92. Այր և կնոջ միասնության դաշինք, գտնված նույն դամբարանադաշտում:

կանգնած տղամարդ ու կին, իրար ձեռք բռնած, որ նրանց միասնությունն ու սիրո դաշինքն է աղ-դարարում (նկ. 92): Ինչպես Աղցի դամբարանում, որը պարունակում է Արշակունի հայ թագավորների տեղահան արված աճյունները, այնպես էլ Ներքին Դվինի գերեզմանոցում կան որսի տեսարան պատկերող քանդակաքարեր (նկ. 93): Ներքին Դվինի քարերից մեկի վրա մի մարդ նիզակով սպանում է հաստ պոչ ունեցող մի գաղանի, մի այլ քարի վրա երևում են երկու վայրի այծեր: Հավա-նաբար որսորդներին քանդակած են եղել այլ քա-րի վրա, որը մեզ չի հասել:



93. Որսի տեսարան պատկերող քարի բեկոր, գտնված Նույն դամբարանադաշտում:

Աղցում կնոջ և այր մարդու դաշինքի պատկե-րը չկա և չի էլ կարող լինել, որովհետև այդ դամ-բարանում խառը վիճակում ամփոփված են քրիս-տոնյա և հեթանոս Արշակունի հայ թագավորների ու իշխանների աճյունները¹⁹, իսկ քրիստոնեության դարաշրջանում արգելված էր մարդկանց պատ-կերներով հեթանոսական կոթողներ կանգնեցնել:

1969 թ. Ներքին Դվին գյուղում բացված հե-թանոսական դամբարանային բարձրաքանդակնե-րը, որոնք սերտորեն կապված են հեթանոս հայերի հավատալիքների հետ, բացառիկ տեղ ունեն իրենց ժամանակի մշակույթի և արվեստի պատմության համար: Այդ արժեքն ավելի է մեծանում, երբ հաշ-վի ենք առնում այն հանգամանքը, որ քանդակ-ների մեջ չի նկատվում բարձր խավերում իշխող

հելլենիստական մշակույթի ազդեցությունը, որ նրանց արվեստը զարգացել է ու դրսևորվել ժո-ղովրդի լայն խավերի մեջ:

2. ԿՎԻՆԻ ՍՏՈՐԻՆ ՇԵՐՏԸ

1958 թ. Միջնաբերդի հր-ամ ծայրամասի պե-ղումների ժամանակ —ի—12 քառակուսում ան-սպասելի նորություններ բացվեցին: Դեռևս մա-կերեսից մոտ մեկ մետր խորության մեջ, որտեղ սպասում էինք վերին շերտի մնացորդների, ի հայտ եկան կավե ծեփվածքի բազմաթիվ բեկորներ, մատնահետքերով, որոնք առաջացել էին կավե հում աղյուսի շարված պատին ձեռքերով հենվելու հետևանքով: Մեզ համար պարզ չէ, թե դրանք ինչ ժամանակի են պատկանում և ինչի են ծառայել, միայն գիտենք, որ կավը թրծվել է տեղում ծեփ-ված վիճակում և այդ պատճառով հավասարապես չի թրծվել:

Այդ ծեփվածքի տակից դուրս եկան սև և մոխ-րագույն կարասների բազմաթիվ բեկորներ: Դրանք այնքան շատ էին, որ առանց հավաքելու անհնա-րին էր պեղումները շարունակել: Նկատելի էր, որ կավանոթները փշրվել և ցրվել են եկել շենքի պա-տերի վերին մասերի փլվածքից: Դա երևում էր նրանից, որ կարասների բեկորների վրա հում աղ-յուսե պատերի զանգվածներ էին ընկած:

Այդ կարասները, ինչպես նաև նրանց հետ գտնված աղորիքները և սև փայլուն կամ մոխրա-գույն փոքրիկ սափորիկներն ու միջին մեծության կավանոթները, ժամանակի տեսակետով բոլորո-վին չեն կապվում միջնադարյան Դվինի հետ և շատ ավելի հին են:

Մի քանի տարի առաջ Դվինի միջնաբերդի հա-կառակ ծայրամասում (հս-ան), մոտ 12 մետր և ավելի խորության մեջ, ի հայտ էին եկել IV—III հազարամյակների պղնձեդարյան մնացորդներ: Իսկ այստեղ կարասների բեկորները ընդամենը մեկ մետր խորության մեջ էին: Անկախ խորությունից, կարասների բեկորները և ավելի փոքր կավանոթ-ները պղնձեդարյան առարկաների հատկանիշ չու-նեին, բայց և միջնադարյան էլ չէին:

Պեղումների ընթացքում պարզվեց, որ կավա-նոթների վերին բեկորները ծածկված էին հողով, իսկ ստորինները թաղված էին մոխրի հաստ շեր-տի մեջ: Շուտով բացվեցին նաև կավակերտ պա-տեր, որ կրակի ազդեցության տակ երեսի կողմից թրծվել էին, իսկ երեսի սվաղը կարծրացել էր: Տար-օրինակ էր նաև շենքը, որի մեջ գտնվեցին այդ հին ժամանակների կավանոթները:

¹⁹ Այս կապակցությամբ տե՛ս Խաղեհայի, գիրք 9, գլ. 14, էջ 288—289:

Անսովոր էր, որ երբեմն այդ հին խեցանոթների հետ դուրս էին գալիս նաև միջնադարյան ջնարակած ու հասարակ կավանոթներ, հատուկ Դվինի X—XIII դարերին: Շուտով նկատեցինք, որ դրանք գտնվում են ոչ թե հնագույն խեցանոթների հետ խառն վիճակում, այլ այդ շերտի լիցք հողի մեջ փորված հողերում, որոնք գրեթե աննկատելի են տեղում: Հորերից դուրս ամեն ինչ հին է և վերաբերում է Դվինի հնագույն բնակավայրին:

Կավանոթների կույտն ամբողջապես բաց անելու համար ստիպված եղանք քառակուսին ընդլայնել մի քանի ուղղություններով՝ ընդգրկելով —h —13 քառակուսու ան կեսը, —k —12 —h-ը հյուսիսային կողմից 2 մետր և որոշ տարածություն էլ —k —13 քառակուսու հս-ան մասում:

Պեղումների խորությունն անցավ երեք և նույնիսկ 4 մետրից: Ի հայտ եկան մեծ ու փոքր կարասների և այլ կավանոթների մի քանի հազար բեկորներ, որոնք միանգամայն նորություն են Հայաստանի հնագիտության համար (տախտ. XI, 3, 5, XII, 2): Կարասներից շատերն ունեն զարդադրանքներ, լայնափոր են, տրամագիծը բարձրության մոտ 2/3-ն է կազմում:

Կարասներից մի քանիսն ունեն զարդանկարներ, որոնք պատկերում են փախչող եղջերուներ և նրանց նետ ու աղեղով հետապնդող հեծյալ որսորդներ (տախտ. XI, 1, 2, 4): Այդ զարդերն ուռուցիկ են և, հավանաբար, վերադիր, բայց կան նաև ճնշմամբ արված զարդանկարներ և ցցուն ցլազուխ բռնակներ, գծերով արված կենդանական զարդանախշեր՝ վարազի պատկերով:

Նույն շերտում գտնվեց նեղ բերանով և ուռուցիկ փորով մի կճուճի բեկորներ, որ արտաքինից իր ձևերով խիստ նման էր ուրարտական և ետուրարտյան ժամանակի կճուճներին, որոնցից հազարավոր օրինակներ են գտնվել նախաքրիստոնեական դամբարաններում, բայց այդ կճուճը եզակի օրինակ է, որովհետև արտաքինից ջնարակապատ է, ունի ջնարակով արված հյուսածո զարդադներ, մի քիչ ուռուցիկ (տախտ. XII, 3, 4):

Թեև ջնարակի մի տեսակը գոյություն է ունեցել հին Եգիպտոսում, ինչպես նաև Միջագետքում, բայց Հայաստանում իսկական ջնարակապատ առնոթներ հանդես են գալիս միջնադարում, այն էլ IX դարից սկսած, իսկ այստեղ խոսքը վերաբերում է նախաքրիստոնեական ժամանակներին:

Այս ջնարակած հնագույն կավանոթը, որի նմանը գտնվեց նաև հետագայում, միանգամայն նորություն էր Հայաստանի վաղ շրջանի հնագիտության համար:

1959 թ. ընդարձակեցինք այս շերտի պեղումները, և պարզվեց, որ այն շարունակվում է նաև հարևան քառակուսիներում ու ամենուրեք կապված է որոշ խորության մեջ հանդես եկող շիկակարմիր հողաշերտի հետ, որ կարծես թե ուժեղ այրվելուց է այդ դույնը ստացել: Հողի որոշ երակները, որ լավ են այրվել, մրոտված են և սև կամ մոխրագույն երանգ ունեն:

1959 թ. այդ շերտում պեղվեցին —h —11, —i —12, h —14 և —h —15 քառակուսիները, ընդամենը 125 քմ մակերեսով և հսկայական նյութ տվին նորահայտ մշակույթի վերաբերյալ (նկ. 94):



94. Միջնաբերդի ստորին շերտերի պեղումները մեհյանի շրջապատում:

Թեև այդ շերտի հիմնավոր ուսումնասիրմանը դեռևս ձեռնամուխ չենք եղել և այդ շերտի մեջ որոշ չափով խորացել ենք ծրագրից դուրս, հրապուրվելով նորահայտ մշակույթի մնացորդներով, բայց այժմ էլ կարող ենք որոշ փաստերի հիման վրա այդ վերին աստիճանի հետաքրքիր մշակույթը վերագրել վաղագույն հայկական ժամանակներին, VI—V դդ. մ. թ. ա., երբ արդեն կործանվել էր

ուրարտական հզոր պետությունը և հայ ժողովուրդն իր առաջին քայլերն էր անում պետություն և մշակույթ ստեղծելու համար:

Այս շերտի մեջ գտնվեցին կավե խիստ փոքրիկ կճուճիկներ (նկ. 95), մոխրագույն և սևին մոտեցող խեցիով, վանակատի (օբսիդիան) դանակներ, մի քանի սրաքարեր, քարե սանդիտոտներ, կավանոթների քարե հղկիչներ, կայծքարե եռանկյունաձև նետասլաք, կարասների, սափորների և կճուճների բազմահազար մեծ ու փոքր բեկորներ, որոնցից թանգարանի աշխատակիցները կարողացան ամբողջացնել վեց կարաս, վեց կճուճ, չորս սափոր և մի պնակ: Մի շարք առարկաներ էլ կիսատ են մնացել, որոնց կտորները կարող են գտնվել հետագա պեղումների ժամանակ:



95. Կճուճներ, փոքրիկ՝ մոխրագույն, գտնված միջնաբերդի ստորին շերտում:

Կարասներից մեկի վրա ուռուցիկ ձևով պատկերված է որսի տեսարան, մեկ ուրիշի վրա՝ գալարվող օձի ուռուցիկ պատկեր, որ լրիվ շրջան է կազմում կարասի փորի վրա, իսկ մի քանիսն ունեն միայն քիչ ուռուցիկ գոտիներ, որոնք կարասին ամրություն են տվել: Երկարավիզ և գեղեցիկ սափորներից մեկն ունի երեք բերան՝ ուղղահայաց դիրքով և երկար պարանոցով:

1959 թ. այս շերտի մեջ գտնված առարկաներից ամենահետաքրքիրը, կարծում ենք, թրծած կավե մի տախտակ է, որի բարձրությունը 62 սմ է, լայնությունը միջին մասում՝ 51 սմ (վերին մասը քիչ լայն է ստորինից): Տախտակի վրա կան բազմաթիվ վերադիր և փորագիր զարդեր:

Վերին մասում, եզրագծին մոտ մարդկային երեք դեմքեր են պատկերված՝ խորն ընկած աչքերով, որոնցից երկուսը՝ անկյունների մոտ, իսկ մեկը՝ կենտրոնում: Նրանց արանքներում կան երկուական նույնպիսի, բայց համեմատաբար փոքր դեմքեր, իսկ ավելի ներքև՝ բազմաթիվ շղթայակերպ զարդեր, որոնց մեջ, տախտակի ամբողջ լայ-

նությամբ գալարվում է մի օձ (նկ. 96): Հասկանալի է, որ այս տախտակը պաշտամունքային առարկա է եղել, և դժվար չէ կռահել, որ նրա գլխամասի երեք մարդկային մեծ դեմքերը եռաստվածություն են խորհրդանշել, իսկ չորս փոքր դեմքերը՝ երկրորդական աստվածներ:



96. Մեհյանի սրբապատկեր յոթ դեմքով, գտնված միջնաբերդի ստորին շերտից:

Տախտակը հայտնաբերվեց — ի — 12 քառակուսում, երեք մետր խորության մեջ, տեղահան եղած վիճակում, մի մասն էլ ջարդոտված: Տախտակի երեսի մրոտ լինելն ասում է այն մասին, որ այն դրված է եղել կրակի մոտ, բայց կարելի էր ևնթաղել նաև, որ պատահաբար է կրակի մեջ մնացել, գուցե հրդեհի ժամանակ:

Այս պաշտամունքային տախտակի գաղտնիքը պարզվեց հետազոտում, երբ նման մի այլ տախտակ գտնվեց կանգուն, իր տեղում:

1960 թ. միջնաբերդի շորորոգ շերտի պեղման համար նախապատրաստեցինք մի քանի քառակուսիներ այն տարածության շրջապատում, որտեղ նախորդ տարիներին գտնվել էին սև և մոխրագույն կավանոթներն ու նրանց բեկորները: Հանեցինք 3-րդ շերտի մնացորդները և 1961 թ. պեղումները շարունակեցինք ավելի խորքում, որտեղ ի հայտ եկան քարաշար եզրերով պատեր, իսկ ավելի խոր-

քում՝ —11—11 քառակուսու սահմաններում՝ կավե մի զանգված, մոտ մեկ մետր երկարությամբ և 30 սմ հաստությամբ:

Կարծեցինք թե գտել ենք բրուտի արհեստանոց, որտեղ կավը շաղախել են և թողել, որ հնանա և յրումն առնի: Հնում շաղախված կավն այդ նրպատակի համար տարիներով պահում էին և պարբերաբար վերաշաղախում: Այդպիսի կավից շինած նրբախեցի անոթը շորացնելու կամ թրծելու ժամանակ երբեք չէր ճաքճքում:

Սակայն երբ ավելի խորացանք, պարզվեց, որ կավե այդ զանգվածը ոչ թե շաղախված կավի հումք է, այլ կավակերտ կառուցվածքի մաս, որի նմանը մեզ բոլորովին հայտնի չէր մինչ այդ:



97. Մեհյանի սրբապատկեր երեք դեմքով, գտնված նույն տեղում:

Գրեթե ուղղահայաց դիրքով կանգնեցրած հում կավի այդ զանգվածը ծառայում է իբրև հենարան նրա ստորին մասին հագցրած թրծած կավե մի տախտակի համար, որն իր վրա ուներ բազմաթիվ զարդաձևեր և նման էր այն տախտակին, որ գտնվել էր 1959 թ. մոտակա —11—12 քառակուսու մեջ, միայն թե նախորդն իր վրա ուներ երեք

մեծ և չորս փոքրադիր դեմքեր, իսկ նորահայտ տախտակի վրա կային մարդկային ընդամենը երեք դեմքեր, որոնք, մեր կարծիքով, խորհրդանշում են հայոց հին հեթանոսական կրոնի երեք գլխավոր աստվածներին (նկ. 97):

Կավե կոթողն ուներ 115 սմ բարձրություն: Նա հնում ավելի բարձր է եղել, բայց վերին մասերը հետզհետե փշրվել և թափվել են: Հավանաբար գլխին ունեցել է որևէ գլխազարդ, բայց թե ինչպիսին, չգիտենք: Մեզ թվում է, որ կոթողի պատվանդանը իր հետևի մասում ևս ինչ-որ հավելվածներ է ունեցել, որոնք նույնպես չեն պահպանվել տեղում:

Կոթողի ստորին մասին հագցրած տախտակի վրայի մարդկային երեք դեմքերը, որ, ինչպես ասացինք, աստվածների խորհրդանիշ են, ունեն ուռուցիկ կլոր այտեր և խոր փորված աչքեր: Այդ դեմքերի տակ իրար են հաջորդում մի քանի շարք հյուսածո ուռուցիկ զարդանախշեր, որոնց տակ տախտակի մի եզրից մինչև մյուսն է ձգված կյանքը խորհրդանշող դալարվող մի օձ: Այնուհետև տախտակի երկու եզրերին կան արևածագն ու մայրամուտը պատկերող երկու փոքրիկ շրջանակներ, որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում ցցված է մի ելուստ, իսկ ավելի ներքև, տախտակի ստորին մասի երկու կողքերին փորագրված են հաջորդաբար իրար մեջ կամարներ առաջացնող ուռուցիկ զարդաձևեր:

Թրծած տախտակի երեսին, տարբեր տեղերում արված փոսիկները նման են համաստեղության: Դրանի հնագույն բնակիչները գուցե այդ փոսիկներով ատրուշանի սրբազան տախտակի վրա պատկերացրել են համաստեղություններից մեկը՝ Հայկ-Օրիոնը:

Կոթողի առաջ մի բոլորակ տարածություն կա, որ եզրափակված է քարերի բարձրադիր շարքով: Այդ հարթակն ատրուշանի համար ծառայել է իբրև կրակարան: Պեղումների միջոցին հարթակն ամբողջովին ծածկված էր մոխրի շերտով, կենտրոնում՝ քրեղանի նման, բայց պատվանդանավոր մի անոթ, որի մեջ, ըստ երևույթին, խունկ են ծխել ծիսակատարությունների ժամանակ (նկ. 98):

1962 թ. զգալիորեն ընդարձակեցինք մեհյանի շրջապատի ուսումնասիրվող տարածությունը: Պեղեցինք մեհյանից դեպի արևելք բնկած —11 և —10 գծերի —8, —9 և —10 քառակուսիները, մոտ 150 քմ մակերեսով: Նախորդ տարիներում պեղվել էին այդ քառակուսիների վերին շերտերը. այժմ նրանց մակերեսը հավասարեցրինք ատրուշանի հատակին:

Գտնվեցին մի շարք առարկաներ՝ մեծ ու փոքր կարասների, ինչպես նաև կճուճների բազմաթիվ բեկորներ, հավի ձվի մեծության երկարավիզ սև փայլուն կճուճներ, փոքր ապարանջանի շափի ոսկրե օղակ, սրածայր ոսկրե բրիչներ, որոնցով թրծելուց առաջ բրուսը նախշեր է փորագրել կավանոթների վրա, կոկիչ շեշաքար, որով հղկել է կավանոթների արտաքին ու ներքին երեսները՝ շորանալու ընթացքում, ինչ-որ նյութից պատրաստած եռանկյունաձև ծակոտկեն զարդ, որ, հավանաբար, ագուցված է եղել փայտե մի առարկայի, երկաթե եռաթև նետասլաք, դաշույնի երկաթե շեղբ, տեգի երկաթե ծայրեր՝ սնամեջ կոթառով, ծայրերին պղնձե օղակներ ունեցող երկաթե մի քանի ձողեր, պղնձե ձող, բրոնզե փոքրիկ ապարանջան։ Այդտեղ գտնվեցին նաև գլանաձև մի կնիք և ուլունքներ, որոնցից մեկը՝ ագաթից։

Այս առարկաներից շատերը կարևոր են ատրուշանի և, ընդհանրապես, չորրորդ շերտի ժամանակը որոշելու համար։

Երկաթե զենքերի և այլ առարկաների առատությունն արդեն վկայում է, որ Դվինի չորրորդ շերտը միջնաբերդում երբեք չի կարող պատկանել բրոնզի դարին, ինչպես պնդում են հնագետներից ոմանք²⁰։

1963 թ. ընդարձակ պեղումներ կատարեցինք ատրուշանի ան, մասամբ նաև հս կողմերում։ Այդտեղ էինք կենտրոնացրել մեր հիմնական ուժերը, որպեսզի կարողանանք որոշել հեթանոսական մեհյանի և նույն շերտում գտնվող բազմաթիվ առարկաների ժամանակը։

Հստ գոյություն ունեցող տեսակետների, Դվինի չորրորդ շերտի մշակույթը ուշ բրոնզեդարյան է՝ XII—X դդ. մ. թ. ա.։ Սակայն այդ տեսակետն արտահայտողները միայն դամբարաններ են պեղել և առանց բնակավայրի ուսումնասիրման չի կարելի ժամանակի մասին որոշում կայացնել, մանավանդ, ամեն դեպքում չէ, որ մշակույթները կատարելագործվում են հաջորդաբար, առանց խտտորումների, ուղիղ գծով։ Ընդհակառակը, բազմաթիվ փաստեր ունենք այն մասին, որ մշակույթները հաջորդում են հսկայական ելևէջերով, մանավանդ Հայաստանում, որտեղ այդ ելևէջները սերտորեն կապված են երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական անկայուն պայմանների հետ։

Այդ պատճառով որոշեցինք, առանց կանխակալ կարծիքի, մեհյանի շուրջը լավ ուսումնասիրել և փաստերի հիման վրա որոշել ժամանակը։

Ակներև էր, որ այն շերտը, որի մեջ մեհյանն էր, պատկանում էր այն ժամանակներին, երբ քաղաքը դեռևս գոյություն չուներ, այսինքն՝ VI—V դդ. մ. թ. ա.։ Մեր այս ենթադրությանը եղան առարկողներ։ Մեր տեսակետը ապացուցելու համար անհրաժեշտ են զորավոր և անհերքելի փաստեր։ Հասկանալի է, որ այդպիսի փաստեր մենք ձեռքի տակ կունենանք հետագայում, երբ այդ, այսպես կոչված 4-րդ շերտը կարողանանք պեղել ամբողջությամբ, որը երկար տարիների գործ է։



98. Սրբազան մեհյանի ընդհանուր տեսքը պեղումներից հետո։

Նախորդ տարիներին մեհյանի մոտերքում դուրս եկան կավանոթների բազմաթիվ բեկորներ և ամբողջական առարկաներ, բայց մետաղե իրեր համարյա չկային։

Այս հատվածում մեծ նորություն էր, որ կավանոթների հետ միասին գտնվեց մետաղաձուլական մի հետաքրքիր արհեստանոց։ Դուրս եկան բազմաթիվ առարկաներ՝ ձիու սանձի մասեր, դաշույններ, պատրաստի և կիսապատրաստ ճանկավոր նետասլաքներ, կապարճ, սուր, բոլորն էլ բրոնզից կամ պղնձից։ Գտնվեցին նաև երկաթե առարկաներ (դանակ, նիզակի ծայր)։ Կարևորն

²⁰ См. А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., стр. 178.

այն է, որ այդտեղ ի հայտ եկան նաև մետաղի հալոցներ՝ քարից և կավից, ձուլվ բրոնզ, որից առարկաներ են պատրաստել, հալոցի մեջ ձուլված պղնձի զանգված և այլն:

Այս արհեստանոցի գյուտը Դվինի հնագույն բնակավայրում կարևոր նշանակություն ունի մեզ համար, որովհետև այդպիսի արհեստանոց մինչև այժմ մեզ հայտնի չի եղել:

Այդ մետաղաձուլական արհեստանոցից քիչ դեպի ամ, —7—i և —8—i քառակուսիներում, մի այլ արհեստանոց բացվեց, որտեղ գտնվեցին հազարավոր մանր ուլունքներ՝ պատրաստված ապակենման նյութից և խոշոր՝ բնական քարերից (խալցեդոն, սարդիոն, մարմար և այլն), շմշակված բազմաթիվ խխունջներ, որ դարձյալ հավաքված էին ուլունքներ պատրաստելու նպատակով: Արհեստանոցում ի հայտ եկավ նաև քուրա: Արհեստանոցի գոյության ապացույցներից մեկն էլ ուլունքներ ձուլելու քարե կաղապարի գյուտն էր, որի մեջ մետաղից (ոսկուց կամ բրոնզից) են ուլունքներ ձուլել:

Մանր ուլունքները արտադրական խոտան են, նրանցից շատերը կպած են միմյանց, կամ անցք չունեն:

1964 թ. բավականին ընդարձակեցինք չորրորդ շերտի տարածությունը «Ջրավազանի» շրջապատում: Պեղումները ամռանը և աշնանը կատարել ենք —e, —f, —g գծերի 6-ից մինչև —13 քառակուսիները, ընդամենը 430 քառ. մետր մակերեսով: Այդ տարածությունում, որ նախապես պեղված էր միայն վերին երկու շերտերը, խորացանք մինչև չորրորդ շերտը և գետնի մակերեսը հավասարեցրինք մեհյանի հատակի հետ, որ բլրի սկզբնական բարձրությունից ունի մոտ 6 մետր և ավելի խորություն, իսկ նոր պեղված շերտի հաստությունը 2,5—3,0 մետր է²¹:

Պեղումների ընթացքում շերտի վերին մասերում, որ պետք է անտիկ շրջանին վերագրել, գրտնվեցին կարմրախեցի մեծ կավանոթների բեկորներ, գունազարդված կարմիր ներկով (տախտ. XII, 1):

Այդ նշանակում է, որ Դվինի բլուրն ունեցել է ինչպես VI—V դդ., այնպես էլ նախաքրիստոնեական շրջանի մշակույթ, որը կարելի է թվագրել մ. թ. ա. III դարից մինչև մեր թվագրության II—

III դարերը: Այդ շրջանի հնագույն մնացորդները կարմրաերև խեցանոթներն են, իսկ վերջին շրջանին կարելի է վերագրել քարե արձանի գլուխները, որոնց թիվն, ինչպես արդեն նշել ենք, գրեթե մեկ տասնյակի է հասնում:

Այդ շերտի գոյության անհերքելի ապացույցն է քաղաքի կենտրոնական թաղում, մեծ եկեղեցու շրջապատում, միանավ բաղիլիկ տաճարի տակ և կաթողիկոսի պալատի հիմքերից ավելի ներքև անտիկ շրջանի կարասային թաղումների ընդարձակ դամբարանադաշտը:

Նշանակում է Դվինում, քաղաքի հիմնադրումից առաջ, բլրի գագաթին եղել է մի բնակավայր, որն, ըստ երևույթին, իր գոյությունը շարունակել է հետուրարտական ժամանակաշրջանում, իսկ քաղաքի կենտրոնական թաղամասն այդ բնակավայրի դերեղմանատեղին է եղել:

Չորրորդ շերտի մեջ գտնվել են բազմաթիվ գործիքներ և արհեստանոցային պարագաներ: Կարևորն այն է, որ ամբողջ շերտը ոչ միայն մեր պեղած տարածության վրա, այլև բլրի գագաթի մյուս տեղերում հնոցի բովով անցած կարմրավուն հող է, վառված հողի մի հսկայական զանգված, որ առաջացել է շարունակաբար այրվածքի մնացորդները հնոցի միջից դուրս թափելու հետևանքով: Այդ շերտը մոխրաշերտ է. երբեմն հողի միջից դուրս են գալիս խարամի կույտեր, ածխի հետ խառն:

Չորրորդ շերտը Դվինի բլրի վրա ամենուրեք ճանաչելի է իր շիկակարմիր դույնով: Պեղումների ժամանակ ոչ միայն բլրի հր և ամ կողմում, երբ առիթ է լինում մի քիչ ավելի խորանալու վերին, քաղաքային շրջանի շերտերի մեջ, այլև բլրի արևելյան ծայրամասերի հողերում ամենուրեք այդ շերտի հետքերը երևում են: Այդ նշանակում է, որ բլուրն ամբողջովին բնակեցված է եղել այդ հին ժամանակներում:

Այդտեղ հնոցների գոյության բազմաթիվ ապացույցներ կան: Այսպես. ջրավազանի չորրորդ հատվածում —12—e քառակուսում, մոտ 4,5 մետր խորության մեջ գտնվեց արհեստանոցային երկձյուղանի փուքսի հրակայուն կավե փող (№ 2305/86) (նկ. 99): Ծիշտ նույնանման փուքսի մաս գտնվեց նրանից ոչ հեռու ջրավազանի երրորդ հատվածում, —12—g քառակուսում, 3,5 մետր խորությունում:

Գտնված առարկաներից երևում է, որ այդտեղ եղել է մետաղաձուլական արհեստանոց: Նույն տեղում գոյություն է ունեցել նաև բրուտի մեծ արհեստանոց: Այդ են վկայում գտնված գործիքները՝

²¹ Ինչպես արդեն ասել ենք, այդ շերտի վերին մասերում երբեմն ի հայտ էին գալիս քարաշար հիմնապատերի մնացորդներ, որոնք մենք միջանկյալ շերտի էինք վերագրում: Հետագայում պարզվեց, որ դրանք քաղաքի սկզբնական շերտին են պատկանում և IV դարի կառուցվածքների մնացորդներ են:

քարե կոկիչները (նկ. 100), որոնցով դեռևս չթրծած մակերեսն են հարթել, ողորկել, ինչպես նաև ոսկրե սրածայր գործիքները, որոնցով փորագրել և նախշադարձել են անոթները և այլն: Էլ չենք խոսում անոթների բազմաթիվ բեկորների մասին, որոնք սովորաբար լիափված են լինում արհեստանոցների շրջապատում և թափոնքի տեղերում:



99. Երկնյուղ փութի հրակայուն կավե փողեր, գտնված միջնաբերդի ստորին շերտի պեղումներից:

ղապարի զարդաձևերը խիստ հստակ են և բնորոշ իրենց դարաշրջանի համար: Հասկանալի է, որ այդտեղ գոյություն է ունեցել նաև ոսկերչի արհեստանոց:

Հայտնաբերվեցին սրաքար, իլիկի գլուխներ, աղորիք, երկաթե նետասլաքներ, տեգի ծայր և պղնձե առարկաներ:

Այդ շերտում ի հայտ եկավ նաև ջրաղացքար, կոտրատված վիճակում, որի գյուտը սկզբում մեզ դարձանք պատճառեց, որովհետև բլրի գագաթին ջրաղաց երբեք չէր կարող լինել: Սակայն շուտով գլխի ընկանք, որ դա ոչ թե ջրաղացքար է, այլ աշխատանոցում ինչ-որ նյութ մանրացնելու, ավելի ճիշտ, աղալու աղորիք, ճիշտ ջրաղացի սկզբունքով շինված, միայն թե հանքանյութը աղացել են կենդանական ուժի (մարդու կամ կենդանու) միջոցով, բոլորապատույտ ընթացքով: Նշանակում է, որ այդ քարը ևս արհեստանոցային հարմարանքների թվին է պատկանում:

Ջրավազանի շրջապատի երկրորդ հատվածում, — 8 — ի քառակուսում, 5, 6 մ խորության մեջ ի հայտ եկավ լեռ քարե մի տախտակ. բարձրությունը՝ 58 սմ, լայնությունը՝ վերին մասում՝ 47 սմ, իսկ նեղացող ստորին եզրի մոտ՝ 33 սմ, վերին մասը կամարաձև, երեսը հարթ և տափակ, իսկ թիկունքը մի քիչ ուռուցիկ և ոչ այնքան ողորկ:



100. Քարե կոկիչներ, գտնված նույն շերտում:

Ջրավազանի առաջին հատվածում 5,7 մետր խորության մեջ գտնվեց ոսկե զարդեր ձուլելու քարե մի գեղեցիկ կաղապար, մի երեսին երկու, իսկ մյուս երեսին երեք փոսիկներով (նկ. 101): Կա-

Այդ տախտակը գտնվեց իր սկզբնական դիրքում, կանգուն վիճակում, առջևում՝ մի հարթակ, իսկ կողքերին՝ ձախ կողմում (ամ) քարե շարվածք, իսկ աջ կողմում հում մեծ աղյուսներ էին շարված

կամ՝ կավե ծեփվածքով հարթեցրած: Տախտակի թիկունքն ամրացված էր քարե շարվածքով:

Եթե այդ տախտակը գտնեինք ընկած և տեղահան արված, կկարծեինք, թե աղորիք է, ինչպիսիք շատ են ի հայտ գալիս այդ շերտի մեջ: Միայն թե զարմանք պետք է պատճառեր նրա անսովոր մեծությունը: Բայց այս դիրքում, ետևի շարվածք-

ներով միասին, այդ քարը երբեք չէր կարող իբրև աղորիք ծառայել: Դժվար թե այն արհեստանոցում լինեի որևէ հարմարանք կամ գործիք:

Ամենից հավանականն այն է, որ կամարավոր պլիտով այս քառակող տախտակը, որի երեսը հարթված է աղորիքի նման, ինչ-որ պաշտամունքի առարկա է եղել՝ կապված երկրագործության հետ:


1965 թ. շարունակեցինք ջրավաղանի շրջապատի պեղումները 4-րդ շերտում, առաջին և երրորդ հատվածներում և մի նոր հատված էլ սկսեցինք նախորդներից դեպի հս-ամ ընկած տարածության վրա, մոտավորապես —e—13, —e—14, —f—13 և —f—14 քառակուսիների սահմաններում: Թրծած աղյուսաշար պատերից բացի, կործանված հում աղյուսե պատերի զանգվածների մեջ դուրս եկավ խարամ և մոխիր: Այստեղ եղել է 4-րդ շերտին պատկանող հնոց: Ի հայտ եկան կավանոթների բազմաթիվ բեկորներ, որոնք կարելի է մասամբ վերականգնել:

1966 թ. չորրորդ շերտի պեղումները ժամանակավորապես դադարեցրինք, որովհետև հում աղյուսե մեծ շինության տակ և չորրորդ շերտից վերև ի հայտ եկավ մի այլ հիմնական շերտ, որ վերաբերում է քաղաքի հիմնադրման ժամանակին և իր մեջ պարունակում է Արշակունի հայ թագավորների պալատական կառույցների մնացորդներ:

Պետք է հիմնովին ուսումնասիրվի այդ շերտը, որ վերևից հաշված երրորդն է միջնաբերդում և հետո միայն բացվի չորրորդ շերտը, որ, ինչպես ասվեց, վերաբերում է քաղաքի հիմնադրումից առաջ այդտեղ գոյություն ունեցած հնագույն քնակավայրին²²:

²² Հետագա տարիներին վերսկսվեցին չորրորդ շերտի պեղումները, որոնց արդյունքները հրատարակվելու են Կարինե Քուշնարյանի աշխատության մեջ:

101. ա. Կաղապար քարից, գտնված ստորին շերտից: Բ. Նույն կաղապարի հակառակ կողմը:



1. ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատության Ա հատորի 237—238 էջերում համառոտ տեղեկություններ ենք հաղորդել 1937—1950 թթ. Դվինում պեղումների ժամանակ գտնված ապակե առարկաների մասին: Այն ժամանակ դեռևս քիչ առարկաներ էին գտնված, որոնց մասին միայն նախնական տեղեկություններ ենք կարողացել տալ, չիմանալով այն մեծ դերի մասին, որ ապակին ունեցել է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքի տնտեսության մեջ: Հետագա 20-ից ավելի տարիների ընթացքում պեղմամբ ի հայտ եկան հազարավոր ապակե առարկաներ, որոնցից մոտ 600-ը ամբողջական կամ այնպիսի վիճակում, որ կարելի է գաղափար կազմել նրանց ամբողջության մասին: Սակայն պեղածո նյութը իր հետ առաջ բերեց նոր խնդիրներ և նոր հարցեր, որոնք ուսումնասիրողից պահանջում են պատասխան:

Եթե առաջին հատորի հրատարակման ժամանակ հնարավոր էր պնդել, որ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքում գործածվել են ապակե առարկաներ, այդ մեծ հայտնագործություն էր համարվում, իսկ այժմ Դվինի պեղումներից գտնված առարկաների թիվն անչքան շատ է, որ հնարավորություն է տալիս ավելի մանրամասն խոսելու այդ հարցի մասին և պարզելու արտադրության տեղը և ժամանակը:

Հարցն այն է, որ մինչև այսօր ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել ապակու արտադրության կենտրոնի մասին, այն էլ առանց բավարար հիմքերի, ուստի և միմյանց հակասող և իրարամերժ կարծիքներ են առաջ եկել Առաջավոր Ասիայի, այդ թվում նաև Հայաստանի ապակեգործության վերաբերյալ:

Մեր կարծիքով, սխալ են բոլոր այն ուսումնասիրողները, որոնք ապակու տեսակները կապում են միայն մի կենտրոնի հետ, մանավանդ, որ առարկաների ճնշող մեծամասնությունը պատահական կերպով են ի հայտ եկել, և ոչ թե արդյունք են կանոնավոր պեղումների: Հետևապես, նրանց ծագման և ժամանակի որոշման հարցերը միշտ կասկածելի են: Դրան հակառակ Դվինի ապակին,

գրեթե առանց բացառության, դուրս է եկել կանոնավոր կերպով կատարվող պեղումների հետեւանքով և յուրաքանչյուր դեպքում ունի իր շերտի (դարաշրջանի) վերաբերյալ հաստատուն տվյալներ, մանավանդ, որ նույն շերտում գտնվել են նաև իրենց թվականն ունեցող դրամներ:

Այս բոլորից անկախ, այժմ այլևս ապացուցված կարելի է համարել Դվինում ապակեգործության գոյությունը IX—XIII դարերում: Ա հատորում ապակեգործության գոյությունը Հայաստանում հաստատելու համար դիմել էինք գլխավորապես գրավոր վկայություններին և մեջ էինք բերել երկու վկայություն, որոնցից մեկը վերաբերում էր Հայաստանում քրիստոնեության մուտքի ժամանակաշրջանին, այսինքն երրորդ դարի վերջերին, իսկ երկրորդը՝ միջնադարին: Այժմ ապակե առարկաների թիվը Դվինում այնքան շատ է, որ գրավոր տեղեկությունները կարող են միայն օժանդակ նշանակություն ունենալ:

Ազաթանգեղոսը պատմում է, որ Հռիփսիմյանց քրիստոնյա կույսերը, երբ հռոմեական Դիոկլետիանոս կայսեր կողմից հալածվելով փախչում են Հայաստան և Վաղարշապատ քաղաքի հս-ան կողմում պատսպարվում են մի հնձանի մեջ, նրանցից մեկը ապակե ուլունքներ էր պատրաստում և դրանով իրենց աղքատիկ պարենն էր հայթայթում. Հռիփսիմյանց կույսերը «Գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետեւ եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանոյն, որ կան շինեալ հիւսիսոյ յարեւելից կուսէ. և կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին. և ոչ ինչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա զոր ունէին, բայց մի ոմն ի նոցանէ ուներ արուեստ ապակեգործութեան՝ առնել ուլունս ապակեղենս և տալ զինս ընդ կերակրոյ աւուրն պարենի ոռճկի»¹:

Ապակեգործության վերաբերյալ մյուս գրավոր տեղեկությունը վերաբերում է միջնադարին: Բժըշ-

¹ Ազաթանգեղոս, էջ 84:

կական ձեռագիր բառարաններից մեկում ապակե-գործության մասին կարդում ենք. «Ապակի (գրքաված է ապիկի) հո (հոռմայերեն)՝ կադմինայ, արաբ (արաբերեն)՝ դուճաճ, պս (պարսկերեն)՝ ապակինայ: Աղեկն ի Սիս լինի: Ի Սիս որպէս աւազ կայ, կու հալեն այնտեղ ալ կու շինեն շատ ոք»²:

Այս գրավոր վկայությունից տեղեկանում ենք, որ Հայաստանում ապակեգործությունը բրուտի արհեստի նման տարածված է եղել, բայց լավագույնը Սիս քաղաքի ապակին է համարվել: Հասկանալի է, որ վկայությունը վերաբերում է ավելի ուշ ժամանակի, հավանաբար XIV կամ XV դդ., երբ արդեն Դվինը կործանված էր: Ալքիմիական ձեռագրերում ապակե անոթների նկարագրություններ շատ կան: Այդ առարկաները օգտագործվել են նյութերի պահպանման, թորման և այլ գործողությունների ժամանակ, անգամ կան նրանց նկարները, ունեն նաև անուններ, որոնք գործ են ածվել հայերենում:

Դվինում գտնված ապակե անոթներից շատերի քիմիական փորձանոթ լինելը հնարավոր չէ պարզել, բայց կան առարկաներ, որոնք միայն փորձանոթ կարող են լինել, դրանք առանց դժվարության տարբերվում են մյուսներից և շատ նման են արդի փորձանոթներին:

Սակայն կան և այնպիսիները, որոնք կարող են քիմիական նյութերի պահպանությանը ծառայած լինել, բայց իրենց ձևերով ոչնչով չեն տարբերվում սովորական մեծ և փոքր ապակե տակառիկներից (բալոն), որոնց մեջ կարող էին պահել թթվուտներ, ներկեր և այլ հեղուկ կամ շոր նյութեր: Այդ նույն ձևի անոթները մի այլ տան մեջ կարող էին ծառայել այլ նպատակների: Այդ պատճառով էլ դրանց նպատակի ճիշտ որոշումը դժվար է: Բոլոր դեպքերում պետք է ենթադրել, որ այդ անոթները ընդհանուր առմամբ կերակրի կամ այլ ուտելիքի շին ծառայել, որովհետև մեզ ծանոթ են ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ պահելու կամ գործածելու կավե և փայտե անոթների ձևերը: Այդ նույն առարկաները ծառայել են նաև դեղեր պատրաստելու և պահպանելու համար: Ապակուց են եղել ալքիմիայի մեջ օգտագործվող ալամպիկ, պոտ և պարպատ կոչվող անոթները, ինչպես նաև շատ այլ առարկաներ, որոնք ալքիմիական ձեռագրերի մեջ հանդես են գալիս սովորական անուններով, ապիկի պուտուկ, ապիկի սալ, ապիկի կրթխայ և այլն³:

² Կ. Ղաֆադարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 123:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 72—73:

Ձեռագրերից մեկում գրված է. թասղիտին (մաքրելուն, զտելուն) ծառայող վերին ամանն «կամ ապիկի լինի, կամ ապիկած»: Այդ նշանակում է, որ թորելու ծառայող երկու անոթներից վերինը պետք է լինի ապակուց պատրաստած և կամ ջնարակած կավից, որ հնում կոչվում էր ապիկած, այսինքն ջնարակած աման⁴:

Մի այլ ձեռագրի մեջ գրված է, որ այս արվեստի (այսինքն՝ ալքիմիայի) մեջ գործածվում են 8 տեսակ աման՝ ապակուց պատրաստած կամ կավից, բայց վերջինը պետք է լինի ջնարակած. «Եւ երկու ցեղ ամաններ՝ կամ ի հողե, կամ ապիկե»⁵:

Դվինում գտնված ապակյա անոթները պատրաստված են մի քանի տարբեր եղանակներով: Բազմաթիվ առարկաներ աղատ փշելու եղանակով են ստացվել, բայց կան նաև իրեր, որոնք պատրաստված են կաղապարի մեջ՝ դարձյալ փռչելու միջոցով: Դրանք հաճախ իրենց վրա ունեն ուռուցիկ կամ փոս ընկած զարդաձևեր, որոնք ըստ ստացվել են կաղապարի պատերին փորագրված զարդաձևերի շնորհիվ: Բացի դրանից կան նաև այլ անոթներ, որոնք ունեն վերադիր մասեր և վերադիր զարդարանքներ: Շատ տարածված են եղել վերադիր զարդաթելերը, որոնք երբեմն ալիքաձև, իրար զուգահեռ գծեր են կազմում կամ գոտիների նման անկյունագծեր: Հանդիպում են նաև վերադիր վարդյակներով անոթներ, փորագիր կտրվածքով զարդաձևեր: Հասկանալի է, որ անոթները փորագրել են պատրաստելուց հետո: Փորագրություններն այնքան խճողված ու բարդ ձևեր չունեն, ինչպես մերօրյա բյուրեղապակե անոթները, և ոչ էլ այնքան մեծ առարկաներ են, ինչպիսիք այժմ են պատրաստում: Դրանք փորագիր անոթներ են՝ չափավոր գծազարդերով, որոնք խիստ հաճելի տպավորություն են գործում (նկ. 102, ներդիր):

Դվինում գտնված ապակե կենցաղային առարկաները կարելի է բաժանել մի քանի խմբերի: Շատ են այն անոթները, որոնք օգտագործվել են ճաշասեղանի վրա: Դրանք բաժականման լայնանիստ, ուղղահայաց պատերով թասեր են, բավականին հաստ ապակուց, որոնք գինու և օշարակների համար ծառայել են իբրև գավաթներ: Դրանցից շատերի կողերին կան ներս ընկած կլոր կամ երկարավուն զարդաձևեր, նախշված կաղապարի միջոցով (նկ. 103, ներդիր):

Շատ են զանազան մեծ և փոքր սրվակները, անոթները, որոնք սեղանի վրա ծառայել են քացախի կամ այլ հեղուկների համար: Կան աղաման-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 73:

⁵ Նույն տեղում, էջ 72:

ներ, անուշեղենի կողովածե զարդանոթներ, ապակե բաժակներ, որոնց շրթերը երբեմն ետ են ծավաթ և կամ ուղղակի կտրված են առանց լրացուցիչ մշակման: Գտնված առարկաների թվում կան նաև ծանծաղ, բայց բավականին մեծ շրջան կազմող կողերով թասեր, կիսազնդած թասեր, ունկավոր և ունկ չունեցող մեծ ու փոքր սափորներ, բարձրադիր և խոքրիկ ձիթաճրագներ, աշտանակած իրեր, գավեր, ըմպանակներ, ամբողջական տափաշներ նեղ բերանով և օղակավոր կախիկներով, ճիշտ այնպիսիները, որպիսիք այժմ դինավորներն են օդտագործում: Գտնվել է նաև այգպիսի տափաշիչ պատրաստված կավից (տախտ. XXXII, 1—6):

Հայտնաբերվել են բավականին մեծ տարողությամբ լայնափոր, բայց նեղբերան ապակե անոթներ, որոնք, հավանաբար, ծառայել են քիմիական և բժշկական նյութեր պահելու համար: Մեղ լավ ծանոթ են բոլոր տեսակի այն անոթները, որոնց մեջ պահել են դինին, օշարակները, բուսական և կենդանական յուղերը: Սակայն հայտնի է, որ ապակե այգրան մեծ անոթներ չեն գործածվել կենցաղային նպատակով:

Ապակին դյուրաբեկ և շուտ փշրվող լինելու պատճառով մեծ մասամբ գործածվել է այնտեղ, որտեղ և արտադրվել է, իսկ եթե չի արտադրվել, նրա փոխարեն օգտագործվել են կավանոթների տարբեր տեսակներ:

Ապակե զարդերը ի հայտ են գալիս ամենուրեք և մեծ թվով: Դրանք զլխավորապես ապարանջաններ են, օղակածե մատանիներ, կախիկներ, խաշեր, կոճակներ, ուլունքներ, մանրուլունքներ: Հնում վերջիններս հագուստի վրա շարքեր էին կազմում կամ զանազան բանվածքների ու գործվածքների վրա իբրև զարդ էին գործածվում, կարող էին նաև միջազգային առևտրի առարկա հանդիսանալ:

Հայտնի է, որ Երուսաղեմ, Քրիստոսի գերեզմանին ուխտ գնացողներն այնտեղից իրենց հետ բերում էին բազմապիսի ապակե զարդեր՝ ուլունքների շարաններ, ապակե ապարանջաններ, ականջօղեր և այլն ու նվիրում մերձավորներին և հարեւաններին:

Այդ պատճառով ապակե այդ մանր զարդերի արտադրության տեղի հարցը պետք է առանձնացնել և իբրև առանձին խնդիր քննել: Հասկանալի է, որ այգպիսի առարկաներ կարող են ավելի շատ հայտնաբերվել այն վայրերում, որտեղ գործածության մեջ են եղել և ոչ այնտեղ, ուր արտադրվել են:

Մեր ասածից չպետք է ելրակացնել, թե բո-

լորովին ժխտում ենք տնտեսական և գեղարվեստական ապակու որոշ տեսակների ներմուծված լինելը: Քավ լիցի: Կան ապակյա հատուկենտ առարկաներ, որոնք գտնվել են Դվինում, բայց տեղական արտադրության չեն: Օրինակ: 1960 թ. միջնաբերդի հորերից մեկում, բազմաթիվ առարկաների հետ միասին դուրս եկավ գունազարդված անոթ, նեղ բերանով, որի կենտրոնում պատկերված է աղեղավոր լարային գործիք նվագող մի մարդ. նա գործիքը դրել է ուսին և նվագում է ճիշտ այնպես, ինչպես եվրոպացիներն են նվագում: Պարզ է, որ այդ անոթը տեղական ծագում չունի և բյուզանդական է, քանի որ արևելյան երկրներում, որոնց թվում նաև Հայաստանում, ջութակատիպ գործիքը նվագում են ուղղահայաց դիրքով՝ ծնկին հենած (նկ. 104, ներդիր):

Եթե այդ առարկան բյուզանդական չէ, ապա պետք է ենթադրել, որ արտադրվել է Հայաստանի բյուզանդական ազդեցության ներքո գտնվող մասերում: Բոլոր դեպքերում ջութակ նվագողի պատկերով այդ բացառիկ առարկան արժեքավոր է ընդհանուր հնագիտության համար:

Անշուշտ օտար ծագում ունի նաև կաղապարի մեջ ճնշմամբ պատրաստած հատիկավոր ապակու ծանծաղ և փոքրադիր պնակներից մեկը, որ եզակի օրինակ է Դվինում, եթե հաշվի չառնենք նման մի անոթի երկու փոքրիկ բեկորները:

Նման տիպի առարկաներ հայտնի են մի շարք օտար երկրներում: Այդ առարկաների պատրաստման եղանակը բոլորովին այլ է, քան մյուս անոթներինը. ապակե կլորակներ են պատրաստում, որոնք լցնում են կաղապարի մեջ և ջերմության տակ սեղմում կաղապարի մյուս կեսով: Ապակու կլորակ հատիկները, որոնք երկգույն են լինում (ասենք միջուկը սպիտակ, արտաքին երեսը մուգ գույնի), պատրաստելիս անոթի մեջ կլորակ խալեր են առաջանում⁶:

Ուսումնասիրողների կարծիքով, այդ երկու անոթներն էլ պատկանում են XI դարին:

Դվինի միջնադարյան ապակին իրավամբ բոլոր ուսումնասիրողները վերագրում են IX—XIII դարերին:

Քաղաքի կենտրոնական թաղում գտնված առարկաները, ինչպես նաև դրամներն ու ջնարակած խեցանոթներն ավելի հին են, քան միջնաբերդի հորերում ի հայտ եկածները: Հարցն այն է, որ Դվինի միջնաբերդի շենքերն, առանց բացառության,

⁶ Տե՛ս նկ. № 36:

⁷ Պատրաստման եղանակի մասին տե՛ս «Archaeology» հանդեսը, 1959, № 1:

կործանվել են 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ և պալատական հին շենքերի փլատակների տեղում բազմաթիվ շենքեր են կառուցվել, որոնց հորերից ի հայտ են գալիս միջնադարյան անոթներ ու նրանց բեկորները. Այդ շենքերն ավերվել են քաղաքի վերջնական կործանման ժամանակ՝ XIII դարում: Հետևապես, այդ շերտի մեջ գտնված առարկաները, եթե շերտը խաթարված չէ որևէ դեպքում, պատկանել են IX դարի վերջերից սկսած մինչև XIII դարի կեսերին: Այդ նույն դարերին ենք վերագրում նաև այնտեղ գտնված ապակին:

Ավելի մանրազնին քննությունները հնարավորություն են տալիս այս դարերի ապակու հին օրինակները ավելի ուշ ժամանակի օրինակներից տարբերելու և շատ առարկաների պատրաստման ժամանակը ավելի որոշակի դարձնելու իմաստով:

2. ՊԵՏԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ԴՎԻՆՈՒՄ

Հայ միջնադարյան մատենագիր Սեբեոսը (VII դ.) իր «Պատմության» մեջ գրում է, որ պարսկական լծի դեմ Հայերի 572 թ. ապստամբությունից առաջ, սյունյաց իշխան Վահանը ցանկանալով Սյունիքն անջատել Հայաստանի կենտրոնական իշխանությունից, դիմում է պարսից խոսրով արքային (531—579), որպեսզի նա թույլ տա Սյունիքին վերաբերող դիվանը (արխիվը) Դվինից տեղափոխել Փայտակարան. «Յայնժամ, յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկած ի Հայոց՝ անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դրւնայ ի Փայտակարան քաղաք և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի ևս կոչեսցի անուն Հայոց ի վերա նոցա: Եւ կատարէր հրամանն»⁸:

Ժամանակակից մատենագրի այս տեղեկությունը հաստատուն վկայություն է այն մասին, որ Դվինում մարզպանության շրջանում (V—VII դդ.) գոյություն է ունեցել պետական այնպիսի դիվան, որի մեջ նախարարություններն ունեցել են իրենց առանձին բաժինները:

Սակայն հետազայում Դվինը մի քանի անգամ մեծ ավերածությունների է ենթարկվել արաբների արշավանքներից, երկրաշարժից, սելջուկյան և

Այսպիսով եզրակացնում ենք, որ Հայաստանում միջին դարերում գոյություն է ունեցել ապակեգործություն, որի գլխավոր կենտրոններից մեկը IX—XIII դարերում եղել է Դվին քաղաքը:

Գտնված հազարավոր առարկաները ցույց են տալիս, որ ապակե իրերի ճնշող մեծամասնությունը տեղական ծագում ունեն, իսկ ներմուծված առարկաների թիվը սահմանափակ է: Գրավոր աղբյուրներից իմանում ենք, որ Դվինի կործանումից հետո ապակեգործությունը Հայաստանում շարունակվել է և տեխնիկական լավագույն ապակին արտադրվել է Կիլիկիայի Սիս քաղաքում:

Միջնադարյան ապակեգործությունը ժողովրդական տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել:

Թուրք-թաթարական արշավանքների ժամանակ, և կասկածելի էր, որ պեղումների ընթացքում որևէ բան կգտնվեր այդ դիվանից, մանավանդ, որ իր գոյության վերջին դարերում (X—XIII դդ.) Դվինն այլևս Հայաստանի վարչական կենտրոնը չէր, և արխիվն այնտեղ չէր կարող լինել: Բացի այդ, Դվինի խոնավ հողաշերտերի մեջ, որ ամբողջությամբ կավահողից է կազմված, ոչ մի տեսակի թուղթ կամ մագաղաթ չէր կարող դիմանալ 10 և ավելի դարեր:

Այնուամենայնիվ, Սեբեոսի վերոհիշյալ տեղեկությունը ինչ-որ չափով մեզ զգուշացնում է, որ Դվինում երբեմն գոյություն ունեցած դիվանի վերաբերյալ պետք է ուշադիր լինել:

Սեբեոսի տվյալներից անկախ, գիտական լայն շրջաններին ծանոթ էր նաև «Գիրք թղթոց» փաստաթղթերի ժողովածուն, որ, դժբախտաբար, տուրպագրված է բազմաթիվ վրիպակներով և այլ կարգի սխալներով¹⁰: Այդ գրքի մեջ հավաքված են դավանաբանական և եկեղեցական հարցերին նվիրված փաստաթղթեր, որոնք կարևոր նշանակություն ունեն միջնադարի պատմության ուսումնասիրության համար՝ սկսած VI դարից: Ժողովածուն ժամանակին կազմվել է Դվինի կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի հիման վրա և հետագայում ստվարացել նորանոր նյութերով:

Եթե մինչև այժմ կաթողիկոսական դիվանի վերաբերյալ տեղում կատարած մեր որոնումները շոշափելի արդյունք չեն տվել, հավանաբար այն պատճառով, որ հայոց կաթողիկոսարանը Դվինից

⁸ Դվինի միջնադարյան ապակու և նրա թվագրման մասին առավել մանրամասն տե՛ս Հո. Զանփաղյան, Դվինի միջնադարյան ապակին, IX—XIII դդ., Երևան, 1974, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 7:

⁹ Սեբեոս, էջ 40:

¹⁰ Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

փոխադրվելու ժամանակ (893 թ.) դիվանն ել տեղափոխել են նոր կենտրոններ: Պետական դիվանի որոշ մնացորդներ հասել է մեր ձեռքը վերջին տարիների պեղումների ժամանակ:

Դիվանի ընդարձակ սրահում պահպանվել էին միայն մի քանի տասնյակ կնքադրոշմներ, որոնք ժապավենով կապված են եղել փաստաթղթերին, իսկ բուն փաստաթղթերը կրակի ճարակ են դարձել: Կնքադրոշմները շատ են եղել, բայց հազարավոր օրինակներ սրահի մոխրի մեջ տրորվել են թշնամու ոտքերի տակ և ոչնչացել: Պահպանվածները, որ մենք կարողացել ենք տեղում հավաքել, կարևոր նշանակություն ունեն հայկական կնքադրոշմների մասնագիտական ուսումնասիրության (գլխատիկայի) համար:

Ուրեմն, կավե զանգվածը դեռևս խոնավ և փափուկ ժամանակ ժապավենով կապվել է մագաղաթին, հետո կնքվել իշխանական մատանիներով, և կնքադրոշմը շորացնելուց հետո փաստաթուղթը մտել է ուժի մեջ, որովհետև շորացած կնքադրոշմի վրայի նշաններն այլևս փոփոխել կամ կեղծել հրնարավոր չէր:

Հնում իշխանները և բարձրաստիճան հոգևորականներն ունեցել են իրենց անձնական կնիքը, որ փորագրված է եղել նրանց մատանու ակի վրա: Այդ մատանին նրանցից անբաժան է եղել և հարկ եղած դեպքում նրանով կնքել են կարևոր փաստաթղթեր:

Հետաքրքիրն այն է, որ կնքադրոշմների վրա երևում են տարբեր տեսակի թռչունների, շորրո-



105. Կավե կնքադրոշմներ, գտնված Դվինում (VI—VII դդ.):

1961 թ. միջնաբերդի պեղումների ժամանակ Արշակունյաց գահասրահի կողքին մի ընդարձակ սենյակ բացվեց, որտեղ կավե մի քանի տասնյակ փոքր և մեծ կնքադրոշմներ գտնվեցին մոխրի վերածված ինչ-որ նյութի ստվար շերտի մեջ (նկ. 105): Փոքրերն իրենց վրա ունեին մեկ-երկու շերտ կնիքի դրոշմ, իսկ շատ մեծերից մեկը (№ 2197/314)՝ մոտ 40 դրոշմ, մյուսը (2197/313-ը)՝ 20:

Բոլոր կնքադրոշմները մի երեսանի են, այսինքն բոլոր կնիքները դրված են կավե զանգվածի միայն մի երեսի վրա, իսկ հակառակ երեսին այն անցքերն են երևում, որոնց միջոցով ժապավենով կապված է եղել փաստաթղթին:

տանի կենդանիների պատկերներ, որոնք, ըստ երևույթին, կապ են ունեցել տիրոջ տոհմանշանի հետ, թեև կան նաև տարբեր տեսակի խաչերի պատկերներով կնքադրոշմներ, որ անպատճառ հոգևոր անձանց են պատկանել:

Այժմ դժվար է մատանիների կնքադրոշմի միջոցով որոշել տոհմիկ իշխանների անձնավորությունները, որովհետև մի քանի անգամ երկիրը տակնուվրա է եղել, և կապը հնի հետ կտրվել է: Հին իշխանական տները ոչնչացել են, նորերն են պատմական ասպարեզ իջել, որոնցից շատերը կապ չեն ունեցել հին տոհմերի հետ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդ ուղղությամբ կատարվող մանրազնին ուսումնասիրությունները, որոնք նոր

են սկսվել (քանի դեռ ստորագրություններով և կնքադրոշմներով օժտված փաստաթղթեր չեն գրտնվել), կարող են որոշ չափով այդ խնդրի լուծմանն օժանդակել, եթե հաշվի առնվեն նաև մատենագրական տեղեկությունները, ճարտարապետական հուշարձանների վրա եղած զինանշանների քանդակները և այլ օժանդակ աղբյուրներ:

Ինչպես արդեն ասացինք, այն սենյակը, ուր գտնվեցին կնքադրոշմները (որի ճիշտ չափերն անգամ որոշելն անհնար է), հատկացված է եղել պետական դիվանին և, հավանաբար, հանդիսացել է նրա գլխավոր գրապահոցը, որի կողքին, դեպի հարավ, գոյություն է ունեցել կնիքներ պատրաստող վարպետի արհեստանոց: Այնտեղ գտնվեցին քարերի վրա փորագրված իսկական կնիքներ, մատանու ակի համար պատրաստած քարեր, ոսկու ձուլը կտոր, բազմաթիվ մանր, անմշակ քարեր, որոնք արհեստանոցում պահվել են կնիքների համար:

Արհեստանոցում գտնվեց նաև թրծած կավից պատրաստած, իր առանցքի շուրջը պտտվող մի առարկա, որը փորագրելու գործիք է եղել: Նման գործիքներ օգտագործվել են մոտ անցյալում ևս:

Դիվանի մնացորդների այդ գյուտից շատ առաջ այնտեղ երբեմն-երբեմն ի հայտ էին գալիս առանձին կնքադրոշմներ, որոնք, կարծում էինք, փակ դռների կնիքներ են եղել: Այդպիսի կնքադրոշմներից մեկն իր նմանահանութամբ հրատարակել ենք մեր մի այլ աշխատության մեջ¹¹: Այնտեղ գրել ենք, որ այդ կնքադրոշմներով կարևոր նշանակություն ունեցող դռներն են կնքել: Թեև այդ տեսակետը բացառված չէ, բայց կնքադրոշմների մեծ կույտի գյուտը 1961 թ. ցույց տվեց, որ դրանք ոչ թե դռներ կնքելուն են ծառայել, այլ կցված են եղել մագաղաթներին: Դրանց ժամանակի որոշումը մեծ դժվարություն չի ներկայացնում: Միայն այն, որ այդ կնքադրոշմների վրա կան պահպանված մանրագիր արձանագրություններ, ցույց է տալիս, որ այդ կնիքները, հետևապես նաև նրանց կցված փաստաթղթերը, պատկանել են մարզպանության ժամանակներին՝ V—VII դդ.:

Կավե կնքադրոշմների գործածությունը Հայաստանում շատ հնից է գալիս, ուրարտական պետության ժամանակներից: Այն ժամանակ էլ լայնորեն օգտագործվել են կնիքները՝ կավե տախտակներ և փակ դռներ կնքելու համար: Միայն թե ուրարտական կնիքները ոչ թե մատանու ակի վրա են փորագրված եղել, այլ կավե զլանաձև կախիկ-

ների վրա, որոնք իրենց ծայրին և փորին փորապրություն են ունեցել: Այդպիսի կնիքներ շատ են գտնվել Երևան քաղաքի սահմաններում պեղվող Թեյշեբաինի և էրեբունի ամրոցներում¹²:

«Գիրք թղթոցի» մեջ պահպանվել են մի քանի փաստաթղթեր, որոնք դարաշրջանի տեսակետից համապատասխանում են Դվինում գտնված կնքադրոշմներին և կարող են որոշ գաղափար տալ այն փաստաթղթերի մասին, որոնցից միայն կնքադրոշմներ են մնացել. իսկ փաստաթղթերը, ինչպես ասացինք, ոչնչացել են: Հասկանալի է, որ այստեղ մենք փաստաթղթերի բովանդակության մասին մեծ վերապահությամբ ենք խոսելու և գլխավոր ուշադրությունը նվիրելու ենք այն հարցին. թե մարզպանության դարաշրջանում ովքեր էին ստորագրում և իրենց մատանու կնիքով հաստատում կարևոր նշանակություն ունեցող պետական փաստաթղթերը:

«Գիրք թղթոցի» մեջ հավաքված վավերագրերը թեև դավանաբանական բնույթ ունեն և առերես նվիրված են կրոնական հարցերին, բայց բոլորն էլ կապված են ժամանակի քաղաքական կողմնորոշման և ազգային ինքնուրույնության պահպանման կարևոր հարցերին ու այդ է պատճառը, որ դավանաբանական հարցերին նվիրված գրություններ կազմելուն գործուն մասնակցություն են ունեցել երկրի աշխարհիկ իշխանները՝ հայ մարզպանները և նախարարները: Դավանաբանական վեճերին հոգևոր հայրերի հետ մասնակցել են իշխանները, որոնց անունները փաստաթղթերի մեջ հիշատակված են նախարարական տների եպիսկոպոսներից հետո, բացառությամբ մարզպանի, որի անունը գրվում էր նրանց անուններից առաջ:

Այդ փաստաթղթերից մեկը գրված է հայոց Բարդեն կաթողիկոսի (490—516) և նրա գործակից եպիսկոպոսների ու իշխանների մի մեծ խմբի անունից: Գրության մեջ, որի վերնագիրն է. «Թուղթ հայոց ի Պարսս ուղղափառս»¹³, կաթողիկոսից հետո հիշատակված են Մերշապուհ Մամիկոնեից, Ներսես Մարդպետական, Տյառնատուր Հարթա, Սամուել Բզնունյանց, Փովկաս Բասենո¹⁴, Թաթուլ Առշարունյաց, Աղան Խորխոռունյաց, Ատատ Տայոց, Տաճատ Արշամունյաց, Դանիել Ռշտունյաց,

¹² Ուրարտական կնիքների և կնքադրոշմների մասին տե՛ս Բ. Բ. Пատровский, Кармир-Блур, I, Ереван, 1950, стр. 70—77, II, Ереван, 1952, стр. 45—48, III, Ереван, 1955, стр. 54—59 և այլն:

¹³ «Գիրք թղթոց», էջ 41—47:

¹⁴ «Գիրք թղթոց» սխալաշատ հիշատակության մեջ մի քանի անուններ կրկնված են: Այսպես, օրինակ, Բզնունյաց Սամուել եպիսկոպոսի անունից հետո գրված է. «Թ Փովկա-

¹¹ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան Դվին քաղաք..., 1, էջ 236:

Հափկան (կամ Յափիկ) Մոկաց¹⁵, Խարբա Արծրուն-
յաց, Շահեն Ամատունյաց, Սահակ Պալունյաց,
Պավղոս Գնունյաց, Մովսես Զարիհավանի, Դավիթ
Տմորյաց, Դանիել Անձնացյաց և Թեմրա Մեհնուն-
յաց եպիսկոպոսները: Անուններով հիշատակված
այս 19 կամ 20 եպիսկոպոսներից հետո գրության
մեջ առանց անունների նշված են Հայաստանի
ճգնաժամները, երեցները, վանականները և այլն,
որոնց անունից ևս ողջունել են պարսից ուղ-
ղափառներին, բայց, ըստ երևույթին, նրանք
չեն մասնակցել և չեն կնքել գրությունը: Հո-
ղևորականներից հետո գրության մեջ հիշա-
տակվել են իշխանները, որոնց թվում՝ Վարդ
Մամիկոնյանը, Արշարունիքի տեր Սահակ Կամ-
սարականը, Սպանդիատ Հայոց Ասպետը (Բագ-
րատունի), Հայոց մաղխազ Արտաշիրը, Վա-
նանդի տեր Զիկ իշխանը, Ամատունյաց տեր իշխան
Մանդենը, Պահլավունյաց տեր Տիրոտը, Դաշտա-
կարանի իշխան Վարապետյանը, Վստամ Ա-
մատունին, Գնունյաց տեր Գնելը, Վահեմուն-
յաց տեր Բաշխենը, Սյունյաց տեր Արտա-
շիրը, Ատրնեսուհի Ռշտունին, Արտաշիր Առա-
վելներից տերը և այլ ամենայն ուղղափառ իշ-
խանաց մեծաց և փոքրունց: Ուրեմն, աշխարհա-
կան իշխաններից մասնակցել են 16 մարդ: Նշա-
նակում է թղթի բնագիրն ունեցել է 35 կամ 36
կնիք և այդքան էլ ստորագրություն: Գրությունը
կնքած լինելու մասին վերջում գրված է. «Եւ դայս
խնդիր ճշմարիտ հաւատոյ գրեցաք և կնքեցաք»: Նա-
մակի վերջավորության մեջ կարդում ենք, որ
գրությունը գրված է հայերեն և պարսկերեն լեզու-
ներով և կնքել են կաթողիկոսն իր եպիսկոպոս-
ներէ և Վարդ Մամիկոնյանն իր իշխանների ու
նախարարների հետ միասին: Այդ մասին նամակի
վերջավորության մեջ կարդում ենք. «Եւ ես Բար-
դեն (Sic!) հայոց կաթողիկոս և ամենայն եպիսկո-
պոսունք, եւ Վարդ Մամիկոնեան և այլոր միան-
գամ իշխանք և նախարարք էաք, գրեցաք հայերէն
և պարսկերէն, և կնքեցաք մերովք մատանե-
աւք...»¹⁶: Գրությունը ստորագրել են նաև պարսիկ
ուղղափառ այն հոգևորականները, որոնք համա-
ձայն են նամակի բովանդակությանը:

«Գիրք թղթոցից» երևում է, որ նամակի տակ

և և ի Սամուել Բզնունեաց եպիսկոպոսն, ի Փովկասն և ի
Սամուել Բասենոյ եպիսկոպոսաց: Սխալն ակնբեր է, քանի
որ Բզնունյաց երկու եպիսկոպոսները միասին եզակի թվով են
հանդես գալիս:

¹⁵ Բնագրում բացառական հոլովով գրված է. «Ի Յափ-
կանն Մոկաց եպիսկոպոսն», «Գիրք թղթոցի» անունների
ցանկում ուղղական հոլովը համարել են «Յափկան»:

¹⁶ «Գիրք թղթոց», էջ 47:

միշտ չէ, որ ստորագրում են բոլոր այն եպիսկո-
պոսներն ու իշխանները, որոնց անունից գրված է
լինում գրությունը: Այսպես, օրինակ, Պարսկաս-
տանի քրիստոնյա (ուղղափառ) եկեղեցու հոգևոր
պետերին ուղղված երկրորդ նամակի մեջ, որ գր-
ված է նույն կաթողիկոսի և հոգևոր ու աշխարհիկ
իշխանների անունից, հականե-հանվանե հիշա-
տակված են ընդամենը հինգ մարդ. «Բարդեն հա-
յոց եպիսկոպոսապետ, Մերշապուհ եպիսկոպոս
Տարան դաւառի ի Հայս, և այլոց եպիսկոպոսաց
Հայոց, որք ըստ գաւառաց և ըստ տանց, և յամե-
նայն ուխտէ սրբոյ եկեղեցւոք մերոյ: Եւ յիշխա-
նաց ի Վարդայ Մամիկոն/է/ից՝ տեառնէ՝ և ի հա-
յոց մարւպանէ, և ի Սահակայ Կամսարականէ, եւ
ի յԱրտաշէ մաղխազէ, և յամենայն աշատաց մե-
ծամեծաց և փոքրունց...»¹⁷:

Երբեմն, երբ անհրաժեշտ չեն համարել, կրո-
նական լեճերին աշխարհական իշխաններին մաս-
նակից չեն դարձրել և գրությունները կաղմվել ու
ուղարկվել են միայն հոգևորականների անունից:
Աղվանից եպիսկոպոսներին ուղարկած Հայոց Հով-
հաննես Բ կաթողիկոսի (557—574) թղթի մեջ, որ
վերնագրված է «Թուղթ զոր տէր Յովաննես Հայոց
կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք, առ Աղուանից
Եպիսկոպոսունս արարին», հիշատակված են իրենց
անուններով 11 եպիսկոպոսներ, որոնց թվարկու-
մից հետո գրված է. «Եւ այլ եպիսկոպոսաց աշ-
խարհիս», իսկ իշխաններ և այլ աշխարհական
մարդիկ բոլորովին չեն հիշատակվում¹⁸:

Մի այլ թղթի մեջ գրված է, թե ովքեր են իրենց
մատանիներով կնքել թուղթը: «Եւ Սահակ Համա-
ղասպայ որդի յԱրածի գեղջէ՝ իմ մատմաբ: Եւ
վաւերական մատանի՝ Մանասէ Բասենոյ եպիսկո-
պոս, Յովհաննես Ամատունեաց եպիսկոպոս, և
Գիդ Դաշտկարին, Սարգիս Զաւրականեան, և վար-
դապետ Քչկան ի վերայ եղին»¹⁹:

Գրությունը մի գյուղացու է վերաբերում, որն
իր կնոջ պատճառով նեստորականություն է ընդու-
նել և բազում չարչարանքների ենթարկվելուց հե-
տո հրաժարվել է այդ աղանդից ու համաձայնել
է ապաշխարելու վերևում նշված երկու եպիսկո-
պոսների և երեք այլ անձնավորությունների վկա-
յությամբ, որոնք թուղթը հաստատել են իրենց
«վաւերական» կնիքներով: Այստեղ մեզ համար
կարևորն այն է, որ ստորագրություն տվող Համա-
ղասպա որդի Սահակը անգրագետ է և փոխանակ
ստորագրելու՝ իր մատն է դրել գրության վրա:

¹⁷ Նույն տեղում, էջ 48:

¹⁸ Նույն տեղում, էջ 81:

¹⁹ Նույն տեղում, էջ 109:

Այս սովորությունը, վերոհիշյալ թղթի վկայությամբ, գոյություն է ունեցել դեռևս VII դարում, երբ անգրագետը ստորագրելու անկարող լինելու պատճառով իր մատն է դրել գրության վրա²⁰։ Աբրահամ կաթողիկոսի (607—625) ժամանակ գրված մի փաստաթղթի մեջ կարդում ենք. «Կրն՝ քեցավ ձեռնարկս այս ի նոցանէն յանդիման մեր ամենեցուն...»։

Այդ նշանակում է, որ գրությունների վրա կնիքները դրվում էին բոլորի ներկայությամբ. որպեսզի կնքողներից որևէ մեկն այլևս չկարողանա հրաժարվել իր կնիքի իսկությունից։

* * *

Դվինում, ինչպես և ենթադրվում էր, պետական դիվանի կողքին գոյություն է ունեցել նաև կաթողիկոսական դիվան։ Այդ մասին են վկայում փաստաթղթերից մեկի մեջ գրված հետևյալ տողերը. «Եւ կնքեցաւ ձեռնարկս այս և եղաւ ի սուրբ եկեղեցիս Դունայ»²¹։

Ինչպես արդեն նշեցինք, կաթողիկոսական դիվանը դեռևս չի գտնված և գտնելու էլ մեծ հույսեր չկան, բայց մեր արշավախումբը այդ ուղղությամբ աշխատում է։ Դվինում, կենտրոնական թաղում, որտեղ տեղավորված է եղել կաթողիկոսարանը և գլխավոր եկեղեցին, գետնի երեսին ուղիղ չի մնացել, որոնումները կատարում ենք գետնի մեջ, որտեղ ի հայտ են եկել ստորգետնյա թաքստոցներ։ Այդ թաքստոցներից շատ սպասելիքներ ունենք, եթե ոչ վավերագրեր, գոնե այլ առարկաներ կարող են գտնվել, որոնք այս կամ այն չափով կհարստացնեն մեր գիտելիքները միջնադարի պատմության վերաբերյալ։

Բացի կնքադրոշմներից, Դվինում գտնվել են նաև իսկական կնիքներ, որոնք փորագրված են քարերի և այլ նյութերի վրա։ Այդ կնիքների մեջ կան ոչ միայն միջնադարյան, այլև ավելի հին ժամանակների առարկաներ։ Այսպես, օրինակ, մարդու դեմքով մի գեմմա (կնքաքար) գտնվեց կնիքներ պատրաստողի վաղ միջնադարյան արհեստանոցում (№ 2197—310)։ Նույն տեղում մոխրա-

կույտի մեջ գտնվեց նաև նիզակավորների մենամարտի տեսարան պատկերող կնիք 1—C քառակուսու հորում (№ 2197—311)։ 1968 թ. միջնաբերդի արևելյան ծայրամասի մոտ (2—C քառակուսում) ի հայտ եկավ մի կնիք կարմրավուն քարից, վրան վարագի փորագիր պատկերով, բոլորն էլ անտիկ շրջանից։ Վերոհիշյալ արհեստանոցում գտնվեցին նաև քարե և ապակե ներդրվող հատիկներ և զանազան տիպի ուլունքներ, որոնք ոչ մի առնչություն չունեն կնիքների հետ։ Այդ ցույց է տալիս, որ վարպետն այդտեղ պատրաստել է ոչ միայն կնիքներ, այլև քարե զարդեր։

Ինչպես ասացինք վերևում, Դվինում կնքարներ և կնքադրոշմներ գտնվել են նաև կենտրոնական թաղում և միջնաբերդում այլ տարիների պեղումների ժամանակ, որոնց մեջ կան նաև կավե կնքադրոշմներ՝ խաչի նշանով և մեծ կնիքներ՝ երկրաչափական ձևերով։ Այս հատուկ կնիքները, որոնք տարբերվում են սովորականներից, կարծում ենք, որ կաթողիկոսինը կարող են լինել։ Այդպես կարծելու համար մենք հիմք ունենք այն, որ բոլոր այդ մեծադանգված կնիքները միևնույն ձևերն ունեն, հետևապես միայն մի մարդ է ունեցել խաչի նշանով այդ կնիքը։ Պղնձե կնիքը, որ երկրաչափական ձևեր ունի, դժվար է ասել, թե ում է պատկանել, բայց որ այդ կնիքը ևս բացառիկ է բոլոր մնացածների մեջ, նրանցից զգալի կերպով մեծ և հանդիսավոր է, ցույց է տալիս, որ այն ևս պատկանել է հավանաբար աշխարհիկ մեծ իշխանի. թե որի՞ն, դժվար է ասել, բայց բացառիկ իրավունքներ և հեղինակություն ունեցող մարդու։

Պետական դիվանի կնքադրոշմները, որոնց վրա պատկերված են թռչուններ և շորքոտանի կենդանիներ, կարծում ենք աշխարհիկ իշխանների են։ Եթե մեր այդ ենթադրությունը ճիշտ է, նշանակում է կրոնական գործերում աշխարհիկ իշխաններն ավելի մեծ մասնակցություն են ունեցել, քան աշխարհիկ (պետական) գործերում հոգևորականները, որոնց կնիքները՝ խաչի նշանով խիստ սակավաթիվ են։ Պետք է ենթադրել, որ միայն խաչի նշան ունեցող կնքադրոշմները չեն, որ հոգևոր հայրերին են պատկանել, քանի որ նախարարական տների եպիսկոպոսները նշանակվում էին իրենց նախարարների տոհմից, հետևապես, նրանք ևս իրավունք ունեին ինչ-որ տարբերությամբ կրելու տոհմանիշ ունեցող կնիքներ։

Ինչպես ասացինք, Դվինի պետական դիվանի մասին հիշատակություն ունի VII դարի մատենագիր Սեբեոսը։ Կնիքների և կնքադրոշմների մնացորդներից երևում է, որ Արշակունյաց թաղավո-

²⁰ Մինչև վերջերս անգրագետներն ստորագրության փոխարեն իրենց աջ ձեռքի բութ մատը խոնավացնում էին թանաքով կամ հրե է այլ ներկով և դրոշմում գրության համապատասխան տեղում, որտեղ դուրս էին գալիս անգրագետի բութ մատի ներսի Պրեսի մաշկի անկրկնելի ձևերը։ Այդ դրոշմը համարվում էր գրության իսկությունը ապացուցող վկայություն։

²¹ «Գիրք թղթոց», էջ 152։ Այդ գրությունը կազմված է Աբրահամ կաթողիկոսի օրոք, VII դարի առաջին երկու տասնամյակում։

րության շրջանից էլ առաջ գոյութիւն է ունեցել դիվանը: Կնիքների մնացորդները մեղ տանում են մեր թվականության առաջին դարը: Բայց ինչ խոսք, որ VI—VII դդ. գործածված առաջին դարի կնիքը չի կարող սահման լինել պետական դիվանի սկզբնավորության: Միայն այնքանը գիտենք, որ քրիստոնեւության մուտքից առաջ թագավորական դատական գործերը նոտարների կողմից գրի էին առնվում օտար լեզուներով, քանի որ ազգային գիր ու գրականութիւն դեռևս չունեինք: Այդ մասին մեկից ավելի տեղեկութիւններ կարելի է գտնել մեր հին մատենագրութիւն մեջ²²:

Կաթողիկոսական դիվանի որոնումները կենտրոնական թաղամասի ստորգետնյա թաքստոցներում և զետեղարաններում, որ համառորեն շարունակվում են նաև այժմ, դեռևս արդյունք չեն տվել, թեև այդտեղ, ինչպես նաև քաղաքի այլ վայրերում, կնքադրոշմներ և կնիքներ գտնվել են, բայց ոչ մեծ խմբերով:

1961 թ. Դվինի պետական դիվանի մնացորդները գրանցվել են Հայաստանի պետական պատմական թանգարանի մայր մատյանի 11.283 բաժնի 2197 համարի տակ:

Կորստից փրկված հատուկենտ կնքադրոշմների համառոտ տեղեկագիրը ներկայացնում ենք ստորև, առանց խոսելու նրանց բովանդակութիւն մասին:

ա. ԿԱՔԱՅՐՈՇՄՆԵՐ

1. (կնթահամար 307) Կապույտ, տափակ ապակու վրա, միջակ կոճակի մեծութեամբ, մի երեսին դրոշմված է խաչ, մյուս երեսն ազատ է որևէ նշանից: Գտնվել է ակնագործի արհեստանոցում, միջնաբերդի 2—C քառակուսում, դետնի մակերեսից մոտ 4,0 մ խորութիւն մեջ:

2. (308) Պղնձե, պղնձե մեծ դրամի չափ. երեսին թռչունների պատկերներ և հունարեն գրեր: Գտնվել է ակնագործի արհեստանոցում, Դվինի միջնաբերդի 2—C քառակուսում, գետնի մակերեսից մոտ 4,0 մ խորութիւն մեջ:

3. (313) Կավի վրա, ուռուցիկ է և երեսին ունի տարբեր կնիքների 21 դրոշմ: Գտնվել է դիվանի սենյակում, այրված մագաղաթներից առաջացած մոխրաշերտի մեջ, 3—ա քառակուսու սահմաններում, մոտ 3,5 մ խորութիւն մեջ:

4. (314) Կավե զանգվածի վրա: Եղածների մեջ ամենամեծն է, գտնվել է կոտրատված վիճա-

կում, կտորները միացրել ենք: Վրան ունի տարբեր կնիքների 40 դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտում, միջնաբերդի 3—ա քառակուսու մեջ:

5. (315) Բեկոր, կավե զանգվածի վրա: Վրան երևում են 10-ից ավելի տարբեր կնիքների դրոշմներ: Գտնվել է միջնաբերդի դիվանի մոխրաշերտի մեջ:

6. (316) Կավե զանգվածի վրա: Միացված է երեք բեկորներից: Վրան ունի հինգ տարբեր կնիքների դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ:

7. (317) Կավե զանգվածի վրա: Ունի երեք տարբեր կնիքների դրոշմներ: Միացված է երկու կտորից: Գտնվել է Դվինի միջնաբերդի դիվանի մոխրաշերտի մեջ:

8. (318) Կավի վրա, վրան երկու տարբեր կնիքների դրոշմով: Գտնվել է նույն մոխրաշերտի մեջ:

9. (319) Կավե փոքրիկ զանգվածի վրա: Վրան տարբեր կնիքների երկու դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ:

10. (320) Կավե փոքրիկ զանգվածի վրա: Վրան երկու տարբեր կնիքների դրոշմներ:

11. (321) Կավե փոքրիկ զանգվածի վրա: Վրան ունի մի դրոշմ: Գտնվել է դիվանի մոխրաշերտի մեջ:

12. (322) Կավե փոքրիկ զանգվածի վրա, ունի մի դրոշմ: Գտնվել է դիվանում, մոխիրների մեջ:

13. (323) Կավե փոքրիկ զանգվածի վրա: Վրան ունի մի դրոշմ: Գտնվել է դիվանի մոխրաշերտի մեջ:

14. (324) Կավե զանգվածի վրա: Վրան ունի մի դրոշմ: Այրվելուց սևացած է: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ:

15. (325) Կավե զանգվածի փոքրիկ կտորի վրա: Վրան կրում է մի դրոշմ: Տակի շերտը, որտեղ եղել է ժապավենը, պոկված է:

16. (326) Կավե փոքրիկ զանգվածի վրա, կրում է մի դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ:

17. (327) Կավե զանգվածի վրա, մի ծայրը փշրված, վրան մի դրոշմ: Գտնվել է դիվանի մոխրաշերտի մեկ անկյունում:

18. (328) Կավե փոքրիկ զանգվածի վրա, վրան մի դրոշմ, երևում են մարդկային երկու կերպարանք: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ, 2—C քառակուսում:

19. (329) Կավե զանգվածի վրա, վրան մի

²² Տե՛ս Խորենացի, գիրք Ա, գլ. Գ, նաև գիրք Գ, գլ. ԾԲ: Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1908, էջ 37: Ազարտեղեղոս, էջ 99 և այլն:

դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ, 2 — Ը քառակուսում:

20. Կավե փոքրիկ զանգվածի վրա, մեկ կրնիքի դրոշմով: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ, 2 — Ը քառակուսում:

21. (331) Կավե զանգվածի վրա, վրան մի դրոշմ: Գտնվել է պետական դիվանի մոխրաշերտի մեջ, 3 — Ը քառակուսում:

22. (332) Կավե զանգվածի վրա, վրան մի կնիքի դրոշմ: Գտնվել է Դվինի պետական դիվանի մոխրաշերտի մեջ, 3 — Ը քառակուսում:

23. (333) Ութ բեկորներ, բոլորն էլ կավե զանգվածների վրա: Հավաքված են պետական դիվանի միջնաշերտից, 2—Ը, 3—Ը շերտերից և նրանց մոտակայքից:

բ. ԿՆԻՔՆԵՐ

Իսկական կնիքները գտնվել են պետական դիվանի մոտ, ակնագործի արհեստանոցում: Գրանցվել են նույն ժողովածուի հետևյալ ենթահամարների տակ:

1. (309) Կավիք, գմբեթաձև, երեսին անկյունագծեր: Գտնվել է միջնաբերդի ակնագործի արհեստանոցում, 2—Ձ քառակուսու մեջ, 3,0 մ խորությամբ:

2. (310) Կնքաքար (գեմմա), սևագույն, երկու երեսին բաց գույնի շերտ, վրան այդ մարդու դիմաքանդակ: Անտիկ շրջանի գործ: Գտնվել է 3,7 մ խորությամբ:

3. (311) Կնքաքար, կարմրավուն քարից, ուղղանկյուն քառանկյունի ձևի, վրան հեծյալի և հետևակի մենամարտի փորագիր տեսարան: Գտնվել է միջնաբերդի 1—Ը քառակուսուց, 3,5 մ խորությամբ:

4. (312) Կնքաքար, կարմրավուն քարից, վրան վարագի փորագիր պատկեր: Գտնվել է միջնաբերդի 2—Ը քառակուսում, մոտ 4,0 մ խորության հողաշերտի մեջ:

Մեր կարծիքով, մարզպանական և ավելի վաղ շրջանների պետական դիվանի պոլիթյունը բնահատվել է խալիֆաթի տիրապետության սկզբին, իսկ հետագայում, հավանաբար, նորից վերականգնվել:

Դվինում տարբեր տարիների պեղումների ժամանակ պատահականորեն գտնվել են այլ կնիքներ և կնքադրոշմներ ևս: Այդ հատուկենտ զանգվածները դժվար թե պատկանեն պետական կամ կաթողիկոսական դիվաններին: Հավանաբար, դրանք մասնավոր մարդկանց սեփականությունն են եղել և վերաբերել են հողի կամ այլ սեփականության առուծախի ու այլ գործարքների: Այժմ, երբ անգամ չգիտենք կնքադրոշմների տերերին, միայն այդ դրոշմներով կամ կնիքներով որոշել փաստաթղթերի բնույթն անհնարին է: Սակայն կարևորն այն է, որ բոլոր այդ կնքադրոշմները կապված են եղել փաստաթղթերին:

Կան, ինչպես ասացինք, պահպանված գրություններ և այլ լեզուներով մակագրություններ ունեցող կնքադրոշմներ, որոնք կարող են բանալի հանդիսանալ՝ բացահայտելու կնիքների տերերին: Օրինակ՝ միջնաբերդի հում աղյուսե մեծ շինության ավերակներում գտնվել է մի կնքամատանի, որի ակի վրա արաբերեն գրերով գրված է՝ «Իսահակ իբն Ազդար»: Ո՞վ է այդ մարդը: Չգիտենք: Անգամ չի պարզվում, թե այդ Իսահակը հա՞յ է, թե՞ արաբ: Բանն այն է, որ արաբական տիրապետության օրերին հայերը, հետևելով արաբներին, նրանց նմանությամբ էին ձևափոխում իրենց անունները: Վերոհիշյալ Իսահակի ազգությունը անորոշ է մնում մեզ համար, բայց պարզ է, որ Հյուսիսային Կովկասում գտնված կնիքը՝ «Աշոտ իբն Սմբատ» արաբերեն արձանագրությամբ, Բագրատունյաց հայ իշխաններից մեկինն է, գուցե և թագավոր Աշոտինը:

3. ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ մինչև օրս որոշակի տեսակետ չկա:

Արդի պատմաբաններից մի քանիսը, հիմնվելով հին մատենագիտների վկայությունների վրա, Դվին քաղաքի հիմնադրումը վերագրում են Արշակունյաց խոսրով Կոտակ կամ խոսրով Փոքր թագավորին (331—339 թթ.), որ հաջորդել էր Տըրդատ Գ-ին: Դրան հակառակ, ուրիշները քաղաքի

հիմնադրումը դնում են ոչ թե IV, այլ V դարի երկրորդ կեսում և վերագրում Հայաստանի պարսկական մասի կառավարիչ մարզպաններին:

1937 թ. սկսված պեղումները, որոնք պատերազմական տարիների զաղարից հետո 1946 թ. մինչև այժմ շարունակվում են նոր թափով, հսկայական նյութ են տվել քաղաքի պատմության վերաբերյալ:

Պեղածո նյութերը նոր լույս են սփռում պատ-

մագիրների թողած ժլատ տեղեկությունների վրա և պարզում բաղադրի հիմնադրման ժամանակը: Դեռ ավելին, պեղածո նյութերի հիման վրա կարելի է շարադրել նաև Դվինի հնագույն պատմությունը, երբ այն դեռևս քաղաք չէր, այլ նույնանուն բլրի վրա բաղմած, հզոր ցիկլոպյան պարսպով ամրացված մի բնակավայր:

* * *

Մեր պատմահայր Մովսես Խորենացին գրել է, որ Հայոց Խոսրով Կոտակ թագավորն իր արքունիքը Արտաշատից փոխադրել է անտառից վերև գտնվող մի բլրի վրա, որ պարսկերեն Դվին է կոչվում և որ թարգմանվում է բլուր: Խոսրովն այդ տեղափոխությունը կատարել է Արտաշատի անառողջ կլիմայից ազատվելու նպատակով: Արտաշատի բնակիչներն էլ հետզհետե կամովին տեղափոխվել են Դվին:

Խորենացու՝ Արտաշատի կլիմայի վերաբերյալ տված տեղեկությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը:

Մինչև օրս էլ այնտեղ, Արաքս գետի լայնորեն փռված ափերին, բազմաթիվ ճահիճներ կան, որոնք զանազան հիվանդությունների և, մանավանդ, ջերմախտի, աղբյուր են հանդիսանում:

Խորենացին այդ մասին գրել է. «Նա (Խոսրով Կոտակը) և զարքունիսն փոխել վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր: Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք պղտորեալք ժանտահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամալյանձն առին զփոփոխումն»²³:

Խորենացու այս տեղեկությունը տարբեր ձևերով կրկնել են ուշ ժամանակի մատենագիրները:

Պատմագիր Ստեփանոս Տարոնեցին (X—XI դդ.) գրեթե բառացիորեն կրկնել է Խորենացուն. «Եւ զարքունիսն փոխել յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»: Այնուհետև գրում է, որ Արեսն ուղեկցում էր արեգակին, օդը ժանտահոտ էր և այլն²⁴:

Կիրակոս Գանձակեցին (XIII դ.) գրում է, որ Խոսրովը՝ «փոխել զԱրտաշատ քաղաք ի Դուին և անտառս կաղնեաց տեղի զբոսանաց, և թագաւորեալ ամս ինն՝ վախճանի բարեպաշտութեամբ»²⁵:

Վարդան Բարձրբերդցու (XIII դ.) մոտ կարգում ենք. «Իսկ մերն Խոսրով, յերկրորդ ամի Որմըղի պարսից արքային, և ի յուր ամին Կոստանդեայ թագաւորեալ ի վերայ հայրենեացն ամս ինն՝ շինել զԴուին, որ ասի Բլուր՝ անդ ածելով զբնակիչսն Արտաշատու իւրեանց իսկ կամաւք վասն հրախառն օդոյն ղնէ արքունիսն իւր անդ»²⁶:

Իսկ Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) 352 թ. տակ գրում է. «Շինել Խոսրով զԴուին»²⁷:

Այստեղ 352 թ. հավանաբար տպագրական կամ գրչագրական վրիպակ է: Պետք է կարդալ 332:

Ինչպես տեսնում ենք, պատմագիրներն իրենց տեղեկությունները քաղելով Խորենացուց, Դվին քաղաքի հիմնադրումը կապում են Խոսրով Կոտակի թագավորության հետ:

Խորենացուց բացի, Խոսրով Կոտակի՝ Դվինում կատարած շինարարական աշխատանքների մասին կարևոր և մանրամասն տեղեկություններ է հաղորդում V դարի պատմագիր Փավստոս Բուզանդը: Նա գրում է, որ երբ Հայաստանում խաղաղություն հաստատվեց, Հայոց Խոսրով Կոտակ թագավորը հրաման տվեց իր զորավարին, որպեսզի նա ժողովրդին դուրս բերի պարտադիր աշխատանքի՝ անտառներից կաղնու տնկիներ բերելու և Արարատյան դաշտավայրում անտառ տնկելու համար. Գառնիի արքունի ամրոցից սկսած մինչև Մեծամորի դաշտը և Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում գտնվող Դվին բլրից մինչև Տիկնունի ամրոցը անտառ տնկեցին և այդ անտառը կոչեցին «Տաճար մայրի»:

Նրա հարավային կողմում ևս անտառ տնկեցին և անվանեցին Խոսրովակերտ: Այնտեղ շինեցին արքունական պալատներ և երկու անտառներն էլ պատեցին պարսպով, բայց միմյանց չմիացրին՝ նրանց միջով անցնող մեծ ճանապարհի պատճառով: Ահեց, բարձրացավ անտառը, և թագավորը հրամայեց այնտեղ լցնել վայրի կենդանիներ ու գաղաններ, որպեսզի որսի և ուրախ զբոսանքի տեղ լինի: Վաչե զորավարը կատարում էր թագավորի հրամանը²⁸:

Մեր ժամանակների ավագ սերնդի նյատմաբաններից մի քանիսը, գոյություն ունեցող վկայություններին և փաստերին հակառակ, «քննադատորեն» Խորենացուն համարում են ոչ թե V

²³ Խորենացի, էջ 263:

²⁴ Ասողիկ, էջ 67:

²⁵ Կ. Գանձակեցի, էջ 21:

²⁶ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդցու Պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 65:

²⁷ Մ. Այրիվանեցի, էջ 46:

²⁸ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 18:

այլ VII դարի հեղինակ և մեղադրում նրան, որ IV և V դարերի դեպքերը չի իմացել և այդ պատճառով աղավաղել ու սխալ է շարադրել պատմությունը:

Խորենացուն ուշ դարերի հեղինակ համարելու պատճառաբանություններից մեկն էլ այն է, որ իբր նա չգիտե 'Իվին քաղաքի սկզբնական շրջանի պատմությունը և սխալմամբ քաղաքի հիմնադրումը վերագրել է Խոսրով Կոտակին:

Այդ տեսակետին եզոդների կարծիքով Դվինը քաղաք է դարձել Խոսրով Կոտակից շատ ուշ, V դարի երկրորդ կեսին, երբ Արշակունյաց հայոց թագավորությունը վաղուց արդեն վերացել էր, Հայաստանի մեծագույն մասը գտնվում էր Պարսկաստանի գերիշխանության ներքո և երկիրը կառավարվում էր մարզպանների ձեռքով:

Պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցն իր «Հայ Արշակունիներ» գրքում գրում է. «Միայն V դարի կեսում առաջ է գալիս մի նոր կենտրոն—պարսից մարզպանների և հայոց կաթողիկոսների նստավայր Դվինը, որ IV դարում Արտաշատից հյուսիս դառնում էր հասարակ բլուր էր: Իբրև քաղաք Դվինը դեռևս անծանոթ է Ագաթանգեղոսին և Փավստոսին»²⁹:

Խալաթյանցը գրում է, որ վերջին Արշակունի թագավորների մայրաքաղաքը, մանավանդ Տրդատից հետո մինչև նրանց թագավորության անկումը, V դարի առաջին քառորդի վերջում, բացառապես եղել է Վաղարշապատը, կամ նոր Քաղաքը:

Նշանակում է, եթե Արտաշատը մայրաքաղաք չէր Դվինից առաջ, հասկանալի է, որ Արշակունի թագավորներն իրենց գահն այնտեղից չէին կարող փոխադրել 'Իվին և Դվինը դարձնել մայրաքաղաք:

Փավստոսը վկայում է, որ Խոսրովը Դվինի բլրի վրա պալատներ է շինել և շրջապատում անտառներ տնկել, բայց Խալաթյանցն այդ շինարարությունը չի կապում քաղաքի հիմնադրման հետ և այդ պատճառով հայտարարում է, որ Դվինն իբրև քաղաք ծանոթ չէ Ագաթանգեղոսին և Փավստոսին:

Դվինի պեղումների մասնակից և գրավոր աղբյուրների հիման վրա այդ քաղաքի պատմությունը դրող Ասլան Շահնազարյանը գրեթե նույնությամբ կրկնել է Խալաթյանցին և իր գրքի էջերում գրել է. «Դվինն իբրև քաղաք առաջին անգամ հայկական աղբյուրներում հիշատակվում է պարսից Պերոզ թագավորի (459—484) և հայոց

Գյուտ կաթողիկոսի (461—478) օրով՝ կաթողիկոսական աթոռը Վաղարշապատից Դվին տեղափոխելու կապակցությամբ (470—471), որից կարելի է եզրակացնել, որ Դվինի կառուցումը վերաբերում է V դարի երկրորդ կեսի սկզբներին»³⁰:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանն այս հարցին մոտեցել է ավելի զգուշորեն: Նա քաղաքի հիմնադրման մասին ոչինչ չի գրել, այլ այն կարծիքն է հայտնել, թե Դվինը 428 թ. հետո մարզպանների մայրաքաղաքն էր և միջազգային առևտրի մեջ խոշոր դեր էր կատարում: «Երբ հինգերորդ դարում Հայաստանը մարզպանական դարձավ,—գրել է Մանանդյանը,—նրա մայրաքաղաքը, ինչպես հայտնի է, Արտաշատի հյուսիսային մատույցների մոտ գտնվող Դվին քաղաքն էր: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի մեջ Դվինը շարունակեց խաղալ նշանակալից դեր և միջազգային փոխանակության առևտրի այնպիսի կենտրոն էր, ինչպիսին էր նաև Արտաշատը»³¹:

Սակայն պրոֆ. Գ. Խալաթյանցը, Աս. Շահնազարյանը և ուրիշներ սխալվում են, երբ վկայակոչում են Փավստոս Բուզանդին ու Ագաթանգեղոսին, ասելով, թե նրանք IV դարում Դվինը քաղաք չեն համարում:

Ժիշտ է, Փավստոս Բուզանդը «քաղաք» անունը չի տալիս, բայց, ինչպես տեսանք, մանրամասն նկարագրում է Խոսրով Կոտակի շինարարական աշխատանքները Դվինում և նրա շրջապատում ու, որ գլխավորն է, մատնանշում է, որ անտառապատման հետ միասին արքունական պալատներ են կառուցվել: Հասկանալի է, որ արքունական պալատները կառուցվել են արքունիքի համար, իսկ արքունիքը վարչական կենտրոնում է լինում: Նշանակում է, Խորենացուն հերքելու համար չի կարելի վկայակոչել Փավստոս Բուզանդին, որովհետև վերջինս ոչ թե հերքում, այլ լրացնում և հաստատում է Խորենացու ասածները:

Իսկ ինչ վերաբերում է Ագաթանգեղոսին, ապա, ինչպես հայտնի է, նա գրել է հայոց, վրաց և աղվանից դարձի պատմությունը, որ տեղի է ունեցել IV դարի սկզբին կամ III դարի վերջին: Դվինի մասին նա չպետք է գրեր, որովհետև Դվինը քաղաք է դարձել թիչ ավելի ուշ, IV դարի 30-ական թթ.:

³⁰ Ас. Шахназарян. Двин, историко-географический очерк, стр. 24.

³¹ А. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, 1954, стр. 109—110.

²⁹ Г. Халатянц, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Опыт критики источников. Часть I, исследование, М., 1906, стр. 201—202.

Մինչև այժմ ուսումնասիրողները որոշ վկայություններ համարել են ժամանակավրեպ տեղեկություններ և ուշադրություն չեն դարձրել դրանց վրա: Իսկ այժմ, երբ պեղումների միջոցով Դվինում գտնում ենք I և II դդ. դամբարաններ, հեթանոսական շրջանի բնակավայրի հարուստ մնացորդներ, Տիգրան Բ-ին պատկանող դրամներ, արժե հատուկ ուշադրություն դարձնել այդ, այսպես կոչված «ժամանակավրեպ» տեղեկությունների վրա:

Բերենք մի քանի վկայություններ:

Հայոց, վրաց, արխազաց և ալանաց քրիստոնեություն ընդունելու Ագաթանգեղոսի պատմության արաբական հին թարգմանության մեջ Դվինը հիշատակված է IV դ. սկզբին: Հայաստանում քրիստոնեություն տարածող Գրիգոր Լուսավորիչը Դվինում առանձին եպիսկոպոսություն է հաստատում:

Հիշյալ գրքի մեջ գրված է. «Իսկ ինչ վերաբերում է ս. Գրիգորին, նա մի քանի եպիսկոպոսներ հաստատեց Այրարատում՝ Վաղարսապատում, Աշտասատում և Դվինում ու հպատակեցրեց իր աթոռին»³²:

Հնում, Արշակունի հայ թագավորների օրոք, եպիսկոպոսական աթոռներ հիմնվում էին մեծ բնակավայրերում և կից էին նախարարական տրոհներին: Դվինը որպես ոստան ունեցել է իր առանձին եպիսկոպոսական աթոռ Վաղարշապատից և Արտաշատից անկախ:

